1994թ. ստվերային տնտեսության, դիտարկվող ժամանակահատվածի համար, նվազագույն մակարդակին ելու փաստը բացատրվում է մի շարք հանգամանքներով: Դրանցից ամենախիստակալաններից կարելի է կատարել հարկային դրամի 1993թ. նոյեմբերին շրջանառության մեջ մտնելու փաստը, ու դրա հետևանքում ստվերային գործունեության գրավոր սուբյեկտների համար իրենց վճարումներն ամբողջովին հայկական դրամով իրականացնելու համար որոշակի ժամանակահատվածի անհրաժեշտությամբ: Դրանի փոխանակումը սկսելու հետո դեռևս որոշակի ժամանակ անօրինակահարներն որպես վճարման միջոց գանգագծաբար օգտագործվում էր ԽՍՀՄ-ի և ԽՍՀՄ-ի անդամական դրամը:

Փաստորեն 1994-1998թթ. ժամանակահատվածում ստվերային տնտեսության ծավալներն ունեցել են անընդհատ աճի միտում ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում:

Ստվերային տնտեսության առաջացման և դրա ծավալների ընդարձակմանը նպաստող գործոններից կարելի է առանձնացնել պետական կարգավորումն ու պետության կողմից կիրառվող սահմանափակումները և կոտրույթի ընդհանուր առմամբ, որոնք տնտեսության կարգավորվող է, այնպես դրա ներսում շատ ճնշումներ կան և կարգավորումները չբացնելու ուղղությամբ: Արդյունքում պետական կարգավորումներից չբացնված տնտեսական գործունեության ոլորտները ուղղակիորեն վեր են ածվում ստվերային: Կոտրույթի նույնպես ուղղակիորեն նպաստում է ստվերային տնտեսության ընդարձակմանը: ԼՂՀ-ում, ինչպես և անցումային տնտեսությունում, ունեցող շատ այլ ներկրներում, պետական կառավարման համակարգում աշխատող պաշտոնյաներն ի պաշտոնի հայտնվում են այնպիսի իրավիճակներում, երբ նրանք վերահսկում են տնտեսության տարբեր ոլորտներում: Վերահսկման այդ իրավունքը շատ հաճախ օգտագործվում է անձնական նկատմամբ ստանալու նպատակով: Պետական ծառայողների կողմից իրենց պաշտոնական դիրքի շարաշահման միջոցով նկատմամբ ստանալու գործող որոշ առումով կարելի է համարել նաև որպես պետական համակարգի ծառայողների ցածր աշխատավարձի դիմաց ստացվող փոխհատուցում: Պետական համակարգում գործող շատ ցածր աշխատավարձերը արդեն իսկ կարելի է համարել որպես գոյուցանում պետական ծառայողների կողմից նկատմամբ ստանալու այլ աղբյուրներից: Իրականում, իրականում մտադրելով հանգամանքն այն է, որ փաստորեն որոշ մարդիկ ստանում են թաքնված նկատմամբ և դրանք չեն հայտարարվողովում հարկային մարմիններում: Դժվար թե այս ճանապարհով ստեղծվի ամբողջ նկատմամբ հաշվի առնվի պետական իրավաբանությունում:

Անցումային տնտեսությունում ունեցող ցանկացած երկրում տնտեսական աճ ակնկալող ծրագրերը հիմնականում շեշտող դնում են արտադրության զարգացման վրա: ԼՂՀ հանրապետությունը չի կարող բացառություն կազմել: Երկրի չի կարող ներկայ գոյատևել օտարերկրյա վարկերի և մարդատիրական օգնության հաշվին, եթե վերջինիս հետագայում էլ ունենան ընթացիկ սպառման, այդ ոչ թե ներդրումային ուղղվածություն:

Ներդրումները հանդիսանում են տնտեսական աճի կարևորագույն խթանը: Հանրապետությունում ներդրումների հետ կապված բարձր ռիսկը, համապատասխան երաշխիքների բացակայությունը նվազ հավանական են դարձնում առաջիկա տարիների տնտեսության մեջ արտաքին մասնավոր ներդրումների ծավալում հույս դնելու համար: Ինչպես նաև, հույսը կապել դրսից յուրյ ներդրումների հետ այնպես ժամանակ, քանի որ դրանք հիմնականում ներդրող հանդես չի եկել հանրապետության ընկալչությունը: Ինչ վերաբերում է արտաքին պաշտոնակալ օգնությանը, այդ թվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկեր:

ապա դրանց նվազումը, ոչ բարձր արդյունավետությունը, վարկերի թանկացման միտումը թույլ չեն տալիս այդ միջոցները համարել տնտեսության ներդրածավելու ֆինանսավորման հուսալի աղբյուր:

Այս պարագայում ներդրումային բնագավառի հետագա զարգացումը զգալիորեն կախված է պետական ներդրումային քաղաքականության իրականացման արդյունավետությունից: Այդ քաղաքականության հիմնական ուղղությունները պետք է լինեն ձեռնարկություններին վարկային և հարկային լծակների միջոցով պետական աջակցության տրամադրումը, որը կնպաստի ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար ձեռնարկությունների խնայողությունների ներքին /սեփական/ աղբյուրների դերի, կենտրոնացված ներդրումային միջոցների օգտագործման նպատակայնության բարձրացմանը, ներդրումների տեղափոխումը և ներդրումային ծրագրերի ֆինանսավորումը մրցութային կարգով իրականացմանը, անհատույց բյուջետային ֆինանսավորման և վարկի տեսքով պետական բյուջեից ուղղվող միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ պետական հսկողության ուժեղացմանը: Հանրապետությունում ներդրումային գործունեության ակտիվացումը կապահովի տնտեսական աճ՝ խթանելով շուկայական ենթակառուցվածքների զարգացումը և դրանց տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը:

Վերջում մնում է հուսալ, որ հանրապետության տնտեսության պետական կարգավորման համակարգի կատարելագործման ուղղությամբ կատարված առաջարկությունները կբարելավեն ԼՂՀ ներդրումային մթնոլորտը և չնայած ներքին տնտեսա-քաղաքական հիմնախնդիրների առկայությանը՝ նրկրի տնտեսությունը կթևակովի զարգացման որակապես նոր փուլ:

Օգտագործված գրականություն

1. Տնտեսական բարեփոխումների առանձնահատկությունն ու փուլերը Հայաստանում 1991- 1998թթ., <<Վիճակագրություն, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն, Երևան, 1999թ., էջ 31
2. «Էկոնոմիկա» տնտեսական գիտագործնական հանդես, Երևան, 2.2000
3. «Էկոնոմիկա» տնտեսական և գիտագործնական հանդես, Երևան, 3.2000
4. «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան, թիվ 1, 2002
5. «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան, թիվ 1, թիվ 10, 2002.
6. ԼՂՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության պետական վարչություն. «ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001թ. հունվար- դեկտեմբերին»

Особенности государственного регулирования экономики в НКРв современном этапе перехода

Р.А.Мангасарян

Резюме

Анализируются недостатки в системе государственного регулирования экономики, как субъективного, так и объективного характера. Предлагаются пути совершенствования системы управления и повышения эффективности государственного регулирования экономики, в частности, в сфере обеспечения макроэкономической стабильности, формирование инвестиционного активного климата и т. д.

Էկոնոմիկայի պետական կարգավորման առանձնահատկությունները ԼՂՀ –ում անցման ժամանակակից փուլում

Ռ.Յա. Մանգասարյան

Անդիփոմ

Հոդվածում բննարկվել է տնտեսության պետական կարգավորման համակարգին բնորոշ ինչպես օբյեկտիվ, այլևս էլ սուբյեկտիվ բնույթի թերությունները: Առաջարկվել է տնտեսության պետական կարգավորման և կատարման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները, մասնավորապես մակրոտնտեսական կայունության ապահովման, ներդրումային ակտիվ դաշտի ձևավորման և այլ բնագավառներում:

ԼՂՀ –ում տարածված բուսական ծագում ունեցող հիմնական կերերի սննդաբարդությունը Ս . Ա . Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն

Զոոտեխնիկական գիտությամբ և առաջավոր պրակտիկայով հաստատված է, որ բոլոր տնտեսականաբանական հատկանիշները կենդանիների մոտ չեն գտնվում սաղմում պատրաստ վիճակում, այլ ձևավորվում են կենդանու անհատական զարգացման ընթացքում ժառանգականության և արտաքին միջավայրի պայմանների՝ առաջին հերթին կերակրման ու խնամքի ազդեցության տակ:

Կերակրում մեծ դեր է խաղում տանձային սելեկցիոն աշխատանքում, գոյություն ունեցող ցեղերի պահպանման, նրանց կատարելագործման և նոր ցեղերի ստեղծման գործում: Վատ կերակրման դեպքում ցեղային անասունը կազմալուծվում և կորցնում է իր մթերատու և ցեղական հատկությունները:

Սննդամթերքն օրգանիզմին անհրաժեշտ են որպես էներգիայի աղբյուր մարմնի ջերմաստիճանի պահպանման, աշխատանքի կատարման, որպես կառուցվածքային նյութ օրգանների և հյուսվածքների կազմավորման, մթերատվության ձևավորման, պտղի զարգացման ու օրգանիզմում պահեստային սննդամթերքի կուտակման համար:

Ինչքան լիվիությամբ բավարարի կերը այդ պահանջները, այնքան այն ավելի է սննդաբար օրգանիզմի համար: Կերերի սննդաբարության մասին կարելի է պատկերացում կազմել ելնելով նրանց քիմիական կազմից, հաշվի առնելով այն հիմնական պրոցեսները, որոնց հետևանքով կերերը վեր են ածվում անասնաբուծական մթերքների, նրանց մարսելիությունը կենդանիների կողմից և սննդամթերքի օգտագործումը:

Գյուղատնտեսական կենդանիների կերակրման համար հիմնականում օգտագործում են բուսական ծագում ունեցող կերեր:

Հաշվի առնելով առանձին բնակլիմայական գոտիների առանձնահատկությունները, որոնք հիմնական ազդեցություն են ունենում կերերի սննդաբարության վրա, մենք մի շարք տարիների ընթացքում գիտատնտեսական փորձերի միջոցով, կրու կովերի վրա, ուսումնասիրել ենք Լեռնային Ղարաբաղում տարածված հիմնական կերերի՝ գայլու, եգիպտացորենի, առվուտի, կարճզանի, սորգոյի կանաչ զանգվածի, շաքարային ճակնդեղի, եգիպտացորենի սիլոսի, ոլոռի, եգիպտացորենի հատիկի սննդաբարությունը, նրանց ազդեցությունը մթերքի և հատկապես կաթի քանակի ու որակի վրա, որոնց աղբյուրները կարող են հիմք հանդիսանալ կարգատու տավարի լիարժեք կերաբաժնի կազմելուն:

Քանի որ, վերը նշված կերային կուլտուրաների կանաչ զանգվածը, ըստ սննդաբարության կարող է ծառայել որպես ինքնուրույն կերաբաժին, ապա նրանց հետ կապված գիտահետազոտական փորձերը տարվել են ավելի պարզ սխեմայով, բաղկացած երեք շրջանների՝

Փորձի սխեման

Նախապատրաստ անյան շրջան	Փորձական շրջանի սկիզբը	Հաշվառման շրջան
Անցում կերաբաժնից միայն տավար տվյալ կուլտուրայով կերակրման Տևողությունը 6օր	Կերակրում միայն տավար կուլտուրայի կանաչ զանգվածով, հաշվի առնելով ծախսված կերի և ստացված մթերքի քանակը Տևողությունը 6-7օր	Կերակրում միայն տավար կերի կանաչ զանգվածով, հաշվի առնելով ծախսված կերի և ստացված մթերքի քանակը, այն համակցելով մարսողական կերի հետ Տևողությունը 7օր

Եգիպտացորենի սիլոսի, շաքարի ճակնդեղի և հատիկային կերերի սննդաբարության հետ կապված գիտական փորձերը տարվել են համեմատաբար բալի սխեմայով, առաջնորդվելով նախկին համամիութենական ամասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտի կողմից մշակված մեթոդիկով՝

Փորձի սխեման

Նախապատրաստ անյան շրջան	հաշվառման շրջան	Անցման շրջան	II հաշվառման շրջան
10 օր	25 (17+8) օր	10 – օր	25 (17+8) օր
Անցում հիմնական կերաբաժնի	Կերակրում հիմնական կերաբաժնով	անցում 70-80% հիմն-կերաբաժնի +30-20% ուսումնասիր վող կերի	Կերակրում ըստ սննդաբարության 70-80% հիմնական կերաբաժնի +30-20% ուսումնասիր վող կերի

Գյուղատնտեսական փորձերը անց են կացվել կովկասյան գորշ ցեղի ութ գլուխ կովերի վրա, միջին սնվածության, 5 – 7 տարեկան հասակի, լսկապցիայի 3 – 4 ամսվա, 350-400 կգ կենդանի զանգվածով, 10 –12 կգ. օրվա միջին կաթնատվությամբ:

Հիմնական կերաբաժինը փորձի առաջին շրջանում բաղկացած է եղել մարգագետնային լաուլից, եգիպտացորենի սիլոսից, շաքարի ճակնդեղից, համակցված կերից, կերակրի աղից և ռուսումնասիրվող կերից:

Ամբողջ փորձական շրջանում վերցվել են կերերի մոմոշները անալիզի համար, անհատականորեն հաշվարկվել են ընդունված կերի քանակը և նրանց մնացորդները, ստացված կաթի քանակը և որակը: Կենդանիների կշիռները կատարվել է փորձական շրջանի սկզբում և վերջում: Հաշվառման շրջանը տևել է 8 օր, որի ընթացքում տարվել են մարսողության փորձ, ազոտային և հանքային նյութերի փոխանակման պրոցեսների ուսումնասիրությամբ:

Վերցված կերերի ճնշվեցում որոշվել է ջրի, սպիտակուցի, ճարպի, թաղանթանյութի, ամնգուտ էքստրակտային նյութերի և մոխրի պարունակությամբ:

Կաթի յուղայնությունը որոշվել է մախապատրաստական և ամցումային շրջանների սկզբում երկու անգամ, հաշվառման շրջաններում նրկու օրը մեկ: Կաթում որոշվել է յուղի, սպիտակուցի, կաթնաշաքարի, ֆոսֆորի պարունակությունը, ուսումնասիրվել կաթի բթվությունը և խտությունը: Միաժամանակ կատարվել է արյան կենսաքիմիական անալիզ, որում որոշել են մոլոքուլների, ռեզերվային իմունայնություն և կալոսինի պարունակությունը:

Կերակրվող արագների քիմիական կազմի հետազոտությունների արդյունքները արտացոլված են թիվ 1 աղյուսակում:

Կերի քիմիական կազմը (տոկոսներով)

Կերի տեսակը	իւղը	ժրոտ եին	բաղ աւ- րանյ ութ	ճար պ	ԱՆ	մո- խիր
Կարու կանաչ զանգված	72,35	2,15	8,35	0,75	14,63	1,77
Սուդյուտի կանաչ զանգված	77,08	4,05	7,34	1,20	7,54	2,79
Նիկաւագործի կանաչ զանգված	83,96	1,00	4,31	1,00	8,74	0,99
Կոնկաւի կանաչ զանգված	77,83	3,40	6,00	0,41	9,57	1,79
Ըաքարի ճաւերի	77,89	1,12	1,56	0,14	18,35	0,94
Նիկաւագործի հաւաքի	19,88	10,37	2,39	4,13	62,00	2,03
Ոլորի հաւաքի	15,09	21,44	5,60	1,11	54,46	2,30

Հաշվի առնելով, որ վերջին ժամանակներս մի շարք երկրներում, այդ թվում և Ռուսաստանում, մշակվել է կերերի և կերաբաժինների սննդաբարության գնահատման էներգետիկական սխեսմը, հիմք ընդունելով փոխանակման էներգիան, մեր հետազոտություններում ճշված կերերի գնահատումը կատարելով վարակային կերամիավորով, միաժամանակ վերահաշվարկման մեթոդով որոշվել է ճրաւց էներգետիկական սննդաբարությունը:

Այս մեթոդով գնահատման դեպքում որոշում են փոխանակման էներգիայի չափը, որը իրենից ներկայացնում է կերի կամ կերաբաժինի մի մասը: Վերջինս օրգանիզմի կողմից օգտագործվում է կենսոսնակության պահպանման և մեքքի ձևավորման համար: Փոխանակման էներգիայի պարունակությունը կերներում որոշվել է ճրաւցում պարունակվող բովանդակ էներգիայի և արտաթորանքով արտազատված էներգիայի տարբերությամբ, հիմք ընդունելով կերերի քիմիական անալիզի ու մարսելի սննդանյութերի տվյալները: Որպես էներգետիկական կերամիավոր

ընդունված է 2500 կկալորիան: Կերերի սննդաբարության գնահատման ուսումնասիրությունների արդյունքները բերված են թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ 2

Կերի սննդաբարությունը (մեկ կգ-ի հաշվով)

Կերի տեսակը	Ծաղուսկայի մ կերա- քիււոր (կգ)	Էներգիայի պարունակու րյունը (մկալ)	Էներգետի կական կերամիա վոր
Գարու կանաչ զանգված	0, 15	7710	3, 03
Սուդյուտի կանաչ զանգված	0, 19	6244	2, 50
Նիկաւագործի կանաչ զանգված	0, 16	3909	1, 65
Սուդյուտի կանաչ զանգված	0, 16	3399	1, 40
Կոնկաւի կանաչ զանգված	0, 20	4642	1, 85
Ըաքարի ճաւերի	0, 25	6355	2, 54
Նիկաւագործի սիւրս	0, 20	3994	1, 31
Նիկաւագործի հաւաքի	1, 22	23810	9, 05
Ոլորի հաւաքի	1, 16	15185	6, 07

Երաշխավորվում է կաթնային տալաբարությունը բնագավառում աշխատող գողանանաբուժական մասնագետների, գիտական հետազոտությունների ճշված արդյունքները օգտագործել կովերի ռացիոնալ կերակրման կազմակերպման և լիարժեք կերաբաժնի կազման տեսանկյունով:

Шахназарян С. А.

Резюме

На статью Шахназаряна С.А. по теме „Питательная ценность основных кормов растительного происхождения распространенные в НКР“.

В научно –хозяйственных опытах на дойных коровах изучена питательная ценность зеленой массы ячменя, кукурузы, модерны, эспарцета, сорго, а также кукурузного зерна, сахарной свеклы, гороха, кукурузного силоса и ее влияние на качество и количество полусного молока.

Результаты проведенных исследований могут стать основой для составления полноценного рациона молочного скота в условиях НКР.

Բանջարաբուծային բույսերի մշակումը առանց սամփլման

Ռ. Թ. ԽԱՍԱԿԵՍՅԱՆ

Բանջարաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության արտադրության առավել աշխատատար ճյուղերից մեկը: Հատկապես դա վերաբերվում է այնպիսի կուլտուրաներին, ինչպիսին են վաղամրը, պտճիորը, բաղդջանն ու տադեղը, որոնց մշակումը կապված է նրա հետ, որ սկզբում անհրաժեշտ է ստանալ սամփլներ, իսկ այնուհետև նրանց տնկելով բաց գրունտում և կատարելով անհրաժեշտ խնամք, ստանալ արտադրանք: Հայտնի է նաև, թե ինչքան աշխատանք է միջոցներ է անհրաժեշտ ծախսել վնդիկչալ կուլտուրաների սամփլները ջերմոցներում ստանալու համար: Դրա ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի մոտավորապես 10%:

Այս հարցի նշանակությունը չապես մեծացում է մեզ մոտ: Արցախում, հողի սեփականացման հարցի պայմաններում, որտեղ ոչ բոլոր աշխատողներն ունեն հավասար պայմաններ բարձրորակ և անհրաժեշտ քանակությամբ սամփլներ ստանալու համար: Հնարավորություն ունենալով սեփական սամփլներ ստանալու՝ նրանք հաճախ տալիսված են նրանց գնել, անգամ ոչ այնքան էլ լավ որակի: Մինչդեռ սրբակալիկան ցույց է տալիս, որ մի շարք հիվանդությունների աղբյուր է հանդիսանում ջերմոցը, որտեղ ոչ ճիշտ աշխատանքի հետևանքով արտադրվում է ոչ որակյալ սամփլ և տնկելով նրանց հիմնական տեղում, տեղի է ունենում հողի վարակում, որը շատ բացատրաբար է ազդում բույսերի աճման վրա:

Գյուղատնտեսության հայտնի է, որ հարավի պայմաններում վերոհիշյալ բանջարեղենի զգալի քանակությունը աճեցման են անմիջապես սերմերը գանելով բաց գրունտում:

Որպեսզի բանջարաբուծային բույսերը առանց սամփլների աճեցման, ես առաջարկում եմ մեր հողաբուծերին փորձել այն մեթոդները, որը ևս փորձել եմ 2000 թվականին ժամանակավոր ինժեներականցած հողմաստով: Ես մոտավորապես մարտի վերջին ցանել եմ տունտի, բաղդջանի և տադեղի սերմերը 70 x 30 - 35սմ սման մակերեսով (առաջին թվաճաճը ցույց է տալիս շարքերի միջև եղած հեռավորությունը, իսկ երկրորդը՝ շարքում բույսերի միջև եղած հեռավորությունը), յուրաքանչյուր փոսիկի մեջ գցելով մինչև 5-7 սերմը՝ կախված սերմի որակից և ծյունակությունից: Սերմերը ցանվում են 2-3 սմ խորությամբ: Եթե հողը չոր է, ցանումից հետո անհրաժեշտ է կազմակերպել 1-3 ջրում: Բույսերի առաջացումից հետո կատարում ենք մտադրություն՝ թուղելով յուրաքանչյուր տեղում 1

լավ զարգացած և աճող բույս, իսկ մնացածները հեռացնում ենք: Հետագայում բույսերի խնամքը կատարվում է ընդհանուր ընդունված մեթոդներով՝ ժամանակին կատարվում է հողի բուրվից, բաղախի հողի փխրեցում, բույսերի ջրում, պայթալիկավորությունների, վնասատուների դեմ և այլ աշխատանքներ:

Դիտումները ցույց են տվել, որ սերմերը առաջացած բույսերը վնասողային ժամանակաշրջանում իրենց շատ լավ են դիմարդնում: Անգամ հողամասի հարևանները մկատելով այդ ակնառու տարբերությունը (տնկած սամփլների և սերմերից առաջացած բույսի), որոշեցին հաջորդ տարում իրենք էլ փորձեն այդ տարբերակը: Հետագայում բույսերը նորմալ ծաղկել են, բավական քանակությամբ պտուղներ առաջացրել և մոտավորապես 15-17 օր շուտ են հասունացել: Որպեսզի բույսերի աճը չբողբանա, հասունացած պտուղները ժամանակին պետք է հավաքել: Բաց դրանից այդ բույսերը պտղաբերել են բավական երկար ժամանակ՝ մինչև աշմանային առաջին ցրտահարումները:

Սերմերից առաջացած բույսերի հաջող աճի և պտղաբերման գաղտնիքը կայանում է հետևյալում: Խառնի է, որ ջերմոցներում բանջարաբուծող սերմերի ցանումից հետո նրանց մոտ առաջանում և առանցքային արմատ: Երբ սամփլների ջերմոցները տեղափոխում են ինժեներական տեղը, ապա հողի արմատային սխառնեքը կտրվում է և ջերմոցի նրկի մնում է նրա ստորին մասը և դաշտում սամփլների տնկելիս նրանց մոտ հիմնականում զարգանում են կողային արմատները, որոնք սակայն հարկ մեծ չափ խոր չեն տարածվում և հիմնականում աճում են հողի վերին 30-35 սմ շերտում: Կախված սամփլների որակից և վիճակից՝ նրանք տնկումից հետո հետ են մնում իրենց աճով: Հայտնի է նաև, թե նրանց նորմալ վիճակ վերականգնելու համար ինչքան աշխատանք պետք է կատարվի և ժամանակ ծախսվի (մոտավորապես 10-15 օր): Բույսերի խնամքի ժամանակ պահանջարկ մեծ քանակությամբ ջուր, սնունդ և ուրիշ այլ անհրաժեշտ ռեզիմներ: Միժամանակ է նաև կատարվում աշխատանքների հաճախականությունը, հատկապես այնպիսի աշխատանքների, ինչպիսին են ջրումները փխրեցումը և քաղիանքը: ++++++

Իսկ նրբ բույսերը աճեցնում են անմիջապես սերմերը ցանելիս, ապա առաջացող առանցքային արմատը և նրա ճյուղավորումները հողի մեջ աճել խորք են տարված (մինչև 50-60 սմ ավելի սմ), և նրան կարող են օգտագործել խոնավությունը ավելի ստույգ շերտերից: Այս բույսերը բաց գրունտի անմաշկ պայմանները անցնում են անհրաժեշտ կլիմային պայմաններում ևն ոչ մեծ ցրտահարումից դիմացվում են դառնում եղաշաղի, հիվանդությունների ալյուն կկատարմամբ: Այս բոլորը համալիրի մեծ բարենպաստ է ազդում բույսերի լինդիանում վիճակի վրա, որի հետևանքով նրանց մոտ աղյուրանված

աշխատանք տերևախին ապարատը, իսկ այստեղից՝ վաղ պտղաբերում, բերքատվության բարձրացում և համեմատաբար երկար ժամանակաշրջանում բարձրորակ մերքրի ստացում:

Բանջարանցային բույսերի աճեցումը առանց սածիլների հատկապես արդյունավետ է այն շրջանում, որտեղ վեգետացիայի շրջանում նկատվում է ջրի պակասություն:

Իմ դիտումները ապացուցել են, որ մեր պայմաններում կարելի է տոմատը, բադրիջանը, տաքդեղը հանդուրժյաժք մշակել՝ անմիջապես ցանելով դրանց սերմերը բաց գրունտում: Կարելի է սրանց մեջ ընդգրկել նաև կաղամբը: Լավ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին:

1. Հողը անհրաժեշտ է նախապատրաստել աշնանը՝ կատարելով ցրտահերկ՝ 25-27 սմ խորությամբ: Ընդ որում հողը անհրաժեշտ է 1 հեկտար չափով մտցնել 20-30 տոննա օրգանական պարարտանյութ (գոմաղբ), ինչպես նաև ազոտական, ֆոսֆորական, կալիումական հանքային պարարտանյութեր՝ յուրաքանչյուրին միլիոն հաշվով 60-90 կգ: Անհրաժեշտ է նաև վեգետացիայի ժամանակաշրջանում բույսերին տալ 1-3 սնուցում: Առաջինը սերմերի ծլումից 15-20 օր հետո, երկրորդը՝ առաջինից 20-25 օր հետո, երրորդը՝ երկրորդից 20-25 օր հետո:

2. Ցանքը անհրաժեշտ է կատարել բարձրորակ, նախապես պատրաստած սերմերով: Այստեղ գերադասելի է օգտագործել սեփական ստուգված սերմերը, քանի որ շատ հաճախ խանութից գնված սերմերը ցածրորակ են լինում: Ընչտ ստացած սերմերը լավ պահպանման պայմաններում իրենց ծառայելուքունը չեն կորցնում հետևյալ ժամանակներում՝ կաղամբի և տոմատի սերմերը 4-5 տարի, բադրիջանը՝ 3-5 տարի, տաքդեղինը՝ 3 տարի: Սերմերը անհրաժեշտ է ցանել վերը նշված խորությամբ: Ցանքը անհրաժեշտ է կատարել հետևյալ ժամանակներում՝ նախալեռնային շրջանում կաղամբը մայրի 10-15-ը, իսկ տոմատը, բադրիջանը և տաքդեղը՝ մայրի 25-30-ը, հարթավայրային շրջաններում այս նշված ժամանակներից մոտավորապես 2 շաբաթ առաջ: Նշված ժամանակները համաձայնեցված են այս կուլտուրաների սերմերի ծլման միմիայն ցերմաստիճանների հետ, որոնք կազմում են կաղամբի համար +2-3°C, տոմատի համար՝ +10-11°C, բադրիջանի համար՝ +13-14°C, տաքդեղի համար՝ +8-13°C: Իհարկե այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ տարվա կոնկրետ պայմանները և կատարել անհրաժեշտ ուղղումներ:

3. Վեգետացիայի ժամանակաշրջանում անհրաժեշտ է ժամանակին կատարել նոսրացում, ինչպես նաև 2-3 անգամ քաղիան և հողի փխրեցում, պայքար տանել նաև վնասատուների և հիվանդությունների դեմ, բույսերի ջրումը կատարել

ըստ անհրաժեշտության՝ հատկապես վեգետացիայի սկզբում, բերքահավաքը կատարել ժամանակին, քանի որ այս աշխատանքը ուշացնելու դեպքում բույսերը ծանրաբեռնվում են, նրանց մոտ աճը թուլանում է և նրանք ժամանակից շուտ են ավարտում իրենց վեգետացիան:

Այսպիսով, ժամանակին և որակով կատարված բոլոր աշխատանքները հնարավորություն են տալիս ստեղծել բույսերի նորմալ աճի և պտղաբերման համար օպտիմալ պայմանները երկար ժամանակաբացաքում: Ընդ որում էապես կրճատվում են աշխատանքի և միջոցների ծախսերը բանջարանցային մթերքների ստացման համար, և արդյունքները արդյունավետ են լինում:

Ես առաջարկում եմ հողի աշխատավորին փորձել բանջարանցային կուլտուրաների մշակումը այս եղանակը: Իմ կարծիքով դա անհրաժեշտ է ուշադրության, օրենսդրական և գնահատման:

Р. Т. Хасапетян

Резюме

Известно, что возделывание таких распространенных овощных культур, как капуста, томат, перец и баклажан, связано на первом этапе с получением их рассады.

Изучение этих культур показало, что можно избежать рассадный метод и посеять их семена непосредственно в открытый грунт.

Предлагаемый метод сокращает затраты труда и средств на производство рассады, что составляет примерно 11% от общих затрат. Кроме того, используя особенности развития корневой системы при этом методе, кусты хорошо растут, рано плодоносят и обеспечивают нормальный и качественный урожай на протяжении длительного периода времени.

Խաղողի վազի տերևային մակերեսը

կապված հողի ջրային ռեժիմի հետ

Գ. Ա. Հ ա կ ո բ յ ա ն , Ա. Ն. Հ ա կ ո բ յ ա ն

Հայտնի է, որ բույսերում օրգանական նյութերի կուտակման քանակն ու որակը կապված է տերևային մակերեսից:

Աշխատանքի նպատակն է՝ պարզել խաղողի վազի բերքատվության և բերքի որակի կախվածությունը հողի խոնավության շարժունությունից (դինամիկայից) և տերևային մակերեսից: Ուսումնասիրությունները կատարվել են Մարտունու շրջանի Կարփին տեղամասում:

Նյութը և մեթոդը:

Հողի խոնավությունը որոշվել է կշռային եղանակներով, իսկ տերևային մակերեսը՝ Լազարևսկու մեթոդով: Փորձարկումները կատարվել են երեք կրկնողությամբ, ըստ որում հողի խոնավությունը ուսումնասիրվել է ապրիլի 5-ից մինչև հոկտեմբերի 15-ը, հաշվի առնելով վազի զարգացման փուլերը: Տերևային մակերեսը ուսումնասիրվել է վեգետացիայի ընթացքում երեք անգամ՝ հունիսի 20-25-ը, հուլիսի 20-25-ը և սեպտեմբերի 5-10-ը, այսինքն տերևային մակերեսի բուն աճի պրոցեսների գործնականորեն դադարի շրջաններում և արտադների հասունացման ժամանակ: Հողի խոնավությունը որոշվել է մինչև 200 սմ խորության վրա: Հողի նմուշը վերցվել է Ս. Ֆ. Նեգովցիովի ստեղծած բուրով: Ուսումնասիրվել է որոշվողի խաղողի ստորը:

Արդյունքները և քննարկումը:

Ուսումնասիրություններից պարզվել է (աղյուսակ 1), որ բուրքոցների բացման ժամանակ 200 սմ խորության վրա յուրաքանչյուր 10 սմ հողի շերտում եղել է 22,58% ջուր: Ծաղկման ժամանակ զբաղեցվել է խոնավության իջնույմ մինչև 17,73%: Ծաղկումից հետո այգին ջրվել է՝ հեկտարին տրվելով 1100 մ³ ջուր, որի շնորհիվ հողի խոնավությունը նորից բարձրացել է մինչև 20,12%: Հողի այդ խոնավությունը միանգամայն բերելուպատ է խաղողի աճի ու զարգացման համար:

Խաղողի հասունացման շրջանում՝ օգոստոսի յուրաքանչյուր 10 սմ հողի շերտում մնացել է 11,64% ջուր, իսկ սեպտեմբերի 5-ին այն նվազել է մինչև 9,95%:

Խաղողի վազերն ի վիճակի են հողից վերցնելու շատ դժվար յուրացվող ջուրը, նույնիսկ, եթե հողի խոնավությունը մինչև 8,6% է (3) (Գ. Ա. Հակոբյան, 1985թ.): Բերքահավաքի ժամանակ հողում մնացել է 9,3% ջուր:

Խոնավությունը վերին շերտերում, որպես օրինաչափություն, ձմեռան ավելի շատ է կուտակվում, քան ստորին շերտերում: Սակայն

վեգետացիայի ընթացքում, ընդհանառակ, ջուրը վեր շերտերից ավելի շատ է ծախսվում: Կայանաավորված է արմատային համակարգ տարածմամբ (5), (4):

Ջրովի պայմաններում, յուրաքանչյուր կիլոգրամ խաղողի համար տերևային մակերեսը հունիսի 25-ին եղել է 1,3 մ², հուլիսի 25-ին՝ 1,5 մ², սեպտեմբերի 5-ին՝ 1,4 մ²: Հողի նման ջրային ռեժիմի ու տերևային մակերեսի դեպքում հեկտարից ստացվել է 18 գնետներ խաղող, 21,6% շաքարայնությամբ, 7,0 գլ թթվայնությամբ: (Աղյուսակ 2):

Միանգամայն այլ պատկեր է ստացվել անջրի պայմաններում: Այս դեպքում, նույն ժամանակաշրջանում բուրքոցների բացման ժամանակ յուրաքանչյուր 10 սմ հողի շերտում խոնավությունը եղել է 20,57%, որը 2,01%-ով քիչ է, քան ջրոն հողում ասում:

Վերջերս խաղողի վազի և պտղաբերման համար հողի խոնավությունը օգտվում էր: Վազի զարգացման փուլերում հողի խոնավությունը աստիճանաբար նվազել է: Այսպես՝ հունիսի 5-ին յուրաքանչյուր 10 սմ հողի շերտում մնացել է 15,68%, հուլիսի 5-ին՝ 13,48%, հուլիսի 25-ին՝ 11,88%, օգոստոսի 5-ին՝ 9,28% խոնավություն: Պտուղների հասունացման շրջաններում (5/VIII - 5/IX) հողի խոնավությունը դարձել է գործնականորեն անստույգ:

Լ. Ա. Ֆոմենկոն (1970թ.) ուսումնասիրելով նման խոնավության պայմաններում տերևային ֆոտոսինթեզի օրվա շարժունությունը, պարզել է, որ ցերեկները, գլխավորապես արևոտ օրերին, հերձանցքները կամ չեն բացվում և չեն աշխատում կամ էլ բացվում են միայն առավոտյան և երեկոյան ժամերին: Խաղողի վազի այդ հատկությունը պայմանավորված է նրանով, որ տերևներում խոնավությունը չցղորշանա: Բացի դրանից վազի իր գոյությունը պահպանելու համար կրճատում է տերևների մի մասը՝ գլխավորապես ծեր տերևները:

Այսպես, անջրի տարբերակում հունիսի յուրաքանչյուր 1 կգ խաղողին ընկել է 1,2 մ² տերևային մակերես, հուլիսին՝ 0,7 մ², սեպտեմբերին՝ 0,5 մ² (աղյուսակ 2): Գիտնականները (Կ. Ստոն-1984թ. Զարաբով-1984թ., Գ. Ա. Հակոբյան-1989թ.) (1, 2, 3) պարզել են, որ յուրաքանչյուր 1 կգ խաղողի համար վազը անոթ է ունենա ոչ պակաս քան 1,2 մ² տերևային մակերես: Դրանից քիչ լինելու դեպքում խաղողն ունենում է ցածր որակ:

Այսպիսով, անջրի տարբերակում ուսումնասիրվող հողամասի յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 21,8% շաքարայնությամբ, 7,5 գլ թթվայնությամբ, 93 գ. խաղող: Ստացված արդյունքներից երևում է, որ անջրի տարբերակում խաղողի բանավորությունը բավականին քիչ է:

Համարվում, որ Ուրարաղի հարթավայրային ու նախալեռնային գոտիներում

անջրդի պայմաններում խաղողի վազերը տուժվում են հողային և օդային նրաշտից, ապա անհրաժեշտ է:

1. Ջրդի դարձնել բոլոր խաղողի այգիները:

2. Շատ խոնավություն կուտակելու համար ագրոտեխիկական փորձարկումները կատարել մեղվա ընթացքում:

Գրականություն

1. Ջարարովա Ե.— խաղողի վազի ձևավորումը, էությունը, բնութագրությունը: Ռոստով, 1984, 204-(211)
2. Ստոն Կ.—վազի տերևային մակերեսի նշանակությունը, Երևան, 1984 (142 - 154):
3. Տակոբյան Գ. Ա.—Դոկտորական ատենախոսություն, 1989 :
4. Растение и вода — перевод с английского А. Д. Воронина и И. И. Судницина. Под редакцией д.ф.м. наук Г. Ф. Хильми, Ленинград, 1987 (96-98).
5. Gardner R- Relation of temperature to moisture tension of soil. Soil sei. Vol 79, N 04. 1985, p.257-265.
6. Фоменко Л. С.—фотосинтетическая продуктивность винограда в зависимости от конструкций куста- Краснодар, 1970 (стр. 7-8).

Лиственная поверхность виноградника связана с земляным и водным режимом

Резюме

Г. А. Акопян, А. П. Акопян

Отсюда вытекает, что для каждого килограмма винограда виноградник должен иметь не менее, чем $1,2 \text{ м}^2$ лиственной поверхности. В случае меньшей поверхности, виноград имеет низкое качество, т. к. в равнинах и подгорных зонах Карабаха в полевых условиях, виноградники страдают от земляной и воздушной засухи. Для этого необходимо:

1. Сделать полевыми все виноградные сады.
2. Агротехнические эксперименты проводить зимой для большого накопления сырости.

**Հողի ջրային ռեժիմի կախվածությունը վազի
գարգազման տարրեր փուլերից**

Աղյուսակ 1

Հողի գեներալիտ կան հորիզոն ները	Բողբոջների բազմաժամանակ		Ծաղկման ժամանակ 5/ VI	Շիվերի և ստաուդների աճի շրջան			Պատուղների հատման ման շրջան 5/ IX	Բերքատու վազի շրջան 10 / X
	5 / IV	5 / V		5 / VII	25 / VII	5 / VIII		
Չորվի աղյուսակ 1600մ ² տարածման հորմոսով								
A - 0 - 60	26, 77	21, 73	16, 75	25, 1	13, 8	10, 42	9, 13	8, 96
B- 60 - 80	24, 5	23, 23	18, 87	23, 06	15, 16	11, 86	10, 2	9, 66
BC-80 - 100	22, 67	21, 96	19, 16	17, 56	14, 3	12, 26	10, 56	9, 73
C - 100-200	16, 37	17, 75	16, 14	14, 75	12, 94	12, 03	9, 92	9, 86
Միջինը	22, 58	21, 16	17, 73	20, 12	14, 05	11, 64	9, 95	9, 3

Անցյալի

A - 0- 60	24, 77	17, 7	15	13, 83	10, 63	8, 5	8, 3	7, 27
B- 60- 80	21, 77	22, 3	16, 4	14, 7	12, 6	9, 6	8, 1	8, 01
BC-80- 100	21, 11	21, 6	16, 5	13, 1	11, 9	9, 3	8, 4	8, 5
C- 100- 200	14, 65	18, 24	14, 84	12, 28	12, 42	9, 74	9, 7	8, 16
Միջինը	20, 57	19, 96	15, 68	13, 48	11, 88	9, 28	8, 62	7, 98

Վազի բերքատվության կախվածությունը հողի ջրային ռեժիմից ու տեղեկային մակերեսից (2001թ.)

Աղյուսակ 2

Տարրեր թուղ	Վազի բերքա- տվույնը (տ/հ)	Ուղեղից ներ- քանակը վազի վրա (հատ)	Տեղեկային մակերեսը մեկ վազի վրա (մ ²)			Բերքատու- ր թուղը 1 հա-ից (ցենտներ)	Մեկ վազի բերքատու- ր թուղը (կգ)	Ուղեղից միջին թուղը (ցրտմ)	Խառնու- ր թուղայն ությունը (%)	Խառնու- ր բրդայնություն (գ / վազ)
			20 - 25 VI	20 - 25 VII	5 / IX					
Ջրովի	80 - 85	93	10, 7	12, 3	11, 5	181	8, 2	194	22, 4	7, 0
Մեկ կգ խառնու- ր թուղայն մակերեսը (մ ²)			1, 3	1, 5	1, 1					
Անցյալի	55 - 65	72	5, 16	3, 01	2, 15	93	4, 3	60	16, 4	7, 8
Մեկ կգ խառնու- ր թուղայն մակերեսը (մ ²)			1, 2	0, 7	0, 5					

Ներդաշնակ վերլուծության փորձնական հիմնավորումը

Հ.Մ.Մոսկովսկայան, Հ.Ծ.Պետրոսյան,

Ա.Ա.Ահարոնյան, Ա.Հ.Սևոմյան.

Փորձնականորեն դիտարկվում է որոշակի պայմանների բավարարող պարբերական ֆունկցիա, որպես հոլդերի շարքի անդամների գումար:

Մաթեմատիկական անալիզի դասընթացից հայտնի է, որ ցանկաված պարբերաբար փոփոխվող ֆունկցիա, որը բավարարում է Դիրիխլեի պայմաններին ունի հետևյալ տեսքը՝

$$f(t) = \frac{a_0}{2} + a_1 \sin \omega t + a_2 \sin 2\omega t + \dots + a_n \sin n\omega t + b_1 \cos \omega t + b_2 \cos 2\omega t + \dots + b_n \cos n\omega t \quad (1)$$

որտեղ՝ $\omega = 2\pi / T$ - անկյունային հաճախությունն է, իսկ T -ն՝ $f(t)$ ֆունկցիայի պարբերությունը:

Շարքի a_k և b_k գործակիցները որոշվում են հետևյալ բանաձևերով՝

$$a_k = \frac{2}{T} \int_0^T f(t) \cos k\omega t dt \quad (2)$$

$$b_k = \frac{2}{T} \int_0^T f(t) \sin k\omega t dt \quad (3)$$

(2) -ը և (3) -ը կոչվում են Էյլերի բանաձևեր: (1) -ը ձևափոխելով, կարելի է բերել հետևյալ տեսքի՝

$$f(t) = \frac{a_0}{2} + A_1 \sin(\omega t + \varphi_1) + A_2 \sin(2\omega t + \varphi_2) + \dots + A_n \sin(n\omega t + \varphi_n) \quad (4)$$

որտեղ

$$A_k = \sqrt{a_k^2 + b_k^2} \quad (5)$$

$$\tan \varphi_k = \frac{a_k}{b_k} \quad (6)$$


(4) -ի վերլուծության անդամները ընդունված է անվանել $f(t)$ ֆունկցիայի հարմոնիկներ, ընդ որում A_k -ն անվանում են k -րդ հարմոնիկի լայնույթ, իսկ $\varphi_k = \arctg(a_k / b_k)$ - սկզբնական փուլ:

Տված պարբերական ֆունկցիայի լայնույթների և փուլերի որոշումը անվանվում են ներդաշնակ վերլուծություն: Հարմոնիկների լայնույթների և փուլերի համախմբությունը ընդունված է անվանել տված ֆունկցիայի սպեկտր:

Մաթեմատիկայի դասընթացից հայտնի է, որ ուղղանկյունաձև լարման իմպուլսի սպեկտրը ունի հետևյալ տեսքը՝

$$U(f) = \frac{2U_0}{\pi} \left(\frac{\sin \omega t}{1} + \frac{\sin 3\omega t}{3} + \dots + \frac{\sin(2k+1)\omega t}{2k+1} \right) \quad (7)$$

(7) -ում U_0 -ն ուղղանկյունաձև իմպուլսի կրկնակի լայնույթն է (նկ. 1)



Ուղղանկյունաձև իմպուլսի դեպքում բոլոր հարմոնիկների սկզբնական փուլերը հավասար են զրոյի:

Հոլդերի վերլուծության փորձնական հիմնավորումը ցուցադրելու համար, մեր կողմից հաշվարկված և հավաքված է փորձարարական սարքը, որը հնարավորություն է տալիս լարման ուղղանկյունաձև իմպուլս

վերլուծել հարմոնիկների և այնուհետև դիտել նրանց տարբեր կոմբինացիաների վերադրման արդյունքը՝ Նկ. 1-ում բնակված է սարքի էլեկտրական սխեման: Այն բաղկացած է սնուցման աղբյուրից, հինգ (V₁-V₅) էմիտորիային կրկնիչներից, (L2-C7) - (L6-C11) տատանողական կոնտուրներից, „Г“ ստանդարտ ուղղանկյունաձև իմպուլսների գեներատորից, «V6» ուժեղացուցիչից և օսցիլոգրաֆից:

Տատանողական կոնտուրները համալրված են $\omega, 3\omega, 5\omega, 7\omega$ և 9ω հաճախությունների վրա, ընդ որում $= 2\pi f$, որտեղ $f = 5000$ Հց:

Աշխատանքի հիմնական սկզբունքը կայանում է հետևյալում:

„Г“ գեներատորի ելքի ուղղանկյունաձև լարման իմպուլսը „L“ ինդուկտիվության կոճի միջոցով տրվել է նշված հինգ տատանողական կոնտուրներին, որոնցում մակածվում են $\omega, 3\omega, 5\omega, 7\omega$ և 9ω հաճախությունները: Նշված հարմոնիկները տրված են համապատասխան էմիտորային կրկնիչների մուտքներին, ինչպես նաև օսցիլոգրաֆի, T2-T6 բանալիների միջոցով V6 ուժեղացուցիչի մուտքին:

Նշված բանալիների օգնությամբ հնարավորություն է ստեղծվում ուժեղացուցիչի մուտքին տալ հարմոնիկների ցանկացած կոմբինացիա: Քանի որ նկ. 2-ում ներկայացված էլեկտրական սխեմայի թույլատրում է ստանալ ընդամենը հինգ հարմոնիկներ, պարզ է, որ նրանց վերադրումից, օսցիլոգրաֆի էկրան վրա կայացվի ուղղանկյունաձև իմպուլսի մոտավոր պատկեր: Այնլի ճշգրիտ պատկեր ստանալու համար պետք է ավելացնել հարմոնիկների քանակը: Սակայն դրա անհրաժեշտությամբ առանձնապես չի գրագրվել, քանի որ (7)-ի համաձայն, վերադրման մեջ հիմնական ներդրումը կատարում են շարքի առաջին, անդամները: Նկ. 3-ում բերված են 9ω (ա), $(9\omega+7\omega)$ (բ), $(9\omega+7\omega+5\omega)$ (գ), $(9\omega+7\omega+5\omega+3\omega)$ (դ) և $(9\omega+7\omega+5\omega+3\omega+\omega)$ (ե) հարմոնիկների վերադրման հաջորդական պատկերները, որից պարզ երևում է, որ, իսկապես, ցանկացած պարբերական ֆունկցիա կարելի է ներկայացնել ֆուրյեի շարքով:

Վերջում նշենք, որ տվյալ աշխատանքի հնարավորություն է տալիս փորձնականորեն որոշել առաջին հարմոնիկների լայնությունները և պարբերության յուրաքանչյուր 1/12-րդ ինտերվալով նրանց գումարումը ստանալ ուղղանկյունաձև իմպուլսի մոտավոր գրաֆիկը:


Экспериментальное обоснование гармонического анализа

Г. М. Мовсесян, Г. III. Истроян, Р. А. Агаронян, А. Г. Севмян

Резюме

С помощью разработанной и рассчитанной нами схемы и собранной на ее основе установки, показав, что любая периодическая функция, удовлетворяющая условиям Дирихле, представляя собой сумму членов ряда Фурье. В нашем случае, в качестве периодической функции, выбран прямоугольный электрический импульс и показано, что его с удовлетворительной точностью можно получить в результате наложения первых пяти гармоник ряда Фурье.

Данная работа в первую очередь предусмотрена для студентов по специальности „ физика” и „радиофизика”.



Սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները դպրոցական մաթեմատիկայի դասերին

Ժ. Ս. Ֆարսյան, Ռ. Վ. Ավետիսյան, Լ. Վ. Ավետիսյան

Սույն հոդվածում քննարկվում են սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները դպրոցական մաթեմատիկայի դասերին:

Սովորողների ուսումնական գործունեության առանձնահատկությունն այն է, որ կազմակերպվում ուղղություն է տրվում ուսուցչի կողմից և իրագործվում է հատուկ ուսուցման միջոցների՝ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, դիդակտիկ նյութերի, գննական պարագաների, պատրաստի աղյուսակների, ֆունկցիաների զծառատվությունների ու ժամանակակից ուսուցման տեխնիկական միջոցների օգնությամբ: Ցանկացած բնույթի ուսումնական գործունեություն ենթադրում է որոշակի ծավալով նյութի հաղորդում և նրա արդյունքի յուրացում: Դպրոցական բոլոր ուսումնական առարկաներից, մասնավորապես, մաթեմատիկայի հաղորդվող գիտելիքների յուրացման տակ պետք է հասկանալ հատուկ գործընթաց, որի մեջ ներ է տեսնվում ըմբռնումը, մտածողությունը և հիշողությունը: Ռուսական հոգեբաններն իրենց հետազոտությունների մեջ դպրոցական բոլոր ուսումնական առարկաներից հաղորդվող գիտելիքները ըմբռնումը հիտում են որպես սովորողի կողմից իրականության ճանաչման հիմնական ձև: Ուստի մանկավարժական հոգեբանության, մաթեմատիկայից և դպրոցական մյուս ուսումնական առարկաներից հաղորդվող գիտելիքների ըմբռնումը պետք է մանավորված է սովորողի զգայական օրգանների կառուցվածքով: Սակայն, որպեսզի աշակերտի գլխավորումը ծագի առարկայի շոշափողական, տնտղական կամ լսողական պատկերը, անհրաժեշտ է, որ նրա և առարկայի միջև ստեղծվի գործունե հարաբերություն: Այսինքն՝ հաղորդվող մաթեմատիկական և մյուս ուսումնական առարկաների գիտելիքների ըմբռնումը ձևավորվում է աշակերտի ակտիվ գործունեությամբ արդյունքում: «Չնայած ըմբռնման գործունեությունը հատուկ գործունեություն է այն իմաստով, որն զգացման ձևերում ձևերում անմիջականորեն կապված է առարկայի վրա մարդու գործունե սպեցիզության հետ և որպես հոգևոր սնունդ՝ ունի առարկայի սուղեկերով պատկերը (այսինքն՝ գաղափարական սնունդը), այն այնուհանդերձ իր առարկային ենթարկվող իսկական առարկայական գործունեություն է...» [1] էջ 36:

Ժամանակակից հոգեբանությունը պահանջում է, որ մտածողությունը նույնպես պետք է դիտել որպես կենդանի մարդու՝ աշակերտի գործունեություն: «Ինչպես և արարելի գործունեությունը մտածողությունը պետք է տեսլաճան է այս կամ այն պահանջներին և շրջումներին... ինչպես և կանգնում իրագործվող գործունեությունը, որը բաղկացած է գիտակցական նպատակների ենթարկվող գործողություններից:

Վերջապես, ինչպես և արարելի գործունեությունը, մտածողությունը իրագործվում է այս կամ այն միջոցներով, այսինքն՝ որոշակի գործառնության օգնությամբ, տվյալ դեպքում՝ տրամաբանական կամ մաթեմատիկական» [1] էջ 55:

Սովորողների մաթեմատիկական մտածողության գործունեությունը կարող է ընթանալ ներքին և արտաքին ձևերով, այնպես էլ նյութական առարկաների հետ արտաքին ձևերով: Դպրոցական բոլոր ուսումնական առարկաների, մասնավորապես մաթեմատիկայի ուսուցման ընթացքում սովորողի ստացած գիտելիքները հիշելը, ինչպես նաև մյուս հոգեկան գործընթացները, նույնպես գործունեություն են: Հիշում է, արդյոք, սովորողը մաթեմատիկայից ձեռք բերած գիտելիքները, վերաբերում է արդյոք նա, վերաբարադրում է արդյոք հայտնի, ճանաչում է արդյոք այս գործընթացներից յուրաքանչյուրը: Այն պահանջում է կամային ջանքեր և դրդումներ իրագործվում է հատուկ գործառնության օգնությամբ իրականացվող գործողությունների արդյունքում (օրինակ, նյութերի իմաստային խմբավորումը ընթացքում կամային ջանքեր և դրդումներով իրականացվող գործունեությունը): Այսպիսով՝ հոգեբանական հասկացություններից՝ ըմբռնումը մտածողությունը և հիշողությունը մաթեմատիկայի ուսուցման ընթացքում, աշակերտի ակտիվության վրա հիմնված հոգեկան գործընթացներ են, նրա ուսումնական գործունեության տեսանկյուն: Վերաբարադրվող թույլ է տալիս ճշգրտելով սովորողների ստացած գիտելիքների, մասնավորապես մաթեմատիկական գիտելիքների «յուրացում» հոգեբանական հասկացության իմաստը: Գիտելիքների յուրացումը աշակերտի գործունեությունը հատուկ ձևն է: Հայտնի հոգեբան Վ.Ա.Լյուտոսկևոյ բաժնրով՝ «Յուրաքանչյուր, բառի լայն իմաստով, աշակերտի կազմակերպված, ճանաչողական գործունեություն է...» [2] էջ 152: Ռուսական հայտնի գիտնական-հոգեբաններ՝ Վ.Վ.Դավյանովը, Պ.Յու.Գապտիշևի, Գ.Ս.Լյուտոսկևոյ, Ա.Ն.Լեոնտով, Ն.Ն.Սենչինսկայան, Ն.Ֆ.Վելյուկին և ուրիշներ, որոնք հոգեբանավարժական գիտությունը հարստացրել են ֆունդամենտալ հետազոտություններով, նշանակալից ավանդ են ներդրեցին բոլոր ուսումնական առարկաների, այդ թվում և մաթեմատիկայի դպրոցական ուսումնական գործունեության կազմակերպման հիմնահարցի լուծման մեջ: Նրանք հաստատել են նաև այդ ուսումնական առարկաների ակտիվ ուսուցման ստրատեգիան:

Սովորողների կողմից մաթեմատիկական գիտելիքների ձեռք բերումն իրականացվում է ուսուցչի ղեկավարությամբ՝ նրանց կողմից որոշակի ճանաչողական գործունեության կատարման արդյունքում: Այննայն է, որ այդ գործունեությունը կարող է մեծ կամ փոքր չափով լինել արդյունավետ, նրա արդյունավետությունն անմիջականորեն կախված է մաթեմատիկայի ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերից ու մեթոդներից: Դիտումները ցույց են տվել, որ իրականում միջնակարգ դպրոցում, սովորողների ուսումնական գործունեությունը մաթեմատիկայից միշտ չի հաջողվում կազմակերպել արդյունավետ ձևով: VII դասարանում, ամբ է կազմել հանրառաջից մի դաս «Թվաբանական քառանկյան արմատի հասկացությունը» թեմայով: Ուսուցիչը դասին մի քանի օրինակները դիտարկելուց հետո, ձևակերպել է թվաբանական քառանկյան արմատի հասկացության սահմանումը: Այնուհետև, նա մտնել է համապատասխան սիմվոլիկ նշանակումներ և պարզաբանել, որ $\sqrt{x}$ արտահայտությունը իմաստ ունի միայն x -ի ոչ բացասական արժեքների դեպքում և նոր նյութի հաղորդման գործընթացն ավարտելով, բերել է հետևյալ օրինակները:

Ապագուցել, որ 6 թիվը 36-ի թվաբանական քառանկյան արմատն է, իսկ -8 թիվը 64-ի թվաբանական քառանկյան արմատը չէ, կամ թե չէ 0,7 թիվը 4,9-ի թվաբանական քառանկյան արմատը չէ և այլն: Դրանից հետո հանրառաջի դասագրքի համապատասխան կետից աշակերտները կարող են մի քանի վարժություններ: Վարժությունների կատարման գործընթացից ներկայումս է սովորողների պատճառների անվճարվածությունը, հաճախ թույլ են տվել կոպիտ սխալներ, ուսուցիչը ստիպված էր դասի վարման ժամանակ գործունե միջանոցային օգնել դասարանին: Իհնչ է պատճառը, որ սովորողները թվաբանական քառանկյան արմատի պարզագույն հարցերին, որոնք փաստորեն համապատասխանում են դասի հիմնական նպատակին: Մասնավոր բնույթի այդպիսի պատճառները կարելի է ցույց տալ բավականին շատ: Նշենք դրանցից մի քանիսը՝ ա) սովորողների մեծամասնության կողմից հաղորդված դասարանյութի մեջ թափանցել վարդապետի, բ) խորությամբ ընկալված մաթեմատիկական մտքի անբավարար հասկանալի և հիշելը, գ) կայուն ուշադրության բացակայումը և այլն:

Նկատարելով պատճառների թվաքանակը կարելի է շարունակել, սակայն ուսուցչի հետ հանգամանորեն գոյություն, նախորդ ու նոր նյութերի հաղորդման մեթոդականների վերլուծությունից և սովորողների տևողությունը նայելուց հետո, բացահայտվեց վճռորոշ պատճառը՝ դա տվյալ թեմայի ուսուցման գործընթացում սովորողների ուսումնական գործունեության անհաջող կազմակերպումն է: Ուսումնական գործունեության կազմակերպման ընթացքի ճիշտ չլինելը, ամենից առաջ կայանում էր նրանում, որ անբավարար էր մշակված հաղորդվող նյութի ուսուցման մեթոդիկան: Տվյալ դեպքում ուսուցիչը ձգտում էր նյութի ձևական շարադրմանը, հաշվի չառնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները ու նրանց գիտական մակարդակը: Հենց դրա համար էլ սովորողներն անպատշաճ գտնվեցին նոր վերացական հասկացության մոտման ընկալմանը, նրանց չեղելական, օգտալիկ ու տրամաբանական մտածողության զարգացման փորձում բացակայում էին ուսուցչի կողմից հաղորդված նյութի ընկալման համար անհրաժեշտ տվյալներ: Բացի այդ բոլորից, սովորողների համար կազմակերպված անբավարար ճանաչողական գործունեությունը անմիջապես տվյալ դասին: Դեռ ավելին, ուսուցչի կողմից ընտրված մեթոդիկայի համաձայն դասի վարման գործընթացում, սովորողները ընկալում էին պատրաստի գիտելիքներ և յուրացնում համապատասխան կարողություններ վարժությունների լուծման վերաբարձրման նդանակով: Ուրիշ կերպ, սովորողները ստիպված էին մնալ ոչ գործուն լսողների դերում՝ ուսուցչի բացատրության ժամանակ: Փաստորեն, սովորողները գործում էին, սակայն նրանց գործունեությունը բավարար չափով ակտիվացված չէր: Ուսուցչի կողմից տեսական նյութի հաղորդման և վարժությունների կատարման ընթացքում, աշակերտները փաստորեն «դատապարտված» էին ոչ գործուն ընկալողի դերում, այն դեպքում, երբ հնարավորություն կար տվյալ նյութի ուսուցման կազմակերպել այնպես, որ սովորողները ինքնուրույն հանգեին թվաբանական քառանկյան արմատի հասկացության սահմանմանը, իսկ ուսուցիչը միայն կարող էր մտնել նոր տեղիքների հասկացությունները: Այդ ուսումնական գործունեության հոգեբանական առանձնահատկությունը այն է, որ նա չունի բավարար ուժեղ դրդող ազդակներ (մոտիվներ), այն ընթանում է այս կամ այն գործողությունը: Ինչպես պնդում են գիտնական-հոգեբանները, դպրոցական բոլոր առարկաների, մասնավորապես մաթեմատիկայի ուսուցման խնդիրը այն է, որպեսզի յուրաքանչյուր դեպքում սովորողների ուսումնական

Մաթեմատիկայից կազմակերպված վերոհիշյալ դասի ուսումնական գործունեությունը իրականացնող հիմնական գործողությունը կրում էր միանգամայն վերացական բնույթ, քանի որ չէր հարաբերակցվում հստակ ձևակերպված նպատակի հետ: Ընգծենք նաև, որ աշակերտների մտածողությունը և հիշողությունը ոչ մի կերպ չէին խթանում իրար: Պետք է ասել, որ սովորողների մոտ կապտվող ակտիվությունը ուղղված չէր դասի վարման գործընթացում դրված նպատակին հասնելու: Մեր կարծիքով դպրոցական մաթեմատիկայի ուսուցման գործընթացում յուրացվում է միայն այն նյութը, որը անմիջականորեն որևէ գործողության նպատակն է և մտնում է ուսումնական գործունեության կառուցվածքի մեջ: Այսինքն՝ յուրացման ենթակա մաթեմատիկական նյութը անհրաժեշտ է ուսուցանվողի առաջ կանգնի որպես առարկա, որին ուղղված է այս կամ այն գործողությունը: Ինչպես պնդում են գիտնական-հոգեբանները, դպրոցական բոլոր առարկաների, մասնավորապես մաթեմատիկայի ուսուցման խնդիրը այն է, որպեսզի յուրաքանչյուր դեպքում սովորողների ուսումնական

գործունեությունը կազմակերպվի ուսումնասիրվող նյութի բովանդակության համապատասխան: Այդ նպատակով անհրաժեշտ էր բացահայտել ուսումնական գործունեության բովանդակությունն ու կառուցվածքը դասի գործընթացի անցկացման տվյալ փուլում, այսինքն սահմանել յուրաքանչյուր առարկան, ինչպես նաև պարզել տվյալ նյութին համահասկողական գործողությունների իրականացման շղթան, որոնք պետք է իրագործվեն տվյալ ուսումնական գործունեությունը:

Այսպիսով ժամանակակից հոգեբանության հետազոտությունների և մեր կողմից կատարած ուսումնասիրության համաձայն, սովորողների գործողությունները հանդես են գալիս որպես մաթեմատիկական նյութի գիտակցական յուրացման միջոցներ և որպես գիտելիքների յուրացման գործընթացում առաջատար բաղադրամասեր: Մեր կողմից կատարած հետազոտության տվյալները վկայում են նաև, որ յուրաքանչյուր դեպքում մաթեմատիկայից ուսումնասիրվող նյութի բովանդակության համապատասխան գործողությունների համակարգի առանձնացումը բարդ մեթոդական խնդիր է, այն միշտ հաջողությամբ չի լուծվում: Գիտելիքների յուրացման վիճակի ուսումնասիրման վերաբերյալ հետազոտությունները վկայում են այն մասին, որ սովորողների մոտ, հաճախ արժանի չափով չի ձևավորվում հասկացության ճանաչման գործունեությունը: Օրինակ, դրա արդյունքում հանդիպում ենք հետևյալ տեսքի սխալներին՝

$$\frac{a+b}{a} = b; a^3 + b^3 = a^3 + 3a^2b + 3ab^2 + b^3; \frac{a^2 + b^2}{a+b} = a+b; \frac{a^2 - b^2}{b^2} = a^2 - 1$$

Դիտարկենք մի պայման ըստ որի կարևոր է սովորողներին հաղորդված մաթեմատիկական նյութի յուրացումը բավարար և արդյունավետորեն կազմակերպելու համար: Այդ առումով հոգեբանները պնդում են, որ ներքին մատողության նոր եղանակներով կազմակերպվող նյութի ուսուցումը և նրա յուրացումը չի կարող տալ շղթայի արդյունքներ, եթե այն չանցնի ուսուցման արտաքին և նյութական գործունեությունների փոխերով: Այսինքն՝ սկզբունքորեն մաթեմատիկայից մատուցված նոր նյութի յուրացումը տեղի է ունենում ըստ ուսուցման ձևի՝ սովորողների արտաքին գործունեության կազմակերպման արդյունքում: Ինչ գործընթացի իրականացման ժամանակ հնարավորություն է ստեղծվում կառավարել սովորողների կողմից մաթեմատիկական գիտելիքների ընկալումը և ուշադրության ուղղվածությունը, իրագործել ճիշտ վերահսկողություն գործողությունների յուրացման ընթացքի վրա, ժամանակին ուղղել մաթեմատիկական նյութից կատարված սխալները և հասնել կայուն գիտելիքների: Մաթեմատիկայի ուսուցման գործընթացի կազմակերպումը և մանկավարժական հոգեբանության կողմից որոշված ներկա պահանջները, պետք է իրագործվի տարբեր ուղիներով: Ամենից առաջ այն հնարավորություն է տալիս մաթեմատիկական ձևափոխությունների և ապացույցների ընթացքը մանրամասնորեն գրի առնել գրատախտակի վրա և տնտրել: Ուսուցիչ-պրակտիկներին լավ հայտնի է ուսուցման ընթացքում դատողությունների և ապացույցների ընթացքի այդպիսի գրառման կարևորությունը (որը չի կատարվում որոշ ուսուցիչների կողմից): Այսպես օրինակ՝ միանդամ բազմանդամով բազմապատկելու համար հարկավոր է աշակերտներին սովորեցնել, որ ուսուցման սկզբնական փուլում ձևափոխությունները կատարեն մանրամասնորեն: Նշվածը գույց տանք կոնկրետ օրինակով.

$$-0.6a(2a^2 - a + 4) = 2a^2(-0.6a) - a(-0.6a) + 4(-0.6a) = \text{և այսպես շարունակել:}$$

$$\text{վերցնենք մի օրինակ ևս. } (x + 2xy - y^2)(-0.8xy) = x(-0.8xy) + 2xy(-0.8xy) - y^2(-0.8xy) = \text{և այլն:}$$

Չնայած դրան՝ մաթեմատիկայի ուսուցման կազմակերպման պրակտիկայում հաճախ տեսնում ենք, որ ուսուցիչները ժամանակի տնտեսման նպատակով սովորողների դրդում են հենց սկզբից ձևափոխությունները կատարել համառոտ (մտքում): Մաթեմատիկական ձևափոխությունների կատարման այդպիսի վաղ գործընթացի՝ «պաթաթումը» սովորողների վզին բերում է նրան, որ յուրաքանչյուր գործընթաց «վրիպում է» կամ թե չէ՝ «սպառարւմ է» ուսուցչի վերահսկողությունից, և սխալները ժամանակին չեն ուղղվում: Ըստ ընթացման ձևի, սովորողների ուսումնական գործունեության արտաքին գործողությունները կրելի է կազմակերպել նաև զենական պիտույքների միջոցով: Ժամանակակից գնահատությունն է, որ հնարավորություն է տալիս IV-VIII դասարանների մաթեմատիկայի ուսուցման գործընթացում օգտագործել այդպիսի միջոցների մի ամբողջ հավաքածու: Այդպիսի զենական պիտույքներ են՝ կոորդինատային ուղիղը և կոորդինատային հարթությունը, ֆունկցիաների գծապատկերները, տարբեր տեսակի սխեմաները և աղյուսակները, որոնք հնարավորություն են տալիս վերլուծական դատողությունները փոխադրել ներաշխարհական լեզվին: Որպես օրինակ, դիտարկենք կոորդինատային ուղիղի մեկ փոփոխականով գծային անհավասարումների համակարգերի լուծման ուսուցման գործընթացում: Այդ համակարգերի լուծման եղանակին տիրապետելու համար, սովորողներն առաջին հերթին պետք է կարողանան լուծել հետևյալ տեսքի պարագույն անհավասարումների համակարգերը.


$$\begin{cases} x > a; \\ x > b; \end{cases}; \begin{cases} x > a; \\ x < b; \end{cases}; \begin{cases} x < a \\ x < b \end{cases} \text{ և } \begin{cases} x < a \\ x > b \end{cases} :$$

Այստեղ a -ն և b -ն կամայական թվեր են, ընդ որում $a < b$ և x -ը փոփոխական են: Հիտարկվող ուսուցման մեթոդիկայի էությունը այն է, որ հետազոտվող համակարգերի լուծման գործընթացը փոխարինվում են իրենց ներկայացված մոդելներով: Սովորողներին հայտնի է, որ թվի ներկայացվածական համարժեքը կոդինատային ուղղի կետն է: Այդ պատճառով էլ, $x > a$ կամ $x < a$ պարզագույն անհավասարությունների լուծման մեջ ներկայացվող տերմինների լեզվում համապատասխանում են հետևյալ կիսաուղիները:



Նկ.2

Օգտվելով տվյալ մեթոդական հնարից, սովորողները կարող են կառուցել այդ տեսքի չորս համակարգերից յուրաքանչյուրի ներկայացված մոդելը: Սովորողները հարահաջվի դասընթացից գիտեն, որ լուծել անհավասարությունների համակարգը նշանակում է գտնել նրա մեջ մտնող անհավասարությունների յուրաքանչյուրին բավարարող բոլոր թվերը: Իսկ, ներկայացվող տերմինների լեզվով, դա հնչում է այսպես՝ պետք է գտնել այն կետերը, որոնք պատկանում են յուրաքանչյուր անհավասարությանը համապատասխանող կիսաուղիներին: Այսինքն յուրաքանչյուր դեպքում, օգտվելով համապատասխան գծագրից, սովորողները կարող են յուրաքանչյուր համակարգի լուծման պատասխանը ստանալ «ձեռքի» նշանակով, առանձնացնելով կոդինատային ուղղի այն մասը, որում գծապատումը կատարված է կրկնակի (կամ ցույց տալ, որ այդպիսի կետեր չկան):



Նկ.3

Այնուհետև մնում է ստացված պատասխանները գրել հանրահաշվի տերմինների լեզվով:

Ավելիստ է, որ գծային անհավասարությունների համակարգերի լուծման ուսուցման գործընթացում սովորողներին շատերի համար գծագրի օգնությամբ լուծման արդյունքի ստացման անհրաժեշտությունը որպես օժանդակ միջոց ներկրողական կդառնա, և համապատասխան պատկերները «վաշակվեն» մտքում: Մակայն հետագա տարիների ըրել սխալի դեպքում, սովորողները կարող են նորից վերադառնալ ներկայացված մոդելի օգնությամբ համակարգերի լուծմանը: Մեկ փոփոխականով գծային անհավասարությունների համակարգերի լուծման ուսուցման սույն մեթոդիկան ամբողջովին համապատասխանում է հոգեբանների նրաշխատությանը, որի համաձայն անհրաժեշտ է հաղորդված նոր նյութի յուրացման աշխատանքը կառավարել ըստ ընթացման ձևի՝ սովորողների ուսումնական գործունեության արտաքին գործողությունների կազմակերպման միջոցով: Որպեսզի ընդգծենք առաջարկված ուսուցման մեթոդիկայի կիրառման առանձնահատկությունները, նշենք որ բոլորովին վերջերս, նման համակարգերի լուծման գործընթացում սովորողներին առաջարկվում էր յուրաքանչյուր դեպքում, առաջնորդվել հետևյալ կանոններով. Նշել մեկ փոփոխականով 2 գծային անհավասարությունների համակարգի մեջ մտնող անհավասարությունները նույն նշանի են, ապա համակարգի լուծումներն են a և b թվերից մեծից մեծ կամ թվերից փոքրից փոքր բոլոր թվերը: Իսկ եթե համակարգի մեջ մտնող անհավասարությունները տարբեր նշանի են, ապա այդ տեսքի համակարգերը կամ լուծում չունեն կամ որպես լուծում են ծառայում a և b թվերից փոքրից մեծ և այդ թվերից մեծից փոքր բոլոր թվերը: Սովորողները պետք է մտովի պարզեն դրանք և առաջնորդվեն նախատեսված կանոններով: Ինքը մտքմատիկական կանոնը կամ սահմանումը շատ դժվար էր ընկալման համար, իսկ նրա հիշման համար ոչ մի արտաքին հենարան չէր տրվում: Զարմանալի չէ, որ դիտարկված մեկ փոփոխականով գծային անհավասարությունների համակարգերի լուծման ուսուցման գործընթացը, ըստ դասագրքի շարադրման մեթոդիկայի՝ հաճախ հանդիպում է դժվարությունների: Նշենք, որ կոդինատային ուղղի օգնությամբ մեկ փոփոխականով գծային անհավասարությունների համակարգերի լուծման ուսուցման վերադառնալ մեթոդիկան ընդհանրապես չի պահանջում հատուկ ձևակերպումներ և որևէ կանոնի կամ սահմանման վերաբերյալ: Սովորողների ուսումնական գործունեության իրականացման վերլուծությունից և դիտարկված օրինակների կատարումից բերելի է կատարել մի ընդհանուր եզրակացություն: Ուղեայլ ապրողում, մաթեմատիկական նյութերի ուսուցման և նրանց արդյունքների յուրացման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է սովորողների ուսումնական գործունեության ճիշտ կազմակերպումից:

Գրականություն

1. А.Н.Леонтьев. Деятельность, сознание, личность. М.: Политиздат, 1977
2. Վ.Ա.Լուրտոնցկի. Մանկավարժական հոգեբանության հիմունքները. «Լույս» հրատարակչություն, Երևան 1976թ.
3. Ն.Ս.Արզումանյան. Մաթեմատիկայի ուսուցման տեսության տարրերը, «Լույս» հրատարակչություն, Երևան 1968թ.
4. Դպրոցական մաթեմատիկայի գործող դասագրքեր սկսած 2001թ-ից:
5. Լ.Ս.Աթանասյան և ուրիշներ. Երկրաչափություն դասագիրք 6-8 դասարանների համար. 1993թթ. հրատարակչություն:

Սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները դպրոցական մաթեմատիկայի դասերին
Ժ.Մ.Ֆարսյան, Ռ.Վ.Ավետիսյան, Լ.Վ.Ավետիսյան
Ամփոփում

Այսպիսով, մանկավարժական հոգեբանության «Ուսումնական գործունեություն» հիմնարար հասկացությունը և նրա առանձնահատկությունները կարելի է հաջողությամբ օգտագործել մաթեմատիկայի դպրոցական ուսուցման կազմակերպման գործընթացում և հասնել շոշափնի արդյունքի:

Психологопедагогические особенности организации учебной деятельности учащихся на уроках школьной математики

Ж.С. Фарсиян, Р.В. Аветисян, Л.В. Аветисян

Резюме

Таким образом, внешние и внутренние стороны, существенные свойства и форма основополагающего понятия “Учебная деятельность” в педагогической психологии, можно с успехом использовать в процессе организации обучения математике в школе и достичь хороших результатов.

Ձուրը որպես միջնորդ բջջի և օրգանիզմի վրա էլենկտրամագնիսական դաշտի կենսաբանական ազդեցության իրագործման համար

Ա. Ս. Ավանեսյան, Ս. Հակոբյան, Ա. Ամյան,
Գ. Սահակյան, Ժ. Ալլահվերդյան, Գ. Հայրապետյան, Ա. Հունանյան
Արցախի պետական համալսարան
Բժշկականաբանական միջազգային ուսումնական կենտրոն

1991-

Ժամանակակից տեխնոլոգիաներում անընդհատ ավելանում են տարբեր ֆիզիկական գործոնների միխանիկական տատանումներ, էլեկտրական մագնիսական էլեկտրամագնիսական դաշտեր և այլն, օգտագործումը, դառնալով մարդու կենսագործունեության համար սովորական ու բարդ ազդեցություն թողնող նրևայն։ Այդ է պատճառը, որ խիստ կարևոր է դառնում պարզել գերթյուլ ֆիզիկական գործոնների թիրախը, որով իրականանում է բջջի վրա արտաքին ազդեցությունը։

Հենվելով մեր նախնական ուսումնասիրությունների վրա ենթադրել ենք, որ բջջի հիդրատացումը կարող է հավակնել դառնալու այնպիսի ունիվերսալ թիրախ, որը արձագանքում է ցանկացած թույլ ազդանշանների, որոնք առանձնացված բջջի վրա ընկնում են ինչ-որ կենսաբանական էֆեկտ։ Ներբջջային ջրի ֆիզիոլոգիական կարևորությունը լայնորեն ընդունված է, սակայն հետազոտողները անհրաժեշտ ուղղություն չեն դարձրել բջջի հիդրատացիայի վրա, նույնիսկ այն դեպքում երբ ջուրը հանդիսանում է տարբեր հիվանդությունների նախանշանը։ Մեր կողմից ստացված փորձարարական տվյալները ցույց են տալիս, որ բջջի հիդրատացիան հանդիսանում է շրջակա միջավայրի շատ գործոնների համար որպես ունիվերսալ թիրախ՝

- ջրի կառուցվածքը հանդիսանում է ունիվերսալ թիրախ, որի օգնությամբ ցածր հաճախային էլեկտրամագնիսական դաշտը հաղորդվում է բջջի նյութափոխանակային համակարգին։
- բջջի ծավալի զգայնությունը հանդիսանում է հիդրատացիայի ամբողջ գործընթացի կարգավորողը էլեկտրամագնիսական դաշտի ներգործության և բջջաթաղանթով խոնների համակարգի տեղափոխության ժամանակ։


Յաճախվող էլեկտրամագնիսական դաշտերի կենսաբանական ազդեցությունը կարելի է համարել ապացուցված փաստ, մինչդեռ մեծ հզորություն միկրոալիքային իմպուլսների յուրահատուկ (ոչ ջերմային) կենսաբանական էֆեկտների գոյության հարցը մնում է որպես ապագա ուսումնասիրությունների առարկա։

Չնայած ցածր հաճախության էլեկտրամագնիսական դաշտերի կենսաբանական ազդեցությունը ապացուցված է, սակայն դեռևս լրիվ պարզաբանված չէ այն մեխանիզմը, որով իրագործվում է այն։ Հիմնականում այդ հանգամանքն է, որ խանգարում է

Էլեկտրամագնիսական դաշտի ազդեցության վտանգավոր չափաբաժինների շեմի որոշակի շրջական միջավայրում կենդանի օրգանիզմների առողջության տեսանկյունից: Քանի որ ԷՄՐ-ի ազդեցության կենսաբանական էֆեկտը կախված է բջջի սկզբնական ֆիզիոլոգիական վիճակից, էլեկտրամագնիսական դաշտի արարամետրերից ու շրջակա միջավայրի բնութագրից յուրաքանչյուրություններից, ապա նրա էֆեկտի քանակական չափման համար անհրաժեշտ է ընտրել բջջային պարամետր, որը կգնահատի բջջի ֆունկցիոնալ վիճակը կծառայի որպես համընդհանուր թիրախ տարբեր գործոնների համար:

Ցանկացած արտաքին ֆիզիկական և քիմիական ազդանշան, այդ թվում և ԷՄՐ-ը, և առաջ պետք է ազդի բջիջը ողողող ջրային միջավայրի վրա, իսկ հետո արդեն կենսաբանական էֆեկտը բջջաթաղանթի վրա: Գնայած չի բացառվում նաև ԷՄՐ-ի ուղղակի ազդեցությունը անմիջապես բջջաթաղանթի վրա:

Այսպիսով, գոյություն ունի բջջի վրա ԷՄՐ-ի ազդեցության երկու հնարավոր ճանապարհ՝ առաջինը, ոչ ուղղակի ճանապարհ՝ ջրային կառուցվածքի միջոցով և երկրորդ՝ ուղղակի՝ բջջաթաղանթի վերափոխության միջոցով: Մենք կդիտարկենք միայն առաջին մեխանիզմը (սխ. 1)




Սխ.1

Առաջին մեխանիզմի գործողության հնարավորությունը ստուգելու նպատակով իրականացվել է փորձերի մի շարք, որոնց միջոցով հայտնաբերվել է ԷՄՐ-ի ազդեցության ջրի և ջրային լուծույթների էլեկտրական հաղորդելիության, բույսերի սերմերի ծլողունակության, արմատագույացման ու ջրի կլանման, սպերմայի ֆունկցիոնալ ակտիվության, մանրէների ձևաբանության, աճի և բազմացման, խխունջի ստեղծելիության, բջջաթաղանթի գզայնության վրա:

Փորձերի նշված շարքի իրականացման հիմքում դրվել է հետևյալ գաղափարը, որ էլեկտրամագնիսական դաշտը ջրի կլաստերային կառուցվածքի վրա կարող է ազդել նրկու ճանապարհով՝

ա) էլեկտրական բաղադրիչով՝ ազդելով ջրի բևեռային մոլեկուլների տարածական բաշխվածության (կոդմնորոշման) վրա, հանգեցնելով նրա կառուցվածքի մեխանիկական կտրաման: Այդ դեպքում, բնական է, որ ազդեցության էֆեկտը պետք է կախված լինի ջրի մոլեկուլի՝ դիպոլային մոմենտից: Հետևաբար այն պետք է ունենա արտահայտված հաճախային կախվածություն;

բ) ջրի կառուցվածքը կարող է փոխվել մագնիսական դաշտի ազդեցության տակ նրա վալենտական անկյան փոփոխման հետևանքով (նկ.1): Որպես թիրախ այստեղ հանդես է գալիս թթվածնի չկոմպենսացված սպինը:




Նկ.1


Հիմք ընդունելով այս վարկածները ընտրվել է նույն ժամանակահատվածում, նույն ջրի վրա, նույն հաճախության մեխանիկական տատանումներով և հաստատուն մագնիսական դաշտով ազդելու ճանապարհը ու ուսումնասիրվել է նրանց առանձին և համակցված ազդեցությունը ջրի և կենսաբանական օբյեկտների վրա:

1. ՄՏ, ՀՄԴ և ՀՄԴ-ի ազդեցությունը ջրի էլեկտրահաղորդականության վրա: Դիտարկվել է (3-50) Հց ցածր հաճախային մեխանիկական տատանումների ազդեցությունը ջրի էլեկտրահաղորդականության վրա (նկ.2ա): Փորձերը ցույց են տվել, որ 4 Հց հաճախության դեպքում դիտվում է ջրի էլեկտրահաղորդականության զգալի (-22%) նվազում, նրբ օգտագործվում է նոր պարտաստված թորած ջուր: Նույնանման


արդյունքներ էդիտվել և ԷՄԴ-ի դեպքում և 4 Հց հաճախության էլեկտրահաղորդականության նվազումը կազմել է շուրջ 17% (նկ.2բ):



նկ.2ա



նկ.2բ




նկ.2գ

- a- նոր ջուր
- b- 3օրական ջուր
- c- 6օրական ջուր
- ՄՏ
- ԷՄԴ
- ՀՄԴ

Քանի որ թորած ջրի հատկությունները կախված են պատրաստումից հետո լվալ ժամանակահատվածից (տարիքից), ապա դիտարկվել է էլեկտրահաղորդականության կախվածությունը նույն պայմաններում՝ թաքում նրբ և վեց օր հետո (նկ.2գ): Երեք օր արանից հետո մեկանիկական տատանումների դեպքում, էլեկտրահաղորդականությունը նվազում է 18%-ով, իսկ էլեկտրամագնիսական տատանումների դեպքում՝ 19%-ով: Վեց օրվա դեպքում տարբերությունը նրկուսի համար կազմում է 15%, իսկ մյուս հաճախությունների վրա նվազում է հավասար չափով, սակայն քիչ չափով, քան 15%-ն է: Ընտրվել է 4 Հց հաճախությունը՝ հաշվառելով, որ այդ հաճախության վրա էլեկտրահաղորդականության փոփոխությունը առավելագույնն է:

Հաստատուն մագնիսական դաշտի ազդեցության տակ ևս չափվել է ջրի էլեկտրահաղորդականությունը՝ թաքմ, նրբ օրական և վեց օրական թորած ջրի դեպքում՝ արահաբանելով հավասար ինտենսիվություններ և ստացվել է, որ այս դեպքում մեկ օրում նվազել է 13%-ով, 3 օրվա դեպքում 11%-ով և 6 օրվա դեպքում



- C-հսկողական լուծույթ
- a-թաքմ լուծույթ
- b- 3-օրական լուծույթ
- c- 6- օրական լուծույթ

նկ. 3

9%-ով (նկ.3):


2. ԷՄԴ և ՄՏ-ով մշակված թորած ջրի ազդեցության հաճախ կախվածության կինետիկան բույսերի և սերմերի կողմից ջրի կլանման քանակի, արմատագոյացման ընդունակության և արմատների երկարության վրա: Քանի որ ԷՄԴ-ի և ՄՏ-ի ազդեցությունը ջրի և ջրային լուծույթների վրա ունի հաճախակի կախվածություն, ապա հարց է առաջացել փորձականորեն պարզել ինչ ազդեցություն կունենան այդ գործոնները բույսերի վրա:

Փորձնականորեն ուսումնասիրվել է 4, 10, 15, 20 և 50 Հգ հաճախության ՄՏ-ով և ԷՄԴ-ով 30 րոպե տևողությամբ մշակված թորած ջրի կլանված քանակը գարու և ամսական բոդկի սերմերի կողմից:

Այստեղ ևս դիտվում է կլանված ջրի քանակի կախվածությունը հաճախությունից: Եթե փորձի սկզբնական շրջանում ջրի կլանված քանակությունը տարբեր հաճախությունների համար տարբեր է և կա որոշակի հաճախություն, որի վրա այն նվազագույնն է, ապա ժամանակի ընթացքում տարբեր հաճախությունների վրա կլանված ջրի քանակները հսկված են հավասարվել և դառնալ հավասար հսկողական լուծույթից կլանված քանակությունը (նկ. 4, նկ. 5):



նկ.4



նկ.5

ԷՄԴ-ի ազդեցությունը ջրի կլանված քանակի վրա ունեցած նման ժամանակային կախվածությունը վկայում է այն մասին, որ տվյալ գործընթացը իր հերթին կառավարվում է սերմերի նյութափոխանակության միջոցով, ինչպես նաև կարևոր դեր է խաղում արմատագոյացման գործընթացը: Բացի դրանից ուսումնասիրվել է այդ գործոնների ազդեցությունը այն գործընթացների վրա, որոնք կապված են սերմերի արմատագոյացման և ծրողունակության հետ (նկ. 6, նկ.7)



նկ.6



նկ.7

ՄՏ ազդեցությունը գարու արմատագոյացման վրա

ԷՄԴ ազդեցությունը գարու արմատագոյացման վրա

Ստացված փորձնական արդյունքներից հետևում է, որ ջրի կլանման գործընթացը ոչ միայն ունի հաճախային կախվածություն, այլև գարու ու ամսական բոդկի սերմերի համար

այդ գործընթացների մեջ գոյություն ունեն Լական տարբերություններ: Ինչպես գարու, այնպես էլ բողկի սերմերը 4 Հց հաճախության դեպքում գուցաբերում են ակտիվություն: Մյուս օգտագործված հաճախությունների դեպքում բոլոր տվյալները համեմատած հսկողականի հետ տարբեր են: Տարբեր հաճախությունների ՄՏ և ԷՄԴ նրանց կողմից ընկալվում են տարբեր ձևով: Ստացված գրաֆիկների դիտարկման ժամանակ պարզ է դառնում, որ կախված ջրի կլանման բնույթից, այսինքն սորբցիայի գործընթացից, որը աշխատեցնում է աճման գործընթացը, կարևոր դեր է խաղում ժամանակային կախվածությունը: Նկատելի է, որ ունենք այն, որ սաղմի ներսում տեղի ունեցող գործընթացները գործի են դրվում տարբեր արագություններով: Ըստ եղած տվյալների սերմերի կողմից ջրի կլանման առավելագույն արագությունը դիտվում է թրջելուց հետո՝ առաջին նրկու ժամվա ընթացքում: Ջրի քանակը սկզբնական 11,08%-ից 13,73% հասնելուց հետո սերմերը սկսում են կլանել թթվածին: Հետագա ուղեկու ժամանակ շնչելու ինտենսիվության բարձրացման գույքնաճաց տեղի ունենում ջրի քանակի ավելացում և այդ ուղիղ կախվածությունը շարունակվում է 48 ժամ:

Արմատագոյացման և ծղողունակության որոշման փորձերը իրականացնելուց թրքաջուրը մշակվել է համանման ձևով և սերմը ջրվել է նրկու օրը մեկ անգամ, այսինքն արդյունքները չափելու ժամանակ: 6-ից 19-ը օրը ընկած ժամանակահատվածում կատարվել է արմատային համակարգի չափում, իսկ 12-ից 19-ը օրը ընկած ժամանակաընթացքում չափվել է ծղողունակությունը:


Ստացված տվյալներից (նկ. 7) երևում է, որ ոչ միայն ջրի կլանված քանակն ունի հաճախային կախվածություն, այլև գոյություն ունի Լական տարբերություն գարու և բողկի սերմերի կողմից այն կլանման միջև: Ինչպես գարու, այնպես էլ բողկի սերմերը 4 Հց հաճախության դեպքում գուցաբերել են առավելագույն ակտիվություն: Մյուս բոլոր հաճախությունների դեպքում բոլոր տվյալները, համեմատած հսկողականի հետ ապակտիվացված են: Ապակտիվացիայի հաճախությունը փոխվում է կախված ժամանակից:

3. Ուսումնասիրվել է ՀՄԴ-ի, ԷՄԴ-ի և ՄՏ-ի ուղղակի և անուղակի ազդեցությունը սպերմայի ֆունկցիոնալ ակտիվության վրա.

ա) ՀՄԴ ազդեցությունը սպերմայի ֆունկցիոնալ ակտիվության վրա .

Անուղակի ազդեցություն – անուղակի ազդեցությունը ուսումնասիրելու համար ցուլի ստեղծված սպերման լուծվել է 0,3 Տլ ինդուկցիայով մագնիսական դաշտով նախորդ մշակված ֆիզիոլոգիական լուծույթով:

Փորձը ցույց է տվել, որ մագնիսական դաշտով չմշակված լուծույթում (հսկողական սպերմայի շարժունակությունը 140 բուլետում փոքրացել է 12,5%-ով, այն դեպքում, երբ 0,3 Տլ ինդուկցիայով մագնիսական դաշտով մշակված լուծույթում մեծացել է 36,1%-ով (նկ. 8):




Նկ. 8

Ուղղակի ազդեցություն – նույն դաշտի ուղղակի ազդեցությունը ուսումնասիրելու համար դիտարկվել է երկու դեպք՝

1. Ֆիզիոլոգիական լուծույթում լուծված սպերման դրվել է էքսպոզիցիայի մեկ ժամ տևողությամբ և ուսումնասիրվել է շարժունակությունը հաջորդ երկու ժամվա ընթացքում:

2. Ֆիզիոլոգիական լուծույթում լուծված սպերման դրվել է անընդհատ էքսպոզիցիայի ներք ժամ տևողությամբ (Նկ. 9):



Նկ. 9

Փորձնական արդյունքները ցույց են տվել, որ չմշակված լուծույթում սպերմայի շարժունակությունը 180-րդ րոպեում նվազել է 28%-ով, այն դեպքում, երբ մեկ ժամ էքսպոզիցիայից հետո այն ճնշվել է միայն 5%, իսկ անընդհատ էքսպոզիցիայի դեպքում սպերմայի շարժունակությունը չի փոփոխվել:

բ) ԷՄԴ- ազդեցությունը սպերմայի ֆունկցիոնալ ակտիվության վրա..

ԷՄԴ- ազդեցությունը սպերմայի ակտիվության վրա ուսումնասիրելու նպատակով նախապես ֆիզիոլոգիական լուծույթում լուծված սառեցված սպերման դրվել է 30 րոպ էքսպոզիցիայի 4 Հց հաճախությամբ ԷՄԴ-ում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գոյություն ունի սպերմայի շարժունակության փոփոխության բարդ ժամանակային կախվածություն: Եթե 30-րդ րոպեում հսկիչ նյութում նրա շարժունակությունը նվազել է ընդամենը 20%-ով, ապա նույն պահին ԷՄԴ- մշակված սպերմայի շարժունակությունը նվազել է ընդամենը 4,8%-ով (Նկ. 10):

Նույն հաճախության մեխանիկական տատանումների, նույնպիսի պայմաններում, ազդեցության դեպքում սպերմայի ֆունկցիոնալ ակտիվությունը ևս ունի բարդ ժամանակային կախվածություն և եթե

ԷՄԴ-ով մշակելուց 30 րոպեում նվազել է 4,8%-ով, ապա այս դեպքում աճել է նույն 4,8%-ի չափով (նկ. 11):


4. ՄՏ, ՀՄԴ և ԷՄԴ ազդեցությունը մանրենների աճի, բազմացման և ձևաբանական փոփոխության վրա:

Փորձերը ցույց են տալիս ՄՏ, ՀՄԴ և ԷՄԴ ունենում են մանրենների աճի և բաժանման վրա խթանող կամ ճնշող ազդեցություն: Ազդեցության էֆեկտը պայմանավորված է ինտենսիվությամբ, հաճախությամբ և պահածամով:

Մեխանիկական տատանումներ – Մեխանիկական տատանումների ազդեցության տարածքում տեղի է ունենում E. Coli K շտամի լոն մուտանտի թվանման բջիջների շարժունակության կոտրատման մեծացում: Փորձը կատարվել է երկու եղանակով՝ ուղղակի և միջնորդավորված տատանումների ներգործությամբ: Երկու դեպքում էլ գաժրիաճախային մեխանիկական տատանումների ազդեցությունից անմիջապես հետո խթանում են (4 և 10 Հց) կամ էլ ճնշում են (50 Հց) մանրեի աճը և տրոհումը (նկ. 12): Փորձերը ցույց են տալիս, որ այն դեպքում, երբ 4 Հց մեխանիկական տատանումներով ներգործում են բջջի վրա 30 րոպե, ապա տրոհումը հսկիչի հանդեպ մեծացել է երեք անգամ, իսկ 50 Հց-ի դեպքում տեղի է ունեցել ած դանդաղում մոտ երկու անգամ (նկ. 12):


Նույն պայմաններում ներգործությունից երեք ժամ հետո մանրենների աճը և տրոհումը հսկողականի նկատմամբ փոփոխվում է (նկ. 13): Երկու դեպքում էլ 10 Հց հաճախությամբ ՄՏ էական ազդեցություն չեն ունենում, այն դեպքում, երբ 4 Հց և 50 Հց ՄՏ ազդեցությունը զգալի է:

Հաստատուն մագնիսական դաշտի ազդեցությունը մանրենների աճի և տրոհման վրա ունի ժամանակային կախվածություն (նկ. 13): Եթե 30 րոպեի դեպքում ճնշողական ազդեցությունը կազմում է շուրջ 60%, ապա 60 րոպեի դեպքում այն շուրջ 50% է: Հավանաբար միկրոօրգանիզմները աստիճանաբար ձեռք են բերում հարմարվողականություն հաստատուն մագնիսական դաշտի նկատմամբ:



Նկ. 10. 40 Հց հաճախությամբ էլեկտրամագնիսական ազդեցության ազդեցությունը

նկ. 10



նկ. 11

Նկ. 11. 40 Հց հաճախությամբ էլեկտրամագնիսական ազդեցության ազդեցությունը



նկ.12



նկ.14

Ելևկորամագնիսական դաշտի ճնշողական ազդեցությունը մանրենների աճի և բազմացման արգելակման վրա ունի արտահայտված հաճախային կախվածություն: Ընդ որում առավելագույն ճնշողական ազդեցությունը դիտվում է 4 Հց հաճախության վրա (նկ.14):

ՀՄԴ- և ԷՄԴ- ազդեցությունը մանրենների ձևաբանության (մորֆոլոգիայի) վրա առավել դիտողական ձևով արտահայտվում է 10ս մուտանտի բջիջների վրա 270 մՏլ ինդուկցիայով ՀՄԴ մշակելուց հետո և 12 մՏլ ինդուկցիայով ԷՄԴ մշակելուց հետո (նկ.15):




նկ.15

Միկրոօրգանիզմների շարժունակությունը ևս ցուցաբերում է հաճախային կախվածություն: Այս դեպքում ևս ցածր հաճախային տիրույթի 4 և 10 Հց հաճախությունների վրա դիտվում է խթանող ազդեցություն, իսկ 50 Հց-ի վրա այն ունենում է չնչին ազդեցություն:

5. ՄՏ, ՀՄԴ, ԷՄԴ-ի ազդեցությունը սրտի կծկելիության վրա:

27 մՏլ ինդուկցիայով մշակված ֆիզիոլոգիական լուծույթը (Ռ-ինգերի լուծույթ) բաց է թողնվել լստունջի առանձնացված սրտի միջով և սրտի կծկելիության վրա՝ պայմանավորված ազդեցությանը՝ դրանով սրտի զգայնության կախվածությունը ժամանակից (նկ. 16):



նկ. 16

Փորձերը ցույց են տալիս, որ պահածամի մեծացման զուգընթաց սրտի զգայնությունը, հետևաբար և կծկելիությունը թուլանում է: Եթե 10


պահաժամով մշակված ֆիզիոլոգիական լուծույթը անցնում է սրտով, նրա կծկելիությունը թուլանում է, սակայն ռիթմը պահպանվում է, 30 րոպե ներգործելուց կծկելիության թուլացման հետ նկատվում է սրտի աշխատանքի ռիթմի զգալի խախտում, իսկ 60 րոպե պահաժամի դեպքում գործնականում տևող է ունենում սրտի աշխատանքի լրիվ խափանում լուծույթի հոսքը դադարեցնելուց հետո տևող է ունենում կծկումների լայնույթի հաճախության կտրուկ մեծացում:

1. Բջջաթաղանթի զգայնությունը նախապես Ca^{2+} մշակված լուծույթում տեղակայելուց հետո:

Մեր հետազոտությունների հաջորդ փուլը նախատեսված էր պարզաբանելու, թե բջջաթաղանթային մեմբրանիզմներից որն է ի վիճակի ջրի կառույցը մակածված Ca^{2+} -ի միջոցով վերափոխել բջջի նյութափոխանակային այն համակարգերը, որոնք պատասխանատու են բջջի հիդրատացիայի համար:

Ca^{2+} կողմից ինդուկցված ջրային կառուցվածքների և Na-Ca կոնպատիսիզի հարաբերակցության փոփոխության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ գիլլիկ նուկլեոտիդները, որոնք կախված են Na-Ca կոնպատիսիզից, բջջում կարող են ծառայել որպես միջնորդ, որի օգնությամբ իրագործվում է Ca^{2+} ներգործությունը բջջի հիդրատացիայի վրա: Հսկողական լուծույթում ինկուբացված խստնջի գանգլիոնի պարունակվող գիլլիկ նուկլեոտիդների քանակի փոփոխության համեմատումը 25 մՏ ինդուկցիայով մագնիսական դաշտով ներգործած լուծույթում պարունակվող քանակության հետ ցույց է տալիս, որ cAMP-ի քանակը փոխվում է 100-ից 79, իսկ cGMP-ի քանակը 100-ի 164,9 (աղ.1)*:

Հսկողական լուծույթում ինկուբացված խստնջի գանգլիոնի ներսը ներհոսում է $^{45}\text{Ca}^{2+}$ -ի քանակի փոփոխությունը 45 մՏ-ի դեպքում 100-ից դարձել է 74, 33, 38 մՏ-ի դեպքում 100-ից 62,67 (աղ. 2)*: Բանի որ Na-Ca փոխակերպիչը ունի որոշիչ դեր բջջի ֆունկցիոնալ ակտիվության կարգավորման գործում (բջջաթաղանթի զգրգռականության, քննողզայնության հորմոնների բացթողումի և այլնի), ապա կանխատեսվում է, որ բջջի վերը նշված ֆունկցիաները մոդուլացնելով Ca^{2+} միջոցով, կարելի է կարգավորել ներբջջային Ca^{2+} հովնոստասիսը: (սկ. 17) ցույց է տրված Ca^{2+} -ի արագ (A) և դանդաղ (B) ներհոսքը նորմալ ֆիզիոլոգիական լուծույթում (1) և նախապես Ca^{2+} -ով (C) ներգործման համար տեղակայված լուծույթում (2):



* Նայել վերջում



նկ. 18

Նկ. 18 Խխտունջի ննյրոնի բջջաթաղանթով ազնտիլիխտլինով ինդուցված հոսքեր

Նկարում ցույց է տրված բջջի ննրալ ուղղված հոսքը ինդուցված ազնտիլիխտլինի կարծառն (30 վ) և երկարառն (5-10 թուպ) օգտագործման դեպքում: A-ն և C-ն հսկողական լուծույթում, B-ն 27 մՏլ ինդուկցիայով մագնիսական դաշտում նախապես տնդակայված ֆիզիոլոգիական լուծույթում:

Փորձարարական տվյալները ցույց են տալիս մագնիսացված ֆիզիոլոգիական լուծույթի ճնշող էֆեկտը cAMP-ի ննրբջջային պարունակության և նրան ուղեկցող cGMP-ի քանակի բարձրացում, նրա դսպող ազդեցությունը Ca^{2+} -ի կլանվող քանակի և Ca^{2+} -ի պոտենցիալ հոսքի վրա, ինչպես նաև նրա բարձրացման ազդեցությունը քնմոզգայնության վրա:

Դիտարկելով բերված բոլոր փորձարարական արդյունքները, նզրակացնում ենք, որ բջջի հիդրատացիան կարող է իսկապես ծառայել որպես բջջի էքստրազայնության արարմնոր, որի օգնությամբ էՄԴ-ի կենսաբանական էֆեկտները կարելի է քանակապես գնահատել:

Համեմատելով էՄԴ-ի կենսաբանական ազդեցության համար ստացված փորձարարական տվյալները ՀՄԴ-ի և ՄՏ-ի ննրգործության միջոցով ստացված տվյալների հետ (հաճախության միևնույն արժեքների դեպքում), արձանագրում ենք նթն ոչ բացարձակ, ապա որակական համընկեցում: Այս համգամանքը մտորումների տնդիք է տալիս և մնր կարծիքով, ամենայն հավանականությամբ դա պայմանավորված է կենսաբանական օթյելիտի մնջ էլնկտրամագնիսական ալիքների թատիանցման փորը խորություններով:

Այս փաստը հիմք է հանդիսանում առաջադրելու մի վարկած համաձայն որի ստացվող փորձարարական արդյունքների ոչ ուղղակի համընկնելու պատճառը պնտք է փնտրել իսկապես թատիանցման խորությամբ (հնտեաբար կլանված էներգիայի փոքրության) մնջ:

Նշանակում է այն մակրոազդեցությունները, որոնք դիտվում կամ սպասվում են ֆիզիկաքմիական գործոնների ազդեցության դեպքում, պահպանելով հիդրատացիան

որպես թիրախ, պետք է փնտրել այլ տեղ, գուցե էֆեկտների ոչ ադիտիվության մեղադրանքը հավանաբար դա կարելի է բացատրել նրանով, որ մեխանիկական և էլեկտրական երևույթները փոխադարձ կախվածության մեջ են:

Աղյուսակ 1. Հսկողական լուծույթում ինկուբացված *Helix pomatia* զանգվիտոն զարունակվող ցիկլիկ նուկլեիդների փոփոխության համեմատումը 25 մՏլ մագնիսական դաշտով ներգործած լուծույթում զարունակվող քանակության հետ

ցիկլիկ նուկլեիդների քանակությունը	c AMP	cGMP
հսկողական	100 ± 9,6	100 ± 11,6
ներգործված	79,1 ± 9,5	164,9 ± 41,6

Աղյուսակ 2. Հսկողական ֆիզիոլոգիական լուծույթում ինկուբացված *Helix pomatia* զանգվիտնի ներքը ներհոսած $^{45}\text{Ca}^{+2}$ -ի քանակի համեմատումը մագնիսական դաշտով ներգործած է ներքը ներհոսած քանակի հետ.

մագնիսական դաշտ	^{45}Ca -ի ներհոսքի տոկոսային քանակ
0	100,0 ± 10,07
ՀՄԴ - 45 մՏլ	74,33 ± 9,22
ՀՄԴ - 38,0 մՏլ	62,67 ± 9,00

Գրականություն

1. Ayrapetyan S. N., Avetisian T. H., Avanesian A. S., Majinian S. B. //Biological effects of electric and magnetic field// Eds D. Carpenter., Ayrapetyan S. N. Acad Press, 1994 P 186-192
2. Ayrapetyan S. N. Grigorian K. Y. Avanesian A. S. Stamboltsian K. V. Bioelectromagnetics 1994. V. 15. P 133-142
3. Р. С. Степанян , Г. С. Айрапетян, Г. Ф. Маркарян С. Н. Айрапетян, Г. А. Аракелян. Действие инфразвуковых колебаний на свойства воды и раствора ДНК. Радиационная биология. Радиоэкология. 2000. том 40 N 4 лп. 435-438.
4. С. Н. Айрапетян, Р. С. Степанян, Г. Г. Оганесян, А. А. Барсегян. Ж. Р. Алавердян, А. Г. Аракелян, Л. С. Маркарян. Влияние механических колебаний на жизнедеятельность

Юп –мутантного штамма ES CHLKICHA GOL K- 12. Микробиология , 2001, том 70 N 2 248-252.

5. С. Н. Айрапетян, Р. С. Степанян, Г. С. Айрапетян. Н. А. Микаелян. „ О действии механических колебаний физиологического раствора на сократительную активность сердца улитки” . Биофизика 1999. Т. 2 N 11 ст. 17-35.
6. Классен В. И. „ Омагничивание водных систем” М. Химия. 1982
7. Л. С. Гравова, Т. О. Аветисян, В. Е. Айрапетян, С. Н. Айрапетян. „ Влияние постоянного магнитного поля на вход ионов $+^{45}\text{Ca}^{+2}+2$ в возбудимые и невозбудимые клетки и пролиферативную активность клеток селезенки крыс” Радиационная биология. Радиоэкология. 1996 Т 36. вып 5 ст. 718-720.
8. Р. С. Степанян Г. С. Айрапетян, А. Г. Аракелян. С. И. Айрапетян. „ Влияние механических колебаний на электропроводность воды. Биофизика 1999 том 44. Вып. 2 ст. 197-202.

Ձուրը որպէս միջնորդ բջջի և օրգանիզմի վրա էլեկտրամագնիսական դաշտի կենսաբանական ազդեցության իրագործման համար

Ա. Ս. Ավանեսյան, Ս. Հակոբյան, Ա. Ամյան,
Գ. Սահակյան, Ժ. Ալլահվերդյան, Գ. Հայրապետյան , Ա. Հունանյան
Ամփոփագիր

ԷՄԴ–ի ազդեցությունը բջջի վրա կարող է իրագործվել երկու ճանապարհով՝ ուղղակի բջջաթաղանթի վերափոխության միջոցով և ոչ ուղղակի–ջրային կառուցվածքի միջոցով:

Ոչ ուղղակի ճանապարհով բջջի վրա արտաքին գործոնների (ԷՄԴ) ազդեցություն մեխանիզմը որոշելու նպատակով իրականացվել է փորձերի մի շարք, որոնց միջոցով հայտնաբերվել է ԷՄԴ–ի ազդեցությունը ջրի և ջրային լուծույթների էլեկտրական հաղորդելիության, թույսերի սերմերի ծլողունակության, արմատազոյացման և ջրի կլանման, սպերմայի ֆունկցիոնալ ակտիվության, մանրէների ճնաբանության, աճի և բազմացման, լիստոնջի սրտի կծկելիության, բջջաթաղանթի գզայունության վրա:

Ստացված փորձարարական տվյալներն ցույց են տալիս, որ բջջի հիդրատացիան հանդիսանում է շրջակա միջավայրի շատ գործոնների համար որպես թիրախ որով իրագործվում այդ ազդեցությունները:

**Ղարաբաղը հայ - ռուսական քաղաքական
հարաբերությունների համատեքստում հարցի շուրջը
(XVIII – XXI դ. սկիզբ)
Դադայան Ս. Վ.**

Հողվածում ամփոփվում է Ղարաբաղի տեղը հայ-ռուսական քաղաքական հարաբերություններում համատեքստում սկսած՝ XVIII դարի սկզբից մինչև մեր օրերը: Հարցը հանգեցնում է հետևյալին. որն է այդ հարաբերությունների ռազմավարական հիմնախնդիրը և ինչպես է ներկայացված այն հայրենական պատմագրության մեջ:

Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների ուսումնասիրումը միշտ եղել պատմաբանների ուշադրության կենտրոնում: Սկսած XVIIդ. վերջից այդ հարաբերություններում Ղարաբաղը որոշիչ դեր է խաղում:

Հարցը, որը մեզ հետաքրքրում է, հանգեցնում է հետևյալին. ինչպիսին էր Ղարաբաղը պատմական տեղը հայ-ռուսական քաղաքական հարաբերություններում, որն էր այդ հարաբերությունների գլխավոր ռազմավարական հիմնահարցը և ինչպես է այն արտացոլվում պատմագրության մեջ:

Նշված ժամանակաշրջանում Հայրավային Կովկասի անցումը Ռուսաստանի քաղաքական ազդեցության ոլորտին պայմանավորված էր ոչ միայն Վրաստանի կողմնորոշումով, այլ նաև Ղարաբաղով: Հայոց պետականության բացակայության պայմաններում Ղարաբաղի քաղաքական կրոնական գործիչները երկրամասի ազատագրումը և պետականության վերականգնումը կապում էին թե՛ Եվրոպայի, այլ Ռուսաստանի հետ: Դա եղել է որոնումների և հույսի շրջան:

Ղարաբաղի դերի բարձրացումը հայոց ազգային ազատագրական շարժման գործում բացատրվում է մի շարք հանգամանքներով.

ա) մեկիքությունների առկայությունը Ղարաբաղում.

բ) մեկիքությունները որպես պետական իշխանության հատուկ կառավարման ձև.

գ) յուրաքանչյուր մեկիքական իշխանություն ուներ իր ռազմական պոտենցիալ ուժը (մինչև 1000 զինվոր).

դ) Ղարաբաղն ուներ հոգևոր միաբանության կենտրոն՝ հանձինս Գանձասարի:

Վերը նշվածը հիմք է հանդիսացել XVIII դարի ռուսական պետական գործիչների համար Ղարաբաղը դիտարկել որպես ռազմավարական և ամուր հենակետ հարավային Կովկասում հաջորդաբար պետության վերածննդի ընթացքում:

Ամբողջ խորհրդային շրջանի պատմագրության միջով կարմիր թելի պես անցնում է այն գաղափարը, որ հայոց պետականության վերականգնման գործընթացի մենաշնորհը պատկանում է Ռուսաստանին:

Հարց է ծագում՝ ինչն է դրդել Ռուսաստանին, դառնալու հայոց պետականության վերականգնման գործընթացի գալթակողիչը, ալտրոիստական ցանկություններից ելնելով, թե սեփական շահերից:

Միանշանակ պետք է նշել հետևյալը՝ մենք չենք ընդունում նշված գաղափարը՝ որպես բացարձակ ճշմարտություն, իբր ի շնորհիվ Ռուսաստանի, որպես « ալպա եղբոր », վերականգնվել հայկական պետությունը: Ստացվում է այն, որ հայերը ընդունակ չէին սեփական ազգային պետականությունը վերականգնել, որը մենք կանվանեիք «ռուսֆիլական» տեսության դրսևորում մեզ հայրենական պատմագրության մեջ:

Օրյենկսիով իրականությունը պահանջում է պնդել, որ հայոց պետականության վերածնունդն առաջին հերթին հայ ժողովրդի հոգևոր, սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային ազատագրական պայքարի արդյունք է:

Նման տեսակետը չի անտեսում Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի գործում: Պարզապես ժամանակն է հրաժարվել խորհրդային կայսրական գաղափարներից, որով ներծծված է ամբողջ մեր պատմագրությունը՝ որպես հայ ժողովրդի պատմության էջերը անեցնող երևույթ: Միայն այդ դեպքում Ռուսաստանը կգրավի իր արժանի տեղը որպես շահագրգիռ ոչ ոչ ավել՝ իր հակասական արտաքին քաղաքականությամբ XVIII դարի սկզբից մինչև մեր օրերը: Պայապցույցն է հայոց մեծերի դիրքորոշումը՝ սկսած Իսրայել Օրոց մինչև Ռոբերտ Քոչարյան, որով Ռուսաստանը դիտվում է որպես շահագրգիռ կողմ, այլ ոչ թե փրկիչ, որի հետ ճիշտ, նպատակային արտաքին քաղաքականություն վարելու դեպքում, չանտեսելով ուրիշներին, հայ ժողովուրդը կարող է անել հաջողություն:

Մեր եզրահանգումները տվյալ հայացի վեռաբեռնալ հետևյալն են.

1. Սկսած XVII դարի վերջից պատմական Հայաստանի Ղարաբաղ-Սյունիք հատվածը դառնում է հայ ազգային-ազատագրական պայքարի կենտրոն, իր մեջ իմաստավորելով հայոց պետականության վերածննդի գաղափարը:

2. Հայոց մեծերը նշված պահին կարողացել են Ռուսաստանը առանձնացնել մյուս երկրներից՝ որպես ավելի շահագրգիռ կողմ հայկական պետականության վերականգնման հարցում:

Նրանք գտնում էին՝

ա) որ վերածնված հայկական պետությունը կկազմավորվի Ղարաբաղի կենտրոնաձիգ ուժերի շնորհիվ.

բ) որ այդ պետության գոյատևումը հնարավոր է Ռուսաստանի հզոր թիկունքի միջոցով:

3. Հայ աշխարհիկ և կրոնական գործիչների քաղաքական ռեալիզմը համահունչ էր ռուսական պետության նպատակներին:

Ռուսական արքունիքը մինչև XVIII դարի վերջը ելնելով իր պետության շահերից սկսում է վարել լուրջ քաղաքականություն Կովկասյան հատվածում, ընդհուպ մինչև Պարսկաստանի և թուրքիայի հպատակության տակ գտնվող հայկական տարածքների հիման վրա հայկական պետության կազմավորումը: Դա կատարում է ոչ թե հայ ժողովրդին անշահախնդիր օգնություն ցույց տալու համար, այլ առաջին հերթին սեփական շահերից ելնելով: Այդ մասին առկա են բազմաթիվ փաստեր:

XIX դարի սկզբից նա հրաժարվում է նախկին քաղաքականությունից և անցնում է հայկական հողերին տիրանալու քաղաքականությանը (1805, 1813թթ.):

Համաձայն առաջինի (1805թ.) Հայաստանի արևելյան մասը, Ղարաբաղը որպես ինքնուրույն ազգային պետական միավոր ընդունում է Ռուսաստանի հպատակությունը, իսկ երկրորդի՝ (1813թ.) Ղարաբաղը մտնում է Պարսկաստանի կազմի մեջ: Դրանով հանդերձ, Ղարաբաղը, որտեղ պահպանվում էին հայկական պետականության մնացորդները, պայքարելով ազատության համար, հայ- ռուսական քաղաքական հարաբերություններում հատուկ նշանակության դեր խաղաց.

ա) հայ ժողովրդի ազգային վերածննդի գաղափարախոսությանը հիմք ծառայեց Ղարաբաղի փորձը, որը հայտնի էր ռուսական կողմնորոշումով:

բ) Ջզարիրեն խորացվում են Ռուսաստանի ռազմաքաղաքական քայլերը Արևելյան Հայաստանի մյուս մասերի վերաբերյալ (1828 և 1829թթ.):

գ) Անգամ «հայկական մարզը», որը գոյություն ունեցավ ընդամենը 12 տարի, չէր կարող հինք չհամդիսանալ գրականության մեջ մշված փաստերը որակավորելու որպես հայկական տարածքների ազատագրում: Հայոց մեծերը ընդունեցին մշված երևույթը որպես առաջադիմական քայլ, ակնկալելով հայ-ռուսական հարաբերությունների ներդաշնակ զարգացման համատեքստում, այն որպես էական երևույթ է միասնական հայկական պետականության կազմավորման ճանապարհին:

4. Ռուսաստանն իր կովկասյան քաղաքականության մեջ հայ ժողովրդի նկատմամբ կայուն դիրքորոշում չի ունեցել: Նա շատ ճկուն ձևով օգտագործում էր հայերի արժանիքները՝ աշխատասիրություն, ազնվություն, խիզախություն, ծառայողական ունակություն, որոնք շատ դեպքերում ազգին մղել են միամտության, դրանք շահարկելով, նրան ծառայեցնելով իր նպատակներին: Եվ քանի որ Ռուսաստանը դառնում էր մեծ տերությունների շարքին, բնական է, որ քաղաքականությունը վարում է մշտական շահի դիտարկումով: Տվյալ ժամանակ (XIX դ. մինչև 1917թ.) հայկական պետականության վերականգնման մասին անգամ խոսք չէր կարող լինել: Ռուսաստանը, ինչպես մյուս տերությունները, ներառված էին աշխարհի բաժանման և վերաբաժանման գործընթացի մեջ:

5. XIX դարի 80-90-ական թվականներին հայ իրականության մեջ քաղաքական կուսակցությունների առաջացումով կարծես թե արթնանում են վաղեմի գաղափարները: Բայց կուսակցությունների միջև ընթացող լուրջ հակասությունների պատճառով, պարզ է, պետականության վերականգնման գործում հաջողություն չէր կարող լինել: Ակնհայտ էր՝ հայկական պետականության վերականգնումը կախված էր Ռուսական կայսրության փլուզումից:

Հայ սոցիալ-դեմոկրատների ձախ մասը ընդունում է Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության ազգային ծրագիրը, որի համաձայն բոլշևիկների իշխանության գալուց անմիջապես հետո ազգային հարցը կլուծվի դեմոկրատական սկզբունքներով, ազգերի ինքնորոշումով: Հենց դրա համար հայ ազգի անվանի հեղափոխականները, այդ թվում մեծ թվով դարաբաղիցներ, հարում են ռուսական հեղափոխությանը: Ինչպես ասացվածքն է ասում, հանում ազգի, ժողովրդի անգամ ստատանայի հետ էլ պետք է պատրաստ լինել ընկերանալու:

1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բոլշևիկյան իշխանությունների դեկրետներից մեկը եղավ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան» (նոյեմբեր, 1917թ.), որը հռչակում էր բոլոր ժողովուրդների համար հավասարություն և ինքնիշխանություն:

Հայ ժողովրդի ռազմա-քաղաքական գործիչները համոզված էին, որ նոր Ռուսաստանի միջոցով կարող են իր բնական ավարտին հասցնել հայկական տարածքների միավորումը, այդ թվում և Ղարաբաղը՝ մի ընդհանուր պետության մեջ:

Դրա վաղ վկայությունն է հեղափոխությունից անմիջապես հետո ծնված «Թուրքահայաստանի մասին» դեկրետը (դեկտեմբեր 1917թ.): Իր բոլոր թերություններով հանդերձ այն կարող է մշանալորել նոր փուլ հայկական ամբողջական պետության ստեղծման գործում՝ որպես հայ ազգային-ազատագրական պայքարի արդյունք:

Դրա համար ձեռնարկվում էին լուրջ քայլեր՝ առաջին հանրապետությունը, Բաքվի կոմունան, փաստացի անկախության հաստատումը Ղարաբաղում 1918-1920թթ: Թուրքերը իզուր չէին սպանում նրանց գոյությանը: Հայ քաղաքական կուսակցությունների դեկլարանքները ազգային շահերից ելնելով միասնական քաղաքականության հետևելու փոխարեն վարեցին դասակարգային մոտեցում, ինչը հնարավոր օգտագործեցին քաղաքական ասպարեզից հեռացող երիտթուրքական և նրա ժառանգորդ քեմալական Թուրքիան:

Զգիտես ինչու, այս բոլորը անտեսվում է խորհրդային պատմագրության կողմից: Պատմագրությունը լռում է նաև այն մասին, թե ինչու 1918-1921թթ. կյանքից հետագան հայ անվանի հեղափոխականները: Պարզապես նրանք պետք չէին ռուսական հեղափոխությանը նոր ժամանակներում: Մեր կարծիքով, հանուն հայոց պետականության վերածննդի, մի ամբողջ միլիոն սերունդ իր գլուխը դրեց բոլշևիկյան զոհասեղանին:

Հայ բոլշևիկների մեծագույն դժբախտությունը կայանում է նրանում, որ չտեսան (կամ չհասկացան) բոլշևիզմում կայսերական քաղաքականության գլխավոր միտումը, որը հետագայում որոշիչ դեր խաղաց ազգային հարաբերություններում, մասնավորապես, Բրեստի պայմանագիրը (Կովկասի մասով) դրա վառ վկայությունն է:

6. Հայոց միասնական պետականության վերականգնման գաղափարի խորտակումը, հայ հեղափոխականների և զորավարների ֆիզիկական ոչնչացումը, հայկական տարածքների ցաք ու ցրիվ տալը 1918-1921թթ. պայմանավորված էին ռուսական հեղափոխության կողմից հռչակած խնդիրներից կտրուկ հրաժարվելու և այսպես կոչված համաշխարհային պրոլետարական հեղափոխության գաղափարի առաջադրման և այդ ուրվակնի իրականացումով: Բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարությունը կատարեց մի անավոր դավադիր քայլ, մեղմ ասած, շրջեց Ռուսաստանի պատմության ամիլը: Մոռացության տվեց իր դարավոր զինակցին և բարեկամական ձեռք մեկնեց իր դարավոր թշնամուն: Փաստեր ինչքան ուզեք՝ սկսած Բրեստի պայմանագրի ընդունման պահից, վերջացրած՝ ճակատագրական 1921 թվականով: Բոլշևիկյան Ռուսաստանը ոչ միայն վերակենդանացրեց առաջին աշխարհամարտում պարտություն կրած Թուրքիային, որը դրսևորվեց երեք թուրքական պետությունների ստեղծումով, այլև թեկ տակ առավ երիտթուրքերի պարագլուխներին (Էնվեր-փաշային, Ջեմալ-փաշային և մյուսներին): Այս ամենը կատարվեց հանուն «պրոլետարական հեղափոխության ցնորքային գաղափարի համար»: Այդ բարդ քաղաքական ժամանակաշրջանում Ղարաբաղի հետ կապված հարցերի պարզաբանումը շատ կարևոր է: Նշված հիմնահարցերի ուսումնասիրությունը փոքր ինչ արդեն սկսված է: Բայց դա չի կարող բավարարել ինչպես պատմագրության, այնպես էլ քաղաքական մտքի արդի պահանջները:

7. Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորման հարցի լուծման համար նոր հնարավորություններ ստեղծվեցին 1980-ական թվականներին խորհրդային Միությունում իրականացվող քաղաքական բարեփոխումների շնորհիվ: Ղարաբաղը առաջինն էր ՍՍՀՄ-ի տարածքում, որ բողոքի ձայն բարձրացրեց հանուն Հայաստանի հետ վերամիավորման: Ղարաբաղի քաղաքական գործիչները շատ շուտ պարզեցին, որ խորհրդային ղեկավարների նորաձևությունները կրում են զուտ կարգախոսական բնույթ և հարցի լուծման համար նոր արգելքներ են հորինում: Խորհուրդները ավելի շատ հիմնահարցեր էին ծնում, քան հնարավորություն ունեին դրանք լուծելու: Միանշանակ պարզվում էր, որ հայ ժողովրդի երկու հատվածի վերամիավորման հետ կապված հարցերը նոր լուծում կատանան խորհրդային Միության փլուզումից հետո: Լեռնային Ղարաբաղի հանրապետության կազմավորումը և նրա հետ կապված գործընթացը դրա վկայությունն է:

8. Եթե համեմատելու լինենք հայ-ռուսական հարաբերությունների պատմական անցյալը և արդի ժամանակաշրջանը, ապա մեմանտիպ եզրեր կարող ենք գտնել: Ռուսաստանի դաշնության համար այսօր կարևոր է ունենալ Հարավային Կովկասում հզոր դաշնակից քրիստոնեական պետություն: Դա չի կարող լինել Վրաստանը՝ հայտնի պատճառներով, իր բացարձակ թուրքամետ քաղաքականությամբ:

Արդի ժամանակաշրջանի հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները հաստատուն են այդ հնարավորությունները ի օգուտ հայոց միասնական պետականության ստեղծման: Ղարաբաղի դերը նշված գործընթացում ավելի կարևոր է, քան երբեք, թե՛ քաղաքական, թե՛ աշխարհատարածքային առումով:

Վերջին տասնամյակում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների զինանոցում կուտակված հարցերի ճիշտ վերլուծությունը, պատմագրության և քաղաքագիտության կարևոր խնդիր լինելով, հնարավորություն կտա գալ ճիշտ եզրահանգումների:

Խորհրդային միության փլուզումը, Հայաստանի և Հեռավոր Ղարաբաղի հանրապետությունների ստեղծումը նշանավորվեց հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների որակական նոր փուլի հաստատումով՝ միասնական հայկական պետության ստեղծման ճանապարհի որոնումով:

К ВОПРОСУ О РОЛИ КАРАБАХА В КОНТЕКСТЕ РУССКО-АРМЯНСКИХ ПОЛИТИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ (XVIII — начало XXI в. в.).

Дадаян С. В.

Статья посвящена вопросу о месте Карабаха в русско-армянских политических отношениях XVIII и начала XXI в. в. и освещению ее в советской отечественной исторической литературе.

Крах СССР, образование Республики Армении и Нагорно-Карабахской республики ознаменовали собой наступление качественно нового этапа в русско-армянских отношениях, на пути образования единого армянского государства.

Գրականություն

1. Հայ ժողովրդի պատմություն հ.հ. VI, VII, Երևան 1967
2. Գրիգորյան Զ. Տ. Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960
3. Գրիգորյան Զ. Տ. Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը, Երևան, 1967
4. Պողոսյան Ա. Մ. Ռուս-հայ բարեկամության պատմությունից, Երևան, 1974
5. Галоян Г. А. Россия и народы закавказья М., 1976
6. Навеки вместе. Ереван, 1978
7. Աղայան Մ. Պ. Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Երևան, 1981
8. Ионисян А. Р. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1990
9. Արրիհանյան Հ. Արցախյան գոյամարտ, Երևան, 1991
10. Нагорный Карабах в 1918 —1923 гг, Сборник документов, Ответ. ред. В. А. Микаелян. Ереван, 1992
11. Вразян С. Армения между большевистским молотом турецкой наковальней. Ереван, 1992
12. Грант Е. Армянский вопрос вчера и сегодня, М., 1992
13. Казандисян Р. К предыстории самоопределения Нагорного Карабаха, М., 1997,
14. Айвазян С. История России. Армянский след, М., 2000
15. Բալայան Վ. Արցախի պատմություն, Երևան, 2002

ինքնորոշման իրավունքը և ազգամիջյան հարաբերությունները
Ս.Ա. Մարգարյան

Հենվելով փիլիսոփայական, քաղաքագիտական դրույթների և ՄԱԿ-ի հիմնադրության փաստաթղթերի վրա աշխատանքում գիտականորեն հիմնավորվում է ազգերի ինքնորոշման իրավունքի առաջնությունը:

Ազգերի ինքնորոշման իրավունքը քաղաքականության նվաճումներից մեկն է: Ժողովուրդներն իրենց ազգային փառանքանքան համար հենվել են ինքնորոշման սկզբունքի վրա: Հատկապես վերջին տասնամյակներին այն հանդիսացել է գաղութային համակարգի վերացման իրավական հիմքը: Գաղութատիրության ժամանակաշրջանում ժողովուրդները ձգտել են իրենց անկախագրական պայքարում հենվել ազգերի ինքնորոշման իրավունքի վրա: Մակայն տիրապետող ազգերը և նրանց գաղափարախոսները նշված իրավունքից օգտվելը դիտել են որպես ազգամիջյան հարաբերությունների սրման կոմպլիկատային իրավիճակներ ստեղծելու գործոն: Անկախված, այդ տարյակտիվ մոտեցումը բխում է տվյալ տիրապետող ազգի տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքից, ի դեմս ինքնորոշման սկզբունքից օգտվելու ձգտող ժողովրդի:

Այսպիսի մոտեցում է ցուցաբերվել նախկին խորհրդային Միության և Ադրբեջանի հանրապետության ղեկավարության կողմից Արցախյան բնակչության ազգ-ազտագրական պայքարի տարիներին, ինքնորոշման իրավունքից օգտվելու և իրականացնելու նկատմամբ, որը շարունակվել է տասնյակ տարիներ:

Արցախյան հերոսական ժողովրդի վերը նշված ճակատագրական հիմնահարցի լուծումը անցել է բարդ ու դժվարին ճանապարհ:

Դեռևս 1917թ. դեկտեմբերի 20-ին ընդունված «Թուրքահայաստանի մասին» ղեկընտում, որը խորհուրդների համառոտապատման համագումարի կողմից

հաստատվեց 1918թ. հունվարի 15-ին հռչակեց, որ բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքական Հայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև լրիվ անկախություն: Մակայն հետագայում գործը հասավ նրան, որ Թուրքիայի պահանջով Ստալինի անմիջական մասնակցությամբ թավարարեցին Ադրբեջանի նվաճողական հակումները: Խորհրդային Ռուսաստանը հրաժարվեց Արևմտյան Հայաստանի տարածքներից հոգուտ Թուրքիայի:

Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման հաջորդ օրը Ադրբեջանի Հեղկոմը 1920թ. նոյեմբերի 30-ի հեռագրով և դեկտեմբերի 1-ի հռչակագրով հայտարարեց այն մասին, որ Ադրբեջանը հրաժարվում է Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ պահանջատիրությունից: Ավելի ուշ ՌԿ(բ)Կ Լենինովի կովկասյան քյուրում 1921թ. հունիսի 3-ի որոշմամբ հաստատեց Ադրբեջանի հեղկոմի հռչակագիրը: Դրան համապատասխան 1921թ. հունիսի 12-ին ընդունվեց Հայաստանի Ժողովխորհի հռչակագիրն այն մասին, որ Լենինային Ղարաբաղը հանդիսանում է Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը:

Մակայն այդ որոշումը ևս չիրագործվեց՝ Ադրբեջանի մուսավաթական ղեկավարության դիրքորոշումը արմատապես փոխելու և կովկասյանի անդամների անսկզբունքայնության հետևանքով: 1921թ. հունիսի 3-ին և հունիսի 4-ին ընդունված որոշումներին հակառակ, կովկասյանի 1921թ. հուլիսի 5-ին Ի. Ստալինի ճնշմամբ, որը ննթարկվեց Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի շանտաժին, ընդունվում է հակադիր և Լենինային Ղարաբաղի հայերի համար ճատակագրական ծանր, կոթժանարար որոշում. «նվելով հայերի և մուսուլմանների միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից, Լենինային Ղարաբաղը թողնել Ադրբ. ԽՍՀ Սահմաններում, նրան ընձեռել մարզային լայն ինքնավարություն վարչական կենտրոն ունենալով Շուշի քաղաքը, որը մտնում է ինքնավար մարզի մեջ» (հ-ծ 14): Այս անարդար, հակահայկական որոշումը լուրջ առաքություն առաջ բերեց: Նախ ավերվ է նշել, որ Լենինային Ղարաբաղը նրբեք չի մտել Ադրբեջանի կազմի

մեջ և նրկորդ իրոր Ադրբեջանին պատկանող տարածքներից ոչ մեկը նրա կազմի մեջ չի «թողնվել» Կոմբյուրոյի կամ որևէ այլ մարմնի որոշմամբ, նրորդ տարածքային հիմնահարգներ չեն կարող լուծվել կուսակցական մարմինների կողմից:

Ղարաբաղի համար այդ անօրեն որոշումը միանգամայն գուրկ է ժողովրդավարական և իրավական հիմքներից:

Բազի դրանից Կոմբյուրոն անտեսել է վերադաս կուսակցական մարմնի՝ ՌԿ (ք)Կ Կենտկոմի 1920 թ. հուլիսի 7-ի Ա.Բ.Լենինի նախագահությամբ ընդունված որոշումը, որով պահանջում էր Անդրկովկասում սահմանները որոշելիս «Ընկալվելով բնակչության էթնիկական կազմով և նրա կամքով» (հ-ծ 16): Համաձայն այդ որոշման փնդի տարածքային հարցերը պետք է լուծվեն ոչ թե կուսակցական մարմինների, այլ խառն հանձնաժողովների կողմից, որը նույնպես չի կատարվել: Տվյալ հարցը լուծելիս պետք է կատարվեր հանրաքվե, որը նմանապես չի կատարվել՝ նրա կազմակերպիչների միտումնավոր գործունեությամբ: ԼՂԻՄ-ը կազմավորվեց Ադրբեջանի ԿԳԿ-ի 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով, որի մեջ հանրաքվեի մասին նույնիսկ չի հիշատակվում: Չստ որում, ԼՂԻՄ-ից դուրս մնացին Ղարաբաղի բնիկ բնակչությունն ունեցող մեծ տարածքները:

ԼՂԻՄ-ի կազմավորման հենց սկզբից Ադրբեջանի դեկավարությունը կուլտուրեն ոտնահարել է հայ բնակչության օրինավոր իրավունքները և շահները: Փաստորեն, գործնականում վերացվեցին կապերը հայկական ՍՄԿ-ի հետ: Մարզը գրկված էր տնտեսական ինքնուրույնությունից: Անկասկած այս ամենը բացասաբար էին ազդում ազգամիջյան առողջ հարաբերությունների հետագա զարգացման վրա:

Մարզի հայ բնակչության համար ստեղծված պայմանները նպաստեցին նրա գաղթականության արտագաղթին: Արդի պայմաններում ԼՂՀ-ի սահմաններից դուրս ապրում է Լեռնային Ղարաբաղից տեղափոխված ավելի քան 400000 հայեր, որը նրկու ու կեն անգամ գերազանցում է ներկայիս ԼՂՀ-ի հայազգի բնակչության թվաքանակը: 1923-1979թ.թ. ընթացքում ԼՂԻՄ-ի հայազգի բնակչությունը նվազել է 26.5 հազար մարդով, իսկ ադրբեջանցիների քանակը աճել է

մոտավորապես 5 անգամ՝ 7.7-ից հասել է հազարի /հ-ծ 22/ հայերին՝ 149.6-ից իջել է նվազել 123.1: Սկսած 1985թ. նվազում է իրականացվեցին վերականգնման քականությունը, որը Ղարաբաղյան հարց արդարացի լուծման հույս ներշնչեց:

Չնայած ստեղծված ծանր պայմանները արցախահայությունը միշտ պայքարել ինքնորոշման և անկախության համար: Այդ վկայում է Ղարաբաղյան ազգային խորհուրդը ստեղծումը, որի կայացած 9-ը համագումարները որոշել են չմտնել Ադրբեջանի կազմի չնշարկվել նրա կառավարությանը միավորվել Մայր Հայաստանի հետ: Միաժամանակ արցախահայությունը ձգտել է բարելավել հարաբերությունները ժողովուրդների հետ, ապահովել անվտանգությունը: Մկսած Արցախյան շարժման առաջին օրերից մեր ժողովուրդը ավել ունեցաճեց պայքարը ազգերի ինքնորոշման իրավունքից օգտվելու համար:

1988թ. փետրվարի 20-ին միանգամայն ծանր պայմաններում հրավիրվեց ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղ մարզային խորհրդի արտահերթ նստաչրքում /որին մասնակցում էի որպես պատգամավոր/՝ որտ միաձայն որոշում ընդունեց ԼՂԻՄ-ի Ադրբեջանական ՍՄՀ կազմից անջատվելու և Հայկական ՍՄՀ կազմի մեջ մտնելու մասին խնդրվելով Ադրբեջանական ՍՄՀ և Հայկական ՍՄՀ Գերագույն խորհուրդներին, ընդառաջ մարզային խորհրդի տվյալ որոշմանը:

Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը մերժեց ազգերի ինքնորոշման իրավունքից բխող Ղարաբաղի հայ բնակչության արդարացի պահանջը, անհիմ կերպով նշելով, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության տվյալ խնդրանքը չի համապատասխանում մեր երկրի ժողովուրդների բարեկամության մարմարեղմանը:

Իր ժամանակին Լեռնային Ղարաբաղ անօրեն կերպով կտրելով Մայր Հայաստանից, թնակցելով Ադրբեջանական հանրապետությանը, որը շարունակում էր իրականացնել նախկին մուսաթավական քաղաքականությունը, լուրջ վնաս հասցրեց ադրբեջանական և հայ ժողովուրդների բարեկամությանը, նախկին խորհրդային Միության ժողովուրդների միասնությանը և համագործակցությանը:

Չպետք է մոռանալ, մարդկության պատմության նրկարամյա փորձով վկայաւորյալ

է այն մասին, որ ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացումը նրանք չի կարող ապելք հանդիսանալ ժողովուրդների և անտարբերության միջև խառնադրության, բարեկամության և հարաբերությունների զարգացման գործում: Ընդհակառակը, ազգերի ինքնորոշման իրավունքից օգտվելու հետևանք, ուրիշ ժողովուրդների տարածքների վրա իշխելու ձգտումը միշտ հասցնում է նորնափկտնների և աբյուսահեղ պատերազմների: Այդ տեսակետից Վ.Ի.Լենինը ընդգծել է, որ հատկապես անմկսիան, «ուրիշ տարածքը» զենակցելը և պահպանումը, ուրիշի տարածքները՝ անդունդ է ստեղծում ժողովուրդների միջև, հասցնում է լուծելիլիտների և պատերազմների (տես. Վ.Ի.Լենին, ԵԼԺ, հ.24 էջ 33 տու. հրատ):

Ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացումը և նրա անհրաժեշտ իրականացումը առանձնահատուկ տեղ է զուգում ՄԱԿ-ի կանոնադրության մեջ: Նշված պատմական փաստաթուղթում ընդգծված է ներքին օբյեկտիվ կապը ինքնորոշման սկզբունքի և ժողովուրդների ու բարեկամական հարաբերությունների հետ: Այդ տեսակետից մասամբ նշվում է, որ ինքնորոշումը նախադրյալ է հաջողիսանում ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացման համար, այն ապահովում է համաշխարհային համընդհանուր խաղաղության ամրապնդմանը:

ՄԱԿ-ի կանոնադրության 55-րդ հոդվածում նշվում է, որ ինքնորոշման սկզբունքը որպես առաջնություն ընկած է ժողովուրդների բարեկամական հարաբերությունների զարգացման հիմքում: Ազգերի ինքնորոշման սկզբունքի պահպանման ու իրականացման և միջազգային կոնֆլիկտների պատերազմների կանխման միջև կապը, համընդհանուր խաղաղության պահպանման անհրաժեշտությունը ամրագրված է ՄԱԿ-ի 345-րդ հոդվածագրում, որը ընդունվել է 1952թ. փետրվարի 5-ին: Նշված պատմական փաստաթուղթում ընդգծվում է, որ այդ իրավունքի խախտումը անցյալում հասցրել է

առողջամեղմությունների և պատերազմների և այն դիտվում է որպես խաղաղության պահպանման մշտական սպառնալիք: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան կալ է անում անհրաժեշտորեն հաշվի

նստել թուր ժողովուրդների քաղաքական հույսերի հետ, դրանով իսկ նպաստել միջազգային խաղաղությանը և զարգացնել ազգերի միջև բարեկամական հարաբերությունները, հենվելով ժողովուրդների իրավահավասարության, ինքնորոշման սկզբունքների վրա: ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հռչակագրում կոչ է արվում, որ պետք է ինքնորոշման իրավունքը արդյունավետ օգտագործել, այն առաջնակարգ նշանակություն ունի պետությունների և ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացման և համագործակցության գործում: Հենց այդ է ապացուցում միջազգային հարաբերությունների պրակտիկան:

Ներկա ժամանակաշրջանում Լեոնային Ղարաբաղի ժողովուրդը հերոսական ազատագրական պայքարի շնորհիվ, ձեռք բերեց անկախություն, ելնելով միջազգային նորմերից անցկացնելով հանրաքվե և ազգային խորհրդի ընտրություններ, ստեղծեց անկախ ժողովրդավարական հանրապետություն: Այդ կարևորագույն հիմնահարցի լուծման ժամանակ Ղարաբաղի ժողովուրդը հենվեց ինքնորոշման իրավունքի վրա, որը շարադրված է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի «Գաղութային երկրների և ժողովուրդների անկախություն տալ» հռչակագրում: Ըստ այդ պատմական փաստաթղթի ազգերի ինքնորոշման կամեցած ձևը պետք է իրականանա առանց դրսի միջամտելու, տվյալ ազգի կամքով, ազատ դնվող քաղաքական սկզբունքների հիման վրա: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի թիվ 1541 բանաձևում նախատեսվում է ազգերի ինքնորոշման հետևյալ ձևերը՝ ոչ ինքնակառավարող տարածքում:

ա) այն վերածել ինքնուրույն անկախ պետության, բ) ազատ միանալ անկախ պետության հետ, գ) միանալով անկախության հետ:

Ղարաբաղյան ժողովուրդը իրականացրեց ազգերի ինքնորոշման առաջին ձևը, ստեղծելով իր անկախ պետությունը: Պետք է ընդգծել, որ տվյալ ժողովրդի ազատ անջատումը այս կամ այն պլանությունից ժողովուրդների միջև ստեղծված հարաբերությունների դնվող քաղաքական բարձրագույն ձևն է: ՄԱԿ-ը ամեն կերպ ձգտում է, որպեսզի ժողովուրդները կարողանան արդյունավետ օգտվել ինքնորոշման իրավունքից: Մակայն տեղին է նշել ՄԱԿ-ի կանոնադրության այն հոդվածը, որում նշվում է, որ այս կամ այն պետությունը ինչ տարածքով ընդունվում է ՄԱԿ –

Ի տարբերության սնունդների՝ մյուս թեք հոլովներում հոլովական վերջավորությունները որոշակի իմաստ են ձևեր բերել, և արանց կիցգով արտահայտվում են համեմատաբար կոնկրետ հարաբերություններ՝ հանգման, անջատման, միջոցի, տնդի, պարունակության: Նույնիսկ նախդասությունից դուրս հասկանալի է, որ *սնդանին* նշանակում է *սնդանի վրա, ընկնողը* հանգում է արտահայտում, *գրքից* անջատում, *գրքով* միջոց, *գրքում* տնդ և այլն: Այս հոլովների միջոցով ձևավորվում են հիմնականում բայական անդամի լրացումներ: Վերջիններս իրենց լրացյալների հետ կապակցվում են խնդրառությամբ, որը մի դեպքում իրականացվում է անմիջական թեք հոլովներով, մի այլ դեպքում՝ կապերի միջնորդությամբ: Այսպես, տրական հոլովի արտահայտում հիմնական իմաստը հանգում է: Այն առկա է այս հոլովի բոլոր շարահյուսական գործառնություններում՝ հանգման անուղղակի խնդիր և

հանգման տնդի պարագա, նպատակի, ժամանակի պարագաներ և այլն: Ըննարկենք. 1. «Գլխահալ ծաղիկները բարձրացնում են իրենց գլուխները, նայում *արևին*, որ *կնծորին*, նրբ արևը թեժանա, նորից խոնարհեն» /5-29/: *Արևին* տրական հոլովով արտահայտված հանգման անուղղակի խնդիր է, *կնծորին*՝ ժամանակի պարագա: Երկուսի մեջ էլ հանգման իմաստ կա՝ հանգում կոնկրետ առարկային, հանգում ժամանակին: 2. «Տղան դեպի հայրը վազեց՝ տուփերը *ցույց տալով*» /5-42/: *Ցույց տալով* նպատակի պարագա է, որը ներառում է նաև հանգում *ցույց տալ* գործողությանը: Կամ՝ «Գնում ենք *հարսանիքի*»՝ նախադասության մեջ՝ *նպատակ + առարկա*: Այս արգումներին հանգման իմաստ հաղորդում է տրական հոլովի վերջավորությունը: Երբ այս հոլովաձևի վրա դրվում են համապատասխան կապեր /առանց, հանուն, ըստ, նայած, համաձայն, հակառակ, չնայած, նվիրված և այլն /2-352/, հոլովական իմաստը տնդի է տալիս կապերի արտահայտում իմաստի առջև: Կապով լրացումների դեպքում մնում են կապերի իմաստները + կապով բառի իմաստը՝ *հակառակ նրանց, սովորության համաձայն, ըստ քո պատկերի, առանց զայրույթի, առանց խանդելու*: Որ տրական հոլովի իմաստն այստեղ առաջնային դեր չի խաղում, թեմեև կարելի է ներկայացնել *առանց* կապի օրինակով: Այս «կապը երբեմն գործածվում է նաև հայցական հոլովի հետ...» /2-353/: Թե՛ տրականի, թե՛ հայցականի հետ այս արտահայտում է նույն իմաստը, ձևավորում նախադասության նույն անդամը: Հմտ. 1. «Դրսում գուրտ է, գնի է հիմա, *առանց կոշիկի* նա ուր գնա» /9-375/: «*Առանց այդ մոտ է օրը տնջանքի*» /9-419/: «Այժմ ինչպես ես *առանց մայր* սուրբ մնամ հար, ատավա՜ր իմ...» /10-23/: «*Առանց պառ*» քիչ է մնում բարդիք ճկվեն գլխիկը» /10-88/:

Տրական հոլովով ձևավորված հանգման խնդիրն ու պարագան իրենց գործառնությունով կարող են համարվել դասակարգ *սնունդներ հոլով + հետ, վրա* կառույցներին: Օրինակ. 1. «Նա *սնդանին* դրեց գիրքը»: 2. «Նա *սնդանին* դրեց իր ստեղծագործությունների հերթական հատորը»: 3. «Գիրքը դրված է *սնդանի վրա*»: Կապային կառույցն այստեղ գուտ առարկայական իմաստ է արտահայտում, այսինքն՝ ցույց է տալիս որևէ առարկայի մակերևույթին գտնվելը: Իսկ հոլովական կառույցն իր դրսևորումներով առավել բազմիմաստ է, արտահայտում է հանգում ընդհանրապես: Երկրորդ օրինակում *սնդանին* հանգման տնդի պարագան փոխաբերական իմաստ ունի, ոճական այլ կիրառություն է:

Հայցական հոլովի հիմնական գործառնությունն են՝ ուղիղ խնդիր և պարագաներ /տնդի, ժամանակի, չափի/: Սրանցից ուղիղ խնդիրն արտահայտվում է բացառապես հայցական հոլովով: Որովհետև այն գործողությունն անմիջական իր վրա կրող առարկան է, ներգործական սնուի բայերի անմիջական, ուղղակի օբյեկտը: Սրանք առարկայական լրացումներ են, և առարկայի իմաստն

այստեղ միանշանակ է՝ պարսեանական իր լրացալի՝ բայի սնով և իմաստով. բազմազանությունն արտահայտվում է թերևս միայն հոլովական վերջավորությունների միջոցով /տրամադանածն հայցական և ուղղականածն հայցական/, երբ ձևավորվում են անձի և իրի առումները, ինչպես՝ «Անուշին է սիրում»։ «Մարդ էր սպանել»։

Հայցական հոլովով ձևավորված մյուս գործառնությունները՝ պարագաները, հնարավոր է արտահայտել նաև կապերի միջոցով։ Որովհետև պարագաների՝ գործողության հետ կապված հանգամանքները, կարելի է ներկայացնել իմաստային տարբեր ձևերով։ Հանգամանքների վերածված առարկաները հնարավորություն են ստանում դիտարկվելու տարբեր տեսանկյունից։ Այսպես, հայցական հոլովի վրա դրված *ղնայի, մինչև* կապերը տեղի, ժամանակի պարագաներին հարգողում են ուղղության իմաստ։ Օր. «Որսկան շան շունչն ու Դիլան դայու ծնորները միասին ձգվեցին *ղնայի* արյունոտ *միրիալի*» /5-78/։ «Թվում է՝ ձգվում է, ձգվում է դեռ հեռու, *մինչև Արարս ու Արարատ*» /9-41/։ «Արևն արդեն *ղնայի մայրամուտ* էր կախվել» /5-127/։

Միայն հայցական հոլովով ձևավորված չափի պարագան հիմնականում արտահայտվում է չափ ու քանակ ցույց տվող գոյականներով /երկու կիլոմետր վազեց, մեկ կիլոգրամ գնեց, երկու արկով վերցրեց/, իսկ *մինչև* կապի միջոցով չափ ու քանակի հետ կապ չունեցող գոյականն անգամ կարող է դառնալ չափի պարագա։ Օր. «...հաժուս, լցնում են սիրտս *մինչև շուրջը*» /9-70/։ «Ընդդիմաբանեց մատին և ձգեց *մինչև աչքատակ*» /5-100/։ «Դագած գյուղացիք այնտի ոտքի կանգնեին, *մինչև գտնվատեղ* խոնարհ գլուխ տային» /5-282/։

Առաջ, դեռ, շուրջ /շուրջը/, ի վար, ի վեր, հեռու կապերը, գործածվելով հայցական հոլովի հետ, պարագաները ներկայացնում են տարբեր դիտարկումների՝ մի օր առաջ, դեռ պատանի, հինի մի վեր, երկինքն ի վեր, սյունն ի վար, շուրջ երկու տարի, շուրջ երկու կիլոգրամ և այլն։

Բացառական հոլովով ձևավորված անուղղակի խնդիրները, պարագաները մատնանշում են «այն առարկան կամ տեղն ու ժամանակը, որից առնվում, բաժանվում, գատվում, հեռանում է կամ սկսվում, ծագում, առաջ է գալիս մի բան» /1-367/։ Միայն բացառական հոլովածնով արտահայտված գործառնությունները ցույց են տալիս առարկայի ամբողջական, լրիվության մասնակցությունը գործողության ընթացքին։ Օր. «Մարգար տախտակամածից նայեց ծովափի լեռնաշղթային, որի սրածայր գագաթներից ամպը նագավ էր նստել, նայեց և իր հին տան քանդակները կամացուկ հանեց *գրպանից*, տորոնց բռի մեջ, նետեց ծովը» /5-134/։ «Ըչ միայն *գզմտից*, այլև ձի նստելուց երևում էր, որ առաջին երկու ձիավորները քաղաքի

մարդիկ են և չեն տեսնի ո՛չ կարավաբները, ո՛չ նրա քարավարը» /5-136/։ «Հնագետը *սիսոցից* ու պոնտի *ամաններից* գլուխը չէր բարձրացնում» /5-139/։

Բացառական հոլով + կապ կառավարով արտահայտվում են այս հոլովին ընդդռնացատման, սկսվելու, ծագելու հարաբերությունները, սակայն այն տարբերությամբ, որ կապային լրացումները ոչ թե ամբողջ առարկան ներառում են գործողության ընթացքի մեջ, այլ այն ընդունում են որպես ելակետ, որին կից՝ *հեռու, վեր, հեռու, ներքև, վար, դեմք, բացի, գառ, սկսած* ընթանում է գործողությունը՝ ցրվելուց առաջ, սերունդներից վեր, ամառայից հեռու, քաղաքից դուրս, պատռուներից ներս։

Նախադասության մեջ գործիական հոլովի հիմնական գործառնությունը միջոցի անուղղակի խնդիրն է արտահայտած հիմնական իմաստը՝ որն է գործողության կատարման համար միջոց լինելը։ Այս ելակետը ժխտ է կապելը ընդունելու հարցում։ Թերևս միայն *հանդերձ, մեկ /մի/* կապերն են գործածվում գործիականի հետ, այն էլ դառնալով համանիշ հոլովական լրացումներից։

Գործիական հոլովի իմաստն ու գործառնությունը կարող են արտահայտվել նաև *սեռական հոլով + կապ* լրացումներով /հիմնականում կապական բառեր՝ տակով, վրայով, միջով, մոտով, կերպով, առիթով, հետևանքով, գնով, նկատառումով, անունով, օրոք և այլն/։ Նման գործառնությունում, ինչպես նկատում ենք, օգտագործվում են միայն գործիական հոլովածնները։ Վերջիններս էլ այս կազմապարսեների հավելում են իրենց իմաստը, ձևավորում միջոցի անուղղակի խնդիր կամ համապատասխան պարագաներ։ Օր. «... Ու ես տղայությունս անցա այս խնջա *երթերի միջով* տարներային Եվ իջա ձորը» /9-40/։ «Տրորում է սիրտս ասես իր ոտքի տակ *Լուսամուտիս տակով*» /անցնող ամեն անցողով...» /9-143/։ «Զո երկրի մալիկ կկարդա, կգգաւմ Զո *կենաց կերպով* ստույգ կրկնակի...» /9-231/։

Ներգոյական հոլովով մեր գրական լեզվում շատ հին անցյալ չունի։ Այս հոլովի արտահայտած հարաբերությունները միշտ էլ կապերով են ձևավորվել։ Արդի հայերենում ներգոյականի *-ում* վերջավորությունը, փաստորեն, փոխարինում է այս հոլովի հետ գործածվող կապերի /ը, մեջ/ հարաբերություններին։

Լինելով նոր հոլով՝ ներգոյականը չունի այնքան իմաստային նրբություններ ու բազմազանություններ, որքան մյուս հոլովները։ Մ. Աքեղյանը նշում է ներգոյականի երեք առում՝ տեղի, ժամանակի և սահմանափակման։ Դրանք միշտ չէ, որ հնարավոր է արտահայտել *-ում* վերջավորությամբ։ Բազմաթիվ բառեր ներգոյական չունեն։ Դրանց առաջին հերթին անձ ցույց տվող բառերն են, անձնանունները, կենդանիներ, թռչունների անվանումները, *-ում* վերջավորվող բայանունները /հարցում, ուսում, միտում, ձգտում և այլն/, *-ում* մասնիկով անկատար դերբայ կազմող /վտանգ, տոն,

գիր, դատ, ուխտ/, ինչպես նաև -ուրթուն, -ուն, ունդ, -խառ, ունդ, -ուրդ, -յուն վերջածանցներով բառեր:

Ուսումնասիրելով հոլովների իմաստագործառական փոփոխությունները յեզվի զարգացման ընթացքում /մասնավորապես կապերի իմաստի փոփոխության գույքընթաց/ նկատում ենք, որ նախորդ վոր ներգոյականի /զրաբարում/ ի + նգակի տրական/ փոխարինվելը -ում վերջավորությամբ աննախորդ ներգոյականի կատարվել է, կատարվում է ոչ միանգամից, աստիճանաբար: Այսպես, սկզբում իմաստագրվել է / նախորդ, ապա տրականածն ներգոյականի իմաստը ձևավորվել -ում-ով: խոսակցական ոճում, զեղարվեստական գրականության մեջ հանդիպում ենք տրականածն ներգոյականի կիրառության: Դրանք հիմնականում դարձվածներ են: Օր. բլիդ մնա-բլումդ մնա: /«Այդ օրվա խմած գարու ջուրը մնաց Արտիկ Արարի բլին» /8-93/, ականջին հալել-ականջում հալել, այսինքն՝ հիշողության մեջ տպավորել, գլխին խելք դնել, գլխին խելք մնալ, գլխին խելք թողնել, գոգին նստել՝ մորթոր փնտել /գործածվում է նաև գոգումը նստել/, սրտին թթվել, ուրիշի ապրուհին աղ գցել, փորձանքի գալ կամ փորձանքի մեջ ընկնել, քունը գլխին և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՔԵՂՅԱՆ Մ., Երկեր, Զ հ., Երևան, 1974
2. ԱՔՐԱՅԱՄՅԱՆ Ս., Չեմբոլդ խոսքի մասերը և նրանց բառական ու բերականական հատկանիշների փոխադարձությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965
3. ԱՌԱՔԵՆՅԱՆ Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957
4. ՋԱՆՈՒԿՅԱՆ Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974
5. ԲԱԿՈՒՆՅԱՆ Ա., Երկեր, Երևան, 1986
6. ԴԵՄԻՐՃՅԱՆ Դ., Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 7, Երևան, 1983
7. ԻՍԱԿԱՆՅԱՆ ԱՎ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 2, հ. 3, Երևան, 1974
8. ԽԱՆՋԱՐՅԱՆ Ս., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1983
9. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ Ս., Երկեր 3 հատորով, հ. 1, Երևան 1984
10. ՇԻՐԱԶ ՀՈՒՎ., Յոթնադատում, Երևան, 1977
11. ՇԻՐՎԱՆՋԱՐԵ, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1950
12. ՋԱՐԵՆՅԱՆ Ե., Ընտիր երկեր, Երևան, 1957
13. ՏԵՐՅԱՆ Վ., Բանաստեղծություններ, Երևան, 1982

О семантической взаимосвязи предлогов и послелогов и падежей

КАРИНЕ АВАНЕСЯН РЕЗЮМЕ

В данной статье в рамках семантических и структурных взаимосвязей между предлогами и послелогом и падежами изучаются функции и значения, свойственные только падежам. В результате изучения выясняется следующее:

1. Основные функции именительного падежа оформляются без предлогов, за исключением некоторых видов приложения и части составного именного сказуемого;
2. С родительным падежом употребляется больше предлогов и предложных сочетаний, однако функции и значения родительного падежа выражаются посредством предложных сочетаний, т.к. этот падеж формирует в основном состав падежащего, а предлоги – преимущественно состав сказуемого;
3. Падежные окончания остальных косвенных падежей приобрели определенные значения и с их помощью выражают относительно конкретные отношения;
4. Что касается предложного падежа, то он не обладает, как правило, многими семантическими особенностями, однако не всегда они могут выражаться лишь падежным окончанием.

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից հայերենի հոլովների և կապերի իմաստագործառական առնչակցության շրջանակներում ըննարկելով այն իմաստներն ու գործառությունները, որոնք հաստոյ են միայն հոլովներին, նկատում ենք, որ՝

1. Ուղղական հոլովի հիմնական գործառությունը ձևավորվում են առանց կապերի, բացառությամբ՝ մասնական բացահայտչի և ստորոգելի ուղղականի:
2. Ամենից շատ սեռական հոլովի հետ են գործածվում կապեր ու կապական բառեր: Սակայն ամենից քիչ սեռական հոլովի իմաստներն ու գործառություններն են արտահայտվում կապային լրացումներով, քանի որ այս հոլովը ձևավորում է հիմնականում գոյականական անդամի լրացումներ, իսկ կապերը՝ ավելի շատ բայական անդամի լրացումներ:
3. Տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովների վերջավորությունները որոշակի իմաստ են ձևեր բերել և սրանց միջոցով արտահայտվում են համեմատաբար կոնկրետ հարաբերություններ՝ հանգամանքաշատման, միջոցի, տեղի, պարունակության և այլն:
4. Ներգոյական հոլովը չունի իմաստային շատ նրբություններ և բազմազանություններ, սակայն դրանք միշտ չէ, որ հնարավոր է արտահայտել հոլովական -ում վերջավորությամբ:

Գրաբարի, Արցախ – Ղարաբաղի բարբառի և արդի հայերենի շարահյուսական մի քանի ընդհանրությունների մասին:

Օ. Ե. Բաբայան

Հայերենի բարբառներն ու արդի հայերենը պահպանել են այն հարստությունը, որ ժառանգել են գրաբարից:

Ակադ. Զատիկյանը հայոց լեզվի հնագույն շրջանի, հատկապես նրա նախադրաբարյան փուլի համար տարբերում է վեց բարբառային գոտիներ, որոնցից հյուսիս-արևելյան բարբառը ակտի ընդգրկեր Մեծ Հայքի հյուսիս-կենտրոնական և հյուսիս-արևելյան շրջանները՝ Այրարատը, Գուգարքը, Արցախը, Ռուիքը, Սյունիքը և Փայտավարանը: Արցախ – Ղարաբաղի բարբառում պահպանվել են հնչյունական, բառապաշարային որոշ տարրեր, որոնք իսկանաբար ավելի էին ծագում ունեն, քան գրաբարը: Դրանք կարելի է համարել հնագույն բարբառային արտահայտություններ, որոնք վկայում են Արցախ-Ղարաբաղի բարբառի հնության մասին:

Շարահյուսական կառուցվածքի տեսակետից շատ ընդհանրություններ կան գրաբարի, Արցախ-Ղարաբաղի բարբառի և արդի հայերենի միջև:

Եվ գրաբարում, և բարբառում, և՛ արդի հայերենում գործածվում են գոյականական (աղանանդեայ եղեգամբ, բանք ասացեալք, քըշըքա արագ, պրել Կրիթորը, հրաշք աղջիկ), անձականական (ատելի թշնամեաց, յիսեն գաղտնի, պատառ դոսգի, ինձանա թաքուն, ուրիշներին անխելի), բայական (շինել անձեռակներտ, նախատել բանիսք, վրսավրելալ մոտենալ, վեղալ ծաղկել, պատմել քաջերից), մակբայական (կարի դանդաղ, այնչափ վաղ, ստորաս հեռե, պատառ ճելի, շատ արագ), դերանվանական, թվականական և այլ բառակապակցություններ: Շատ են գործածվում գոյականական ու բայական բառակապակցություններ:

Կան նախադասությունների նույն տեսակներ: Բանի որ ստորյա խոսքում մարդիկ հիմնականում ձգտում են մտքներն արտահայտել կարճ, պարզ ու հասկանալի, բարբառում ավելի շատ գործածվում են պարզ նախադասություններ՝ Միշերն պիսնեգեն: Հղթըրեցիք պրել մարթիք ըն ըլալ:

Բարդ նախադասությունների ավելի շատ գործածվում են բարդ համադասական նախադասությունները՝ Լըծում ընք, ըսքըսում վար անելը: Վըշըսմեն ինձ ըրա տեան, ըսկըսեցեն կըծօտելը:

Գրաբարում, Արցախ-Ղարաբաղի բարբառում և արդի հայերենում ներկորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են ինչպես ստորդայական շարկապներով (գրաբարում քանգի, գի, որպես գի, մինչ գի, թեպետ, քան թե, եթե և այլն, բարբառում ընդդա հնտի, վըր

(վեր, վըրե), էա վըրե, հանցըվըր), այնպես էլ հարաբերական բառերով (գրաբարում որ, ո որ, գին, ուր, ուստի, յորժամ, որպես և այլն, բարբառում վըր, հիթի): Իր շարահյուսական կիրառություններով գրաբարում առանձնանում է որ հարաբերական դերանունը, իսկ Արցախ – Ղարաբաղի բարբառում հաճախակի գործածվում է թա շաղկապը ինչպես մակնական, այնպես էլ նախադասական: Եւ կաննիփալի թուփ ինչ է, որոյ սերմն նորա դիւ է: Վըլ մին պէն կըրէլիս չի լալ, թա (= որ) օյսըր խօստ: Տըղաք պըցըրացտ, թա (= որպեսզի) յէշիմ: Պարիկաննեւրան էլ յէլէն, լաց իլին, վըրե սըրտընէն հուվանա: Վըլխաքը մօրթալ ըն, հանցըվըր թէփ անին: Ասալ ըմ, հունցը գլիդա: Հիթը տըլենամ, էն վախտը կապիմ:

Գործածվում են անկախ և կախյալ շարահարաբայան նախադասություններ: Այսպես՝ Տես ոսկի տնդայր ի փնտայրթեանն Արտաշեսի, Տնդայր մարգարիտ ի հարսնութեան Մաթինկան: Եկալ ըմ, տըլենամ, հինչ ըս անըմ: Օգալ ըմ՝ քյընամ տօմ: Ետ քըշըր դըշըղիթը յէկան, լօխ ավերն ու դանը հըվըրցեն:

Արցախ-Ղարաբաղի բարբառում հաճախ բարդ ստորդայական նախադասության մեջ որպես գլխավոր նախադասություն է գործածվում աղանդի դերբայն առանց օժանդակ բայի. Տու էտքան խնկըր ըս, յես գլիդայու (Ես չեմ իմացել, որ դու այդքան խելոք ես): Աղանդի դերբայը կարող է արտահայտել նաև նրկորդական նախադասության իմաստ: Նախադեմ տըսնալու, հարցներ լուծած ա հաշվում (Դեմ նախագահին չի տեսել, հարցներ լուծված է հաշվում):

Արցախ – Ղարաբաղի բարբառով նյութերում գերակշռում է ուղղակի խոսքը: Հիմնականում խոսքը կառուցվում է երկխոսություններով: Նկատելի է, որ մեքերբայով խոսքի դերբայում պատմողը ստանձնաձևե նդանակի անցյալ ժամանակի *առաջի* բայածկի փոխարեն կարող է գործածել պայանական նդանակի ապառնի՝ կասմն:

Ուրուզումը հըվըրվեցինք տանը. կասալմ նկնք թէփ անինք:

Կասալմ ըսըրականըմ, հինչ կինի կինի. Մըշըրքըվող խոսքը հաճախ կապվում է թա շաղկապով, բայց մնում ուղղակի խոսք.

Ախըր ջանըր տող ինգյած քյընամ ա բիդի օզը. օզը թա.

Վըր քյընաս, կաեւթ թաքավերն ապրած կենա, ըրագումըս տեհալ ըս վըլխաքըն ու կոյոլ յերգինըսում մին տող ըրըծելիս... թաքավերը վըլալեն սանդուղեն պից անել ա տամ, թա՝

-- Հիշքան վըլսկի օզում ա, թօղ յօր օնե տանե:

Գրաբարում և Արցախ-Ղարաբաղի բարբառում և արդի հայերենում ենթական լինում է սրբալ և քաղաղոյալ:

Պարզ ենթական արտահայտվում է հովովկո խոսքի մասերով և փոխանականաբար գործածված բառերով: Բարբառում և արդի հայերենում այն հիմնականում դրվում է ուղղական հոլովով: Էլլա

համան մարդեքը հրվարվում ըն: Վէջ մինը կարում էր դուր աս: Մուտք էլ բիդի շատ վար անինքը:

Գրաբարում ենթական կարող է դրվել ուղղական, սեռական, տրական, հագվադեմ էլ հայցական հոլովներով: Ծաղիկը երևեցան յերկրի մերում: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամատրսն Բիւլայ՝ խստութեամբ պատասխանեաց: Պիտոյ է ինձ յոյժ գրեզ առ բացաւորն Պարսից Տաւոյն:

-- Կամիմ գնա ինձի իշխան:

Բարբառում «ունեն» պակասավոր բայի, նաև նրա պակաս ձևերը լրացնող «ինիմ» անկանոն բայի հետ ենթական դրվում է տրական հոլովով՝ Ինձ իշալ ա, օնիմ, քյոթզ իշալ ա, օնիս, ընդա (ընդորա) իշալ ա, օն: Որոշ խոսվածքներում հանդիպում է նաև սեռական հոլովով՝ Իմ իշալ ա ըստն տրորելան:

Արցախ-Ղարաբաղի բարբառում ենթական է դառնում նաև ինքն դերանվան հայցական հոլովը գ նախդրով, երբեմն նրանց հարադրվում են ինձ, քեզ, իրեն հայցական ձևերը՝ զինքըս (ինձ) հրվարվից, զինքըտ (քեզ) հրվարվից, զինքը (ուրան) հրվարվից, զինքը շաղ եկավ է այլն: Տարածված է ենթականների հետ սառ կամ էտ գուցական դերանունների գործածությունը: Նրանք կարծես ավելի են շնչտում, աստղական իմաստ հաղորդում: Բարբառով խոսողների մի մասը դա պահպանում է նաև գրական հայերենով խոսելիս: Այսպես՝ Ենթական, դա նախադասության գլխավոր անդամ է:

Անձնական դերանունների փոխարեն հաճախ դրվեն ենթական գործածում են ցուցական դերանունները՝ Յո՛ւս րուդրան մին խաչ ըմ տամ, վրէժ տա ամանս ինի: Ընդդանք քյինում ըն, տրևներ: Լրացում ունեցող ենթական կարող է գործածվել անորոշ առումով՝ Ա՛ բայեր, ծեր հար ծանդոր հիվանդ ա:

Բաղադրյալ ենթականի դեպքում գրաբարում բուն ենթականի հետ հանդես են գալիս ինձէն, քեզէն, մեզէն, ձեզէն հոլովաձևերը, ինքն, ինքնին բառերը, լրացուցիչ տեղեկություն հաղորդող այլ բառեր: Հիմնականում այդպես է նաև արդի հայերենում: Դուր ողջ լերտը, եւ մեր մեզէն ողջ ենք ղիցն օգնականությամբ: Ընդհարք երկուր մի դու էիր, եւ մի թագաւորն Յունաց: Մենք ամենքս հյուր ենք կյանքում մեր ծննդյան փաչ օրից:

Արպես բաղադրյալ ենթական բարբառում հաճախ հանդես է գալիս նույն անձնական դերանունը կրկնված՝ մու՛նք ու մու՛նք կյեցենք (մենք ինքներս), տուր ու տուր կանիք: Կարելի է հասկանալ նաև I կամ II դմբը իր նեղ շրջապատով միայն մենք, միայն դուք: Բաղադրյալ ենթական է կազմում նաև անձնական թվականների բաղադրությամբ (գրաբարը և Արցախ - Ղարաբաղի բարբառն ունեն անձնական թվականներ)՝ Տուր ըրկորան էլ լավ քո պար կյան: Խոխեքըր հրնգերան էլ կարթալ ըն:

Ենթական և ստորոգյալը հիմնականում թվով համաձայնում են, բայց տարածված է նաև

բաղադրությունը՝ Ժրջօվուրթը հրվարվալ ըն (նաև հրվարվալ ա) և այլն: Տարածված է նաև հոգնակի ենթականի հետ եզակի ստորոգյալի գործածությունը՝ Ըրտապանքնն մարբարիդ ա տրեճում: Աշկերը կըրորից: Մըտորընէս ճարից: Հօրիքէս տուս եկալ: Հոգնակի «կան» ստորոգյալի հետ գործածվում է եզակի ենթական՝ Խընձոր կան: Խաղող կան: Մտորոգյալը արտահայտվում է թե՛ պարզ ու բաղադրյալ ժամանակներով, թե՛ երկրորդական բաղադրյալ ժամանակներով: Երկրորդական բաղադրյալ ժամանակներով արտահայտված ստորոգյալները բարբառում ավելի շատ են հանդիպում, քան գրական հայերենում: Թարգմիթը քոն իլած ա ինիլու: Վրէր տօն ա կյան, կընէպը հէն ա ինըմ հաց թըլսելիս: Էն ա վրէր ախտըրս կյալի ինի, իմաց ա տալու:

Գոյականական և բայական անդամների լրացումները քիչ յուրահատկություններ են դրսևորում բարբառում: Գոյականական անդամի լրացումների համաձայնությունը Արցախ-Ղարաբաղի բարբառում հիմնականում կատարվում է նույն օրինաչափություններով, ինչ արդի հայերենում: Անորոշ դերբայով արտահայտված նպատական պարագան կարող է դրվել հայցական հոլովով՝ Բլեթէնք յլքը սաէլ, պար կյալ: Մոտմնալ բայը պահանջում է ոչ թե՛ տրական, այլ բացատական հոլովով հանգման խնդիր՝ Մոտմնալ շէնան, տանան: Գրաբարում ցնդի, ժողովողի հոգնակին միաժամանակ ցույց է տալիս տեղը, ինչպես՝ Հայք - հայեր և Հայաստան: Նման փոխանցումները ժամանակակից հայոց լեզվին բնորոշ չեն, բայց գործածական են Արցախ-Ղարաբաղի բարբառում՝ Թընում ըմ թորթըր: Մին օրէ յրէ ու Դնրունց Արտաշը, հ'ա, մընէլ մըրէ ես Մարդունց Հասանը քյինիյիս ընք ըլալ Մալականէ: Ընդունված է, որ հատկապես ստանա հատկացուցչի համապատասխան հոդը՝ Յէս իմ խանութօրունք տրէն ըմ տինըմ, տու վէլ քո կիծօթօրնըտ տըլէն տիր: Բանի որ բոլոր հոլովներն էլ հոդ են ստանում, կարող են հոդ ստանալ նաև նախադասության բոլոր անդամները՝ Մօշին քուրեր: Տօնը լըցնում ա ըլխարքիս լյավ-լյավ սարքէրալը... Ըտըրանց շըլէնքմը թողում չըն կէնան:

Այսպիսով, Արցախ-Ղարաբաղի բարբառը շարահյուսական մակարդակում ևս որոշակի ընդհանրություններ ունի թե՛ գրաբարի, թե՛ արդի հայերենի հետ:

О некоторых синтаксических общностях древнеармянского языка, Арцах- Карабахского диалекта и современного армянского языка.

Резюме

О. Е. Бабабян

Дialeкты армянского языка и современный армянский язык сохранили богатство, которое наследовали из древнеармянского. Соответствующими фактами показываются некоторые синтаксические общности древнеармянского языка, Арцахо-Карабахского диалекта и современного армянского языка.

Գրաբարի, Արցախ — Ղարաբաղի բարբառի և արդի հայերենի շարահյուսական մի քանի ընդհանրությունների մասին:

Օ. Ե. Բաբայան

Անփոփում

Հայերենի բարբառներն ու արդի հայերենը պահպանել են այն հարստությունը, որ ժառանգել են գրաբարից: Հանապատասխան փաստերով ներկայացվում են գրաբարի, Արցախ-Ղարաբաղի բարբառի և արդի հայերենի շարահյուսական մի շարք ընդհանրություններ:

ԷՐԳԱՐ ՊՈՅԻ ԱՋԻԵՏՈՆԹՅՈՆԵՐ
ՎԵՐՅՈՒՍՈՎԻ ԱՆԵԱՐԱՐԱՅԱՅԻՆ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ
Լ.Տ. Բարդախյան

Մենք, ում համար Էդգար Պոն բացահայտել է իր «այլաժողովածության դեկ» ողջ գաղթականությունը, մենք, ում համար Նիցշեն վերագնահատել է հին արժեքները, գիտենք արվեստագետին միտված միայն մի պատգամ՝ անկեղծություն, բացարձակ, ծայրահեղ...

Դ. Մարտիրոսյ

Տվյալ աշխատանքում Է. Պոն և Վ. Բյուսովի ստեղծագործական առնչությունների հիման վրա լուսաբանվում են նրանց աշխարհայացքին վերբերող մի շարք հիմնական դրամներ:

Ինչպես էլ միտքս տրվի՜լայ հնչի, այդուհանդերձ չեմ կարող խոսքս չսկսել առանց հանրահայտ մտքի նոր ձևակերպման. «Մեծությանը թարգմանելու համար առավել մեծություն պետք է լինել»: «Նուռաբար, գծագրելով Բյուսովի Պո գուգահեռները, խոսել Պոյի մասին, նրա գեղարվեստական «նախադրություններին», փիլիսոփայական աշխարհայեցողի ու բանաստեղծական խնձր ընդվզումների մասին, ամենանվաճ Բյուսով-թարգմանչին, Բյուսով-բնադատին, Բյուսով-արվեստագետին, պարզապես անխմաստ կլինե՞ր վերնագրում առաջարկված հիմնական դրամներն անդրադառնալը:

Եվ այսպես, ինչպիսիք ենք տեսնում մենք Բյուսովի ոճը, գեղարվեստական հնարքների ողջ ներկայացմանը՝ հղկված, կառուցվածքորեն հստակ, անդմ, լակոնիկ, ինչ-որ տեղ չոր-գծագրված, բայց ամենուր պարզ ու տրամաբանված, առաջին հայացքից՝ գուսպ, բայց հաճախ սուր, կծու, նրբագեղ, դիպուկ, խալթող ու միաժամանակ բազմաթիվաբանի զարգացածությունը փայլող: Այս ամենը այդպես է մեծագույն կուլտուրայի, մտավոր գերկազմակերպվածության ու հասուն վարպետության: Դրան գրականության մեջ համարադասականում էր Բյուսովի միտվածությունը գեղարվեստական մտածողության այն «գիտության» ուղղությանը, արվեստի մեջ այն «առթևանակական տարրի» առկայությանը, որ բնորոշ էր «Էդգար Պոականներին»: Եվ պատահական չէ, որ Բյուսովը իր ստեղծագործական կյանքի առաջին կեսում իրոք եղել է խորապես կապված ռուսական սիմվոլիզմի հետ, նրա դեկադենտական-ինդիվիդուալիստական տարրերին (Յ. Սուլգուբ, Զ. Գիսպիլուս, մասամբ՝ Բալմոնտ): Այստեղից էլ Բյուսովի հակումը դեպի պոզիտիվիզմն ու մատերիալիստական փիլիսոփայությունը ու արվեստի մեջ նստարարիստական միտումների դեմ պայքարը:

Իրականում իսկ, սիմվոլիստների միջակայնորեն գունագարդված աշխարհայացքի

ֆոնի վրա, որն ի դեպ, բավականին ազդել է Բյուսովի ստեղծագործության վրա, նա տարբերվել է իր քնարական մտածողության ջազմոնայիզմով, որտեղ առկա են և՛ կրքերի տարբերք, և՛ գաղտնիքի անգուսպ տենչանքը, և՛ տիեզերական հետաքրքրասիրությունը: Ու այս ամենը՝ գուգահեռված ստեղծագործական ինքնատիպայնումամբ ու սթափ մտածողությամբ, գուգահեռում, որի մասին կարելի է արտահայտվել Բյուսովի բանաստեղծ. «Պաղ թվերի ջերմությունը»:

Երկին անդրադառնալով Բյուսով-Էդգար Պո գուգահեռներին, ամենաբնականաբար չառնել Պոյի պոետիկայի որոշ առանձնահատկությունների վրա: Է. Պոյի տեսությունն և արվեստական կազմում են գեղագիտական-գեղարվեստական մի յուրատիպ ընդհանրություն՝ հազվադեպ առավելություն համաշխարհային պոետիկայի պատմության մեջ, և հազվադեպ ուժ: Ամերիկայի ռոմանտիկ ժամանակաշրջանի համար: Հասարակության լայն շրջանները տառաջգիրեն կախարդված էին Պոյի «Ագրավո», «Անարել Լուի», «Զանգակներով»:

Քննադատները շնչահեղձ մարտում էին «Ելենային», «Ագրավո», «Մոմալիսյան քաղաքը», «Ուլալյունը» և այլն, գիտնականները գերադասում էին «Էդուարդոն», «Աննիան», «Հարջանակած որդը»:

Ո՞րն է Էդգար Պոյի քնարական տեսության հենքաբարը: Վեհ, Իդեալական Գեղեցկություն հասկացությունները: Սակայն դրան գուգահեռ նկատում ենք ապշեցուցիչ մի նրկույթ, նրա քնարը տառաջգիրեն տնքում է մահվան մոտիվներից («Քնած գեղեցկուհին», «Լինոր», «Տագնապի մարգագեղությունը»): 30 կանոնիկ բանաստեղծություններից 11-ը նվիրված են մահվան թեմային, 8-ը՝ սիրո, 2-ը՝ սիրո ու մահվան, 9-ը՝ մնացած բոլոր: Ի դեպ, նշված 11-ից 8-ի թեման է գեղեցիկ կնոջ մահը: Ինչպես փաստում է ինքը պոետը. «Գեղեցիկ կնոջ մահը աշխարհի ամենաքնարական պոեմն է»: Ի վերջո, Պոյի մոտ գործում է անտվոր բառակազմակերպությունների օրենքը. «Լույս է սփռում ծովը չարագուշակ», կամ առավել խնձր մի կոմբինացիա՝ «Վարից վեր է հորդում լույսը...»: Պոետը բացառապես օգտագործում է լուսավորվածության էֆեկտը: Նա տեսնում է պատկերը ու հաղորդում է այն դեռավի միջոցով (Հսկայական, ահեղիկ հայացք): «Մտեղծագործության փիլիսոփայությունը» հանրահայտ հոգվածում, որ շշմեցրեց Պոյի ժամանակակիցներին իր պարադոքսալ բացատրություններով, ներկայացված է «Ագրավո» պոեմի վրա պոետի աշխատանքի փորձը: Աշխատանքի առարկան «ստեղծագործական գործընթացի մեխանիկան է», նրա արդյունքը կարելի է հաշվարկել ինչպես պոեմի ալգորիթմի ստեղծումը: Այսինքն՝ գործողությունների հստակ պատկերացված հետևողականություն, որի լսատիվ պահպանությունն էլ

¹ Д. Максимов, Бросок-крилик, М., ХЛ, 1987 г., стр. 10

² Ю. В. Коплев, Эдгар Аллан По, поэт и проза, Ленинград, ХЛ., 1984 г., стр. 132

հենց պայմանավորում է որոշված ստեղծագործության ծնունդը:

Այնուհետև Է.Պոն համոզված էր, որ էֆեկտին հասնելը, այսինքն՝ հոգու վնասնալը հնարավոր է միայն այն դեպքում, եթե քնարական ստեղծագործությունը ունի համընդհանուր միասնություն՝ ներառելով թեմայի, պոժեի պատկերավոր համակարգի և ընդհանրապես ողջ քնարական կառուցվածքի միասնությունը: Եվ այս ամենը անհրաժեշտ է, որպեսզի հասնես «տարվորության միասնության»:

Խոսելով Պոյի քնարերգության մասին՝ անխնայ է օգտագործել «Ռոտմիր», «Երբ» հարցերը: Նույնիսկ այսպես ասած «ամենապոլիտիկային» կոնկրետ բանաստեղծության մեջ («Ազատ») մենք չենք գտնի տառվի որոշակի մի բան, քան «կենսիչ երաժիշտ թափախ ժամ» և կամ «Եվ կենսիչ երաժիշտ մեզ ու ցրտի գիշեր»: Անվանենք այս մի երևույթ էլ «Անորոշության սկզբունք»:¹

Այսպիսով, գեղեցիկը, որպես քնարերգության առարկա, պոետական երևակայության արգասիքն է: Հենց «Նա» էլ՝ երևակայությունը, ըստ Պոյի, հանդիսանում է ստեղծագործական գործընթացի գլխավոր շարժիչ ուժը: Նրա մեջ է «էներգիան», որ անհրաժեշտ է գեղեցիկի ոլորտը կառուցելու համար:

Այժմ վերադառնալով Բյուստովին ու ռուսական սիմվոլիզմի ներկայացուցիչների վրա Էդգար Պոյի ստեղծագործության ազդեցության բնույթն ու աստիճանը շոշափող հարցին: Մեզ համար հատկապես կարևոր է Պոյի ազդեցությունը Բյուստովի՝ ամերիկյան պոետի կրթող ընթերցողի ու պոետոլոգ թարգմանչի վրա:

Բյուստովի համար արժեքավոր էին ոչ միայն Է.Պոյի գեղարվեստական ստեղծագործությունները, այլ ավելի շատ նրա փիլիսոփայական և գեղագիտական գաղափարների համակարգը: Այլ կերպ ասած՝ Բյուստովը Է. Պոյի մեջ տեսնում էր Պոնտի այն տիպը, որն իր մեջ հավասարապես գուցակցում էր և՛ արվեստագետին, և՛ գիտնականին, և՛ փիլիսոփային՝ այն իդեալը, որն հիրավի ցանկալի էր հենց իր՝ Բյուստովի համար: Այս հանգամանքն արտահայտվում էր բրյուստովյան այն գնահատականներում, որոնք տրվում էին որոշ ռուս սիմվոլիստների՝ («Սինթ», «Էդգարյան», «Բազմաբարդ»):

Բյուստովն անվանել է Պոյին սիմվոլիզմի նախակարապետը ու նշել թագավոց, որ նրա ստեղծագործություններում պոեզիան «առաջին անգամ հասավ ինքնագիտակցման»:

Բյուստովը փորձում է պարզել, թե ինչպիսի մեթոդներով է Է.Պոն հասնում բանաստեղծական

ձևի կատարելության և ձգտում է համամասն մեթոդներով թարգմանել դրանք ռուսերեն:

Ինքը՝ Բյուստով էլ, քնականաբար գերը չմտաց Պոյի ստեղծագործական ազդեցությունից: Նա չափազանց շատ էր կարդում Պոյի ստեղծագործությունները, ըմբռնելով Էդգարյան «Փրաշագործությունները», աշխատում հասկանալ նրանց տիվական բնույթը ու թարգմանել, թարգմանել, թարգմանել... փորձելով հասկանալ, ըմբռնել նրա աշխարհայացքի էությունը, նրա արվեստը:

Բյուստովը ամեն կերպ աշխատում էր հասկանալ Պոյի գեղարվեստական ֆենոմենը, գլխավոր ընկրմվելով նրա աշխարհընկալման «լաբիրինթոսը»: Առանց այս ամենի՝ ամերիկյան գրողի ստեղծագործությունը վեր կածվեին իդեալավոր դեմոսկոպիկ անիմատու ու անհավատալի մի անոնի կույտի:

Է.Պոն ամենից առաջ դիվականորեն ինքնատիպ մտածող է, և նրա պոեզիայի տարրիկականություններն էլ բխում էին նրա աշխարհայացքի յուրօրինակությունից:²

Ընթերցողը պարզորոշ տեսնում է Պոյի ողբերգությունը՝ «ոգու և տաղանդի ողբերգությունը»:

Այսինքն՝ ճակատագրի անորոշ կտտանքներով էլ պայմանավորվեց Պոյի ներքին այն դաժան խռովը, որ բնորոշ է աշխարհի թուր «ժանաբաղը տարրիկականություններին»:

Ժամանակակիցները չկարողացան ներել Պոյին, ոչ նրա կոաբստությունները, ոչ նրա խարազանի սարկավազը, ոչ ղեպրեսիան, ոչ տարրիկականությունները: Ինքը՝ Պոն հեռատեսնորեն գրել է. «Իհարկե Նա (հանճարը) միշտ էլ գիտակցում է իր առավելությունը ու հենց դրանով էլ վատասկում թագավորանի թշնամիները: Ու քանի որ նրա կարծիքներն ու մտքերը խիստ կտարբերվեն համայն մարդկության մտքերից ու կարծիքներից, նրան, անշուշտ, կհամարեն խելառ: Ինչքան տանջալից է նման իրավիճակը...»:

- Ինձ մոտ մտածողության ողջ էներգիան ծախսվում է կենսորոնման լուր վրա, երբ տոկոսական ռոմանտիկների մոտ այդ էներգիան ծառայում է մտքի թոփոխին:³

1890-ական թթ-ների 2-րդ կեսում Բյուստովը, խորը ռուսումնասիրելով Լեյբնիցի փիլիսոփայական համակարգը, ստիպված էր փաստել Պոյի հայացքների կախվածությունը Լեյբնիցից: Առավել արդյունավետ էին հետազոտությունները՝ կապված Է.Պոյի փիլիսոփայական-գեղագիտական տրավետտի «Էվրիկիան» ընթերցման հետ:

«Ինտուիցիայի քաղաքականություն»՝ ասա ինչպես ընկալվեց տրավետտը ընթերցողների կողմից:

«Էվրիկիան» չափազանց հետաքրքրեց Բյուստովին. ամենուր գգացվում էր իմացաբանության

¹ Ю. В. Ковалев, Эдгар Аллан По, новеллист и поэт, Ленинград, Х.Л., 1984г., стр. 140

² Эдгар По. Полн. собр. соч. и стх. М.-Л., 1924, стр. 9-16

³ М.Тугушова. Под знаком четырех, Москва, "Книга", 1991

(иноселегия) հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրությունը:

Այսպիսով, Բրյուսովը փաստում է, որ Է. Պոն սխալ է համարում ճշմարտության ճանաչման ինդուկտիվ մեթոդը, և ճշմարտության չափանիշը տեսնում է լոկ նրա ինքնին ակնհերտության մեջ:

Մյուս կողմից էլ, Բրյուսովը մատնանշում է Պոյի կողմից նաև դեդուկցիայի արժանիքների ծիսումը, քանզի այն հենվում է հաստատուն կանխադրությունների (постулатов) վրա:

Ինքը՝ Բրյուսովն իսկ, լինելով կողմնակից հարաբերականության տեսության գաղափարին, հանգում է ոչ միայն բոլոր արժեքների հարաբերականության մոտին ընդհանրապես, այլ հակառակը՝ գալիս է այնպիսի պարադոքսալ հանգման, ինչպիսին է՝ յուրաքանչյուր ճշմարտություն ունի իր արժեքը:

Այնուհետև, ի՞նչ ենք մենք նկատում: Բազմակարծության գաղափարները Բրյուսովի մոտ հայտնվում են հենց այն ժամանակ, երբ մանրագին ուսումնասիրված էր «Էվրիկան»: Եվ որպես արդյունք՝ հետևյալ տողերը. «Ճշմարտություններ չափ կան, և հաճախ նրանք միմյանց հակասում են... Աղոթենք և՛ օրվան, և՛ գիշերվան, Միտրային ու Ադոնիսին, Քրիստոսին ու Մատանային»:

Բրյուսովի քնարերգության մեջ տարբերակված մոտիվները սկսեցին հնչել արդեն 1899թ-ից:

Իսկ այն, որ ինդուկցիան ու դեդուկցիան չեն կարող նույնականորեն լուծել ճանաչողության հիմնախնդիրները, Է. Պոյին հանգեցրեց այսպես կոչված «ինտուիտիվիզմին»՝ նրա ստեղծագործական էվոլյուցիայի վերջին փուլին: Այսինքն՝ «Էվրիկան», ինչպես Բրյուսովն է գնահատում, ինտուիցիայի (ներմթնման) վերհանումն է որպես ճանաչողության գործիք:

Է. Պոյի աշխարհայացքն իսկ Բրյուսովը հարաբերակցեց փիլիսոփայական պանթեիզմի (քնապաշտության) հետ (նորից հնչում են Սպինոզական երանգներ): Միաժամանակ Բրյուսովը գտնում էր, որ Է. Պոյի պանթեիզմը յուրատեսակ պանթեիզմ է: Այն առաջ է քաշում անհատապաշտական (ինդիվիդուալիստական) սկզբունքներ: Դրա գերագույն արտահայտությունն է՝ միտքը որպես անհատականացված գիտակցություն գաղափարը:

Անհատը Է. Պոյի համար նպատակ է, և Բրյուսովն այդ առօրյա գտնում է, որ նա ընդունակ է իր ստեղծագործության մեջ հաղորդել «այլ զգացումների հնարավորությունը», առևն արդեն կտրված հողերեն պայմաններից:

Այսպիսով՝ մեր առջև տեսնում ենք Բրյուսովի մեկնաբանությամբ Պո-ռազդին ալիստին,

Պո-պանթեիստին, միստիկին ու անհատապաշտին: Դարավերջին Բրյուսովի համար կամքի ազատության մասին գաղափարն իսկ (նաև՝ «անձնական») կդառնա կարևորագույնը: Համապատասխանաբար Է. Պոյի փիլիսոփայական կառուցներն էլ գնահատվեցին արդեն ոչ թե որպես պանթեիզմ, այլ որպես «անհատի պանթեիզմ»: Ծնվում է համոզվածությունն առ այն, որ արվեստի մեջ կարևորը՝ արժեքները հասցնեստիքոզն ուղղելն է: Այսինքն՝ ընդգծվում է արվեստի հաղորդակցական (կոմունիկատիվ) գերը:

Նրան գաղափարական վայրիվերումներում էլ սաղմնավորվեց Վ. Բրյուսովի 20-րդ դարի ծրագրային «Գաղտնիքների քանալիները» հոդվածը, որի հենքաքարը հանդիսացավ Է. Պոյի և Լեյբնիցի գաղափարների թագմավորմանի մեկնաբանությունը:

¹ В. Брюсов. Дневники. 1891-1910, М. 1927, стр. 39

¹ Брюсовские чтения, 1980, г. Ереван - 1983, стр. 235

Արցախը XIX դարի գրականության մեջ
(Պլատոն Ջուրովի «Անդրկովկասյան պատմական
վեպի» կերպարների համակարգի գեղարվեստական
Զ.Վ. Բալայան

*Հոդվածում քննարկվում են գնահատվում է
Պլատոն Ջուրովի «Արարաբադի աստղագետը» վեպի
սյուժեն և կերպարների համակարգը:*

«Ուտը է մի բանով հաց ճարել, եւ իհարկէ, արեւի լաւ
է աստղագետ լինել, քան թէ մուրացկանութիւն
անել: Ծակատագիրը ամենին հարստութիւն չէ
տալիս: Դու ինչո՞վ ես մեղաւոր, որ քեզ չը
վիճակվեցաւ խաւս լինել: Այն ժամանակ դու էլ քո
կողմից կը հաւատայիր եւ կը վարձատրէիր մի որ ես
ի՞նչ աստղագետին նրա նախագուշակութիւնների
համար:

Այնքան կատարյալ է Հասանը ինքն իր
մասին ունեցած երակացության մեջ, որ համոզված
է, թե ոչ որ չի կարող իր ներքին էությունն ըմբռնել:

- Ինչպէ՞ս, մէլիք. մի՞թէ դուք այդպիսի կարծիք
ունէք իմ մասին...

- Ոչ միայն կարծիք, այլ համոզված եմ, որ այդպէս
է:

- Ուրեմն, ես չունեմ ձեր աչքում ոչ մի
արժանավորութիւն:

- Ընդհակառակն, դու ունես հատարաւիմ ծառայի
արժանավորութիւններ, յոթ միայն ցանկանալու
լինես: Եվ, հաւատա ինձ, որ այդ ծառայութիւնը քեզ
համար արեւի օգտաբեր եւ շահաւէտ չի լինի, քան
թէ քո բոլոր աստղաբաշխական գիտութիւնը...

Նախնիների շնորհներով օժտված
երիտասարդ մէլիքը չնայած կոտորում է Հասանի
փուշ լինելը յուր արհեստում, քայքայ չի է փորձում
թափանցել նրա ներքին աշխարհը: Եվ այնպէս
անթաքայտ է գործում այդ տիպը յուր իմացած
մեխանիզմով... Ակնարկելով այս մասին, Մէլիք
Ջուրովըն ասում է. «Որքան ուզում ես, քո
աստղներով խաբիր իմ հորեղբորը և իմ բոլոր
ավիտային. այդ քո գործն է. միայն աւելորդ է
գիտնաս, որ ես չեմ հավատում քո
համաստեղութիւններին»:

Անշուշտ, որքան ցավով է արձանագրում
Ջուրովը հայոց քայքայ մեխիքների վարքը, նրք նրանց
հարաբերութիւններում խորը արվեստացած է
տեսնում պարսից ստեղծութիւնները՝ հավատալ
փուշ աստղագուշակներին եւ ամաչեցնողով
միմիայն նրանց խորհուրդներով, իսկ Հասանի
օրինակում այն կործանարար է դառնում
Ղարաբաղի համար:

Ջուրովի սուր դիտողութիւնների տակ
աստղագետը խոստովանում է. «Ուտը է
խոստովանել, մէլիք, որ դուք առաջին խելացի
մարդն եք, որոնց պատահել է ինձ տեսնել այս
աշխարհում: Խօսքը թո՛ղ մեր մեջ մնա, մի՞թէ

հիմարութիւն չէ՝ հավատալ, թե աստղները
ազդեցութիւն ունեն մարդկային գործողութիւնների
կամ վիճակի վրա: Այստեղ դեռ ոչինչ: Նայեցեք,
Պարսկաստանում մի քայլ անգամ չեն անում առանց
աստղագետի հետ խորհուրդ անելու...» (Պ. Ջուրով, էջ
78-81):

Այսպէս, աստղագետն ի վերջոյ յուր արվեստի
մասին ավելին է խոստովանում: Ջուրովի կերտած
տիպը՝ Հասանը, գերազանցում է ինքն իրեն
գնահատելով... «Իսկ մեր եղբայր աստղագետները,
քաղցածութիւնից ստիպված վայրիվերոյ կերտով
սովորում են աստղերի դրութիւնը, անգիր սերտում են
նրանց անունները եւ յետոյ սկսում են ողորմելի
ռաւիկների մօտ յուրջ կերպով ցնորաբանութիւններ
անել, խոսել համաստեղութիւնների մասին եւ
բացատրել նրանց դիրքը, կազմութիւնը, եւ միայն
Ալլահը գիտէ, թէ որիչ ինչ հիմարութիւններ են
խօսում: Մեհաաւատ իրանցիները վախճում են մի
քայլ անգամ տեղից դուրս դնել՝ առանց խորհուրդներ
աստղագետի հետ...» : Հասանը, այնուհետեւ,
բացահայտում է երեւոյթն այնպէս, թվում է, թէ ինքն
իրեն է ներկայացնում՝ յուր ժմաները, Մէլիք
Շահնազարյանին խաբելիս, հավատացնելիս. «...եւ
ինչո՞ւ էք գարմանում, Մէլիք, որ մեզ մօտ
աստղագետների թիվը օրըստօրէ բազմանում է դա
խիստ շահաւէտ մի պարագային...» (Պ. Ջուրով, էջ
81-82):

Այսպիսի հիմնավորումը թերեւս ժամանակի
առումով փաստացի է, քայքայ փորձված խաբերած
տիպական երեւոյթների անվան տակ թաքցնում է
հաջողութեամբ բուն նպատակը, կարեւորված
նպատակը...

Ըստ նուրբ մտածողներից մեկի հաստատումն.
«Մատանակի հաղթանակը նրանում է, որ նա
կարողացավ ներշնչել մարդկանց, որ ինքը գոյութիւն
չունի»: Ելնաւ Ռեբիիլը բացառիտում է. «Ջէ՞ որ, նրք
ինչ-որ բանի չենք հավատում կամ բացառում ենք,
դադարում ենք գգուշանալ ու դրանով հեշտութեամբ
ընկնում ենք հավատի բազմաթիւ կամաստարների
կողմից լարած որոգայթները» (Ռեբիիլ Ե. Ի., «Անկնկ
կրակ», Ե., Ազնի աստղ, 1997 թ., էջ 115-116):

Ահապատիւ, Ջուրովը Հասանի տիպը յուր
նտույցի միջոց թողնում է, կարողանում է թողնել, թվում
է, երեւոյթի բավարարվածութեան տպավորութիւն
է կասկածանքի թելովը շատ փոքր չափի գոյութեան
բացահայտութիւն... Ուստի՝ նա գործում է անվերջ,
նրա ներքին դեմքն անտես է, ստնկում է,
անբավարար է ստացածից եւ նոր նյութ է ցանկանում
հագորդել ստանալու համար, բնագործ գործում է
նոյնիսկ փակ աչքերով, բնագործ, ինչպէս Պ. Սեւակն է
բացահայտում, թե վերջինս մտքից,
կռահողականութիւնից ավելի ուժեղ հակադրում է
իմացութեամբ, ուստի նրան քննելու, բացահայտելու,
նրա ներքին նաւը վերհանելու համար պետք է ունենալ
արեւելեան քաղաքականութիւն ու նոյնչափ ներքին
մութ բնագործներ, որ Հասանի դեպքում ապացուցման,

ապակողմնորոշման նկոյթներ չի թողնում, ընդունում... Նա ցուցում է պարզագույն ուղի, բայց ինքն չի գործում նմանատիպի ոլորտում, նա քաղոք է, անհասկանալի, տեղափոխված է սովորական մարդու աչքին անտեսանելի կաղապարում... Նա հաղթող է, խաբեբա է, կատալյալ է յուր արվեստում, քանի դեռ չունի նույն գեներով զինված հաղորդակից... տեսանող... հավատարմորդ: Նա կատարյալ է յուր տիպային որակներում... Ձուրովի այս տիպը արևելյան կյանքի խորքերից ելած է, գիտն գործել՝ բաց տարածություններում, բարձր կառույցներում եւ... նա դեռնա անխոցելի է, ժամանակն ու նպատակներն են նրան կերտել, միշտ պատրաստակամ է, հոգացող, անգիտների մոտ ընդունված՝ շնորհաշատ, գուշակ, մարդկանց քննությունների պարագործալ, պարտադրյալ որակներն հաստատող... Վալմի ճանաչելով իրեն շրջապատող անձինքների հասկացողությունը, աստղագետը դիտումաբ ցոյց էր տալիս երևակայական դժվարություններ, որոնք իր թե՛ ներկայանում էին նրան աստղների ընթացքը հետազոտելու ժամանակ: Ընդ որը զարմանում էին նա իմաստունության վրա, բացի Ձուրուից, որը ժողովրդով լսում էր նրա իմաստակությունները... դիտում է Ձուրովը... Ընթերցողը, հետաքննող այս տիպի հոգեբանական անցումներին, անհամբեր է փորձում նրա ներքին հակումները: Կերպարային առանձնագույնները դիտելով, պատմականորեն արդարացված, հնուտ հոգեբանի նրբատարությունը է Ձուրովը զարգացումն Հասանի տիպը. »Գեշ առարկան ավելի զգվելի է երևում, երբ նրան դնում են յույսի մեջ,«- նկատում է Լեռն: Այո, ճիշտ է նկատում քննադատը երկի տիպային դիտությունը քննելիս: Հասանը Ձուրովի քննական համակարգի յույսի տակ է դրվում, եւ երբնա է գալիս նրա կերպարային զարգացման ընթացքը: Այսպես է նա գործում Մելիք Շահնազարյանի մոտ՝ ծառայության ժամանակ, այսպես է Ձուրուից, Կապ Փանահի ու նրա որդիներ Իբրահիմի, Մեհթի Դուլիի, ապա՝ պարսկական պետության այլ պաշտոնյաների մոտ, մինչև որ պարսից պետության դեմ պետական հեղաշրջումը մասնակից լինելու համար ենթարկվում է մահապատժի:

Իսկ այդ ընթացքում հայկական մեկիթությունների կյանքում բոլոր կարծուր իրարարությունները՝ թե՛ մասնավոր բնույթի, թե՛ մեկիթական, ապա Ղարաբաղի խառնությունը վերաբերող, նա կատարել է առաջինների համար յուր սեւ գործը, հայաց մեկիթների նրբեմանի մատուցել է ծառայություններ, որոնց համար աստուրներն վարձատրվել է, այդ են վկայում եւ Մելիք Շահնազարյանի տրված խորհուրդները, եւ հատկապես Մելիք Ձուրուիցին մատուցած ծառայությունները՝ կապված գնեցել Մալիխային Փանահի հարեմից՝ փախցնելու միջոցով:

գործողությունների ընթացքին, ապա՝ Մալիքի

մեկիթի անբացում Մալիխայի գտնվելը պարզելը, երբ Չանախյի բերդից ամենագեղ էին ու թաքցնել նրան Մելիք Հուսեյնի մարդիկ եւ... նույն դուր, այդ ստահակը խորհուրդ էր տալիս Փանահին որպես փոխհատուցում հարեմից փախցված Մալիխայի դիմաց մեկիթից խնդրել թույլատրելու նրա տարածքում, գեղադիր Շուշիի տեղանքում հիմնադրել յուր իրը նոր՝ Շուշիի բերդը: Ընչափորությունը, խորամանկությունը, խաբախությունը, ներդիմի խաղը, փառամոլությունը, գաղափարազարդությունը՝ ծառայության մատուցել իսլամին ու անխնա քանդել, մատ-մատների բերել մեկիթների միաբանություն կոչելով՝ նրա տարներն էր... Այսպես, այս տիպը Ձուրովի մեկնաբանմամբ՝ լույս ու սովորի տակ էր երևում, մե՞րթ մեծ քաղաքագետի ու խաղաղի, մե՞րթ նվիրված ծառայի, աստղագետի, խորիդատուի, օգնչի, հոգացողի դերում... Բայց, երբ փառամոլությունը եւ ընչաքաղաքությունը, մութ բնագիծներն անդնդատ պահանջատիրական են, անա փռում են իրենց թեմերը այս տիպի ճանապարհին, իսկ այդ ճանապարհը, ցավոք, արցախական աշխարհի քաղաքական կյանքի ճանապարհի սրտով էր անցնում: Այո, Տենի բացառությունը՝ կյանքից՝ անտեսելով ավելին, նա (լինի նրբանկությունից, բարեկեցությունից, թե՛ փառամոլությունից, արծաթախրությունից) դարձել է ավելի պահանջկոտ, եւ նրա հավակնությունները գերազանցել են նրա նվաճումները...» (Տեն Հիպպոլիտ, »Գեղարվեստի փիլիսոփայությունը«, էջ 78): Այսպես, տեմնան այս բնույթագրումը թվում է ասված է նաեւ աստղագետի՝ Ղարաբաղի աստղագետի, որակման համար... որ խորամանկ է հասան, փառամոլ է ինքը, երբ պիտի Մալիխային փրկելու հնար գտներ. »նա կծնացնեն ինձ բժիշկ: Խորամանկություն մեջ ես վարպետ եմ, դուր կարծես ինձ ճանաչում եր...«: Եվ մեկ-մեկ բացահայտում է յուր հարեմ սողակելու ծրագիրը... իսկ Ձուրուիցը.

- Դու հավատացած եմ, որ Շահնազարյան Մելիք-Ձուրուիցը կը գիտենա, թե որպես պետ է շնորհակալ լինի քեզանից...

Որ »շնորհաշատ ու կարող« է, նորից Հասանը ինքն է փաստում դիմելով Փանահին... »Քանա սուրբ իմամները՝ ինձ շնորհած կարողությունները եւ ուսումնասիրել եմ բնության գրքի ամենաբարձր խորհուրդները: Իմ վարդապետը եղել է հաշվաւոր Շէյխ-Աբդուլ- Գաթի-Ալին, որին մարգարէի մտքը պետ է համարել ամբողջ երկրի վրա...« (Ձուրով, Գ., էջ 92-93, 95-96):

Եվ որպեսզի կարողանա խաբել Փանահին, օգնության է կանչում յուր խորամանկությունը, սակայն աստուծի անհանգիստ է: »Հեղինակը նկատում է...« Օգնություն կանչելով իր բոլոր հմուտները խաբեբայության արհեստում եւ յույս դնելով իր խորամանկությունների վրա, որոնց մեջ խիստ լավ վարժված էր...» (Պ.Ձուրով, էջ 97-98) աստղագետը որոշում է գործել, այս անգամ բժշկելու

ատարելությանը. Այնպիսով, գաղթելի հասանք, նրբ Մալիհայի փախուստը հաջողներել էր..., ինքը գերի ընկնելուց այսպես է խոսում Փանահի առջև. «Ամենակարող իշխան, նա գգում եմ իմ վարմունքի բոլոր գաղթելիությունը, բայց եթե ջուհանջիդցիների հրամանատարի ողորմությունը թույլ կը տայ ինձ, նա կը հաղորդեմ նրան բոլորը, ինչ որ ինձ յայտնի է: Ես ցոյց կը տամ այն բոլոր միջոցները վնասաբեր Փանահ խանին, որոնցով նա կը լինի ամբողջ Ղարաբաղի պետը...» ապա նրա մոտե ուղեղը բացում է յուր խորշերը. բացում է ամբողջ կուտակած փորձը ցուցնելու այս նոր տիրակալին՝ իր հերթին յուր կորստյան մատնվելու ահից՝ հոգում փայփայելով փրկության դուռ,- հանգամանքները ի նկատի առնելով, թեև դու ինձ խաբեցիր, ներում եմ քեզ: Հիմա դու ինձ ասա՝ այն, թե ինչ միջոցով կարող եմ ես հասնել ամբողջ Ղարաբաղի վրա տիրելու: Բարձր իշխանությունը: Հավատացած եղի՞ր, որ ես կը վարձատրեմ քեզ արժանատի կերպով...

Ձեր՝ ղեկալի ինձ ցոյց տված գծությունն համար, խան, ես կը հաղորդեմ այդ նշանատու գաղտնիքը: Երկպառակությունները, որ ծագել են խանսայի մեկիքների մեջ, բոլորովին քայքայել են նրանց միաբանությունը, իսկ այդ նոր սկսվող պատերազմը կը հասցնէ վերջին հարուածը: Նրանց գորությունը ի սպառ կը թուլանայ: Ամբողջ Ղարաբաղի վրա բարձր իշխանություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է ունենալ միայն մի բերդ, որը կառուցված լինել մի անմատչելի տեղում: Իսկ ես գիտեմ մի այդպիսի տեղ: Չանախիցի 12 վերստ հեռավորության վրա կայ մի սար, որի գագաթի վրա ստորոտից բարձրանալու համար հարկատուր կը լինի մէկ եւ կէս ժամ: Մարտափելի գաղիվներն տանում են դեպի նրա ժայռոտ գագաթը... Մարի գագաթի վրա կայ մի տափարակ տարածություն, որի շրջապատը նրկու ժամվայ ճանապարհ կը լինի: Այդ տեղում կարելի է հիմնել մի քաղաք եւ բնակեցնել նրան քաջ պատերազմողներով: Այնուհետեւ դուր,- այսպես մոլեկոն այլանդակությամբ խարդախը, շոյված յուր հանձնարելությունից ու Փանահի աչքերի խորհրդավոր փայլից, շարունակում է,- կը լինեք անմատչելի, նրբ մի որեւիցե վտանգ կը սպառնայ թշնամին, եւ կարող էք միշտ հարուածել ձեր թշնամիներին, պահելով շրջակայ բնակիչներին արաբափի մեջ, եւ սրի ուժով կը հարկադրեք նրանց ձեզ հպատակվելու...

Արցախը XIX դարի գրականության մեջ
("Պատմոն Զուրբովի" «Անդրկովկասյան պատմական վեպի» կերպարների համակարգի գուգորդումներում)

Զ. Վ. Բալայան

Ամփոփում

Հերման Ետիկ (մեկնաբանական) եւ Բաբելոնյան (արժեքաբանական) ասպեկտներում է բնական գրող, պրոֆեսոր Պատմոն Զուրբովի «Ղարաբաղի աստղագետը» կամ «Անդրկովկասյան պատմական վեպի» ուսումնասիրությունը, որը հրատարակվել է Մոսկվայում, 1834թ.: Վեպի նյութը ժամանակաշրջանը խառնաշառի Մեխակա ժամանակներն են, որոնք ըստ ակադեմիկոս Սարիխյանի «հայկական պետականության հույ՝ ներկայանում՝ վիպականացված 1750-1826 ժամանակատեսով, Շուշի բերդի «կառուցման» Ղարաբաղի խանության ստեղծումով ու ոչնչացումով 1826-28թթ. ռուսապարսկական պատերազմի պատմական ու վիպական հետաքրքիր աղբյուրությունների մեկնմամբ, ռուսներին հաղթողների մեկնմամբ, ռուսական զորքերի ցուցմամբ, պատմական բարդության օղակները բացահայտող հարցադրումներով:

Յուզվող նյութը մի փոքրիկ հայտնված է Պ. Զուրբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմական ուսումնասիրությունից: Մյուսին համակարգին զուգընթաց դիտարկված է կերպարների համակարգը: Աստղագետ Հասան տիպային բացահայտումները պատմականության ու վիպականության հարաբերակցության մեջ են բնական, մեկնված ու... ցուցված է զուրկվանական պատմափիլիսոփայության կոնցնպցիան՝ դիտարկել արևելյան խորամանկ տիպի խաթմվածքը՝ բազմադրված կերպարային օղակների բացահայտումներով... Այս կարևոր բարդություն մեկնող ասպեկտ է ներկայացված խանսայի մեխիքների վերաբերող կերպարային ամբողջացումները՝ մասնավորի եւ ընդհանուրի հարաբերության ու հակադրության մեջ... որտեղ հիմնական քայքայիչ օղակ է դառնում անմիաբանության, մանրամուտը կոմիքների, արյունահեղության մարմինը, որպես խանսայի մեխիքների քայքայման, քաղաքական կորուստների ծայրագույն ծանր, գլխավոր պատճառ...

Արքա в литературе XIX века
(Главный герой романа Платона Зубова
"Карабахский астролог" и система образов)
Я.В. Балаян
Резюме

Исследование романа русского писателя XIX века Платона Зубова профессора, человека, который 30 лет своей жизни провел в Закавказье, в Арпахе, - "Карабахский астролог" или "Закавказский исторический роман" - проведено в герменевтическом и аксиологическом аспектах.

Роман был издан в Москве в 1834 году. События и факты изображенные в романе, относятся к периоду меликств Хамсы, который представляет собой, по мнению известного академика Сергея Сариняна, "Воспоминание об армянской государственности". Этот период именно лег в основу романа, поскольку он богат историческими событиями, охватывающими время с 1750 по 1826-1828гг. Изображенное в романе время было озаглавлено "строительством" Шупинской крепости, созданием и ликвидацией Карабахского ханства, русско-персидской войной 1826-1828гг., объяснением армяно-русских, армяно-персидских, армяно-турецких и армяно-грузинских отношений, показом исторических и этических интересных реалий и, наконец, толкованием понятия "исторический роман".

Предлагаемый материал - это небольшой фрагмент из исследования исторического романа Зубова "Карабахский астролог".

Параллельно сюжету исследуется и система образов в романе. Тип главного героя - астролога Гасана - раскрывается в синтезе исторических и этических связей. В романе также проступает Зубовская историко-философская концепция: развлечение типа хитрого человека, человека - клеветника, человека - нигригана.

В герменевтическом аспекте раскрываются и обобщаются типичные образы меликов Хамсы, разоблачается их непостоянство. В этом сложном водовороте событий анализируются частное и общее, их расхождения и сходства. В разногласиях, в столкновениях и конфликтах, в войнах, в кровопролитиях скрывается источник разрушения меликств Хамсы и политических потерь.

ԱՄՓՈՓՈՒՄ

Հերմենևտիկ (մեկնաբանական) և արքնոլոգիական (արժաբանական) ասպեկտներում է քննված ռուս գրող, պրոֆեսոր Պլատոն Զուբովի »Ղարաբաղի աստղագետը« կամ

»Անդրկովկասյան պատմական վեպ«-ի ուսումնասիրությունը, որը հրապարակվել է Մոսկվայում, 1834թ.: Վեպի նյութը և ժամանակաշրջանը խամսայի Մելիքական ժամանակներն են, որոնք ըստ ակադեմիկոս Ս. Սարինյանի »հայկական պետականության հուշ« են ներկայանում վիպականացված 1750-1826 թթ. ժամանակատեսով, Շուշի բերդի »կառուցումով«, Ղարաբաղի խանության ստեղծումով ու ոչնչացումով, 1826-28թթ. ռուսաբարսկական պատերազմով, պատմական ու վիպական հետաքրքիր իրադարձությունների մեկնմամբ, ռոմանտիկական երկին հատուկ տարրերի ցուցմամբ, պատմավեպի բարդությի օղակները բացահայտող հարցադրումներով:

Ցուցվող նյութը մի փոքրիկ հայտված է Պլ. Զուբովի »Ղարաբաղի աստղագետը« պատմավեպի ուսումնասիրությունից:

Սյուժեի համակարգին զուգընթաց դիտարկված է կերպարների համակարգը: Աստղագետ Հասանի տիպային բացահայտումները պատմականության ու վիպականության հարաբերակցության մեջ են քննված, մեկնված ու... ցուցված է զուբովյանական պատմափիլիսոփայության կոնցեպցիան՝ դիտարկել արևելյան խորամանկ տիպի խառնվածքը՝ բազմադեմ կերպարային օղակների բացահայտումներով...

Այս կարևոր բարդություն մեկնող ասպեկտ է ներկայացված խամսայի մելիքների վերիվարող կերպարային ամբողջացումները՝ մասնավորի և ընդհանուրի հարաբերության ու հակադրության մեջ..., որտեղ հիմնական քայքայիչ օղակ է դառնում անմիաբանության, մանրամուկ կռիվների, արյունահեղության մարմինը, որպես խամսայի մելիքների քայքայման, քաղաքական կորուստների ծայրագույն ծանր, գլխավոր պատճառ...

Արցախի զանգվածային լրատվության միջոցները 1988-1992 թվականներին
Հ.Մ.Գալստյան

*Մաքուր խիղճը չի վախճնում
մարդկանց մեջ լինելուց, իսկ
անմաքուրին միայնությունն էլ
է վախճնում:*

Սենակա Կրտսեր

Այս աղյուսատանքում քննարկվում են 1988-1992թթ. «Խորհրդային Ղարաբաղ» թերթի այն համարները, որոնցում լուսաբանվում է ազգային ազատագրական պայքարը:

Այս արտահայտությունը չի կորցրել իմաստը այսօր՝ տիեզերագնացության և էլեկտրոնային XXI դարում:

Հշմարտությունը պետք է հնչի ու գրվի, որքան էլ այն դաժան լինի: Անհրաժեշտ է խոսել, ցուցադրել, գրել, թե ինչպես է ժողովուրդը մտածում, ինչն է պարսավում ու ինչը գովերգում, դրվատում, ինչի վրա ծիծաղում ու ինչից արցունք թափում: Այս նշանակում է՝ իմանալ, թե ինչ է խորհում մարդը իր և ուրիշների մասին, ինչպես է ապրում, գոյատևում և ինչ գաղափարների և կուսակցության է ծառայում:

Իմ աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե Արցախի հիմնախնդիրը՝ 1988 թվականից սկսած առայսօր, ինչպես է լուսաբանվել տեղական զանգվածային լրատվության միջոցներում: Ակնհայտ է, որ սա պատմություն է, իսկ պատմության առաջին խնդիրը կնդիրից խոսափելն է, երկրորդը՝ չթարցնել ճշմարտությունը, երրորդը՝ առիթ չտալ իրեն կասկածելու կողմնակալության և կանխակալ թշնամության մեջ: Զանգվածային լրատվության միջոցների պատմության անդատանքը հսկայածավալ և բարդ մի աշխարհ է՝ լի անակնկալներով և հրաշքներով: Հայ պարբերական մամուլի ծագման օրից՝ 1794 թվականից, մինչև այսօր հայ պարբերականների թիվը հասնում է մոտավորապես վեց հազարի: Մինչև Արցախի անկախությունը, խորհրդային շրջանում Ղարաբաղի մայրաքաղաքում Մոսկվանկերտում, լույս էր տեսնում «Մովսեսական Ղարաբաղ» թերթը, չնայած թագավորի խռչնալուծող հանգամանքների, ունեւ իր ուրույն դերն ու տեղը: «Մովսեսական Ղարաբաղ» թերթի էջերում ժամանակին գետնովել են բազմաթիվ ու բազմաթեւյթ նյութեր, գրական-պատմական վավերագրեր: Այդ ժամանակաշրջանին և կոնկրետ հասարակական միջավայրին հատուկ կնիքը գրեթե միշտ նշմարվում է: Լեւոնային Ղարաբաղի զանգվածային լրատվության միջոցները ոչ միայն լուսաբանում են երկրի ներքին և արտաքին կյանքը, հանրապետության հոգսերը, նպատակում նրանց մտավոր ու հոգեւոր աճին, այլև դաժանում են ընթերցողների խորհրդատուն, բարեկամը և

սրտակիցը: «Մովսեսական Ղարաբաղ» թերթը խորհրդային ժամանակաշրջանում ուներ իր ուղեկցի-թելադրված կոմունիստական կուսակցության կողմէ Թերթում լույս էին տեսնում գուտ Ադրբեջանի կողմէ նրաշխարհորված տարաբնույթ նյութերը: 1988 թվականից սկսած՝ Լեւոնային Ղարաբաղի զանգվածային լրատվության միջոցներում տեղ ունեցավ փոփոխություն: Այն ունեցել է մի քանի փուլ:

Առաջին փուլն ընդգրկում է 1988-1992 թվականները, երբ Լեւոնային Ղարաբաղի հարցը դեռևս դիտվում էր որպես ԽՍՀՄ ներքին խնդիր:

Երկրորդ փուլն ընդգրկում է 1992-1994 թվականները, որոնք բնորոշվեցին ինմանակող միջազգայնացմամբ և լայնածավալ ռազմական ծանր դաժան գործողություններով:

Երրորդ փուլն ընդգրկում է 1994-1998 թվականները, որոնց լիազումաք ամբողջությունը կարելի է համարել հայ և ադրբեջանական դիվանագիտությունների մրցապայքարի ժամանակաշրջան: Պետք է նշել, որ այդ գործընթացը այժմ էլ շարունակվում է, քանի որ նմանատիպ հակամարտությունների կարգավորման գործընթացները՝ որպես կանոն, տևում են երկուս ու ծիգ տարիներ:

1988-1992 թվականների ժամանակաշրջանում փորձում էին Արցախի հիմնահարցը լուծել խորհրդային օրենսդրական դաշտի շրջանակներում: Խորհրդային շրջանում նմանատիպ հարցերի լուծումը բավականին խրթին էր և միայն կենտրոնի քարտուրարիք էր կախված, միայն նա կարող էր լուծել քաղաքական հարցերը, ընդունել որոշումներ: Բանի որ այդ տարիներին զանգվածային լրատվության միջոցներում մամուլում, ժողովուրդում, հեռուստատեսությամբ, անընդհատ խոսվում էր դեմոկրատիայի, բարեփոխությունների ու վերակառուցման մասին, աննկուն արցախցին իր հարցը բարձրացրեց ու այդպես էլ ծագեց արցախյան հիմնախնդիրը: Ասենք, որ դա առաջին անգամը չէր, որ ազատատենչ ու դուրագրուն արցախցին դիմում էր խորհրդային իշխանությանը: Այդ հիմնահարցը ի հայտ էր եկել նաև 1965 թվականին, բայց ապարդյուն էր, ճնշվել է կենտրոնի կողմից: Բանի՝ քանի՝ հայազգի հայերենախոս արցախցիներ արտաքսվել են Ղարաբաղից և ծանր ու դժին հարված ստացել:

Գործաշուկան բարեփոխումներին և վերակառուցման շրջանում արցախյան շարժումը այլ բնույթ ստացավ:

Տոկուն ու ազատաբաղձ արցախցին տարիներ շարունակ սպասում էր այդ օրվան: Մեր շարժումը տեղին է բնութագրել հայրենասեր անավախ բանաստեղծ Գևորգ Եմինը: «Արցախի հարցը լավմտի թուղթ է, որը շատ պարզ կնրպով ցույց կտա՝ վերակառուցում կա՞, թե՞ ոչ»: Այդ հարցը վերակառուցման փորձաքան է»:

Բարեփոխումների, վերակառուցման և ազատ հրապարակախոսության պայմաններում քաջկրկին

նոր հեռանկարներ զանգվածային լրատվության միջոցների առջև:

Մամուլը, հեռուստատեսությունը, ռադիոն դարձան արցախյան շարժման ջատագույններ և փորձեցին իրենց ընթերցողներին, ունկնդիրներին, հեռուստադիտողներին ներկայացնել իրադարձությունների ճշգրիտ ժամանակագրությունն ու օբյեկտիվ լուսաբանումը: Զվարտագի տեղեկություններ հաղորդելը, գրելը անխուսափելի էր և հույժ անհրաժեշտ, այն դարձել էր ժամանակի հրամայական պահանջ:

Այս հանգամանքներում թերթերը, լրագրերը, ռադիոն, հեռուստատեսությունը վերանայեցին իրենց դիրքորոշումը: Երբ հետադարձ հայացք ենք ձգում այդ ժամանակաշրջանին, նկատում ենք, որ տվյալ ժամանակահատվածի տարաբնույթ նյութներում պարզորոշ կերպով ընդգծված են համարձակությունը, ուղղամտությունը, բարենիգությունը, պատասխանատվության գգացումը համաժողովուրդական գործի նկատմամբ: Սկզբնական շրջանում Արցախի զանգվածային լրատվության միջոցները՝ այս հիմնախնդրին անդրադառնում էին առանձնակի հողվածներով, հաղորդումներով: Մակայն 1989-1992 թվականների ընթացքում ներսն եկան կայուն ու հետաքրքրական հաղորդաշարեր, ռեպորտաժներ, հարցազրույցներ: Ամեն օր գրվում ու խոսվում էր Լեռնայի Ղարաբաղում տիրող դրության մասին, նույնիսկ օտար եկողներով հաղորդումներ էին տրվում, որը լսվում էր արտասահմանյան երկրներում:

Այսպես՝ աստիճանաբար բացվեց զանգվածային լրատվության միջոցների վարագույրը: Արցախի լրատվության միջոցները բացառիկ ենարավորություն ստացան ճշմարիտ խոսք ասել իրադարձությունների տալափորության ներքո: Մի բունքը դարձավ Արցախը, իհարկե, նաև ողջ հայ ժողովուրդը, սրտատրոփ ու անհամբեր սպասում էին ճշմարիտ, օբյեկտիվ տեղեկատվության: Նորովի խոսքը և շիտակ մտածելակերպը, հուզիչ մեկնաբանությունները, առողջ դատողությունը, սթափ ու մանրակրկիտ վերլուծությունը կողմնորոշում էին ընթերցողներին և ունկնդիրներին:

Արցախի զանգվածային լրատվության միջոցներին բնորոշ էր նաև ժանրային բազմազանությունը: 1988 թ. յուրահատուկ են առանձնանային հրապարակախոսական հոդվածները և նյութները: Դրանց հեղինակները Արցախի մտավորականներն էին: Աչքի էին ընկնում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ Արցախի պետական համալսարան) դասախոսների նյութները: 1988-1992թթ. հոգվածներում և հաղորդումներում գերակշռում էին ռեպորտաժներ, ճանապարհորդական նոթերը և հարցազրույցները, որոնցում խոսվում է Լեռնային Ղարաբաղի քաղաքական իրավիճակի, սոցիալ-

տնտեսական, հասարակական կյանքի մասին: Մի շարք ռեպորտաժներում մանրամասնորեն ներկայացված են աղբյուրային իշխանությունների կողմից իրականացված հակահայկական քաղաքականության հետևանքները:

Աղբյուրային կառավարող շրջանների ձգտումը միանշանակ էր՝ աստիճանաբար հայաբանել անել Արցախը, այն դարձնել նրկորոշ Նախիջևան: Բարվի Վ.Ի.Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը, ավելացնելով նաև աղբյուրական բաժինը, տեղափոխեցին Ստեփանակերտ՝ հետապնդելով մի նպատակ, որպեսզի աղբյուրացիները գերակշռող մաս դառնան քաղաքում: Այդ և դրանց նախորդած տարիներին հայրենասիրական մոտիվներով ստեղծագործություններ համարյա արգելվում էր տպագրել մամուլում: Անդրանիկի անունը ոչ մեկը իրավունք չունի տալու, իսկ նրա լուսանկարը պահելը հանցագործություն էր: Ազգային գաղափարախոսության մասին խոսք անգամ լինել չէր կարող: Արցախի զանգվածային լրատվության միջոցներում քաղաքական գործիչներ և լրագրողները իրենց թողորի ձայնն են բարձրացրել ԽՍՀՄ վարչաիրավաբանական ապարատի կողմից իրականացվող անարդար ազգավայրային քաղաքականության դեմ: Ճանաչված անվանի գործիչները գնդնկրատիայի համամարդկային սկզբունքների առաքաղաքականներն էին, որոնց խոսքը ժողովրդին էր հասնում զանգվածային լրատվության միջոցներով: 1990-ական թվականներին Արցախի և թերթներում, և հեռուստատեսությանը, և ռադիոյով լուսաբանվում էին քաղաքական հարցեր: Ընդգծվում էին մեր լեռնաշխարհի ներքին և արտաքին կյանքում տեղի ունեցող ամենակարևոր իրադարձությունները: Արցախի զանգվածային լրատվության միջոցները Ղարաբաղյան հիմնախնդրի մասին օբյեկտիվ, մանրակրկիտ ինֆորմացիա էին հաղորդում: Այդ նպաստում էր Աղբյուրականակ կնեղ քաղաքաշափին պատշաճ հակահարված տալուն:

Լրագրության բնագավառում գործնական ժանրերից մեկն էլ հարցազրույցն էր:

Հնուրաբանական էին 1988-1992 թվականների ժամանակահատվածում անցկացրած հարցազրույցները, որոնք հազեցված էին փաստերով:

Ուշագրավ են Ստեփանակերտի քաղաքից գործկոմի նախագահ Մ.Միրզոյանի, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Ռ.Բոլաշյանի (այժմ՝ Հայաստանի հանրապետության նախագահ), «ժողիդային Ղարաբաղ» թերթի խմբագիր Մ.Հովհաննիսյանի և ղարաբաղյան հիմնախնդրին քաջատեղյակ նշանավոր այլ անձանց հետ կազմակերպված հարցազրույցները: Արժանավորել են արցախյան հիմնախնդրի լուծման տարբերակները, լեռնաշխարհի քաղաքական իրավիճակի յուրահատկությունները, Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի և Ղարաբաղի մարզխորհրդի նստաշրջանների որոշումները, Հայաստան-Արցախ

կապերը, որոնք անչափ կարևոր էին: Դրանցում առաջարկվում էին արցախյան ազգային ազատագրական պայքարը շարունակելու, Արցախին տարաքնույթ օգնություն հասցնելու խնդիրներ:

Արցախի զանգվածային լրատվության միջոցները 1988-1992 թվականներին

Հ.Մ.Գալստյան

Ամփոփում

Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին մամուլի ուշադրության կենտրոնում են եղել հրապարակաստության, ակնարկի, ռեպորտաժի, հարցազրույցի ժանրերը, որոնցում քննարկվել են հայ ժողովրդի պահանջատիրության խնդիրները, քննադատվել իՍՀ-մ և Ադրբեջանի ազգային սխալ քաղաքականությունը, Արցախը հայաթափ անելու ադրբեջանական կառավարող շրջանների նկատմամբ:

Տարիների բարձունքից նկատելի է դառնում արցախյան մամուլի առաջնակարգ դերը մեր ժողովրդի ազատագրական պայքարի կազմակերպման և լուսաբանման գործում:

Средства массовой информации Арцаха

1988-1992 гг.

Галстян А.М.

Резюме

В статье рассматривается за 1988-1992гг. роль средств массовой информации Арцаха. В деле отражена национально освободительная борьба на разных этапах, направленность напечатанных идейно-политических статей, отражена героическая борьба Арцаха.

**Պատմության դասերը
Վ.Դավթյանի պոեզիայում
Ս. Ա. Խաչատրյան**

Տվյալ աշխատանքում դիտարկվում են Վ.Դավթյանի պատմական թեմատիկայով ստեղծված ծավալուն գործերը: Հիմնականում վերլուծվել և գնահատվել են ամբողջական ստեղծված «Հայերգություն», «Դ», տարբեր ինքն գծով ժյուսեր», «Ճերմակ միայն», «Ջերմություն», «Ար Մաշտոցի մասին», «Կրթության», «Գիշերային գրող Նարեկացու հետ», «Մոմիկը» պոեմներն ու ասքերը: «Թուրքականներ» և «Ծիրանի ծառ» յափառող դրամաները: Ուշագրություն կենսարդյուն և ներքին քննարկող ներքին, գաղափարական բովանդակության և գեղարվեստական առանձնահատկությունների արծարծությունը:

Վ.Դավթյանն իր «Պատմության խորհուրդը» հոգվածում գրել է «Եվ ի՞նչ է հուշում, ավելին, ի՞նչ է հրամայում մեզ պատմության խորհուրդը, ամենից առաջ դասերը քաղել այդ պատմությունից և ապա՝ նայել առաջ»¹: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ նրա ստեղծագործության մի զգալի մասը կազմում են պոեմներն ու ասքերը, պատմական թեմայով գրված գաղափարապես հարուստ: Այս առումով նույնատիպ շրջանի է-պիկական շունչ ունեցող պոեմների շարքում նրան կարելի է համարել առաջիններից մեկը: Հայ ժողովրդի պատմության հնօրյա և՛ հերոսական, և՛ ողբերգական դրվագները միշտ ուղեկ են Դավթյանի տեսադաշտում: Ժամանակին գրականագետ Ս.Սուրյանյանը նկատել է. «Հայ ժողովրդի պատմությանը դիմելով, Վ.Դավթյանը նրանում է աստվածական նրա հերոսական կողմ, նրա պայքարը օտար գավառների դեմ, նրա զարթոնքի պայքարն ու անկախության ձգտումը, որը համարում է նրա կենսականության հիմնական աղբյուրներից մեկը»²: Պատմության գեղարվեստական ընկալման և դավթյանական երգերը գնահատելու համար հետաքրքիր է նրա «Հայերգություն» ասքը, որտեղ կարդում ենք.

*Հայաստան աշխարհ,
Ինչպե՞ս ապրեցիր
Այդ մի բուռ ջրով ու մի յուրք ծաղկով:
Եվ ինչպե՞ս նդավ,
Որ գլխիդ վրա խշխշում է դեռ
Կանաչից, աստից ու քամուց հյուսված
Մենավոր բաղդին...*

(«Հայերգություն»):

Բանաստեղծը Մենավոր բաղդու շուրջ տակ, փրկված Հայոց հոգևորություն հենվելով՝ հագու լուսաբաժնով գնում է հնամյա մեր ժողովրդի անցյալը, ձգտում գտնել մեր դժվար երթի գաղտնիքներն ու գույները, բացահայտել հոգեբանական այն առանձնահատկությունները, որ բնութագրական են մեր ազգին երևել և այսօր: Ժողովրդի գոյատևման խորին խորհրդի և ճակատագրի արծարծումներով

Դավթյանը բերում է իր խոսքը՝ ավելի շատ ասպային հենչնաճանաչումով:

Պատմական եղելությունների, իրադարձությունների, սոցիալառարկությունների նկարագրությունը բանաստեղծի երկերում ծփանք է տալիս առասպելական - հեքիաթային - ասպային պատմությունների շրջանակներում: Իսկ դա բխում է մեր ժողովրդի դժվարին ճանապարհի, նրա կրած տառապանքների և դրանց հաղթահարման գիտակցումից: Բանաստեղծն ինքն է բնութագրում երկիրը Հայոց. «Ճակատագիր ես, Որ մրորի մեջ թաթախված շանթն է, շատաշուք գրել եմ սրբագրել տառապանքն ինքը...»:

Վ.Դավթյանը բացում է Հայաստանի մագաղաթյա մատյանը, այնտեղ տեսնում «Բիրտ խաղվածքների ու քնքշանքների Անվերջանալի ավերակություն», «Բարբառոս բարբառով ու զուգած հնչյուն»-ով կարդում առադարյունների և արշալույսների ներշնչումները: Նա գալիս է այն ներակացության, որ մայր երկիրը իր կարծրությունը դրել է հայոց գեղի երգանքում և արարել աղբյուրների լույսը: Ահա այդ մարտանք և գոյատևման ավիշն էլ հենց թելադրում է բանաստեղծին նարեկագիական հավաղի բնութագրումներով ստեղծված ժողովրդի անցած ճանապարհի պատկերը

*Դու՝ խոնարհ աղոթք,
Բայց նաև՝ արժվի ահեղ կոնչյուն,
Դու՝ վանքի գանգակ ու թաղմի դու փող,
Դու՝ վիթի անկում, գազաթի ներքոյ,
Դու՝ ներման թափիչ, վրեժի ներքոյ,
Դու՝ խաղաղ կրակ, մոլեցած դու ջուր,
Դու՝ սիրտ ծաղիկ ու վայրի տառասկ,
Դու՝ լեռի որոտ, կաթնահատ դու հասկ,
Նարեկա վանքի քարե հրթիռով
Ան Աստված միտող դու՝ Նարեկագի
Եվ աստծո կողք գանգատով խրվող
Ահեղ գառու՝ փրկիլան կաթի...
Եվ դու տառապանք,
Որ ծանր է որպես կոսորդ սաղին...³*

(«Հայերգություն»):

Երկիրը բանաստեղծին կտակել է «ցավ պարտություն»: Բայց դարերի բարձունքից քնարական հեռու դարձյալ «Թաքուն գանգատով ու... գոհությամբ» հայրենիքը համարում է իր բախտը, հավատը, գոյությունը:

Վ.Դավթյանի պատկերներում Հայաստան աշխարհը Արա Գեղեցիկ է և հրեղեն պոռ: Հրեղեն ու ոգեղեն պատկերներում բանաստեղծը ներկայացնում է հայրենիքի և ժողովրդի կենսագրությունը՝ ժամանակակից նրալույսների հոլովումով ու լուծումով: Դավթյանը իր ասքերի հենքերը գտնում է մեր պատմիչն ընդ երկրի և ժողովրդական ավանդություններում: Արա Գեղեցիկը, Արտավազը, Մ.Մաշտոցը, Վարդան Ջորավարը, Գրիգոր Նարեկացին և այլ հսկաներ բանաստեղծի ստեղծած պատկերաարարում լեզու առած խոստում և խոր-

¹ Վ.Դավթյան «Նուգահեռ ճանապարհ», էջ 402.

² Ս.Սուրյանյան, «Ժամանակակից հայ բանաստեղծներ», հ. 1,

³ «Հայաստան», 1965, էջ 503:

⁴ Վ.Դավթյան, «Ար սիրտ», «Սովետական գրող», 1982, էջ 277:

⁵ Նույն տեղում, էջ 282

հուրդներ են տալիս նոր սերունդներին: Դավթյանի պատումներում անմիջականությունն ու ոգեղեն շունչը ուղղակի տար արյուն են հաղորդում Հայրենիք - պատկերին: Հայաստանը անձնավորվում է անցյալի և ներկայի գզգզողությամբ: Շրջանցելով պատմության փաստագրական սահմանների գայթակղությունը՝ Դավթյանն ավելի շատ բացահայտում է մեր ժողովրդի հոգեբանությունը, ազգային բնավորության գծերը: Հայրենասիրության գզգզումը բանաստեղծը միացի՞ծ չի ներկայացնում: Նա ստեղծում է հերոսի ամբողջական կերպարը: Նրա հերոսները ազատասեր են, անգիշում, վեհանձն, պատվավոր, հայրենիքի և ժողովրդի սիրտ և ընտանիքի անձնուրաց պաշտպաններ: Ձեռք մեկնելով մեր առօրյակներին, Վ.Դավթյանը դարձրի խորից փնջում է ժողովրդի հայրենասիրական գզգզումները՝ պատմական անձնավորությունների միջոցով: Այդ առումով հատկաշահված է «Ո՛ր, տայր ինձ գծուխ ծխանի» սարք: Օգտվելով էպոսային պատմությունների ժանրային և լեզվական միջոցների առանձնահատկություններից,

Դավթյանը Արտավազգի կերպարին մի կողմից հաղորդել է հոգեղեն գեղեցկություն, մյուս կողմից՝ ոգեղենի աստվածային նրանգներ: Պատմությունից առնելով Արտավազդ Երկրորդի գործունեությունը, հռոմեական զավթիչների դեմ մղած նրա պայքարի, նենգ Անտոնիոսի կողմից գերեվարվելու փաստները, Դավթյանը ընդգծել է հայրենական ծխանի արարչական ուժը՝ որպես հարատևման աղբյուր: Գերված Արտավազդ թագավորի անկողնում կամքը, Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի առջև խոսնարկվելու նրա վեհականությունը, ազգային հպարտության գզգզումը բանաստեղծը արժարժել է պատկերային թարմ ու կոլորիտային հնարաններով: Ասքի մեջ բանաստեղծի գեղագիտական ինքնակազմը դիտարկելով մտորում է Արտավազգն ինքը՝ Անտոնիոսին որակելով որպես գող, չար, շողորորոք, թծնող ավազակ: Արտավազդը վերհիշում է, թե ինչպես Անտոնիոսը Հայաստան եկավ «նղբայրության նրդամբ, ընծաներով...», և ինքը որպես գինժոր ու մարդ՝ հավատաց նրան ու գնաց վրանը և առնանգվեց: Արտավազդը չի հաշտվում այն մտքի հետ, որ «նվազավել է...Հայաստանը»: Գերված Արտավազդ թագավորը Նեղոսի ափին էիշտի է ժողովրդական տոնախմբությունների, մտքի թենքով փարվում է Արարտին: Արտավազգի արտաքին և ներքին հոգեկան գեղեցկությունների մեջ բանաստեղծը խտացրել է հայկական առաստավական դուրացունների քաղաքականությունները: Նա չի խոսնարկում կլինպատրային, ինչպես Արան Շավիրամին: Եվ յուրաքանչյուր անգամ Եգիպտոսի թագուհու՝ «Հյուսնների ծախսու համառուիս» կնոջ հորդորներին պատասխանում է վեհ ու հպարտ. «Կլինպատրա, գեղեցկությունը մարմնավոր Բազմապատկեր քո հոգևոր գեղեցկությամբ Եվ տուր ինձ ծուխն իմ ծխանի...»:

Արտավազդը պատրաստ է քայլել դեպի քառափնարան, քայց նրբեր շխոնարհվել թշնամու առջև Նրա հպարտություն և վճռականության ամբողջ հայրենիքից է ավանդվում: Նրա խառնում, կարող ծփափաներում նույն երազն է հնչում.

Ո՛ր տայր, ո՛ր տայր ինձ ծխանիս ծուխը տուր

Ո՛ր տայր աղավորը հավասարդյան,

Եղինքների վարդը հայոց լեռներն ի վեր,

Ու նղբերվաց վարդը ծորերն ի վար

Ո՛ր տայր, ո՛ր տայր ինձ,

Ո՛ր տայր Արտաշատի ոսկեփողի ճառփան,

Հնձանների բուրմունքն ու փշատի փռչին,

Ո՛ր տայր թոնիրների բուրմունքը տուր,

Ո՛ր տայր, ո՛ր տայր...¹

(«Ո՛ր տայր ինձ գծուխ ծխանի»):

Տեղին է բերել գրականագետի ճշմարիտ դիրսիրտը այդ առիթով. «Ո՛ր տայր ինձ գծուխ ծխանի...», - սա հայրենիքի կարտուս առաջին կանչն է, որ հետո դարձրաք պիտի հնչեր մեր պատմության վրա»:²

Չորրորդ դարի պատմական իրադարձությունների դավթյանական գեղարվեստական ընկալումները նոր, ավելի լայն ընդգրկումներով բացահայտվեցին «Ճերմակ ձիավորը» սարսուռ: Փափստու Բուզանդի «Հայոց պատմությունից» առնելով թեման, Վ. Դավթյանը պատումային հետաքրքիր սկզբունքներով թարմացրեց վիպական այդ դրվագը՝ հաղորդելով նրան արդիական հնչողություն: Այս սարք ևս մեր անցյալի հերոսական ավանդների հանդեպ բանաստեղծի ունեցած լայնախոհ հայացքի արդյունք է: Խորապես խմանալով չորրորդ դարի քաղաքական, կենցաղային և բարոյական խնդրումները, Վ. Դավթյանը չափածո խոսքի հնարարությունների սահմաններում և՛ հենվում է Փ. Բուզանդի մեկնաբանությանը, և՛ իրենն է բերում ասքի մեջ: Արշակ Երկրորդի, Շապուհ Արքայի, Վասակ Մամիկոնյանի և նրա որդու՝ Մուշեղի շուրջ ստեղծված ավանդապատումի հիմքում խտացվեց պատմական ճշմարտությունը: Դավթյանը այդ հիման վրա ստեղծել է գեղարվեստական մի նոր իրականություն, մի նոր պատում՝ իր խորհրդավոր լուսաբանումով: Բանաստեղծը առաջին հերթին ընդգծում է հայ ժողովրդին հատուկ անձնուրաց հայրենասիրության և վեհանձնության գաղափարը: Ասքի ցամաքային հիմնական գիծ ընտրելով ժողովրդի քաղաքական մարտաման երևույթը, նա իր երկում ցույց է տալիս կերպարների հերոսությունն ու ծանր ճակատագիրը: Ասքը սկսվում է գույծով. «Շապուհն է նորից Հայաստան տղույն իբրև վիշապ օձ...»: Արևելյան-պատկերային հյուսվածքի մեջ երևում է Շապուհ արքայի «նժույզը բոց», «շնկ աղույնը... բոցին դրոշի», որ գալիս է ժանիքները վարձելու հայոց աշխարհի ողին ու կողին: Գոռոգ Շապուհի հուշ-խոսքերն են՝ կապակցվում են նրա գործած դաժանությունները Ար-

¹ Վ. Դավթյան, «Ծուխ ծխանի», «Հայաստան», 1969, էջ 25:

² Դ. Գալստյան, «Պոեզիան և կյանքի ճշմարտությունը», «Լույս», 1990, էջ 350

չակ թագավորի, Վասակ Մամիկոնյանի, Փառան-
ծնմի, ամբողջությամբ Հայաստանի հանդեպ:

Դարսիկ բռնապետին հակադրվում է հայ ժո-
ղովրդի խղճի, անվերջության, վեհանձնության խառ-
նուցում հանդիսացող Մուշեղ Մամիկոնյանը: Մուշեղի
բնավորության այդ առնչվող գծերը մեծապես առ-
նչվում են հայրենիքի փրկության գաղափարին:
Ասքի առաջին մասում հանդես եկող գոռոզ ու չար
Շապուհին ներկայացվում է հակադրվում է Մուշե-
ղը: Շապուհի մոտյգը՝ բոց, Մուշեղի մոտյգը՝
կապույտի մեջ՝ ցուացող «ազիտակ կրակ»: Կարմի-
րի և Մափտակի հակադիր այս այլաբերության ծա-
վալվող ծիսաբանությունը ընդգծվում են Մուշեղի վրի-
ժառույթյան անհրաժեշտությունն ու վեհանձնու-
թյունը: Դավթյանը այդ զգացումների հենքերը ա-
զուցում է հայրենի ներկին, որը և՛ հայ մարդու, և՛
իր սուրբ հողի միասնության խորհրդանիշ է նշա-
նակում:

*Հայոց աշխարհի ձորերը բիրտ են ու վայրկյանը,
/Արարման պահին գլխատույտ ու ունեցել աստ-
ված/,*

Հայոց աշխարհի ձորերը սողում, դառնում են փիհըր,

Եվ փիհերն՝ անդունդ:

Անդունդների մեջ

Թնդյուն կա ու մութ,

Անդունդների մեջ

Հովազների պեն որսին հետամուտ

Գետեր կան ահեղ՝

Փրփուր կախված նրախենքն ի վար:

Գետերն այդ ոխով թռչում քարե-քար

Վեն են տապալում,

Որձաքար հայրու՝

Շունկերն են ծայրու՝

Այրուհիների...¹

(«Ճերմակ ձիավորը»):

Եվ այն պահին, երբ «Շապուհի գորբը Հայոց
ձորերում ձգվել ընդերկար ու գալար-գալար առաջ»
էր սողում, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի
«մերկ սուրն է շողում, օծված աստղերի շողակաթ
լույսով» և հնչում է փրկարար կոչը. «Ի՛ գե՛ն,
հայրդո՛ք, հանուն Վասակա, Ջարդենք այս առ-
գամ մեջքը վիշապի»: Մուշեղ Մամիկոնյանին հու-
զում է Հայոց թագավորի և սպարապետի մահվան
վրեժի հատուցումը, հայրենիքի պատվի փրկությու-
նը: Դավթյանը իր այս կերպարին հարորդում է
մարդկային ամենավեժն ապրումները՝ նրկու սուրբ
զգացումների՝ հայրենասիրության և վեհանձն-
ության համաձուլվածքով: Ջարդելով պարսկա-
կան հրոսակներին և փախուստի մատնելով Շա-
պուհին, Մուշեղը ազատ է արձակում նրա սուլույթու-
հի, ասորուհի, թռվալուհի, վրացուհի, բյուրանուհի,
հեյլենուհի և այլ ազգերի ներկայացուցիչ կանանց:

Մուշեղ Մամիկոնյանի այս արարքը տարեզո-
րվում է հայոց մատյաններում, իսկ Շապուհի արքան

իրաման է արձակում, «Որ իբր ոսկեծույլ գինու գավա-
թին նկարեն պատկերն սպարապետի, նկարեն ճեր-
մակ մոտյգի վրա...»: Մակնայն պատումի այս
ավարտով չի լուծվում Դավթյանի ասքի գաղափարը:
Նա խորապես հասկացել է, որ Հայոց քաջն սպարա-
պետի վեհանձն արարքը նախատակամղված է եղել
մարդկային բնավորության մեղմացմանը, ժողովուրդ-
ների մտերմության հաստատմանը: Այդ է վկայում
ասքի ընդհանրացումը.

Եվ խոսք են խոսում, թե՛ նո ալնորիկ

Մերմագավ բարբը գազան Շապուհի,

Ու մի սակավիկ

Շատացավ բարին աշխարհի վրա...²

Վ. Դավթյանի հայրենասպասումի մեջ մի ամ-
բողջական շարք են կազմում «Ջվարթնոց», «Ասք
Մաշտոցի մասին», «Լյուդիտաս» պատմական պոեմ-
աբերը, «Օ՛հրանի ծառ» դրաման, Հայոց մեծ եղևնի
ողբերգությունը պատկերող «Ունքվինո»:
Բանիաստեղծը նրանցում ստեղծել է հայրենասերնե-
րի մնայուն կերպարներ, որոնք իրենց ժամանակաշը-
ջանի խիղճն ու ծայրը լինելով հանդերձ, հանդես են
գալիս որպես դաս ու օրինակ աշխարհ եկող սերունդ-
ների համար: Հայրենիքի, նրա ուժի և պատվի խորի-
դանիշ Արարատը բոլոր դեպքերում պատկերվում է ոչ
միայն որպես հայ ժողովրդի պատմական ընթացքն
ապահովող կենտրոնաձիգ հսկա, այլև սերունդների
հոգեկան գեղեցկությունն ու բարոյական կեցվածքն
ապահովող նախապետ: Բանաստեղծը այդ մղումով
արեգակի առաջին շողի ջերմությունը նվիրում է Ա-
զատն Մասսի ձյունին և անուշ Արծվի թևերին ու կո-
պին, որից հետո արծիվը ապկում է տեղից ու սուրում
Ազատ Մասսին ի վեր: Արծվի թռիչքին հետևում է
Ճարտարապետ Հովհանը և գտնում Մասսի ու արծ-
վի դաշնությունը.

Եվ Հովհանի հանդեպ որմ է ելնում կարծես,

Քար է դրվում քարի,

Քար է դրվում քարի,

Եվ խարսխի վրա պյուն է դրվում միատող,

Եվ պյունների վրա արծիվները միտող

Վենմ գմբեթներն իրենց բաց թևերին առնում,

Սպվառնում են,

Ելնում

Ու տանում են դեպի արևածագ

Ու տանում են դեպի ոլորտն Աստծոն

Ըմբոստացումն հայոց

Ու համբարծումն հայոց...³

(«Ջվարթնոց»):

Ջվարթնոցի ամեն մի քար թանաստեղծը բնու-
թագրում է որպես անանց հավատ, իսկ Ջվարթնոցը՝
»Իբրև մի սքրատաշ, բյուրել Մասսիս«: Դավթյանի
խոհերում ու մտապատկերներում Հայոց աշխարհի
կողողները ներկայանում են որպես հայոց աստեղնա-

¹ Վ. Դավթյան, «Օտու ծխանի», «Հայաստան», 1969, էջ 56-57

² Նուն տեղում, էջ 56-57

³ Նուն տեղում, էջ 77

մերձ լեռների շարունակություն, դառնում երփնե-
րանգ և աստվածային նախրյան խճանկարի անբա-
ժանելի մասունքներ, ինչպես բանաստեղծն է հաս-
տատում: «Ջվարթնոցն է կանգնել Մասսի դիմաց
իբրև մի սրբատաշ, քյուրնդ Մասիս...»:

«Ջվարթնոց» ասքում Դավթյանը հայրենասի-
րության գաղափարը առաջին հերթին մարմնավոր-
ում է հայ մարդու արարման խոնջանքի մեջ՝ որ-
պես վայելք, որպես վսեմ պարզև: Հայ մարդու ա-
բարոզ մտքի թափը նախանձ է առաջացնում ան-
գամ հոռու կայսեր սրտում: Ասքի պոսիվետային գլ-
խավոր գիծը դրամատիկական լիցքեր է ձեռք
բերում: Մի կողմից հայրենասեր հովնանն է հառ-
նում, մյուս կողմում՝ քյուզանդական
կոստանդինոս կայսրը՝ նենգություն ու չար նա-
խաճով թռնկված: Հովնանը փաշայայում է ազգա-
յին արժանապատվության զգացումը, որ Ջվարթնո-
ցը ավելի շքեղ է, քան Սոֆիայի տաճարը: Դրամա-
տիզմը նոր լիցքավորում է ստանում կայսեր խար-
դախության պատճառով: Նա որոճում է հովնանին
կ'Ուլիս տեղափոխվելու միտքը, որպեսզի նրա
«հանճարը Բյուզանդիոնում... առավել յս շողա»:
Հովնանին ստիպում են գնալ Բյուզանդիա: Վ. Դավ-
թյանը հայրենի երկրի հանդեպ եղած մարդկային
կարոտի այրող կրակն է պատկերում հայ ճար-
տարապետի հոգում: Այդ կարոտը իմաստնացած
խոհ է. գոյատևման պատգամ՝ ծիածնաված ան-
ցյալից-գալիք: Ճարտարապետ Հովնանի մենախո-
սության մեջ ահա այդ ծիածանն է խոսում:

*Հո՛ղը... Հայոց հողը... Ամբողջովին
Ոգի է նա, յուրյով շողված աշուն,
Նա մայրական բուրմունք
Ու մանկության բուրմունք
Ու բուրմունք է հացի...
Նա տուն է ու կրակ,
Աղոթք է ու գինի,
Նա ծխանի ծուխ է բարձրացնա...
Հողը, Հայոց հողը, հայոց ոգին է նա:¹*
(«Ջվարթնոց»):

Վ. Դավթյանը հերոսի այս ընդհանրացված ի-
մաստությունը կրկին ու կրկին կապում է հայրենի
խորհրդանիշ հանդիսացող լեռների, գետերի, աղ-
բյուրների հետ: Հովնանի հոգու հետ խոսող հողը
արտաստություն է գտնում Արագածի, կապարտ
աղբյուրի, Մասիսի մետաֆորներով: Հովնանի վե-
հությունը երկնային պարզև չէ, այլ հայրենի լեռնե-
րից ժառանգած հոգևոր սնունդ: Դավթյանի հերոսը
ինքն է խոստանում «եվ դու տվիր, Մասիս, ինձ վե-
հությունդ արար... Հայոց ոգու խորհուրդն անմեկ-
նելի, Հայոց արեաբանվող, խաչվող, քամվող, գամ-
վող, Հայոց մեռող Սակայն հրաշքի պես հաճող
Ոգու խորհուրդը արար»:

Դավթյանի բանաստեղծական ընդհանրացում-
ների մեջ ժողովրդի կենսափիլիսոփայությունն է
ձգում հաստատվելով հայոց ոգու անմահությունը
Ջվարթնոցի մեջ, որը և ըմբռստացում է, և՛ համբար-
ձում: Հովնանը որպես հայ ժողովրդի արարող հան-
ճարի մարմնացում, կրկնակի է գեղեցկացնում հայրե-
նիքի հանդեպ ունեցած կարոտի կանթնդով: Հենց այդ
սերն է, որ նրան հեռու է պահում օտարին ծառայելու
մտքից: Հովնանը այդ մասին չի խոսում: Ասքի վերջին
պատկերներն են ընթերցողին հուշում և՛ հովնանի
ցավը, և՛ Հայոց աշխարհի դեմ շարունակվող
ասպատակությունների շարանը:

*Շուրջը օտար դաշտեր, հողը է ու ճյուղ,
Օտար հողը նրան բերանն առած,
Տանում է աշխարհով, ո՛ր է տանում...
... Հողմի առնոցներում շունչն է մահի,
Իսկ ճանապարհին անվերջ ձգվում է դեմ
Ու գալարվում այրող ճյուղափղով:
Հետո հողմի ալիքն իբրև պատանք
Պարտում է նրան ու հետքերը ջնջում:
Իսկ սանձակոծ հողըն դեմ վրոչում,
Ասպատակում է դեմ... ?*

(«Ջվարթնոց»):

Վ. Դավթյանի հայրենասիրական երկերի մեջ
առանձնակի տեղ է զբաղում «Միրանի ծառ» չափածո
դրաման: Հեղինակը նրանում ներկայացնում է միջ-
նադարի իրադարձությունները: Միրանի ճյուղակու-
տոր ծառը Հայոց աշխարհի, հայ ժողովրդի խորհրդա-
նիշն է, որի շուրքի տակ և շուրջ բանաստեղծը ներկա-
յացնում է պատմական իրադարձությունները՝ կապ-
ված Անիի ճակատագրի հետ: Քնդվելի, Խուշույի,
Աբամանյակի, Աղամուսի, Սիմանյանի, Վանահոր,
Թուխմամի, հույն Սպայի կերպարների միջոցով
Վ. Դավթյանը քննարկում է հայրենիքի և ժողովրդի
ճակատագրի պրոբլեմը՝ կրկին ուշադրություն դարձ-
նելով անցյալի հերոսական և ողբերգական էջերին:
Պատմությունից հայտնի է, որ Անիի թագավոր Գա-
գիկ 1-ինի մահից հետո գահակալական կռիվներ են
ծագում նրա ներքև որդիների միջև: Թագավորի ավագ
որդին՝ հովհաննես Սմբատը, ժառանգում է հոր գահը՝
երկրի մի մասը տրամադրելով կրտսեր նոթրը՝ Ադո-
տին: Երկիրը թուլանում է: Բյուզանդական կայսրու-
թյունը օգտվելով դրանից, թուլական հովհաննես Սմ-
բատի հետ կնքում է պայմանագիր-կտակ, ըստ որի
Սմբատի մահից հետո Անիի թագավորությունը պիտի
անցնի բյուզանդական կայսրության լծի տակ: Այդ
խաղաղապես համաձայնագրին նպաստել են ժամա-
նակի հայոց Պետրոս կաթողիկոսը և Վեստ Սարգիսը:

1930-ական թվականներին պատմական այս
ցավալի փաստի հիման վրա Դ. Դավթյանը գրեց
«Երկիր հայրենի» պիեսը: Վ. Դավթյանի չափածո
դրաման ևս վերաբերում է մեր պատմության այդ ող-
բերգական ժամանակաշրջանին: Սակայն ինքն Ռե-
միոնյանը նկարագրում է պատմական իրադարձու-

¹ Նույն տեղում, էջ 89

² Նույն տեղում, էջ 95

թյունները, ապա Դավթյանը քննարկում է այդ խայտառակ կտավի հետևանքը: Հովհաննես Մկրտչի մահից (1041թ.) հետո, կյանքից հեռանում է նաև Աշոտը: Թագավորության դավաճան ուժերը կաթողիկոս Պետրոսը և Վեստ Մարգիսը, աշխուժանում են: Ժողովուրդը չի հաշտվում նրևույթի հետ: Մալաթիոյ վահրամ Պառլավոնյան ղեկավարում է ժողովրդական ըմբոստությունը: Թագավոր նշանակված 16-ամյա Գագիկ Երկրորդը Աշոտի որդին, կազմակերպում է անհաճանք պայքարը և՛ քրիզանդական, և՛ սելջուկյան հրոսակների դեմ՝ անաթամանակ մարտնչելով կենտրոնական ուժերի դեմ: Դեմիքրայանը, ահա, նկարագրել է Գագիկ Երկրորդի իշխանության գլուխ անցնելն ու նրա կազմակերպած պայքարը: Դեմիքրայանին շատնակել է Վ.Դավթյանը: Ճիշտ է, «Ծիրանի ծառ» դրամայում ուժեղ և սրընթաց բախումներ չկան, սակայն բանաստեղծին հաջողվել է պատկերել ժամանակաշրջանի մարդկանց հոգու խռովքն ու տագնապը: Հայրենիքի և ժողովրդի միաձուլյալ հասկացության նկարագրությանը Դավթյանը նախ ընդգծում է այն տագնապը, որ աղքատ է ժողովուրդը, որի անունից դրամայում հանդես է գալիս գուսանը.

*Մորը արևագալ, օգնեալան իմ լըր,
Որ նա կարենամ ճշմարիտ խոսքով
Սև ողբը հյուսել Անի քաղաքի
Եվ գովքը հյուսել քաջ Պաշխպուտու...¹*

(«Ծիրանի ծառ»):

Նկատելի է Վ. Դավթյանի մտադրական ներկայան ընթացքը՝ պատկերել Անի քաղաքի ողբերգական վիճակը, և՛ միաժամանակ ներկայացնել ժողովրդի և նրա քաջ զավակների հերոսական պայքարը հայրենիքի հավիժությունն ապահովելու ուղղությամբ:

Դավթյանը չի սրբոլում Հայաստանի անմխթաթյուն վիճակը կապված Անի արծաթով ծախելու հետ: Նա Անիի և Հիսուսի ճակատագիրը համարում է նույնատիպ: Դրամայի սյուժեի ներքորդական գծի վրա բանաստեղծը ներկայացնում է գինետան աշխատակցուհի խուշուշի, առևտրական Սիմաֆոնի, արքիմի Աղամոսի, ինչպես նաև Թուխ-Ժամի փոխադարձությունները, սակայն գաղափարական հիմնական ուղղվածության ելակետը Անիի թագավորության ճակատագիրն է: Մյուսնի ծանրությունը կարգադրված Աղամոսի ունեքին է: Նա տիրապետում է ժամանակի գիտության գաղտնիքներին, կարողանում է քիմիական ռեակցիաների օգնությամբ պղնձից ստանալ ոսկի, նրա գում է իր ստացած ոսկու միջոցով գումարել հայոց ցրիվ գործը, զինել լեռնականների գնդերը և այդ հնդերը բաց թողնել «Հոռոմաց վրա».

*Ոսկով կիսգկնմ
Ես հռոմանների կոկորդը ագահ*

*Եվ ոսկն շղթա կդննմ նրանց
Ձորավարների ագահ ծերերին,
Ետ կառննմ Անիին, ետ կառննմ հողը...*

Է. Դավթյանը դրամայում քայլ առ քայլ բացում է իր հերոսների հոգու դեմքերը, բնութագրում նրանց՝ լեռնկրետ արարքների միջոցով՝ ստեղծելով հայրենասիրական մի հիմնային պատում: Երկի վերջին մասերում նրանք էլ բերվում Սիմաֆոնի դավաճանությունը: Նա Աղամոսի ոսկի ստանալու գաղտնիքը հայտնում է հռոմաններին, Սոնախուս կայսրը հրոսակների գունդ գումարելով՝ Իսիտաս գորավարի գլխավորությամբ ուղարկում է Հայաստան: Բոլոր փորձերը՝ Աղամոսին գերելու և Բյուզանդիա տանելու ուղղությամբ անցնում են ապարդյուն: Դրամայի վերջին գործողության մեջ հեղինակը անդրադառնում է Գագիկ արքայի Բյուզանդիոն գնալուն ու պատանդվելուն, ապա Պառլավոնյան գլխավորության վերջին հերոսական կռիվներին: Բյուզանդական սպան վերջին ճիգերն է գործադրում՝ Աղամոսին առևանգելու: Աղամոսը իր գյուտը թշնամուն չիանձնելու նպատակով ծառից իրեն նետում է անդունդը: Դրամայի ավարտում Դավթյանը ընդգծում է հայրենիքի ճակատագրի հանդեպ իր գեղագիտական իրողությունը: Պատանի Արամանյակի շուրթերով հնչում է խարազանող խոսքը դավաճանների հանդեպ.

*Հորեղբայր գուսան, սասա, վերջապես
Մեր հայոց ազգից դավաճանները
Ե՛րբ կվերանան...*

(«Ծիրանի ծառ»):

Այսպես ներկայացվում է ծիրանի ծառը, որին փարվելով՝ Խուշուշը շշջում է.

Ծիրանի իմ ծառ,

Իմ Աղամոսա, ծարավ նս, ծարավ...

Ու նս սպիտով միշտ բուր կլրենմ

Մեր պաղ գնտակից, որ գովություն տամ

Քարի մեջ խրված քո արմատներին...

Ծիրանի իմ ծառ, ծիրանի իմ ծառ,

*Իմ Աղամոսա...*²

(«Ծիրանի ծառ»):

Վ.Դավթյանը Հայրենիքի պատմի, հարատևման ընթացքը կապում է անժամուրաց հայրենասերների սխրանքների հետ: Ինչպես տեսնում ենք, այստեղ նա միաձուլյալ է հանդես բերվում Ծիրանի ծառ՝ Հայաստանի և հերոս Աղամոսի պատմիքը:

Վ.Դավթյանը հայ ժողովրդի պատմական ընթացքի մեջ բարձր է գնահատել հայ մշակույթի անմահ գործիչների դերը: Բնական է, որ նա ժառանգորդի սիրով գրույց է բացել Մ.Մաշտոցի, Գ.Նարեկացու, Մովսիսի հետ, հյուսել նրախորհի իր պետական խոսքը՝ նվիրված ժողովրդի հանճարի մարմնացում հանդիսացող այդ ռափարաններին:

¹ Վ.Դավթյան, «Հայաստան գիրք», «Մովսեսական գրող», 1978, էջ 185

¹ Նույն տեղում, էջ 230

² Նույն տեղում, էջ 317

³ Նույն տեղում, էջ 317

Վ.Դավթյանի «Թոնդրակեցիներ» դրաման ժամանակին բարձր է գնահատվել, սակայն այսօր վերագնահատվում է այն, որովհետև վերադարձեցավորվում է նաև թոնդրակյան շարժումը, որի առաջնորդը եղել Մմբատ Ջարեհավանցին։ Ժամանակին մեծանուն Մ.Արեղյանը թոնդրակյան շարժումը համարել է ծայրահեղություն հասած երևույթ։ Բայց խորհրդային տարիներին այն գնահատվել է որպես գյուղացիական առաջավոր պայքար, իսկ Ջարեհավանցուն վերագրվել է ժողովրդական առաջնորդի իմաստություն։ Այդ ոգով էլ ստեղծվել է Մմբատ Ջարեհավանցու կերպարը։ Վերանայելով պատմությունը, դրվում է նաև նման երկերի վերագնահատման հարցը։ Այս փորձածավալ հոդվածում հնարավոր չէ հանդամանորեն քննարկել այդ խնդիրը։

Բանաստեղծ-գրականագետ Վ.Հակոբյանը, որ ուսումնասիրել է Վ.Դավթյանի պոեզիան, գրել է. «Ընթերցելով Վ.Դավթյանի պատմական թեմատիկայով գրված գործերը, մտածում եմ, որ, հիրավի, պետք է անպայման մեր ժողովրդի հարուստ պատմության բոլոր էջերը գեղարվեստական մարմնացում ստանան՝ ավելի գործունե ազդեցության և դասի համար»¹։ Չնկարող չհամաձայնվել նման կարծիքին։

Պատմության դասերը Վ.Դավթյանի պոեզիայում

Ս.Ա.Խանյան

Անփոփում

Քննարկելով Վ.Դավթյանի պատմական թեմայով գրված պոեմները, ասքերն ու «Ծիրանի ծառ» չափածո դրաման, եկել ենք հետևյալ եզրահանգման.

1. Հայ պոեզիայում եուշարենցյան շրջանի բանաստեղծների շարքում Վ.Դավթյանը առաջիններից մեկն էր, որ լուրջ ուշադրություն դարձրեց հայ ժողովրդի պատմության հնօրյա հերոսական և ռոբերգական դրվագների գեղարվեստական պատկերմանը։

2. Վ.Դավթյանը վարպետորեն փառաբանեց հայ ժողովրդի հատկապես հերոսական դրվագները, օտար բռնակալների դեմ մղած ազատագրական պայքարը՝ այն համարելով նրա կենսունակության հիմնական պայմանը։

3. Ելելով իր ստեղծագործական խառնվածքից, Վ.Դավթյանը նախընտրեց առասպելական-հերիաբային-ասքային պատումների հնարարանքներն ու առանձնահատկությունները։

4. Բանաստեղծը գեղարվեստական դրական կերպարների աստիճանին է հասցրել պատմական

անձնավորություններին՝ Արա Գեղեցիկին, Արտավազդին, Մ.Մաշտոցին, Գագիկ Երկրորդին և այլոց, ինչպես նաև ստեղծել է Ծապուհ Արքայի, Վեստ Սարգսի, Պետրոս Գետադարծի և ուրիշների բացասական կերպարները։

5. Իր ստեղծագործություններում Վ.Դավթյանը պատմական անցյալին հաղարդել է արդիական հնչեղություն՝ հանուն ապագայի։

Уроки истории в поэмах и сказаниях В.Давтяна
Хаяян С.А.

Резюме

В статье разбираются и оцениваются поэма "Песня об Армени", исторические сказания "Даже мне лым очага", "Комитас", "Эвартноц", "Сказания о Маштоце", "Белый всадник", драма в стихах "Абрикосовые деревья", в которых таинственный поэт по введению современности художественным словом оценивает историческое прошлое народа.

Статья является серьезной попыткой переоценки исторических произведений знаменитого поэта.

¹ Վ.Հակոբյան, «Բանաստեղծությունը և տիեզերական շարժումը», 2000, էջ 129։

Պատմության բազահայտումն ու կերպարային մարմնավորումը Պ.Ջեյթունցյանի արձակում Ա. Կ. Ղուլյան

Վերլուծվել են Պ.Ջեյթունցյանի XX դարի նրկու ռոբորգություններին նվիրված՝ «Լլոդ Ռոբերտ Իգերլի» և «Ամենատխտու մարդը» վեպերը:

Լլոդ Ռոբերտ Իգերլիին ռոբոնգական պատմությունը (մեկը նրանցից, ով անմիջական թե մասնակիորեն՝ մասնակցություն էր ունեցել հարյուր հազարավոր մարդկանց սպանության մեջ, բայց միակը, որ ճանաչել էր իր մեղքը), բազմիցս է գրավել այնպիսի մտավորականության ուշադրությունը: Այն հիմք ծառայեց նաև Պերո Ջեյթունցյանի վեպի համար: Վեպը լույս տեսավ 1968թ, այն ժամանակ, երբ նոր թափ էր առել միջուկային՝ ատոմային և ջրածնային սպառազինության վրեժավազը, երբ միջուկային պատերազմի սկսման վտանգն արդեն սպառնում էր ռոջ քաղաքակրթությանը: Նրա «Լլոդ Ռոբերտ Իգերլի» վեպի հերոսը ամերիկացի նույնաման օդայուն է, որը գիտակցելով պատասխանատվություն իր մասնակցության համար՝ ավելի քան 200 հազար անմեղ մարդկանց սպանության մեջ՝ հրամարվեց կանգնել ամերիկացի ժողովրդի առջև իբրև զագային հերոս:

«Ես այն մարդն եմ, իր մասին գրել է Իգերլին, որ հրաման արձակեց ռուբ գցել Հիրոսիմայի վրա... Ես չկարողացա մոռանալ այդ արարքը, որն ինձ պատճառեց դաժան տանջանքներ, որովհետև գիտակցում եմ մեղքս»: Նրա զանկություն էր, որ իր գործած մեղքը հետագայում իր ժողովրդը նույնպես ճանաչի: Մտկայն դա չկատարվեց, որով և վերջինս գործեց առավել ահավոր մեղք: Բնակատարաբ, այստեղ իսկական մարդասպանին պետք էր փնտրել «հասարակության», և ոչ թե միայն թիվ 509 հատուկ ավիախմբի քսանվեցամյա օդաչու Լլոդ Ռոբերտ Իգերլիի մեջ: Արդյունքում Իգերլին հայտարարվեց հոգնված հիվանդ: Թերես, կարելի է ասել, այս պարագայում առիթ հանդիսացավ նաև իր նրիտասարդ օդաչուի տարօրինակ վարքը. հավատարիմ իր սկզբունքին և ընդդիմանալով հասարակական կնոթ կարծիքին, գրավակալով իրեն տանջող առաջադրանքներին վրա հրավիրել շքեղատախ ուշադրությունը, այն հասնելու իր գործած մեղագործության համընդհանուր ճանաչմանը (հետևաբար է՝ ինչ-որ պատժի), այս անգամ առդեն զագային հերոսը գնում է բոլորովին ուրիշ քայլերի. պարություններ, կոդապատներ, անկարգություններ և այլն:

Այս «ճարահայտյալ գործողությունների» արդյունքում Ռոբերտ Լլոդ Իգերլին շուտով հայտնվում է բանտում, իսկ այնուհետև՝ հոգեբուժական հոսպիտալում: Եվ չնայած վիճնացի փիլիսոփա Գյուստրո Անդերսի (որի հետ Իգերլիի նամակագրական կապը նրկար տարիներին

պատմություն ուներ) ընվգումներին՝ հղված նամակներին առ միջազգային մասով, նախագահ Քենեդի, գործով ընտղ դատարան, Իգերլինի բուժող բժիշկներ, ինչպես նաև իշխանություններին և հասարակական կազմակերպություններին ուղղված Իգերլիի դիմումներին, այնուամենայնիվ, վերջինս զուրս չգրվեց հոսպիտալներից:

Նա այդպես էլ պահվեց այնտեղ որպես «կամավոր հաճախորդ», իսկ իրականում՝ որպես կայանավոր: Ձինվորական իշխանությունների նպատակն ակնհայտ էր. Իգերլիին մեկուսացնել հասարակությունից, խանգարել նրան իր համոզմունքներն արտահայտել, որովհետև այդ համոզմունքների մեջ նրանք միանշանակ տեսնում էին «հակառակորդային սպառազինության քաղաքականություն»: Մակայն քաղցնել ճշմարտությունը Լլոդ Ռոբերտ Իգերլիի մասին նրանց չհաջողվեց:

«Նրանք շատ ուրախ կլինեին, եթե կարողանային «թերանս փակել», գրել է Իգերլին:

Նրա անունն արդեն բոլորի շուրջներին էր թե Ամերիկայում, թե Եվրոպայում, թե Հիրոսիմայում, ամբողջ աշխարհում: Իգերլիի համընդհանուր ճանաչմանը հատկապես մեծ խթան հանդիսացավ Գյուստրո Անդերսի հետ նամակագրությունը, որն առանձին գրքով հրատարակվեց 1961թ: Այստեղ ըստ ամենայնի տրված էր մարդ-անհատի իրավան կերպարը, անհատի, որը խորամանկ գիտակցել էր իր գործած մեղքը, հասկացել իր կոռուից կատարված հանցանքի պատասխանատվությունը ու ոչ միայն անցյալի, այլև ներկայի և ապագայի հանդեպ:

Ուշագրավ են նաև կյանքի մասին Իգերլիի մտորողները պաշտամենտի անդամ ճապոնացի քահանային գրված նամակում. «...ապրել թեկուզե ամենադժվար կյանքով, բայց կատարել իր պարտքը... օգնել բոլոր մարդկանց, իննն դրանց կարմիր, սպիտակ, սև թե դեղին, ապահովել նրանին կյանքով, առանց վախի, առանց աղքատության, առանց տգիտության և ստրկության... Դաժանությունը, ատելությունը, բռնությունը, անարդարությունը երբեք չեն ստեղծի պայծառ ապագա ոչ հոգևոր, ոչ բարոյական և ոչ էլ նյութական: Պայծառ ապագայի միակ ճշմարիտ ճանապարհը ստեղծագործ սերն է, վատատությունը, նոթայությունը...»:

«Մենք կարող ենք չիանաճայնել առանձին գործերին նպատակադրման հետ, բայց այս դեպքում դա չէ կարևորը, ինձ հետաքրքրողն այստեղ նպատակադրման հասնելու ուղինն են, գնդարկմանական լուծման տարբեր եղանակները, գրում է Ջեյթունցյանը: Կարևորն այն անառարկին ճշմարտությունն է, որ ձեռլիցը արտահայտման որդշակի մեկ ձև չունի, ունի միայն որդշակի խնդիր՝ հասարակական հիմնական օրինաչափությունների էության բազահայտումն ու կերպարային մարմնավորումը»:

¹ «Գրական թերթ», 1973, ընդգծումը՝ ընագրում, Ռ1

«Այս վեպի հիմքում ընկած է մի լեգենդ, որ ծնվել է մոտավորապես քսանմարդ դարում, ստեղծագործության յուրովի մոտրում գրել է Ջեյթոնեցյանը. ըստ այդ լեգենդի՝ մարդիկ ստեղծել են մի այնպիսի գերիզոց գնեթ, որ տեղիտեղեր կործանել է մի անթողջ քաղաք իր հազարավոր բնակիչներով:

Կարդալով այս տողներ, կարծիք է բացակայել, ինչ լավ է, որ այդպիսի բան չի եղել, ինչ լավ է, որ այդպիսի բան չէր կարող լինել (ընդգծումները վրաստանին են):»

«Իրականում «այդպիսի բան» եղել է, 20-րդ դարի լեգենդի մասին գրում է ակադեմիկոս Ս.Արզումանյանը, և «Կլոդ Ռոբերտ Իգնոլի» վեպը, իր գաղտնիարական ու գեղարվեստական հիմքում, «այդ բանի» ղեմ մարդկային - բարոյական - հոգեբանական աղբյուրի ինքնատիպ վավերացում է: Ինչ - որ առասպել - լեգենդի պատմություն չի ելուտում վիպասանը, այլ փորձում է տալ աշխարհագրոց մի փաստի գեղարվեստական տարեցությունը»²:

Պերժ Ջեյթոնեցյանը իր վեպում մեծ մասամբ օգտագործել է պատմական փաստերի և իսկական փաստաթղթեր, որոնք հիմք են ծառայել ժամանակի հասարակայնության կենսական խնդիրներին նվիրված մի լեգենդի ստեղծման համար, որի հերոսը «ակամա վերածվեց մարդ-պտուտակի, բայց ի տարբերություն ուրիշների, նորից վերափոխվեց մարդու»: Ջեյթոնեցյանն այստեղ վերափոխորեն իրար է միասնություն իրականն ու ֆանտաստիկան, պատմականն ու գեղարվեստականը, վավերագրականն ու պայմանականը, որ միասին գործում են գեղագիտական բազմաբնույթ և բազմազան բնավորությունների տնր հերոսներ՝ (Կլոդ Ռոբերտ Իգնոլին, նրա հայրը, Լիլին, Գյունտեր Անդերսը և այլք) և վերացական սիմվոլներ (Նապոլեոն Բոնապարտը, նախարար Վիլհելմ Իսթը, Առտմային և Ջրածնային Բույներին Հայրերը և ուրիշներ), որով և կրկին հաստատվում է հեղինակի գեղագիտական ու քաղաքացիական հավատամքը՝ հասարակության հանդեպ անհատի ունեցած պարտքի դիտարկումից: Պայմանականությունը վեպում ունյնալն պատահական չէ: Հ.Մարգարյանի մենաբնությունը, Ջեյթոնեցյանը վեպում անախրենիզմն օգտագործել է ոչ որպես ռեալիզմի միջոց, այլ իբրև «իլլազիոն կատարված իրերի և սկզբունք, որը կոչված է առավել ցայտուն բացահայտելու վեպի գաղափարական կոնցեպցիան»³:

Դավիթ ու տաժմանակը է Ջեյթոնեցյանի հերոսի անցած ուղին՝ ազգային հերոսից մինչև «խելագար», դատապարտված մշտական հալածանքի, ուրի, որը ձգվում է անհատական ինքնագիտակցությունից

(մեղրի գագառուից) մինչև կյանքի իմաստի խորապես գիտակցումը: Նա ինքնագնահատի, ինչպես նաև հասարակության ղեմ պայքարի միջոցով հասնում է ինքնաճանաչման՝ հոգեբանական այդ բարդ գործընթացի արդյունքում դառնալով մարդկային - բարոյական վերածնության հիմքը:

Անհատ և հասարակություն, բանական մարդ և մարդ-պտուտակ: Մեղրի կալվերսի գեղակցմամբ ինքնաճանաչման հասած անհատն ընդդեմ ռոմանտիկ հասարակության: Ահա այն առանցքը, գաղափարը, որը գեղարվեստորեն մարմնավորվելով վերածվում է մի գգառուացնող ճիչի՝ ընդդեմ բռնության ու անարդարության, ռոմանտիզմի և աշխարհափոխ քաղաքականության:

Հեղինակն վեպում գտել է կենսական նյութը, որի հենքի վրա կառուցվել ստեղծագործությունը և տալով նրան գեղարվեստական փաստավորում՝ բարձրացրել է արդիական հնչողություն ունեցող հիմնահարց Անդրադառնալով կենսական նյութի և գրականության փոխհարաբերությանը, Ջեյթոնեցյանը գրում է. «Ժամ թվում է, որ մեր արձակը կենսական նյութի հետ հաճախ կապվում է մի կարճ և ուղիղ գծով. նյութը մինչև գրականություն հասնելը մեծ մասամբ չի իմաստավորվում, փոխակերպման չի ենթարկվում հեղինակի կողմից, չի «հարմարվում» գրողի սեփական տեսանկյանն ու մեկնաբանությունը, ի վերջո, չի վերածվում պոռթկմի: Ստացվում է, «կյանք» ինչպես որ կա»: Չկա արվեստի մյուս ներկրող աստիճանը կյանք ինչպես ինքը ես տեսնում, և հաջորդը, ամվիլ բարդ ինչպես ես ընկալում կյանքը և ինչ ես մտածում այդ մասին»:

Հիրավի շատ խորն է Ջեյթոնեցյանի հերոսի «այդ կյանքի» ընկալումը: «Ես կբաժանվեմ: Ես կդառնամ երկու հոգի: Մեկն իմ մեջ, մյուսն ինձանից դուրս: Համվիտ և Դոն Լիխտոն: Ջեյթոնեցյանի հերոսը հանգանքը կատարելուց հետո, փորձում է մարդ - պտուտակից կրկին դառնալ ղեպի իր «ես»-ը, իր անհատական աշխարհն ունեցող մարդ: Միջնույն հասարակությունը՝ մինչ այդ «ազգային հերոս» հռչակած Իգնոլիին այդ պահին որակում է «խելագար» ու իբրև հոգեկան հիվանդի մեմբուսացում է իրենից: Կատարած հանցանքի, մեղրի, պատմասխանատվության գագառով Կլոդին ականա «դարձնում է» Հիրոսիմայի գոհներից մեկը: «Դուք ես այնպիսի գոհ եր. ինչպիսին է մենք»: - ասում են ճառագայթային ախտով հիվանդ երեխան աղջիկներից, նույնն է ասում նաև Գյունտեր Անդերսը, նույն միտքն է հաստատաբար նաև Մադամոն Բոնապարտը, որը վեպում հանդես է գալիս որպես մի հավասարակա խորհրդանշի՝ իր մեջ ներառելով բոլոր դարերի բռնակալներին և ռոմանտիզմներին՝ Ներուն, Հուլիոս Կեսար, Ռալմար. Հիսուս, Ստալին... «Դու կատարող ես... քեզ ոչ որ իրավունք չունի մեղադրելու: Դու ինքը էլ չունես (ընդգծումը Մ.Ա.): ...Եթե յուրաքանչյուր կատարող մտածել, աշխարհում ոչինչ էլ կատարվի»,-վերստին մարդկայնացման ուղին բռնած մարդ-պտուտակին ասում է

² Ս.Արզումանյան, « Խորհրդահայ վեպը», Երևան, 1990, էջ 75

³ «Ժամանակակից հայ արվեստ», Հոգեվանդի ժող. 1981, էջ 30

Բոնապարտը, թեև վերջինս նույնպես դատապարտում է արտոնագրվը. «Անցցն խաղաղությունը, կորչի պատերազմը»:

Վեպում բացառիկ ուժով է կառուցված Նապոլեոն Բոնապարտի և կլոդ Իգերլիի նրկխտությունը:

«Բոնապարտը մոտեցավ լուսամուտին ու դուրս նայեց: Ու նրկար դադարից հետո, առանց չրջվելու, հանկարծ առաց:

—Մերո են...

—Ովքե՞ր, Ձերո մեծություն:

—Այդ բաղադրի բնակիչները, — ծայնից նրկում էր, որ հուզված է:

—Ես նրկաում եմ այն օրը, նրկ կդադարենք պատերազմել, իրար սպանել...

—Իսկ նրկ, —համարձակվեց հարցնել Բորը...

—Պատերազմը չի լինի, նրկ աշխարհը նվաճած լինենք»:

Նապոլեոն Բոնապարտը Հիբոսիպիայի և Նապաոակիի ողբերգական ճակատագրից հետո Ատոմային և Ձրածնային Ռուսերի Հայրենի բանավեճի միջոցով ձգտում է գտնել «Ճշմարտությունը»: Ձրածնային Ռուսերի Հոր կարծիքով համաշխարհային նվաճման հասնելու համար պետք է անտեսել «համենասուրբ զգացումն» անգամ, քանի որ «խիղճը բոլորովին էլ օբյեկտիվ չափանիշ չէ», այն «բարոյական չափանիշ է, քայց ոչ գիտական»: Նրկ կարծիքով գիտնականը «նրկ գիտական գաղափարին նայի բարոյական ակնոցներով, ևս կխնձվի ոչ միայն որպես բարոյացետ, այլ նախ և առաջ որպես գիտնական»:

Ձրածնային Ռուսերի Հայրը մերժում է պագիփիզմը, պատերազմը ներկայացնում որպես «համաշխարհային զարգացման հնարավոր ձևերից մեկը»: Ձինվորը, ըստ նրկ, պետք է լինի նոանդուր և հնազանդ, և հերմտիկոս է այն զինվորը, ով կարող է ունենալ «սնփական կարծիք», ով կզգտի առացնորդել իր մտքերով ու զգացումներով: «...Այն գիտնականը, որ պատերազմը չի ընդունում որպես համաշխարհային խնդիրների լուծման միջոց, իրերի տրամաբանությանը, դառնում է մեր թշնամին»:

Ատոմային Ռուսերի Հայրը հակադրվում է Ձրածնային Ռուսերի Հորը իր տկարառիկ փորձով խորհրդանշելով գայիք պատերազմի առևտր ողջ մարդկության համար. «Թեև գիտությունն ինքնին անտարբեր է չարին ու բարուն, օրինակությունն ու անօրինականությունը, —ասում է նա,—սակայն գիտնականը իրավունք չունի անտարբեր լինել... Ամենամեծ վտանգը, որ այսօր սպառնում է մարդկությանը, կօյր ավուներությունն է... Մոլորանդություն գումարած ռուսք, գումարած անտարբերություն. սա մարդկության կործանման ամենաուղիղ ճանապարհն է»: «Հիմա, նրկ մեզ սպառնում են տկնիկայի հազարավոր ծուղակներ և մարդու մեքենայացումը, — իր միտքը զարգացնում է Ատոմային Ռուսերի Հայրը, — մենք պետք է առավել

քան նրկե՛կ պահանջներ անծի ազատություն և ոչ թե՛ կուրորեն ննթարկվենք այն ամենին, ինչ սովորական է կամ համարվում է ճիշտ ու կասկածից վեր: Մենք պետք է մոտենք մարդու մասին»: Ատոմային Ռուսերի Հայրը տագնապում է մարդկության ապագայի համար. «Ինձ վախեցնում է մարդկանց անտարբերությունը, նրանց ոչխարային հնազանդությունը: Ես վախենում եմ, թե մարդիկ բնավ չեն հասկանում այն վտանգը, որով հոյ է մեր դարը: Վախենում եմ, որ չափազանց ուշ հասկանան...»:

Սակայն վերջում, այնուամենայնիվ, հաղթում է Ձրածնային Ռուսերի Հայրը: Ատոմային Ռուսերի Հորը դատապարտելով մահվան և բորբորված աշխարհին առավել էֆեկտիվ միջոցներով նվաճելու տննդով Նապոլեոն Բոնապարտը բաց է անում Ձրածնային Ռուսերի Հոր ճանապարհը սանձազերծելու նոր պատերազմ: Նա արդարացնում է Ռոբերտ Իգերլիի հանցանքը: Դու զինվոր ես, — Իգերլիին ատում է Բոնապարտը՝ իր միտքը հիմնավորելով այսպես. «Առաջադիմության համար միշտ զինվորներ են պետք...»:

«Ես հերոս չեմ, ես հանցանք եմ կատարել, ես սպանել եմ 200 հազար մարդ», — ընդդեմ Բոնապարտի և բոլոր նվաճողների հնչյուն է Ռոբերտ Իգերլիի ծայնը:

Հիրավի, որքան ուժգանում է «հասարակության» ճնշումը, այնքան ավելի է սաստկանում հերոսի պատասխանատվության զգացումը, և իր ներաշխարհում անընդհատ բորբորվող հոգեբանական ճգնաժամը հետզհետե մղում է ինքնաապախության, որը սակայն կանխվում է Անդերսի նամակի շնորհիվ: Նրկ ընկերը Ջո Սթիբորիցը, որը նույնպես նույն հանցանքն էր գործել ատոմային ռուսք զցնելով Նապաոակիի վրա, նահանջում է խոստովանելով իր անգործությունը հասարակության կամիքի դիմաց. «Ճիշտ է, Բոր, քայց ես վախկոտ եմ: Հասկացիր, դու պարտավոր ես հասկանալ, որ ես վախկոտ եմ: Ես ուզում եմ լավ ապրել...Փառքն ինձ դուր է գալիս, Մի մեղադրիր, Բոր... Աշխատիր հասկանալ... Զե՛ որ այս բոլորը...մարդկային բանքն են... Ես չեմ առարկում, րո արածն էլ է մարդկային... Ես նույնիսկ նիախանում եմ քեզ, քայց... Ինձ նրկեմ դուր է գալիս, որ ես մենակ եմ մնալու... Ես սուղում եմ այդ ստոր մտքից... Ես ինձանից եմ վախենում... հանկարծ մի օր ես էլ խզե՛կ խայթ զգամ»:

Եվ հասարակությունը, որ սկզբում անվերջ միջիարարում էր, ներշնչում, հուսադրում («Դու կատարող ես, քեզ ոչ —որ իրավունք չունի մեղադրելու, դու ինքը չի չունե՛կ» կամ «նրանք գոհեր են, իսկ գոհեր միշտ նղել են և կլինեն»: Նրանք հերոսներ են, ամենախիսկական հերոսներ), արդեն ինքնաճանաչման հասած Իգերլիին սկսում է հալածել: Իսկ նրա ինքնաճանաչող խոստովանությունը. «Ես հերոս չեմ, ես հանցանք եմ կատարել, ես սպանել եմ նրկու հարյուր հազար մարդ», հասարակությունը պատասխանում է ոստիկանների ծնծով և

բանտարկության: Սակայն ի տարբերություն Ջոյի, Իզերլին ամենայն արժանապատիվությամբ է տանում բոլոր հալածանքները: Նրան նույնիսկ արձան են կանգնեցնում, իսկ իբր բուժելու նպատակով նստեցնում են տիեզերանավ և արքայուն թյունիկ մոլորակ:

«Բորը նայեց խաղիկ պատուհանից:

Հորը դեռ երևում էր: Վերջին շնորհ: Ու նայելով այդ հողին, որի վրա ապրել էր տարիներ, նա չէր կարող չգտնել իր կյանքի մեծագույն սխալը: Որովհետև ես մի րոպե, ու հորը արդեն չի երևա, այն միակ ամուր և հուսալի հենարանը, որին դեռ կարելի է վստահել և խոստովանել: Ես մի րոպե ու վերջ, ուշ կլիսեի:

Բու կյանքի մեծագույն սխալը ոչ թե այն էր, որ մասնակցեցիր պատերազմին, այլ այն, որ մասնակցեցիր առանց մտածելու:

Ոչ թե այն, որ համաժայնեցիր ռումբ գցել, այլ այն, որ համաժայնեցիր առանց մտածելու»:

Բորը չի դադարում ինքնազննումը, որի միջոցով և հասնելով իր «են»- ի բացարձակ բացահայտմանը, նա արդեն իրավունք է վերապահում մտադրել - առաջին հերթին հասարակությանը, այն հասարակությանը, որի կամա, թե ակամա գոհն է դարձել ինքը:

Թյունիկ մոլորակում, ուր շարունակվում է դեպքերի զարգացումը, ավելի տեսանելի է դառնում Ջեյթունցյանի ընտրած պայմանականությունը: Ելնելով Իզերլինի կենսագրական փաստերից, Թյունիկ մոլորակն այստեղ խորիզաձևում է այն հոգեբուժական հուսալիստները, ուր երկար տարիներ, ինչպես վերում նշեցինք, պաշտել էր իբրև «կամավոր համաշխոթ», ինչպես նաև՝ Իզերլինի հոգեկան ու բարոյական որոնումները:

Այնուամենայնիվ, կլոդը կարողանում է իր մեջ ուժ գտնել և հաղթահարել բոլոր դժվարությունները: Լավատեսությունն, ի դեպ, զերիշխում է Ջեյթունցյանի գրքում բոլոր ստեղծագործություններում: Նա վերադառնում է Թյունիկից՝ կատարելու համար իր պարտքը մարդկության հանդեպ:

«Ես վերադառնում եմ երկրի, վերադառնում եմ քսաներորդ դար: Ինձ հեն է նաև կինս, - ասում է կլոդ Ռոբերտ Իզերլին, -...Մենք պիտի աշխատենք և վատասկենք մեր համապագայի հաջը: Մենք պիտի վարենք մեր հողամասը և աճեցնենք սլովդոդը, դդուր և կարտոֆիլ»:

Պեճ Ջեյթունցյանի «կլոդ Ռոբերտ Իզերլին» տպագրվեց հինգ անգամ՝ հայերեն, լիտվերեն, բուլղարերեն, ներկա անգամ ռուսերեն, բարձր գնահատվեց երթմանի միությունական մամուլում, սակայն, չնայած այս ամենին, հայ քննադատների կողմից առժամանակ կարծես «անարժագանք» մնաց: «Վեպը, որի մասին գրում եմ, տարօրինակ ճակատագիր ունի,- իր գրախոսականում գրում է Ար. Գրիգորյանը, -... Ես անդադառնում եմ այս

վեպին, որի գրական ճակատագիրն ինչ որ տե նույնիսկ անհանգստության տեղիք է տալիս... Սե բարդ ստեղծագործություն է և իր այդ բարդության մեջ մի փոքր անստույգ, հետաքրքիր իր գեղարվեստապատրուկությամբ, գրական մտածողությամբ, և առաջին հայացքից կարող է դասական ավանդներին հենու թվալ: Բայց դա թվում է միայն, որովհետև Ջեյթունցյանի վեպը, անկասկած, հիմքում կապված է ոչ միայն արդի, այլև «հին և բարի»՝ ռեալիզմի դասական ավանդների հետ»:

Վեպի շուրջ ստեղծված «յություն» պատճառի հետզհետե կարծես դառնում է պարզ: Ս.Սարյանի հեն երկխոսության մեջ, անդադառնալով հայ վեպի ներկա վիճակին, նրանում համարմարդկային ու համաշխարհային բնկման պոռթման, Հր.Մարթոսյանը այս համատեքստում հատկապես ընդգծում է Պեճ Ջեյթունցյանի դերը իբրև «ամենամանրգրական արժակագիր»:

«Պեճ Ջեյթունցյանը ոչ դիվետան է, ոչ էլ մանավանդ նմանարկող,- ասում է Հր. Մարթոսյանը,- իր սերնդի մեջ Ջեյթունցյանը թեևս ամենամանրգրական արժակագիրն է, բայց նրա «կլոդ Ռոբերտ Իզերլին» ստիկիզացիա է այն պարզ պատճառով, որ վերջավաճ իրականությունը հեղինակին ներկայացել է կենսական դժվարություններից զրկված վիճակում: Այդ իրականության մեջ արդեն չի եղել այն երկրորդական - անհրաժեշտը, այն ավելորդը, այն անտեղին, ինչը գուցե չներմուծվեր էլ վեպ, բայց հեղինակի մեջ ուղնուծում էր լինելու»:

Ս.Սարյանի հայ կարծիքով կլոդ Իզերլինի պոռթմանը, որը համաշխարհային պոռթմն է և արտագույն է լսողի բայտում 20-րդ դարի կատարատեղիին իրադարձություններին, «նրա էթիկական - փիլիսոփայական մեկնակետը կարող է զբաղեցնել նաև հայ գրողին», բայց, եթե Ջեյթունցյանը «երկի փիլիսոփայական և հոգեբանական նստվածքները շաղխեն հայ ժողովրդի պատմական ճակատագրի փորձով, այսինքն համաշխարհային ու համարարդկային բնկման ազգային հոգեբանությամբ մեջ, թերևս չէր լինի այն խզումը, որ առկա է ձևի պայմանականության և մտադրույթի գեղարվեստական լուծման մեջ»:

Այս պարագայում, սակայն (հայ գրականության մտադրույթի մեջ համաշխարհային և համարարդկային բնկման դեպքում), մինչույն է, կլիներ նույն խզումը: Այնպես, որ Ջեյթունցյանը իրավացի է վարվել, որ վեպի հոգեբանա - փիլիսոփայական նստվածքները շաղխել է նույն Իզերլինի ճակատագրի փորձով: Հշմարիտ է կատարել Հր. Մարթոսյանը, որ «հայ գրականությունը մտադրույթի այսքան անշեղ իրացման մի այլ երկ չունի: Այս իմաստով «Իզերլինի» կատարելություն է, և ինքսբա էլ տարօրինակ թվա՝ «խզումը» բացահայտվում է հենց այդ կատարելության մեջ: Հեղինակի կամքը սղանում է

² Ար. Գրիգորյան, «Երեք տարով ուշգանձ գրախոսություն», Գրական ընդ. N 37, 1970թ

անդո-անկարող տարածության միջով և վայրէջք է կատարում ժիշտ այնտեղ, ուր նախանշվել էր հնգիւնակը⁵:

Մեծծնով տեղայնացված չափանիշները և գրականության նորարարությունը դիտելով «սամազայինի և համաշխարհայինի բեկման խաչմերուկում», Պերժ Ձեյթունցյանը իրավացիորեն հավաքվում է իր ընդմիտխոսներին. «...Երկու գործերում էլ («Լյուդ Ռոբերտ Իգերիլ», «Ամենատխոր մարդը» Ա.Դ.) ինձ չի հետաքրքրել գործողության վայրը, աշխարհագրական ու պատմական ճշգրտությունը»⁶:

Մի խոսքով, Ձեյթունցյանին այս վեպերում հետաքրքրել է համաշխարհարային աստվածգույն տիեզի ունեցող մայրկային նոր հարաբերությունները, մարդու հոգեբանա-փիլիսոփայական մեկնակետը «համաշխարհային խաչմերուկներում», որով և վիպասանը մի ուրույն վարդապետությանը տվել է անհատի, անհատի ամբողջականության և ամբողջականությունից ազատագրման, հասարակության հանդեպ պատասխանատվության պրոբլեմի գեղագիտական պատասխանը և Հր. Մաթևոսյանի խոսքերով Ձեյթունցյանի «Լյուդ Ռոբերտ Իգերիլ» վեպը «խմացուլիքների շրջեր» է, ինչը որ վերաճում է ոճավորման: Հեղինակն ասերնդիստ բերում է իր իմացածը: Հեղինակն ամեն ինչ գիտի: Հեղինակը միայն չգիտի, թե ինչ չգիտի և չիմացած այդ ինչն էր յուրացրել, հաղթահարել, ճանաչել փորձելով⁷:

«Լյուդ Ռոբերտ Իգերիլ» վեպի հետ բազմաթիվ կողմերով կապված է «Ամենատխոր մարդը» վիպակը: Թե Լյուդ Ռոբերտ Իգերիլն, թե այս վիպակի հերոս Ռոբերտ Ստրատուդը միևնույն ճակատագրի յուրովի խտացումներն են. ինքնազենման միջոցով ինքնաճանաչման հասած անհատ, անհատ և հասարակություն, հասարակության ճնշում և ընդդեմ դրա անհատական պայքար՝ հանուն սեփական «նա»-ի գոյատևման...: Երկու վեպերում էլ պատմավավերագրական հարուստ նյութ ունեցող Ձեյթունցյանն, ըստ ամենայնի, գիտակցաբար խուսափում է «ծայրահեղ հավաստիությունից»։ «Իրական են թե հերոսը՝ Ռոբերտ Ստրատուդը, թե նրա շուրջը կատարվող բոլոր դեպքերը, վիպակի յուրովի մուտքում գրում է Ձեյթունցյանը և շարունակում,- Հեղինակն սկզբում այնքան հավատարիմ մնաց փաստին, որ վավերականությունը դադարեց հավատ ներշնչելուց և դարձավ հեքիաթ: Այդ ժամանակ հեղինակը դիմեց հակառակ քայլին, գրեց ժամանակակից հեքիաթ»⁸:

Ինչպես նախորդ վեպում, այնպես էլ այստեղ նկարագրությունը պայմանավան է և այդ պայմանավանի ու իրականի միաձուլմանը էլ որոշվում է ստեղծագործության ինքնատիպությունը: Վիպակում որքան պայմանավան են ամոլիկից հազած տասներկու տասնամյակի, թագավորը, մտապատկերները և այլոր, նույնքան իրական և թնական է Ստրատուդի և Գեռայի անկեղծ գրույզը, Ստրատուդի ապրումները և այլն: Վիպակի սկզբի էջերից էլ արդեն ակամա զգացվում է դեպքերի մոտարուտ ողբերգական ընթացքը:

Ստրատուդ, որ կյանքում ինքն էր անընդհատ պաշտպանության կարիք զգացել, այժմ պետք է կռիվ Տդամարդ ծնծողի հետ սիրած աղջկանը՝ Գեռային անպատվությունից տրվելու համար: «Ես խնդրում եմ... ինձ մի կործանիր...» առում է Ստրատուդը,- մեկ է, ես այդ փողերը պիտի վերցնեմ... մեղալսեմ և էլ... դու հո չես կտակաձում, որ վերցնելու եմ... Ես ուրիշ ճար չունեմ... Ուզում ես, ես քեզ հետո փող տամ... կրկնապատկիչ տամ... Ձիքի աշխատեմ քեզ մոտ... Ձմեռվա համար փայտ ջարդեն... Բայց փողերը տուր»։ Հոգեբանորեն խորն է կատուցված այս երկխոսությունը, երկու յուրահատուկ բնավորությունների անխուսափելի բախումը, մի կողմում «երջանկության» ձգտող և այդ պատճառով իր սիրեցյալին ու իրեն անարգողի առջև աղաչանքով նվաստացող Ստրատուդ, մյուս կողմում իր ուժով հոխորտացող ու արհամարհուտ պահվածքով դիմացինին նվաստացնող հակառակորդ: Վիճաբանություն վերցնում, երբ Տդամարդ ծնծողը արդեն կարող էր խնդրել իրեն, Ստրատուդը, այլընտրանք չունենալով, ատորճանակի կրակոցով սպառնում է նրան. «Ես կարկնեց ոչ փայտ սպրելու քնազրից, այլ ես բախի համար, որ իրեն ստիպել էին նվաստանալ»։ Նա, որ ամբողջ կյանքում էր նվաստացել: Բայց նվաստացել էր անցիտակցորեն, աննկատ: Իսկ հիմա՝ իր աչքերի առաջ»:

Եթե նախորդ վեպի հերոսը՝ Իգերիլն հասարակության կողմից մեղադրվում էր «մեղքի կոմպլեքսով» տառապելու» մեջ, ապա Ստրատուդի մոտ հայտնաբերվում է «անկատարելության կոմպլեքս»։ Ստրատուդն մեղադրողներն իրենց զարմանք են հայտնում, որ անգրագետ լինելով հանդերձ՝ մեղադրյալը գնացել է ազնվության. «Անգրագետ լինել և ազնվություն գործել,- վերավորվեց Առաջին առնեսնալը, և այդ նորությունը խորապես ցնցեց նրան:- Օհո, դա արդեն հանգստություն է: Այդ դեպքում նրա ազնվությունը բացատրվում է անկատարելության կոմպլեքսով»։ Ստրատուդ, սակայն իր արարքի մեջ մեղաագործություն չի տեսնում, հետևաբար և չի գտնում ապաշխարանքի կարիք:

Բայ Ստրատուդը դատապարտվում է մահապատժի, այնուհետև՝ ցմահ բանտարկության: Եվ ինչպես վավերականությունն է փաստում, նա նրբոր չի տեսել ինքնաթիռ, երբեք չի նստել մեքենայի դղիկին, փողոցները, որով անցել է նա ժամանակի, լուսավեր չունեին դեռ: Բանտը տառաջիորեն ներծծել է նրա

⁵ Երկխոսություն», Գրական թերթ, 1974 թ. N 19

⁶ Գ. Ձեյթունցյան, Սրբու, թե հաշտեցում: Չափանիշ: Պարուն, 1968, N 8

⁷ Երկխոսություն», Գրական թերթ, 1974 թ. N 19

⁸ Պերժ Ձեյթունցյան, կատակերգություն ամանց մասնակիցներին, Երևան, 1975

գոյությունը: Բանի-բանի տարիներն է անցկացրել մենավոր բանտախցում: Ավելի, քան որևէ մեկը 20-րդ դարի ամբողջ պատմության մեջ: Նա կյանքում երբեք հեռուստացույց չի տեսել:

Բայց Ստրաուզը, թեև բանտարկվում է, սակայն, այնուամենայնիվ, նա մեկուսացված չէ արտաքին աշխարհից: Հոգին բզկտող իր միայնակությանը հաղթելու համար Ստրաուզը ստեղծում է մտապատկերներ, որոնց հետ զրուցելով՝ յուրովի վերացնում է բանտ-արտաքին աշխարհի մեջը: Մտապատկերներում հերթով նրան այցի են գալիս տնային խալաթն ու մաշիկները հազած մայրը, ուրիշի հետ ամուսնացած և Ստրաուզին արդեն մոռացած Գեան, Տգամարդ Ծնծողը:

Երբորդ դասարանի կրթություն ունեցող Ստրաուզը իր վերջին ցանկությամբ բանտում գիրք կարդալու թույլտվություն է խնդրում: Բանտային իրավիճակում նրան ընձեռնում է ստեղծագործակա՛ն աշխատանքի հնարավորություն, որի միջոցով Ստրաուզը ձգտում է հասնել ներքին ազատության: Այդ հնարավորության շնորհիվ ի չիք են դառնում իր խուցի նմոց պատերի, ազատ-անազատ մինչև այդ գերիշխող պայմանավանդությունների սափմանը: Բանտի չորս պատերի մեջ կիսագրագետ Ստրաուզը դառնում է աշխարհափոշակ գիտնական: Հայտնագործելու իրավունքը նրան «դարձնում է» ամենաազատ մարդ: Բայց և ամենաուղիղ:

Ձեյթունցանիսն այստեղ հաջողվում է հասնել իր գնդապետական իդեալի գագաթնակետին՝ կերտել նման յուրօրինակ իրադրություն. բանտային պայմաններում ազատություն և ազատության պայմաններում՝ ազատագրվելություն: Միմյանց հակադիր կողմերում կանգնած են Ստրաուզն ու թագավորը, նրկու վարպետներն կերտված կերպարներ, որոնց հակադրությունտակալին ստեղծվել էր նրանց ծննդյան պահից: Նրանք տարեկիցներ են և ծննդյան նույն օրն էլ որոշվել էր նրանց ճակատագրերը. մեկը դարձել էր հաճաքագործ, մյուսը՝ թագավոր: Առավելությունը, սակայն Ստրաուզի կողմն է, քանզի, թեև կալանավոր է, բայց ունի սավառնող մտքի և մտածողության ազատություն, մինչդեռ իր հակոթման՝ թագավորը, որ անասնամանկակ հնարավորությունների տեր է, այսուհանդերձ, միաժամանակ կաղապարված է իր հնարավորությունների և ազատության մեջ, գերին է իր իսկ հռչակած օրենքների: Նա, որ մինչ խոր ծերություն անվերջ ապրելու համար հրապարակվել էր մանիֆեստ իր մահից հետո միապետությունը վերանայու և նրկիրը հանրապետություն դառնալու մասին (ինչի շնորհիվ անսպասելի ձեռք բերեց մեծ ժողովրդավարություն), որ սկսել էր զբաղվել փիլիսոփայությամբ և արվեստներով («նրովիներև հասկացավ, որ ամենահեշտ և ամենամառնչելի

զբաղմունքը դա է»), հանկարծ ամեն ինչ տակնուվրա է լինում, երբ առնում է Ստրաուզ-գիտնականի բանտում գտնվելու լուրը, խախտվում է հոգեկան անդորրը: «Միայն նա գլխի ընկավ այդ հարցի ամբողջ խորությունն ու լուրջ վտանգը: Ռոպինտն այդ վտանգն ամենից առաջ ուղղված էր հենց իր դեմ»: «Գիտնական: Բանտում: Հորս պատերի մեջ», - միաժամանակ զարմանում ու գայառնում է թագավորը Առաջին մինիստրի գեներալից:

-Ուրեմն, ինչ է դուրս գալիս, Առաջին մինիստր,- էլ ավելի մտալվեց թագավորը:- Դուրս է գալիս, որ նա... ազատ է:

-Նա ինքն է գտել իր ազատությունը: Ինքն է ձեռք բերել: Անկախ ձեռ օրենքներից ու վճիռներից», - լինում է պատասխանը:

Թագավորն անմիջապես հրամայում է ոչնչացնել Ստրաուզին: «Այնպես, որ հետքն անգամ չմնա: Միայն այդ ձևով կարելի է նրա ազատությունը խլել»: Սակայն նա նույնիսկ այնքան ազատություն չունի, որ սպանել տա կամ ազատի Ստրաուզին. Թագավորին թվում է, թե վերջապես գտել է ելքը Ստրաուզը պետք է մտնի իր բնական մահով, ինչի համար բավական է խլել նրանից թռչունները: Սակայն այս փորձն էլ է անցնում ապարդյուն: Վերջում թագավորը որոշում է ազատ արձակել ծերունի Ստրաուզին: Այս քայլը թագավորին թվում է չափազանց խոհեմ, քանի որ համոզված էր, թե կալանավորը ազատ, նոր պայմաններում արդեն կոլաբարի ինքը լինելուց:

Ներմուտն հաճաճախումբը, անկախ իր որոշումից, պետք է նախորդ իմանա, որ եթե կալանավորին հանկարծ ներում շնորհվի, բանտից դուրս ինչ կանի արդյոք: Տեսնենք պարտառա նա ազատության, Ստրաուզ:

Ես կկազմակերպեմ գիտական լաբորատորիա, - հանգիստ և գործնական պատասխանեց կալանավոր Ստրաուզը,- իր տնակի մեջ՝ ուսումնական և գիտահետազոտական մի ինստիտուտ, որ կզբաղվի թռչունների գենետիկայի, հոգեբանության, պաթոլոգիայի և թերապիայի հարցերով:

Այնուհետև՝ երազելով շարունակում է աշխարհափոշակ գիտնականը. «Մենք ապրելու ենք փոքր քաղաքի ծայրամասում... Ինձ կոչվել են քաղաքի ամենաձայնի տան բնակիչը... Մենք պիտի աշխատենք և վատաշխենք մեր հանապազայիս հացը... Մենք պիտի վարենք մեր հողանաւը և աճեցնենք պտիդոր, դրում և կարտոֆիլ...»: Ստրաուզը-թագավոր հակադրության շարունակություն է Ստրաուզ-բանտապետ հարաբերությունը: Մարդկային քաղաքակրթությունից դուրս, իր ինտելեկտուալ ազատության մեջ գտնվող Ստրաուզին բանտապետը ամեն գնով փորձում է ընտելացնել սովորական կյանքի կանոններին և ամեն անգամ մեծ ցավ է գգում, տեսնելով իր անգործությունը Ստրաուզի նվաճած ազատությունը խլելու, նրա անկախում հնարավորությունները սահմանափակելու հարցում:

Սակայն բանտապնուր, որ վնասում կարծես Ստրաուդի ներկություն մի յուրվի կողմի կրողն է, վերջնապես խոստովանում է, որ ոչ մի պատ ու պատենշ, ոչ մի բանտային ամենադժոխային պայման մարդուն չի կարող գրկել իր իսկ նվաճած ազատությունից, և ստիպված ստում է. «Ես սովորական բանտապնուր եմ... Ի՞նձ սովորական կալանավոր տվե՛ր...»:

Վիպակի վերջում Ջեյթունցյանը նրկատում է Ստրաուդին: Բոլորովին օտար են իրար ծնր և նրիտասարդ Ստրաուդները և պատճառն էլ այստեղ տարիքային տարբերությունը չէ: Եթե նրիտասարդ Ստրաուդը իր մտապատկերներում ունի կյանքի բնական ընթացքը, ապա արդեն վաղուց բանտային կյանքին հարմարված ծնր Ստրաուդի համար ամենայնիվ հարկը չէ պարզկված ազատությունը: Եվ Ջեյթունցյանը նրանց նրկխոսության միջոցով լիարժեք բացահայտում է նրկու Ստրաուդներից յուրաքանչյուրին սահմանված կյանքի հաշվենշիոր, ուր բարոյական հաղթանակի իրավունքը իրեն է վերապահում ծնր Ստրաուդը. «Դու հաղթել ես ինձ, Ստրաուդ,- նուանդով սկսեց ապացուցել պատանին:- Ես ընդունում եմ, որ հաղթել ես: Գիտես որն է մեր տարբերությունը: Ես ազատ էի: Իսկ դու նվաճել ես ազատությունը»:

Ահա, այսպես, ըստ էության, տարբեր ճանապարհներով սովորական մահկանացուին հատուկ լսողող ու անվրդով կյանքի են ձգտում Ջեյթունցյանական հերոսները, նրանցից յուրաքանչյուրը փորձելով գտնել իր »նե«-ը: «Ժամանակի նրկու նշանավոր մարդիկ (Կլոդ Ռոբերտ Իզերլի և Բոր Ստրաուդ՝ Ա.Լ.), որոնք այդպիսի ճանաչման հասել են հակադիր ուղղություներով,-վերոհիշյալ նրկու վնասերի գլխավոր հերոսների մասին գրում է գրականագետ Վ.Սաֆարյանը,- այժմ նույնացել են մի կարևոր ընդհանրության հողի վրա, հեռու ամեն տեսակ ատումային ժամբից ու թռչնագիտությունից: Նրանք նղել են կատակերգության ամենատխուր մարդիկ, այժմ նրագում են ապրել ինչպես ամենասովորական մահկանացուն, դառնալ պարզապես «բաղաքի ամենածայրի տան բնակիչը» և ոչինչ ավելին: Նրանցից յուրաքանչյուրը ծվատվել է՝ «ինքն իրենից դուրս» մարդ լինելով և այժմ փորձում է դառնալ «մարդ ինքն իր մեջ», նաև «ինքն իր համար»⁹:

В данной статье подвергается краткому анализу романы Перча Зейтунцяна "Клод Роберт Изерли" и "Самый грустный человек", в которых романист соединяв исторические факты и реальные документы с фантастикой и условностью, мастерски изобразил художественную хронику двух трагедий XX века.

Պատմության բացահայտումն ու կերպարային մարմնավորումը Պ.Ջեյթունցյանի արձակում

Ա. Լ. Ղուկասյան

Ամփոփում

Համառոտ վերլուծության ենթարկելով Պ.Ջեյթունցյանի նրկու վնասերը՝ «Կլոդ Ռոբերտ Իզերլի» և «Բոր Ստրաուդ», փորձել ենք տալ դրանց գեղագիտական գնահատականը, որտեղ վիպասանը վարպետորեն իրար է միահյուսել պատմական փաստերն ու իրական դեպքերը ֆանտաստիկայի և պայմանականի հետ:

Выявление и образное воплощение истории в творчестве П.Зейтунцяна

Гулян А.К.

Резюме

⁹ Սովետական գրականություն, 1975 թ., N 8, էջ 167

ԱՐՅԱՆ, ԽԱՇԵՆ(Բ), ՂԱՐԱՐԱՐ
ՎԱՐՈՒՄԱՆԱՐԿԱԳՐԱԿԱՆ
ԱՆՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱԿՅՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐԸ

Ժ. Ռ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հայ դասական մատենագրության աղբյուրներում, որքան թույլ են տալիս ուսումնասիրությունները, Արցախ (ավելի ճիշտ՝ Արծախ կամ Արդախ) անվանվում է Հայոց Արեւելից կողմանց (Հայոց Աղվանքի) միայն մի տեղաշրջանը: Ավելի ուշ շրջանի հեղինակները, հատկապես Մ. Կաղանկատվացին, նույնիսկ հստակ գատորոշում են «Արցախ» եւ «Աղվանք» տեղանունները, սակայն առանց որեւէ մանրամասնությունների: Հաճախեցին է, որ այդ կարիքն այնքան էլ չի զգացվել. միջնադարյան հեղինակներին հասկանալի է եղել, որ Արցախը Աղվանքի՝ Հայոց Արեւելից կողմանց մի մասն է, երբեք՝ գավառ, ուստի, նրանք բավարարվել են այդքանով:

Այդ դեպքում, սակայն, ինչու՞ են նրանք տարբերակել *Արցախը* եւ *Աղվանքը*: Երեւի նման ընկալումը ծագել է մարգապանական Հայաստանի վարչատարածքային բաժանման տրամաբանությամբ: Բացառված չէ, որ 428 թ. Հայաստանում Արշակունիների թագավորության անկումից հետո Աղվանքը (կողմանք Արեւելից Հայոց աշխարհի) բաժանվել է երկու մասի. նահանգի լեռնային շրջանները, թվում է, Մյունիքի հետ միասին մտնել են, պայմանավանդորեն ասենք, Արարատյան, իսկ հարթավայրային գավառները՝ Աղվանքի մարզաբնության կազմի մեջ:

Ուստի, երբ հայ պատմիչները նշում են *Աղվանք* եւ *Արցախ* անվանումները միաժամանակ, նկատի են ունենում վարչական՝ վերը ենթադրված բաժանումը:

5-րդ դարի հեղինակները (Բյուզանդ, Եղիշե) այն նշում են «Արծախ» ձեռով, իսկ «Արցախ» գրությունն ավելի ուշ շրջանի (երեւի՝ սկսած Կաղանկատվացուց) երևույթ է: Նշվում է նաեւ տեղաշրջանի մեկ այլ անվանում՝ «Արդախ»: Թվում է, որ այս վերջինս ավելի ճիշտ է. եթե համեմատենք, որ ժամանակակից պատմագրությունը, նկատի ունենալով ուրարտական սեւազգրծը, ընդունում է, թե երկրամասը նախապես կրել է «Ուրդիլսենե» անունը, ապա այս պարագայում «Արդախ»-ը խիստ նմանվում է ուրարտերեն հնչարտաբերմանը: Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» աշխատության մեջ կա «թախ»¹ արմատի հետնյալ ստուգաբանությունը. «պարսկերեն, հնդկական խոշոր արմավենի», իսկ այնուհետեւ՝ «պատահական նմանություն ունի պարսկերեն *ta*» բառի հետ, որ նշանակում է անպտուղ լեռնային մի ծառ, որի փայտը ընտիր վառելիք է»:

Նույն տեղում Հր. Աճառյանը, ստուգաբանելով «թախ» բառը, վերջինիս ավելի ճիշտ ձեռ է համարում «դիսկի» արտաբերումը՝ առանց, սակայն, մեկնաբանության:

«Նարարվոր է՝ վերաբերյալ» թախ« արմատ ստուգաբանելիս Աճառյանը «պատահական նմանություն ունի պարսկերեն *tax* բառի հետ, որ նշանակում է անպտուղ լեռնային ծառ. «ենթադրությունն անում է դիպվածաբար: Եվ շատ հավանական է, որ «թախ»-ը հինգ նույն «թախ» ծառատեսակը նշող բառի արմատն է՝ թախ» կենի«թախակենի«թախի հնչյունափոխական զարգացմամբ: Իսկ եթե ընդունենք, որ ավելի ճիշտ (հավանաբար՝ նախնական) արտաբերմամբ պետք է ասել «լիսկի», ուրեմն, «թախ» արմատի սկզբնաձևն պիտի լինի «դախ»-ը: Այսպիսով՝ «Արցախ» տեղանվան վաղնջական ձեռ կարելի է համարել «Արդախ»-ը, որն, ակնհայտորեն կազմված է երկու «ար» եւ «դախ» բաղադրիչներից: Տեսանք,

1. Հր. Աճառյան «Հայերենի արմատական բառարան», Հ. II, Երևան, 1973թ., էջ 140

որ «դախ»-ը կարող է նշանակել «լեռնային անպտուղ ծառ, որի փայտը հրաշալի վառելիք է»: Կարելի է ներկայացնել, որ «դախ» (հետագայում՝ ձախ, ցախ) արմատն ընդհանրապես պարունակել է «անտառ» իմաստը: Նման ենթադրության համար իմիք կարել է հանդիսանալ երկու նկատառում.

ա. Արցախ տեղանվան հատուկ հայ պատմիչները բնութագրական են համարել նրա պիայն զփվարանալիությունը, այլ ինչ անտառներով հարուստ լինելը՝ «թանձրամայրի»: Թվում է, թե այս բնութագրումը՝ «թանձրամայրի», ունի նաեւ Արցախ բառի բացատրության արժեք:

բ. Ժողովրդական ստուգաբանությամբ Արցախը համարվում է հայոց Արա Գեղեցիկ թագավորի անտառ՝ Ար(ա) + ցախ: Բացառված չէ, որ այս մեկնությունն ավանդաբար փոխանցվել է հստակ է մինչև մեր օրերը: Այս բացատրությունը հնարավոր է ընդունել նաեւ այլ տարբերակով՝ ավանդաբար կողմանք Արեւելից Հայոց աշխարհի ընդհանուր տարածքը համարվում է առաջավելական Առանի տիրույթ: Այդպես է ներկայացնում խորհրդային Հնուագա դարերի պատմագրությունը նույն ընդհանուր տարածքի մի մասն անվանում է «Դաշուն Առանա»՝ Առանի դաշտ կամ՝ Աղուանք՝ Աղվանք:

Այս տրամաբանությամբ նահանգի լեռնային (անտառալիկ) տարածքն էլ կարող էր անվանվել իբրեւ Առանի անտառ՝ Առան (ա) + դախ (ձախ) < ցախ. Հայերենում ա ձայնավորից հետո *z* < *p* հնչյունափոխությունը բավական տարածված է Օրինակ՝ Աճառյանի «Հայերենի արմատական բառարան»-ում «արալեզ»-ի սկզբնական ձեռ է համարվում՝ առլեզ«-ը: Շատ հաղթանակներ է, որ Առանադախ բաղադրյալն մեջ էլ տեղի ունեցած լինի հնչյունափոխություն՝ »Արդախ« բառի

արտասանության բարեհնչյան գերակայությամբ: Նույն կերպ էլ, թերևս, Դաշտն Առանայ հարադրության առաջին մասը դուրս է մնացել գործածությունից. իսկ երկրորդը, հնչյունափոխության ենթարկվելով, դարձել Աղուանք:

«Նետուբար» կողմանք Արևելից Հայոց աշխարհի ընդհանուր տարածքը վաղնջական ժամանակներից ընկալվել է երկու բնութագրիչներով՝ անտառու մասն ու դաշտային: Առաջինն անվանվել է Առանի անտառ<Արդախ<Արցախ, երկրորդը՝ Աղուանք, ուշ միջնադարում՝ Արան:

Ծանոթություն. Մարտակերտի շրջանի վանք գյուղի շրջակայքում, որտեղ տեղորոշվում է հոխանաբերդը, ինչպես նաև Դարպասներ իշխանական նստավայրը, հայտնի է Աթախ հնավայրը, որը, թվում է, Արդախ-ի ժողովրդական անվանումն է:

Միջնադարյան հայ պատմագրության մեջ կողմանք Արևելից Հայոց աշխարհի ընդհանուր տարածքի լեռնային շրջանները նշվում են խաչեն (ք) կամ «կողմն խաչենոյ» անվանմամբ: Նոր դարաշրջանի պատմագրությունը նաև տարբերակում է Ներքին և վերին խաչեն վարչաշխարհագրական անվանումները:

Իսկ ինչու՞ Ներքին և վերին խաչեն: Եթե անվանումը կապ ունի խաչեն գետի հետ, ապա Ներքին և վերին բաժանումները պետք է որ կատարվին հենց դրա հովտի նկատմամբ, մինչդեռ իրականում դա այդպես չէ. Ներքին խաչենը ուշ միջնադարի խաչենի մեկիության տարածքին է համապատասխանում. վերին Հայքերի իշխանությանը:

Շատ հետաքրքիր է, որ խաչեն՝ նույնպես նշանակում է անտառ: «Հայերեն արմատական բառարան»-ի ստուգաբանությամբ «խաչ»՝ նշանակում է ոչ միայն փայտ, այլև ծառ, կոճղ, ուտի, խաչենը կարելի է բացատրել խաչ+են, այսինքն՝ ծառերով հարուստ:

2. Հր. Աճառյան «Հայերենի արմատական բառարան», Հ. II, Երևան, 1971թ., էջ 293

Ահա, թերևս, Ներքին և վերին խաչեն բաժանումների իմաստը դառնում է հասկանալի. ուշ շրջանի ֆեոդալական մասնատումների հետևանքով բուն Արդախ (Արծախ<Արցախ) լեռնային-անտառալիտ (թանձրամայրի) տարածքը բաժանվել է Առանշահիկ (Առանից սերված) իշխանների երկու ճյուղերի միջև՝ եւ, աստիճանաբար, կորցնելով միասնական անվանումը, կոչվել Ներքին և վերին խաչեն:

Ուշ միջնադարում կողմանք Արևելից Հայոց աշխարհի նահանգն անվանվել է Ղարաբաղ: Պարզազույն բացատրությամբ դա նշանակում է Սև

այգի (անտառ): Ուսումնասիրողներից ոմանք (Զ. Ոլութբաբյան, հատկապես), Ղարաբաղ անվանման առաջին բաղադրիչը հավկած են բացատրել «սևն» իմաստով՝ իշխով պարսկերենին:

Եթե համարենք, որ սա ճիշտ մեկնաբանություն է, կարելի է եզրակացնել, որ օտար նվաճողները դարձյալ հայերեն անվանումը թարգմանել են: Եվ Արդախ (Արծախ<Արցախ), եւ խաչեն(ք) տեղանուններն, ինչպես ապացի վերնում, ունեն նույն անտառ բնութագրիչը, որը Ղարաբաղ օտար անվանմանն է փոխանցվել իմաստային առումով:

Հավանական է, որ տեղաշրջանի անվանման հետագա ստորակարգումը Դաշտային եւ Լեռնային Ղարաբաղ, նույնպես պայմանավորված է նրանով, որ վաղնջական ժամանակներից սկսած այն, իրար երկու անվանում է ունեցել՝ Առանի անտառ < Արցախ (Արծախ<Արցախ) եւ Դաշտն Առանայ < Աղուանք < Արան:

**О взаимосвязанности административно-географических топонимов Арцах, Хачен и Карабах
Женя Ромасевна ПОГОСЯН
РЕЗЮМЕ**

Статья "О взаимосвязанности административно-географических топонимов "Арцах", "Хачен" и "Карабах" имеет целью идентификацию упомянутых топонимов на основе этимологического сопоставления морфем "дах", "хач", "баг(х)", которые означают одно и то же – дерево(лес). Вывод: тюркоязычный топоним "Карабах" является простым переводом с армянского.

Ազգագրություն և բանահյուսություն Արցախյան ժողովրդական խաղիկները և նրանց լեզվական արժեքները

Ա. Յու. Մարգարյան

Հոգվածում վերնոմվում են արցախյան ժողովրդական խաղիկների գաղափարական բովանդակությունը և լեզվական արվեստը: Բոլոր դեպքերի համար բերվում են համապատասխան օրինակներ:

Արցախյան բանահյուսությունը շուրջ 150 տարվա պատմություն ունի, և այդ պատմության ընթացքում հավաքագրված ժողովրդական տարբեր ժանրերի ստեղծագործությունների մեջ իրենց ուրույն տեղն ունեն ժողովրդական խաղիկները:

Ժողովրդական խաղիկների գրառումը սկսվում է բանահյուսական մյուս ժանրերի նմուշների գրառմանը զուգընթաց: Այս բնագավառում առաջին փորձերը կատարում են հայ մշակույթի պատմության նրախտավորներ Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բախաթյանները, որոնք 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին Շուշի քաղաքում տեղի և հարևան գյուղերի բնակիչներից հեքիաթների, գրույցների, անեկդոտների հետ հավաքագրում են նաև խաղիկներ: Արձագանքելով երիտասարդ բանահավաք-իրատարակիչ Տիգրան Նավասարդյանի կոչին՝ Առաքել Բախաթյանը 1881 թ. նրան է հանձնում այդ գրառումները:

Նավասարդյանի կոչին արձագանքում է նաև Շուշու թմնական դպրոցի չորջանավարտ, Նոր շեն գյուղի ուսուցիչ Միքայել Տեր-Հովհաննիսյանը, որը 1881 թ. փետրվար-մայիս ամիսներին գրի է առնում մի շարք խաղիկներ, մանկական երգեր, անեկդ-օրինակներ, առած-ասածվածքներ, արագախոսություններ, հանելուկներ, երգեր, հեքիաթներ, որոնց մի մասը հրատարակվում է Տ. Նավասարդյանի կողմից, իսկ մնացածը առ այսօր պահվում է նրա ֆոնդում:

Այս չորջանում բանահավաքական լայն գործունեություն են ծավալում նաև Մակար Բաղիսուդարյանը և Կոնստանտին Մելիք-Ճանազարյանը (Տիբլաչի խաչան), որոնք, սակայն, առանձնակի ուշադրություն չեն դարձնում ժողովրդական խաղիկներին:

Բանահավաքական գործի խթանման կարևոր միջոց հանդիսացավ Շուշիում «Ազգագրական հանդես» պարբերականի հիմնադրումը, որտեղ տպագրվեցին զանազան ժանրերի նյութեր, այդ թվում և խաղիկներ:

1895 թ. «Արարատ» ամսագրի էջերում լույս է տեսնում «Ղարաբաղի ջրօրինյաց երգերից» խորագրով մի փունջ, որի հեղինակն էր խաչիկ վոդ-Դադյանը՝ վերին Թաղավարտ գյուղից: Նույն հեղինակը Ա.Դադյանի հետ 1908-1910 թթ

«Ազգագրական հանդեսում» տպագրվում է 1885-1893 թթ «Արարատի» տարբեր գլուխներում գրառած խաղիկներ: Պետք է ասել, որ այս բանահավաքների թագատեղյակ էին բարբառին, ժողովրդի կյանքին ու կենցաղին և իրենց գրառումների վերջում ներկայացրել են նաև բարբառային բացատրություններ և ծանոթագրություններ:

Ի թիվս այլ ժանրերի, ժողովրդական երգեր ու խաղիկներ է գրի առել ծննդով Վարանդայի Նախիջևանիկ գյուղից Մարգիս Խարպույանը, որի մի մասը հրատարակվել է տարբեր ժողովածուներում, իսկ մի մասն էլ անտիպ է:

Արցախյան ժողովրդական խաղիկների հավաքագրման գործում անուրանալի է Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի դերը, որի հավաքագրած նյութը՝ թվով 1804 խաղիկ, տպագրվեց ազգագրության և հնագիտության ինստիտուտի հրատարակված «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» ժողովածուում:

Ժողովրդական երգեր ու խաղիկներ են ընդգրկված նաև «Նմուշներ Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունից» (Ե., 1978 թ., Մ.Առաքելյան, Ռ.Ղահրամանյան), «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (հ. 15, Ե., 1983, Ա.Ղազարյան), «Նշխարներ Արցախի բանահյուսության» (Ե., 1991, Լ.Հարությունյան) ժողովածուներում:

Թվով 28 խաղիկ է գրառել Արտեմ Բաբայանը, որ գետնելված է նրա «Արարատի» բարբառը» անտիպ աշխատության հավելվածում:

Մեր կողմից արձանագրվել է շուրջ 45 խաղիկ, որոնց մի մասը կրում է երգիծական բնույթ: Այսպեսով հանդերձ, պետք է ասել, որ ընդհանուր առմամբ քնարական բանահյուսությունը Արցախյան իրականության մեջ այնքան կ զարգացած չէ և ներկայումս, կարելի է ասել, գտնվում է անհետացման եզրին:

Արցախյան ժողովրդական խաղիկները հիմնականում քառատող լիբիկական երգեր են հորինված հոգեկան տարբեր վիճակների և հասարակական բազմազան երևույթների անմիջական ազդեցության տակ, որոնցից ամեն մեկը արտահայտում է մի ամբողջական միտք. տրամադրություն և ունի հանգավոր և գեղարվեստորեն ավարտուն կառուցվածք:

Դրանց մեծամասնությունը վիճակի երգեր (ջանգլույումներ) են, որոնք ներկայացնում են նրիտասարդ սիրահարների ներքին ապրումները, և որոնք երգվել են համբարձման տոնին վիճակախաղերի ժամանակ:

Ահա թե ինչպես է նկարագրում Մ.Գրիգորյանը այդ գործընթացը.

- Մի օր առաջ աղջիկները ծաղիկներ են քաղում, ծաղիկեմեջեր կազմում, բերում վիճակախաղի համար:

Կապել պոլիկի մեջ աղբյուրներից հավաքած ջուր են ածում, ծաղիկները մեջը դնում: Այնուհետև

տվյալ խմբից ամեն մեկը գաղտնի կերպով որևէ իր է գցում կճուճի մեջ: Դրանք լինում են արծաթե կամ պողպատե մատանիներ, քողոցներ, մատնոց, կոճակ, ուլունք և նման բաներ: Երբեմն իրենց ազապ նղայրների համար էլ են որևէ իր գցում:

...վեց-յոթ տարեկան մի փոքրիկ ու գեղեցիկ աղջկա ճերմակ մետաքսե շոկոն են հագցնում, գլխին ճերմակ շղարշ են գցում ու տանում վիճակախաղի տեղը: Կճուճը դնում են նրա առաջ այնպես, որ նրա ձեռքը հասնի մինչև հատակը, որ կարողանա հանել մեկ-մեկ կճուճի մեջ գցած մանր իրերը:

Սկսում են վիճակախաղի ջանքայնություններ քրքել: Ամենից առաջ խմբովին երգում են ջանքայնությունների սկզբնաձևերը: Մենք երգում է ամենից ավելի լավ ծայն ունեցող աղջիկը: Ամեն մի տողից հետո խումբը երգում է կրկնակ տողերը՝ «Ջան փուլում, ծան, ջան, ջան, ջան ծաղիկ, ջան, ջան»:

Մենք երգ - Իմ ծաղեզգու քաղած ա, Պեզուր
սարեն կ'ըլ'իսմ ա,

Ջան փուլում, ջան, ջան, Ջան
ծաղեզգ, ջան, ջան:

Այս ձևով երգելը շարունակվում է, մինչև հանում են կճուճի միջի վերջին իրը: Ամեն ջանգ'ուլումից հետո ճերմակագեղատ շոկո՞վ աղջիկը, որի երեսը ծածկված է ճերմակ շղարշով, ձեռքը տանում է կճուճի մեջ ու մի որևէ իր հանում: Հանած իրն ու՞մ պատկանում է, ասված ջանգ'ուլումի բովանդակությունն ու Էուլոյունը նրան է վերաբերում, լավ, թե վատ, ուրախ, թե տխուր, ահա թե ինչու աղջիկները սովորաբար երգում են ուրախ բովանդակությամբ երգեր: Ջանգ'ուլումները հիմնականում հորինում են հասպարապետից, հենց տեղն ու տեղը, որոնք անմիջապես մասնայականանում են:

Խմբի շնորհով աղջիկներից կամ հարսներից ոմանք հորինում են իրենց ընկերուհիների կյանքից, իղձերից, մուրազներից, կարոտից, զբաղմունքից, տոնոնական վիճակից, սիրո պատմությունից ելնելով դրանք կապելով ժամանակաշրջանի, տիպիկ կարգերի, ծեսերի, աղաթների, մայրական սիրո, պանդխտության, բռնության, աշխատանքի, բնության, հայրենի օրրանի և այլ հասկացությունների հետ:

Այնուհետև, երբ սպառվում են կճուճի մեջ եղած իրերը, սկսում են խոսել, ծիծաղել, սիրտ տալ և ուրախացնել այն աղջիկներին, որոնց վիճակը վատ է դուրս եկել: Նրանք այդ ընդհանուր ուրախության մեջ շուտով մոռանում են իրեն վիշտը: Վիճակախաղից հետո սկսում է ճաշկերպություն, որին հետևում էին նրաժշտությունն ու պարերը տղաների մասնակցությամբ:

Սակայն նոր երգերի հետ երգում էին նաև հիները, նախօրոք սովորածները: Նույն Մ. Գրիգորյանի

վկայությամբ իրենց թաղի աղջիկներին ջանգ'ուլումներ եր սովորեցնում շուրջից քանասաց Ղումաշ Ավագյանը, որը դրանք հորինում էր՝ համապատասխան այդ աղջիկների ու հարսների սրտի գաղտնիքներին, սոցիալական դրությանը, արտաքին գեղեցկությանը, եղբու ու սրտի ապրումներին ու ձգտումներին:

Բազմաթիվ հին և իրենց կողմից հորինված վիճակի երգեր գիտենիս Նանուկ Արզանգյուլյանը (Թաղավարդ), Թամար Բաղդասարյանը (Ջրակու), Նդան Բաջին (Շեխեր), Ջառլալամ Բաջին (Շուշի), Ջուրբուտ բաջին (Շեխեր), Օսանա բաջին (Շուշիքենդ), Մովսես բաջին (Հաջի), Հերիքյանա բաջին (Հաղուրթի վանք), Մանիշակ բաջին (Հերիք), Մաշինկա բաջին (Շուշի), Մարգարիտ բաջին (Ներքին Սգենք), Մարյան բաջին (Շուշի), Մինա բաջին (Ջանախչի), Արշալույս Մնացականյանը (Շուշի), Նանք բաջին (Շուշի), Ջառլալար Չիկնգարյանը (Շուշի), Մաթենիկ բաջին (Շուշի), Սալի բաջին (Շուշի), Վարսենիկ Սարգսյանը (Շուշի), Սոնա բիբին (Ասկերան), Սոնա հասին (Հաղուրթ), Սոնիշկա բաջին (Շուշի), Հերսելյա Ստեփանյանը (Շուշի), Հոկին Սիսոնյանը (Շուշի), Փեղոն բաջին (Շուշի):

Ինչպես երևում է բանահավաքների ծանոթագրություններից, ջանգ'ուլումներ հորինել են միայն կանայք, քանի որ տղաներին արգելվում էր մասնակցելու վիճակախաղին:

Բազմազան են արցախյան խաղիկներում արձարձված թեմաները՝ սեր, հայրենիք, պանդխտություն, բնություն, սոցիալական խնդիրներ, աշխատանք և այլն:

Արցախյան ժողովրդական խաղիկները գերազանցապես սիրտ երգեր են, որոնք արտահայտում են երիտասարդ աղջիկների ու տղաների, հարս ու փեսաների, երբեմն էլ ամուսինների սիրո գագազմունքն իր տարբեր նրբերանգներով: Դրանցում գտնում ենք սիրային բազմազան մոտիվներ: Մի շարք երգեր նվիրված են յարի գովքին, որ ասվում են աղջկա կամ տղայի կողմից: Գովվում են աղջկա չինար բոյը, ալագյոգ աչքերը, քաղցր լեզուն, շեկ ու թուխ մազերը, ծամերը, շամար ծծերը, հագուստը, քայլվածքը, տղայի բոյն ու բուսաթը, ուժը, բեղերը, քաջությունը:

Էտ վարար վը՛րսկի մազերտ, Ծօվ
աշկերիտ, վարդ պըջըջիտ,
Անի՛ իմ սըրտիս սազը, Տամ սըրտիս
մուխամազը:

Բոյալ-բուսալ Թամար ա, Աշխարիս
հետան յեշի,
Ունքեր կը՛ր կամար ա, Ուրան
յարին համար ա:

Յարըս մին դուր'անդար ա, Բոյալ
բուսաթալ ջիվան,
Օգաձս մինուճար ա, Ինձ սիրող
սիրահար ա:

Մի շարք խաղիկներում արտահատվում է աղջկա բողբոջ ժամանակի սովորությունների և բարքերի հանդեպ:

Աղջիկներին հաճախ ամուսնացնում էին փոքր հասակում՝ արդեն տարիքն առած տղամարդու հետ՝ հաճախ հիմք ընդունելով տղայի հարուստ լինելը և անուսնելով նրա թերությունները:

Յարքս մին քը՛րծ ա տը՛ծալ, Յը՛ս սիրեցի, յաղը տարավ
Յը՛ս հալա մին կու՛ճի խոխա: Բը՛ր ցած տըրեղս դարիք ա

Հավաա ըրեն մալին,
Ախճիճը տըվեն լալին:

Բայց միաժամանակ սներ տարիք չի հարգնում:

Սիրելին մը՛ծ, պուճուր չի կա, Խելունք ա, սրըտը պեց ա:

Ծնողների որոշումը օրենք է աղջիկների համար, սակայն պատահում են նաև համարձակները, որոնք ընդդիմանում են այդ որոշման դեմ՝ գերադասելով աղքատ, բայց սիրած տղային:

Հասիք ա, հա, հասիք ա, Կօզի
ասիք՛, Կօզի վույ, Կօզի
Տօն-տը՛ղ չօճե՛, Բ՛սսիք ա, Է՛ն տըղան
ինձ նասիք ա:

Սովորական մոտիվներին է նաև աղջկա արհամարհանքը առաջարկություն անող տղայի հանդեպ:

Տավարը յը՛կալ շէնը, Ծըլվըլըմ
ա դուշ ծեղը, Զառ
Հարսները ընգին պէնը Զառ
բուլբուլին ճիւղտը, Այ տըղա,
Գ՛ուղում ըս քեր սիլըմ չըմ, Կա
տու ինձ բաբ չըս, Լալ ա
Անց կաց մին պատահ տենը: Էն
ընգընիմ մեր կը՛րտը:

Նման դեպքերում տղան մնում է շվարած և ստիպված հաշտվում է իրավիճակի հետ՝ ողբալով իր վիճակը:

Յը՛ս սիրեցի, առեցիք, կամ Մեր
արտին վը՛սկի խօփ ա, Մը՛րտըս
Բը՛ր ցած տըրեղս դարիք ա, Մը՛րտըս
մըթեն խուրխուսի ա,

Հիշքն քը՛կ գ դաչանք ըրի, Վը՛ննիտ
տակը մի քըցի, Մեթիք, թա օլմազ ա: Սերն ինձ
հեղի սօրի ա:

Միշտ չէ, որ ամուսինները ապրում են հաշտ ու համերաշխ, երբեմն լինում են հիասթափություններ, և երիտասարդ կինը իրեն համարում է հուր-հավիտյան կորած:

Մըրտէս դարդերը խօր ա, Բու անըմըս
Չառվարք ա, Բու
Տօնը ք՛օհնա չի, նօր ա, Թըլերիտ
Էրկու վարք ա, Բիդաղը մարթին ծեղքեն,
վեր սիրածըս Հի՛ն: Կանխ,
Հուր-հավիտյան յը՛ս կօրա: Աշկը շօր,
կօպիտ մարք ա:

Սիրո խաղիկներում սիրված մոտիվներին է նաև յարին տեսնելու, նրա մոտ լինելու, շուտափույթ ամուսնանալու, նրան ծաղիկ կամ խնձոր ուղարկելու, նրա կրծքին հանգչելու, նրա վրայի գարդը դառնալու, հանուն նրա կանքը նվիրաբերելու ցանկության արտահայտությունը:

Հաճախակի են ներկայացվում սիրո վիշտ ու թախիժը, սալդաթ գրված յարի կարտը, ամուսնության խոչնդոտները: Մի քանի խաղիկներում ներկայացվում է առաջին սերը:

Հանըք քեցին հարսերը, Մարթի
մըրտա հունց ընգընի, Թամուզ-թաք՛ուզ վարսերը, Ուրան
առաջի սէրը:

Առանձնակի ճոխությամբ են հանդես գալիս մայրական և որդիական սներ արտահայտող երգերը, որտեղ անփոխարինելի են որդին մոր, իսկ մայրը որդու համար:

Ղարաբաղում ախ չի կա, Մօրը ջահիրը
վերքն ա՞ Անմահիչակ թաղ չի կա, Մօրը ահիրը
վերքն ա՞ Ըշտը՛ղ շօտ կ՛աս, հինջ տը՛սնաս, Մօրան
ազիգ մարթ չի կա, Բալից քաղցր պէն չի կա: Մօրը ահիրը
վերքն ա:

Բազմազան ձևերով արտահայտված սիրո հետ հաճախ ներկայացվում է գյուղական աշխատանքը՝ իր տարբեր տեսակներով, և դա համեմատելի է այդ խաղիկները հիմնականում ասել են գնդգլուխիները, իսկ նրանց սիրածները գյուղական աշխատանքին, հատկապես ներկազդողությամբ նվիրված գեղջուկ երիտասարդներ են, որոնց գովքը

հաճախ գովվում է աշխատանքի գործընթացում հողը վարելիս, հունձ անելիս, թուր թափելիս:

Բողոքը թոյլ թափում, Յն քո
թափի ջանէտ մատաղ, Ընկէ տակէն հոնձ ըս անըմ, Յն քո
կինձաձ արտին մատաղ:

Բայց Կան նաև նրզեր, որոնք աշխատանքի խաղեր են միայն.

Լժովսօզնիկ ա Ղարաբաղը,	Լժովսօզին
քօստանըմը	
Պէնը հունց վէր օրախ խաղը,	Լւանանչ
խիյար, Լւանանչ թաղը:	

Եվ այսպես, ներկայացվում է գութանը, մաճը, հողը, տրամադրող, լճը, գունը, ծին, ցորենը, գարին, փուշը, մացառը, անտառը, թխթը, ծաղիկը, կարկուտը, ձյունը, ցրտը, առուն, բաժն, մանգաղը, խորձը, խաղի ղեկը, ջրադաշտը, ալիգի, կաղաթը, չամսմը, յեմիշը, թոնիթը, իլիկը, մածունը, թանը, կարկ, ծուն, ոսկերիչը, հյուսնը, պարտադրև ալյւն:

Բազմաթիվ խաղիկներում արծարծվում է հայրենիքի թեման: Արցախյան սիրում է իր հայրենիքը, սիրում է նրա քարն ու ծառը, ջուլն ու հողը, իր մանկության վայրերը, անտառները, սարերը, աղբյուրները, այն վայր է դառում ամեն մի ներկից, և ուր էլ լինի՝ հիշում է իր ծննդավայրը:

	Տիգրայական պեղուկ սարը,	Յըս
աշնդը, վարթին թաղը,		
	Մյուն նան կ'երանը բար,	Ծաբխ,
Հիրվան նան շարմազը.		
	Յըս միջնիմ Տիգրայական սարին, Թէլիանը	
ցենյաթ էլ տըռնւն,		
	Չորոքպովութը անտառ ա:	
Մօտանալ չնմ գարաբաղը:		

Մի ստվար շարք են կազմում Շուշի քաղաքին նվիրված նրբերը, որը հեղինակի համար աշխարհի լավագույն քաղաքն է, ահա թե ինչու այնքան կսկիծով է ողբում նրա վիճակը.

Էն պէտքըր Ղալան ա,	Ճըսքք'ած
զ'անքըտ հօր ա՞,	
Զարդա ցօրին կալան ա,	Խօսքմ չըս,
գարդըտ խօր ա,	
Ճինջ քաղաք էլ վեր շօռ կ'աւս,	Էրված,
տիրութկված Շուշին,	
Լօխման յարկ Ղալան ա:	Իմ
սը'տըստ խորած թօր ա:	

Առանձին խաղիկներում հիշատակվում են
Հաղորդը, Մարտակերտը, Բերքը, Թաղավարը,
Քիրսը, Մռավը, Թարթառը, Խաչենագետը,

Անհնար է խոսել արցալայան քնարական բանահյուսության մասին՝ առանց դիտարկելու պանդխտության նրզնրը:

Դարձրե՛ք շարունակ արցախահայությունը բռնել է գաղթի և արանդատության ճանապարհը, և յեթ գաղթի իմնականն պատճառը օտար գաղխիկներ ի կողմից Արցախի նվաճումն էր, ապա արանդատությունը իմնավանդուն արյուղով է սոցիալական կարգերի հետևանքով ստեղծված կենսական ղօվար պայմաններին: Ոգևորված օտար անիքում հարազատալու գաղափարով Արցախցի երիտասարդը լողնում է հարազատ վայրերը և դիմում արանդատության: Սակայն երկար չի տևում այդ ոգևորությունը, և վրա է հասնում հիասթափությունը: Կործանված համարելով իր երիտասարդ կյանքը՝ նա փափանգում է գտնել թաղվել հայրենի հողում իր հարազատներին կողքին:

Վեր մեխնիս, տարեք՝ Շուշում թողն՛ցեք, Դե
ջիհաննամը թա կըկնուղանան քարու,
Ընդդիդ ա ազգի վաթանքս, յարու, Ընդդիդ ա
թաղված հորաքուրքս, քուրքս:

Այլ խաղիկներում հանդես է գալիս պանդուլստի սիրածն, որը մնացել է անտնոյ, շատացել են յարի թշնամիները, սակայն նա չի կորցնում հույսը, մերժում է բոլոր առաջարկողներին՝ երազելով այն պահի, երբ սիրածը կվերադառնա և իր դուրս կթափի:

ա կ'աւան պղպակի,	Քի՛նի, կ'ալ չըմ, կարել չըմ,	Կ'արունք
կըտի՛նի թըռչնակի,	Ղա՛հարած ըմ, կ'ալ չըմ, կարել չըմ,	Պուն
յարըս կըկ'ա,	Տը՛ռ տը՛ղ մին յար օսնիմ,	Հիք կինի
տօնըս կըթակի:	Ուրաշու կ'ալ չըմ, կարել չըմ:	Իմ փակ

Առավել ողբերգական է պանդուխտ որդուն տարինմաշ շարունակ սպառնող մոր վիճակը, որը դնշինն ու հայունաշ է եղել, վառվել ու խամձվել, ինչպես հայրենի Շուշի քաղաքը, սակայն, նրա տառնում է որդու վերադարձի լուրը, աշխարհը անսխիւապես փոխվում է նրա աչքերի տառով, և սև օրերը դառնում են կարմիր՝ յգված եղզ ու խաղով.

Տեյ ավան բալա, տոն յը՛ր,	Բաղ	ըմ
ըրցալ Ղարաբաղ,		
Ճիրաբըտ վառ ա, տոն յը՛ր,	Նախշուն	
աշկեր, վը՛սկէ գաղ,		
Իմ սըրտուր էրված, խանձված,	Ղարիբ	
դուշրս տոն ա ե՛մամ,		

Տը՛ռալ ա Ղալա, տօն յը՛ք:
յը՛քք նան հաղ:

Կ՛արմուր օրէր,

Մարթը խը՛ լթալ հալա իւակ ա: Մարթ
ըլսալը կընգանը ծօցը:

Եվ այսպէս, պանդխտության բոլոր
երգերում այդ երևույթն որակվում է որպէս մեծ
չարիք, որը դարձրեց շարունակ ուղեկցել է ողջ
հայությանը, ահա թե ինչու օտար աղիւնում դնցերող
արցակացին, գգալով իր մտաւայտութիւնը, իր
խորհուրդն է հղում այդ դժամեւ ճանապարհը դնես
չբռնած հայրենակիցներին:

Վախում ըմ, թա շուտ մը՛ննիմ,
Ղարիբօթուն միք՛ քի՛նիլ,
Խոսկէրքս պրտաւ մընա, Ինձանա
ծը՛գ խորատ մընա:

Մի քանի խաղիկում արծարծվել է պատմերազմի
թեման.

Այս սը՛վ ա սրտոյս մէջը, Պիլիմօղը
խաղում ա:

Ես ա տը՛ռալ մէր վերջը,
Փրդիցնէրէն դաղմա՛ւ,
Ջաւիլ տըղօրցը կըրեգմանը,
Դինջացած ժողովուրթը
Տը՛ռալ սըղթօս Կէ՛րչը:

Կ՛օղ

Հիտլէրէն թաղում ա:

Ծանր են պատմերազմի թողած վերքերը,
անտնր են մնացել արտն ու տունը, աղջիկներն ու
կանայք, և հերոսուհին երագում է միմիայն
խալադոթայուն:

Այսձե՛ք, կընձե՛ք, լօխ անմարթ, Մէլակ ըն,
խը՛ղճ ըն բալէ՛ր,

Մընաց անդար տօն նան արտ, Կուկում,
նախշուն լալէ՛ր,

Օր նան քոշէր հօքսին մաչին, Աշխարքս
խաղաղ ինի

Կընանէ՛ր տըղամարթ: Պակաս
չինի հաց նան յը՛րբը:

Կան նան խրատական և
խոհափիլիսոփայական խաղիկներ, որտեղ
ներկայացվում է աշխարհի անցողիկությունը,
մարդկանց ազգամայրոյն, կարճամտութիւնը,
պախարհավորում անբարոյականությունը, չգրված
սուրբ օրենքների ոտնահարումը:

Մարթ միշտ աշկը ծակ ա, Նալը
քըցիմ քըթօցը,

Ամեն օր տուրթթակ ա, Յէր Կինի
զընգզընգօցը,

Մընելիս պէն չի տանել, Յը՛ս
տը՛սալ չըմ, թա նի մըննէ:

Խոսելով ժողովրդական խաղիկների մասին
Արեւիյանը գրում է.

« Ինչ հորինվածք կամ արվեստ կարելի է
ստանալ մի երգից, որ ընդամենը երկու, երեք կամ չորս
տող է, և որի հեղինակը չի էլ մտածել. թե ինքը բան է
հորինում, այլ իբրև մի թռչուն՝ երգել է շրջապատյի կամ
դեպքի ազդեցության տակ: Այս պատճառով
խաղիկների մեծ մասը պարզ և անպաճույճ խոսք ու
խնդիր է:

Սակայն պետք է նշել, որ արցախյան
խաղիկները ունեն գեղարվեստական բազմաթիվ
արժանիքներ: Դրանք բաղկացած են երկու մասից՝
բնության պատկերի և քնարական պատկերի
գույադրումից, որոնցից առաջինը դաժնում է երկրորդի
փոխաբերական արտահայտության միջոցը, ինչպես.

Մէր տըռանը խընձի ծառ, Էս գի՛րափի
քը՛գ մօխար,

Նախշուն բուլբուլ յըրան թառ, Էն գի՛րափի
յը՛ք ինձ տար:

Խաղիկներին առանձին փայլ են հաղորդում
գործածված մակդիրները, որոնք մի կողմից
նկարագրում են հերոսի արտաքինը, մյուս կողմից՝ նրա
հոգեկան ապրումները, ցավն ու վիշտը: Հաճախակի
հանդիպող մակդիրներից են՝ քախքը յար, վը՛նիլ թել,
շօղ կյարտը, սը՛վ սը՛րտ, փիլալա աշկը, թառլան դուշ,
ըրծաթէ բանդէր, կարմնուր օրէր, կամար ծնրէր,
շամամ, կուկում ծը՛նէր, արը՛վ ռանգ՛, սը՛վ-սը՛վ օրէր,
մըթէն սը՛րտ, բուլբուլ լուգու, չինար բօյ:

Հաճախակի են հանդիպում նաև
համամատություններ. Լուգուտ օտիմ, հանց ա դանդ,
Յը՛ս մին կանանչ խըլար ըմ, Յարքս սափարի յա,
Խօսկէրքը շաքարի յա, Կ՛օտկատեղը շիմշատ ա, յարքս
մին քը՛րծ ա, Հանց ա պէցված վարթ:

Իրենց խոսքը արտահայտիչ դարձնելու

համար հերոսները հաճախակի են դիմել
ժողովրդական դարձվածքներին. աշկը շօր, սը՛րտըն ու
թօթը էրիլ, սը՛րտը դարդը՛մ լըքվի՛, տէփը ճըղած դավալ,
դուշը ծեռքան թըջիլ, քը՛րծ տը՛նալ, օրը տարբ ընցնիլ,
սըրէն սաճնի կօտրէլ, դափազա ընցած դուշ, դուշը
կըլտէն թառ անէլ, գի՛ւլը աշըմիշ ինիլ, քըթէն ծօխը յըր
ինիլ, փըթիս մէլմուն, սըրտըմը արը՛վ տուս կ՛ալ, սը՛րտը
սըրտէն մաչին քաւել:

Մի շարք երգերում հանդիպում ենք
անեծքների, որոնք ստվում են և՛ սիրածի, և՛ նրա
ծնողների, և՛ դուշմանի՝ սերը խափանողի հասցեին,
ինչպես. խաղըտ տը՛նալ բայաթի, ագիզտ մը՛ննէ այ
պսձիգ՛, մշկը կօտրի քու մօր, փիս հաճօրը աշկը տուս
կ՛ա, դուշմանին աշկը տուս կ՛ա, Աստուծ պէ՛նքս վէշ
հաճօղա, հու ինձ պըմբատ, նա վէշ խօխա խըրտուէ, հու
իմ սիրածս տա վէշ, կարտս մընա սը՛վ հալի, քօլտ

մա տերտեր, տօսն քանդօղ, տօնըտ քանդօղի, վէշ ընդնէ օխնած վը'ղը:

Անծնծնեղին գուզընթաց գործածվում են փոխանքներն և բարենադաշններ, որոնց հեղինակը հիմնականում նրիտասարդ աղջիկներն ու հարսներն են. մեր տօնը կ'ալիտ մատաղ, մըլլօրած ճընապին մատաղ, քու կարքիտ մատաղ տնեղեր, Մարասը քյզ ք'սմազ' ինի, թօրըս թօրատ տամ, շօխկըտ ախմբակալ վընաքիս և այլն:

Արցախցու խոսքը դժվար է պատկերացնել առանց առած ասացվածքների, որոնք տնը են գտել նաև խաղիկներում. սիրելին մը'ծ ու պուճուր չի կա, զ'անըր մին քախտի խաղ ա, ռատուծին քարալ չըն տալ, կ'արմուր խընծօրեն քարալ տըվօղ շատ կինի, խը'ղծ ք'ափուրը անդար չինի, առանց կընեյ տօնը վըրան ա:

Արցախահայ բարբառը հարուստ է փոխառյալ բառերով, որոնք շտայլորեն գործարծվել են նաև խաղիկներում: Մակայն այստեղ հիմնականում հանդես են գալիս արևելյան լեզուներից փոխառյալ բառերը, մինչդեռ բարբառում այնքան առատ ռուսերեն բառերը հանդիպում են հազվադեպ: Թերևս այն է պատճառը, որ խաղիկների մեծ մասը հորինվել են նախքան ռուսերենի հետ շփումը, մյուս կողմից՝ խաղիկների, ինչպես և ժողովրդական մյուս երգերի լեզուն արևելյանն է, և ռուսերեն բառերը հարիր չեն այդ լեզվին:

Այնուամենայնիվ, արևելյան լեզուներից փոխառյալ բազմաթիվ բառերի հետ գործածվել են ռուսերենից անցած որոշ բառեր, ինչպես կըլուրեյի, զզվտնիկ, սալլաք, սըմակաք, կանփիտ, շագալաք, տըրակտըր:

Ժողովրդական խաղիկների հիմնական ձևը քառատողն է: Հայ բանասիրությանը հատուկ ներկուտ և նուստող խաղիկներն այստեղ չկան: Հստ վանկերի թվի և հանգերի դասավորության՝ խաղիկներն ունեն բազմազանություն: Չորս վանկից քիչ վանկեր ունեցող տողեր հազվադեպ են հանդիպում: Քիչ գործածական են նաև չորս և հինգ վանկանի տողերը, որոնք հանդես են գալիս այլ՝ հատկապես վեց և յոթ վանկանի տողերի հետ.

Հավաս ըրեն մալին (6)	Կըռը'վը
ընգալ ա, (6)	
Այնճիգ'ը տըվեն լալին (7)	Հացը
թընգ'ալ ա, (5)	
Մալը ք'ը'ցալ, (4)	Բըզարին
մէլին (5)	
Այնճիգ'ը մընաց լալին (7)	
Կախաղանը տընգալ ա (7):	

Վեց վանկանի տողերը քառալաներ են կազմում այլ՝ հիմնականում յոթ և ութ վանկանի տողերի հետ, ինչպես նաև առանձին.

Հափը կ'աս, հափը կ'աս, (6)	Նըստըմ
ըմ, քար չի կա, (6)	
Մընծ դըզդանեն քափը կ'աս, (7)	Էրվըմ ըմ,
ճար չի կա, (6)	
Ա՝ ինձ ասօղ, յը'տ տը'նօղ (7)	Հուր ը'մ
յընս հինչ ըրալ, (6)	
Բօզ ծիլանը տուս տափը կ'աս (8)	Բաղ
օնիմ, քար չի կա: (6)	

Առավել տարածված են յոթ և ութ վանկանի տողերով երգերը: Նման տողերը քառատողեր են կազմում առանձին, համատեղ և այլ վանկանի տողերի հետ.

Տանձի ծառը ծըղվալ ա, (7)	Կ'արունքը
մըղըկալալ ա (8),	
Յարըս սալլաք կ'իրվալ ա, (7)	Տէրմանը
շըղըկալալ ա (8),	
Յար քան, սալլաք մի ք'ինիլ (7)	Հու
կըտանէ, հու կըպիրի (8),	
Սը'րտը դարդըմ խըրվալ ա (7)	
Վը'խճաքը շըղըկալալ ա (8):	

Մարալ ա, հա մարալ ա, (7)	
Մարալօթունը հիշ կանին, (8)	
Էս ախմճիգ'ը մարալ ա, (7)	Դուշմանը
բախտը տարալ ա (8):	

Պատահում են նաև 9, 10, 11, 12 և նույնիսկ 15 վանկանի տողեր, որոնք, սակայն, հազվադեպ են: Սովորաբար հանգավորվում են առաջին, երկրորդ, չորրորդ տողերը, իսկ երրորդ տողը մնում է անհանգ: Որոշ խաղիկներում իրար հետ հանգավորվում են առաջին և երկրորդ, երրորդ և չորրորդ տողերը.

Մեր արտըմը հօնձ կանիմ,	Իրիք'անկը
հուրիտըստըմ ա,	
Չինըս կօտը, հո'նց կանիմ,	Լազգ'ին
չէնըմը սըրսըլալտըմ ա,	
Վեր իմ արըս կօշտըս կ'ա,	Վընենըրտ
տիր ծիլին դալին,	
Պա էն վախտը հո'նց կանիմ:	Օշըտ տիր
դըզըլալալալ:	

Հա'րե, հա'րե, այ խընը'ցե,	Ղօնաղ ա
յը'կալ, տը'ղ չի կա,	
Մաչըտ պարի, այ խընը'ցե,	Խաչիլ ըմ
իփալ, յը'ղ չի կա:	

Մի քանի քառատողեր էլ ունեն անհանգ տողեր, որոնք հավանաբար աղճատումներ են, այդտեղ հանգավորվում են միայն առաջին և երկրորդ կամ երկրորդ և չորրորդ տողերը.

Մագերըտ գառ նան խառ ա, Պրոշնիտ
 վարթի թեր ա,
 Ման կ'ալըտ էխշնագ ա, Մեր կոտի
 սրվերը,
 Շուտ ըրա, յէր իմ կօշտըս, Հիշքան
 ճօկիս, ճրկճօկիս,
 Մըրտիս նըհտ քախծըր խօսի: Յըւս րմ
 քու նագիտ տէրը:

Արցախյան խաղիկներում հանգերը բաց են ու քողարկված, ինչպես.

Բաց վանկեր-վանի-խանի-հանի, մաղըմ-աղըմ-թաղըմ, մօշի-յէշի-օրիշի, մըտանի-ծիրանի-կըհանի.

Քողարկված վանկեր-ալեն անի-տեն անի-սեր անի, վար անի-տար անի-սար անի, թեզ ա քիներմ-տեա ա քիներմ-կեա ա քիներմ:

Պետք է ասել նաև, որ որոշ խաղիկներում կան աղավաղումներ: Հանապատրաստից ստեղծելով քառատողեր՝ հերոսները ներման հանգավորման նպատակով գործածել են բարբառային ոչ հստակ, աղավաղված ձևեր, անգործածական գրական ու փոխառյալ բառեր.

Չօյնը՛ր հանդեր ա, Քարին
 տակը խօր ծօր ա,
 Լօխ ըրծաթե բանդեր ա, Քըրքարօտ
 հըղէ յա, ծօր ա,
 Յար շուտ ըրա, յը՛տ տը՛ո, յը՛ք, Յարիս
 ըսը՛ցեք՝ միշտ հիշի
 Նըշանածըտ անդը՛ր ա:
 Կըըրվներմ յէս կօրա:

Այստեղ գործածված անցըր բառի փոխարեն պետք է լիներ անդար, իսկ կօրա բառի փոխարեն՝ կօրե, որոնք սակայն հանգեր չէին ստեղծի:

Այսպիսով, Արցախյան ժողովրդական խաղիկները կատարյալ են ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլև լեզվական արվեստով, այլ կերպ ասած՝ կազմում են ձևի և բովանդակության միասնություն:

Ազգագրություն և բանահյուսություն

Արցախյան ժողովրդական խաղիկները և նրանց լեզվական արվեստը

Ամփոփում

Մույն հոդվածում հեղինակը ներկայացնում է արցախյան ժողովրդական խաղիկները, վերլուծում նրանց գաղափարական մոտիվները: Միաժամանակ ներկայացվում են խաղիկների լեզվաարտահայտչական միջոցները և տաղաչափական առանձնահատկությունները:

Резюме

В данной статье автор представляет арцахские народные песни, анализируя содержательные и различные мотивы.

Одновременно исследуются художественно-разительные средства и особенности стихосложения этих песен.

Арцахские народные песни и культура их языка.

А. Ю. Саркисян

Հոգվածում գիտական գրականության, ինչպես նաև սնվական դիտարկումների ու նկատագրությունների հիման վրա ներկայացվում է անհիշելի ժամանակներից մարդկությանը հայտնի սոցիալական ահապոր մի չարիքի՝ թմրամոլության ավերիչ բնույթի և նրա հնարավոր կանխարգելման մասին:

Անհիշելի ժամանակներից մարդկությանը հայտնի են թմրեցուցիչ ու քնաբեր նյութերը, որոնք բարի ու հոգատար ձևերում դառնում են անփոխարինելի բուժական միջոցներ: Սրանց օգտությամբ բուժում են հիվանդներին, փրկում հոգեցունց գավորից ու տառապանքից: Մինչ այսօր էլ հատուկ հաշվառմամբ ու վերահսկողությամբ այդ թմրանյութերը օգտագործում են հիվանդանոցներում և բուժօրինարկներում՝ այն ծառայացնելով իր հիմնական կոչմանը: Սակայն, հավանաբար, նորից անհիշելի ժամանակներից, մարդը հայտնագործել է մի չարաբաստովի զուտ ևս՝ թմրադեղերի օգտագործում ոչ թե ծանր հիվանդությունների դեպքում, այլ այն դեպքում, երբ ժամանակավորապես փորձում են խախտել հոգեկան գործունեության բնականոն ընթացքը: Այսպես մարդը արհեստականորեն կարող է «բարձրացնել» ընկճված արամադությունը, «խնդրել» վշտերը, «մոռացության տալ» առկա սոցիալական տհաճությունները:

Յանկացած գիտակից անհատ քանակաբանորով ու օրգանական նողկանքով է վերաբերվում այն մարդկանց, որոնք այս ճանապարհով են լուծում իրենց հեղու վերելքը:

Այնհայտ է, որ «թմրամոլությունը ծագում է որոշակի սոցիալական պայմաններում, այն ղեկավարվում է մարդաբանական/էթնոկենդանական/ և անձի թե մայրելակերպով, և թե կենսաբանական նախադրյալներով ու դաստիարակությամբ»¹:

Գիտական ուսումնասիրության նյութերով այս չարիքը, որը կանաչ աչքերով հրեշի պես հոշոտում է մոլորակի բնակչության մի գզալի մասը, պարզել ենք, որ ԼՂՀ տարածքը ևս վտանգված է:

Մտածնի կարևորություն չտալով այն հանգամանքին, թե ներքին գործերի համակարգում, կամ համապատասխան բուժ հիմնարկներում

պաշտոնապես քանի թմրամոլ է գրանցված (այն իբրև հաետում է մոտ 4 տասնյակի), համարժակ կարող ենք ասել, որ հետապնդանքավան մեր երկրորդ մտել է փախուղի թմրամոլությունը մեր

հանրապետությունում ևս անում է իր ավերիչ գործը: Մարտնացող վտանգի մասին դատեր ինքներդ: Եթե մարդը գինեմոլ է դառնում տարիների ընթացքում, ապա թմրամոլ դառնում է օրերի, շաբաթների ընթացքում: Ինքը ճիշտ են նկատել հոգեբաններն ու սոցիոլոգները, որ համարյա չկան տարեց թմրամոլներ: Ուրտեղից՝ երբ երիտասարդ թմրամոլը շատ արագ ծերանում է, դեգրադացվում հոգեկանը, ֆիզիկականը և մահանում: Թմրամոլները տառապանք են պատճառում ոչ միայն իրենց, այլև այն ընտանիքներին, որոնց հետ առնչվում են: Ընտանիքի հատուկ ու գիտակից անդամները, պարզ է, փորձում են նրանց հետ պահել ահեղի ահագնող զորավարաց, սակայն թմրամոլի ուղեղն այնքան բթացած է, մտածողությունը խաթարված ու մշտված, որ նա արդեն ի վիճակի չէ ընդունելու այս կամ այն դիտողությունը: «Սրանք դառնում են անհավասարակշիռ, պոռթկուն, կոպտ, անմշակ ու չկորդինացված շարժումներով: Խախտվում է վնասիթյուլյար ապարատի գործունեությունը, որի պատճառով նրանք կորցնում են հավասարակշռությունը, նույնիսկ ուղիղ քայլերով ընդունակությունը» - գրում է Ս. Յվեյգը:²

Հանուն օրվա թմրադեղի չափաբաժինը ձեռք բերելու նրանք պատրաստ են հաակորվել ընտանիքի անդամներին, տնից տանել ապրուստի վերջին միջոցը, իսկ երբեմն էլ օտարվելով հարազատներից նրանք դիմում են խաբեությունների, գողության, ոչ արհեստավարժ միջոցներով թմրադեղ պատրաստելուն և ընդունելուն, որը հաճախ կարող է ավարտվել ոչ միայն իրավաբան մարմինների միջամտությամբ, այլև մահվամբ:

Այն ընտանիքներում, որտեղ ծնողների, հարազատների գոնությունը բարձր է, գիտակցում են երիտասարդի արատավոր հակումը և ժամանակին կարողանում են հետ պահել նրան նման գործողություններից, հիմնականում այս կարգի երիտասարդները հետագայում դառնում են թմրամոլության դեմ քաղաքիչներ, քանի որ նրանք արդեն իսկ ճաշակել են թմրամոլի «ապրած» թվացյալ «հաճությո» ինչպես նաև վերականգնել առողջ ապրելակերպի ողջ հմայքը: Մերս արդեն գզատու տրամաբանությամբ են գնահատում իրադրությունները և անհրաժեշտ դեպքում տալիս են ճիշտ խորհուրդներ:

Սակայն թմրամոլների 60 % -ից ավելինը պատկանում են ոչ լրիվ ընտանիքներին (պակասում են հայրը, կամ մայրը, երբեմն նաև՝ երկուսն էլ) և նրանց հետ պահելու գործընթացը հաճախ լինում է անհնարին, որը և բնականաբար տանում է դեպի փակուղի: Թմրամոլների մեծ մասը օժտված են զարմանալի ու վարկաբեկիչ մի հատկությամբ՝ նրանք անպայման ձգտում են իրենց արատավոր գեղամուրի մեջ

¹ Фрейд, Интерес к психоанализу, Ростов - на-Дону, «Феникс», 1998, с.1.

² С. Юсиф. Врачевание психика. Л. 1982, сг 97-98.

ներգրավել նորանոր ներիտասարդների, հաճույք ստանալով նրանց գայթակղելուց:

Այս իհարկեն թմրամոլի հոգեկան բավարարվածությունն է, մինչդեռ նրանք հրապուրելով ավելի ու ավելի նոր մարդկանց լուծում են նաև թմրաբիզնեսի մուղ գործը՝ սպառում են «ապրանքը»:

«Թմրամոլի մեջ միաժամանակ գործում են և հոգեկան դեֆորմացիա ունեցող հիվանդը և քրեական հանցագործը: Եթե իբրև հիվանդ նա ավերում է իր առողջությունը դուրսն անգամ չափստալով բնությանը ու նախախնայությամբ իրեն պարզեանք կենսաբանական կապիտալը, ապա որպես քրեաձին հանցագործ նա ավերում է հասարակությունը, չարագործ դաժանությամբ արատավորում հասարակական այն խումբը, որի անդամն է»:

Աստծո կողմից հաժմաբար նգովյալ է թմրամոլը, սակայն իբրև բնության և նույն Աստծո արարչագործություն՝ ենթակա ուղղման:

Թմրամոլի վիճակը ինչպանով էլ փակուղային է, միևնույն է պետք է ճանապարհ ու միջոցներ որոնել փրկելու այդ խնդիրը:

Թմրամոլության դեմ պայքարը պետք է ունենա 2 ուղղություն՝

1. կանխարգելիչ պայքար
2. Պայքար արդեն իսկ դրսևորված թմրամոլության դեմ:

Մեր կարծիքով ներկրորդ դեպքում հասարակական կազմակերպությունները համարյա անելիք չունեն, ընդամենը կարելի է նպաստել այդ այստեղ տառապող մարդկանց բազաիայտմանը:

Պետական, հասարակական կազմակերպությունների ողջ գործունեությունը պետք է ուղղել թմրամոլության կանխարգելմանը: Եվ ինչպես ասեն մի բուժական միջատություն ելնում է հիվանդության այստորոշումից, այնպես էլ պետք է նախանշել այն պատճառները, որոնցից ծնվում են ոչ միայն ծուռ ու մուռ հոգեկանով, այլև ծուռ ու մուռ ֆիզիկականով այն մարդուկները, որոնք բնո են ոչ միայն իրենց ընտանիքներին, այլև հասարակությանն ու պետությանը:

- Թմրամոլ դառնում են կուրորեն, հաճախ ստանալով ոչ ճշմարիտ ինֆորմացիա հնագույն այդ «հաճելի» զբաղմունքի «աներևակայելի» հետևանքների մասին:

- Թմրամոլ դառնում են ընդօրինակելով շրջապատում նեղղ նմանատիպ մարդուն:

- Թմրամոլ դառնում են արդեն իսկ այդ գործի մեջ «վարպետ» մարդու «գայթակղությամբ»:

- Սոցիալական ծանր ու դժվարին վիճակը ընտանեկան տհաճությունները, ոչ կամայոր մթնոլորտը կարող են նպաստել թմրամոլությանը:

- Լեռնային Ղարաբաղի տարածքում այդ ախտը հիմնականում տարածվել է կապված ռազմական գործողություններին, նրբ անփորձ զինվոր վախը, սարսափը վանելու նպատակով սկսել է օգտագործել թմրաեղերը:

- Թմրամոլ կարող է դառնալ ծանր հիվանդություն կրած մարդը, որին ստիպված են եղել հաճախակի ներարկել թմրաեղերը և հետագայում այն դարձել է սովորություն:

- Առանձնահատուկ պետք է նշել սովորության դերը, որը հաճախ է այցելում կտմագրվել մարդկանց:

- Թմրամոլ դառնում են ամենագլխավորը անգործությունից:

- Արտակարգ վիճակներում հայտնված սթրեսները ապրող մարդը անմտորեն դիմում է այս քայլին «խուսափելու» տհաճ զգացումներից:

- Դեմահատության և պատանեկան տարիքում տղաների մեծ մասին հրապրում է մեծ երևալու, հասուն տղամարդ զգալու ցանկությունը և այս ինքնահատատուումը ես կարող է ուղեկցվել այդ ախտով:

Այսպես կարող ենք թվարկել բազմաթիվ ու բազմաբնույթ պատճառներ այն ողջ շրջան, որը թվում է անվերջանալի, սակայն կարծում ենք կանխարգելիչ գործունեության ընթացքում պետք է հաշվի առնել տվյալ անհատի ու երևույթի անհատական առանձնահատկությունների այն ողջ սպեկտրը, որի հետ պատրաստվում ենք գործ ունենալ:

Ելնելով թվարկածից կարող ենք երաշխավորել նաև միջոցառումների շարք, որոնք կարող են նպաստել թմրամոլությունը կանխարգելող գործունեությանը:

- Օգտագործել հեռուստահաղորդումների և կինոժապավենների ողջ հնարավորությունները, մամուլը, լրատվությունը և մարդու միտքը նրբորեն ուղղել ավելի առողջ ապրելակերպն ու կենսակերպը, բնականաբար ենթադիտակցորեն հակազդելով կյանքի անընդունելի երևույթներին:

- Լցնել ներիտասարդի ազատ ժամանակը, թույլ չտալ պարագայությունը ապրի, որը բոլոր չափերին մայրն է: Այս իհարկե ենթադրում է պետական հոգածություն՝ աշխատատեղների ու ժամանակի կազմակերպում:

- Սպորտային միջոցառումների համալիր ծրագրի իրականացում:

- Բժշկական թեմաներով գրույցներ:

- Հոգեբանական և սոցիոլոգիական հետազոտություններ և գրույցներ:

- Արվեստի բնագավառի գործունեության աշխուժացում (հանդիպումներ, կյոր սեդաններ, հոբելյաններ, համերգներ, ներկայացումներ, ցուցահանդեսներ):

¹ И. Ринс, Клинический очерк юной психи, или психопатологии. Киев, 1986, ст. 299.

* Արցախյան գոյամարտի հերոսների կյանքի ու գործնության ակտիվ բարոգություն (հանդիպումներ, գրույցներ, հուշ նրեկոներ և այլն):

- Դեռահասների ու երասնիկների կապը գորամասների հետ (հանդիպումներ, փոխադարձ օգնություններ, աշխատանք գորամասներում աշակերտների կողմից):

- Թմրամոլության մասին հաջողված գործի քննակնասցում:

- Ակտիվ քաղաքացիություն ծնողների հետ (զննուցումներ, գրույցներ թմրամոլության մասին ծնողական ժողովներում, այլ հնարավոր լսարաններում):

- Ազգային - ազատագրական, ֆիդայական երգերի ուսուցանում դպրոցականների շրջանում, ազգային դասական երաժշտության հետ մերձեցում:

- «Պատանի քնախույզների» արշավների կազմակերպում:

- «Պատանի նրկրաբանների» ջոկատների ստեղծում ԼՂՀ դպրոցներում:

- Հայ առաքելական եկեղեցու արցախյան թեմի հոգևոր դասի ակտիվ գործունեության՝ ուղղված թմրամոլությանն ու թմրաբեխմանին:

Այս այն ոչ ավարտուն ցանկն է, որ կարող ենք առաջին էտաբում իբրև օգնություն տրամադրել թմրամոլության դեմ պայքար ծավալելու նախաձեռնություն ստանձնող ցանկացած պետական կամ հասարակական կազմակերպությանը, ակնկալելով, որ դրան գուցահետ մեծ անելիքներ կիրագործի նաև կառավարությունը:

- Կբարձրագվի ներքին գործերի և ազգային անվտանգության համակարգների կողմից այս չարքի դեմ կազմակերպվող ամենօրյա պայքարը:

- Պետական հոգածության խնդիր կդարձնեն հանրապետական նարկոլոգիական դիսպանսների աշխատանքը, որը միակ արհեստավարժ հիմնարկն է քիչ թե չատ բուժական օգնություն ցուցաբերելու այդ ախտով տառապող մարդկանց:

- Պետական հովանավորության տակ կառնվեն սպորտային-մշակույթային այն բոլոր միջոցառումները, որոնք նախատեսվում են կազմակերպել դպրոցներում, իբրև թմրամոլության դեմ կանխարգելիչ լայնամասշտաբ միջոցառումների համակարգված ծրագիր:

Թմրամոլությունն իբրև բարձրակարգ

զգացմունքները քայքայող ախտ

Արգիկ Մխիթարյան

Ամիդիում

Հոդվածում լուսաբանվում են արցախյան գոյամարտի և հետպատերազմական ժամանակահատվածներում թմրամոլության տարածման հիմնական պատճառները և բարձրակարգ

զգացմունքներն ավերող այդ ախտի կանխարգելման ուղիները:

Наркомания как разрушитель высоких чувств

Арзик Мхитарян

Резюме

В статье раскрываются основные причины распространения наркомании в годы Арцахской войны и в послевоенный период. Автор также предлагает профилактику преодоления наркомании как разрушителя высоких чувств.

*Ղարաբաղյան շարժումը
և հայրենական կերպարվեստը*
Լ. Բ. Ղալայան, Ս. Լ. Ղալայանգ

Հոգվածում լուսաբանվում է հայ կերպարվեստի արցախյան հատվածի վիճակը խորհրդային տարիներին և նշվում ազգային գաղթոնքի դերը արցախյան մշակույթում:

Ազգի պատմական անցյալի վկայությունները նրա ստեղծած մշակութային արժեքներն են, որոնցով էլ հենց ազգը ներկայանում է համաշխարհային քաղաքակրթությանը: Հայկական մշակույթը բացառություն չի կազմել և նրա ստեղծագործական բարձրարժեք կոթողներն իրենց հայաշունչ վկայությամբ փաստում են մեր բազմադարյան ազգային լինելիությունը:

Մինչդեռ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցվելով անհնարին դարձավ այս տարածքում ազգային մշակութային արժեքների ստեղծումն ու զարգացումը: Հենց միայն այն. որ Ղարաբաղում բնակվում ու ստեղծագործում էին տասնյակ գունակարիչներ, քանդակագործներ, թատերական նկարիչներ ու արվեստագետներ, սակայն ինքնավար մարզը չունեի նույնիսկ իբրև հասարակական կառույց նկարիչների միություն, այդ վկայություն է Ադրբեջանի հայախալած այն քաղաքականություն, որով ձգտում էին սարսնել այն ամեն ազգայինը, ինչով մենք կարող էինք աշխարհին հայ ներսել: Երկրամասում անհնար էր հայկական ազգային ճարտարապետական որևէ կառույցի կամ արվեստի բարձրարժեք գործի ստեղծումը:

Տարածաշրջանի հանրահայտ գործիչների հուշարձաններն անգամ պատվիրվում էին Բաքվում, իրականացվում ադրբեջանցի արվեստագետների կողմից, այդ միանգամից լուծելով երկու հիմնարար խնդիր:

- Լեռնային Ղարաբաղը գրկվում էր ազգային կոյրերից

- Վճարը ստանում էր ադրբեջանցին, բարելավվելով իր սոցիալական վիճակը:

Միակ աշխատանքը, որը մինչ 1988 թ. կանգնեց դա Ս. Բադալտարյանի» Սենք ենք մեր սարերը» երկֆիգուր քանդակն է, որն էլ ժամանակին երկրամասում ստեղծել էր քաղաքական շփակացած մթնոլորտ:

Արցախյան շարժումը մեր ժողովրդին բերեց ոչ միայն քաղաքական ու էթնիկական պայքարի հաղթանակ, այլև նոր շունչ պարգևեց մեր ստեղծագործ ժողովրդի տաղանդավոր գավախներին:

Չնայած օտարաշունչ »արվեստի« թմբկից արթնանալով մինչ այսօր էլ դժվար է այն սերնդի համար, ովքեր միանգամից կրում էին թե ՍՍՀՄ տոտալիտար տնրության քմահաճույքները և թե աստվել ևս Ադրբեջանի հայախալած

քաղաքականությունը, այնուամենայնիվ նույնիսկ ռմբակոծությունների ու արևակոծությունների, ցրտի, գրկանքի ու քաղցի պայմաններում շատերը գնալով ձմեռին, շարունակեցին ստեղծագործել և այդ տարիներին է, որ ծնվեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Զինանշանը, բազմաթիվ կտավներ, որոնցում արտացոլված են մեր Գոյապայքարի հերոսական մարտիկներն ու նրանց պայքարի առանձին դրվագները: Այդ ընթացքում բազմեցին ցուցահանդեսներ, մեր նկարիչները դուրս եկան երկաթե վարագույրի հետևից և ներկայացան ոչ միայն աշխարհին, այլև մայր Հայաստանին, որը ևս գրկված էր հաղորդակից լինելու իր մյուս հատվածի մշակութային արժեքներին:

Այսօր մենք ունենք ԼՂՀ նկարիչների միություն, երբեք տասնյակից ավելի արհեստավարժ նկարիչներով, որոնք մեծ եռանդով ու պատրաստակամությամբ ստեղծագործում են և ծառայում իրենց երկրին:

Կազմակերպվել են սիմպոզիումներ, որոնց ընթացքում կերված աշխատանքները տնդադրված են մեր երկրամասի ու մայրաքաղաքի տարբեր բնակավայրերում:

Կանգնեցվում են հուշակոթողներ երկրաշարժի, սուվալայության ու արցախյան գոյապայքարի գոհերի հիշատակին: Կազմակերպվում են ցուցահանդես վաճառքներ և մեր նկարիչներն այսօր աշխատանքներ ունեն աշխարհի տարբեր երկրներում:

Այսօր մեր նկարիչները պատրաստ են իրենց բազմաժանր աշխատանքներով ցուցադրվել ոչ միայն հայրենիքում, այլև արտերկրում:

Ղարաբաղյան արվեստն այսօր հայաշունչ է, ազգային ու ծառայում է մեր ժողովրդի գնդագիտական ճաշակի բարձրացմանը:

*Ղարաբաղյան շարժումը
և հայրենական կերպարվեստը*
Լավրենտ Ղալայան, Մասուն Ղալայանգ
Ամփոփում

Հոգվածում լուսաբանվում է ղարաբաղյան շարժման կատարած դերը խորհրդային տոտալիտար ռեժիմի և Ադրբեջանի հայախալած քաղաքականության ճնշման տակ արցախյան օտարաշունչ դարձած արվեստի վերածնունդի գործում:

Карабахское движение
и отечественное искусство
Лаврент Галаян, Сасун Галаянц
Резюме

В статье освещается роль карабахского движения в возрождении национальной самобытности армянского искусства, ставшего чуждым за годы советского тоталитарного режима и азербайджанского национализма.

*Դիագնոստիկ մտածելակերպի
զարգացումը դասարանում
(Օգնություն սկսնակ ուսուցիչներին)
Ռ.Ջ. Աղաբեկյան*

Մինչև այժմ մենք ուսումնասիրել ենք Ա. Նալչաջյանի վեճերից մի քանիսը՝ խմբի կառուցվածքը և գործնությունը, խմբի դինամիկան և թե ինչպես են ներգործում (ազդում) դասարանի փարագծի վրա, թե ինչպես են դասարանային միջոցառումներն ազդում անհատների վրա և, այն բազմապիսի դերերը, որ սովորողները վերագրում են ուսուցչին: Այն, գիտելիքներ ունենալով և խմբի վարքագիծը հասկանալով, ինչպես պետք է ուսուցիչները ներգործեն սովորողների վրա ազդելու համար:

Այս վիճարկելի հարցերի համար, մենք, որպես ընդհանուր մոտեցում, առաջարկում ենք դիագնոստիկ մտածելակերպը:

Դուք հիմա կոնսենք, որ այն բոլորովին էլ կախարդական ֆորմուլա չէ: Այն պահանջում է քանակականություն և հաստատականություն: Փորձի հետ, հետզհետե, դիագնոստիկ մտածելակերպը դառնում է երկրորդ բնավորություն, որը թույլ է տալիս ուսուցչին ավելացնելու այն ներքին մանկավարժառականության աստիճանները, որոնք օգնում են ազդելու դասարանի կարգապահության և հետազայում նաև խմբի արդյունավետ ղեկավարման վրա: Նրանց դիագնոստիկ մտածելակերպով մոտեցումն ընդգրկում է նախազգացում, փաստերի հավաքում, գաղտնի գործոններ, միջոցի ձևեր առնում և ճկնություն: Մենք այս մոտեցումը առաջարկում ենք հետևյալ կերպ. երբ առաջին անգամ նկատվում է կոնֆլիկտը, քննականաբար առաջանում է նախազգացում դրա պատճառի մասին:

Այս նախազգացումը հիմնված չէ որևէ կոնկրետ ժամանակի վրա: Այն պարզապես ընդհանուր գազացում է նրևույթի վերաբերյալ: Հաջորդը՝ ուսուցիչը պետք է հավաքի ակնհայտ փաստերը: Այս ակնհայտ փաստերին ուսուցիչը պետք է ավելացնի գաղտնի գործոնները, որոնք մասին սովորողը կարող է չիմանալ: Գաղտնի գործոններից կարող են լինել սովորողների մասին

ունենացած ընդհանուր տեղեկությունը, ինչպես նաև նրանց մակավարժառական ակամ, գաղափարական կամ բարոյական զարգացվածությունը: Երբ ուսուցիչը գիտի, որ նա ծանոթ է փաստերին, շարժառիթներին և այլ գաղտնի գործոններին, նա պետք է գործի տվյալ իրավիճակին համապատասխան: Այս դեպքում ուսուցիչը ելք է փնտրում, որը պետք է գրական արդյունք տա: Այս քայլը կարող է լուծվել, կամ չլուծվել խնդրի: Նրանց գործողությունների արդյունքը ուսումնասիրելով՝ ուսուցիչը կարող է ցանկանալ վերանայել այդ խնդրի լուծումը: Սա անշուշտ ցույց կտա այն հանգամանքը, որ դիագնոստիկ գործելակերպում ուսուցչից կպահանջվի մեծ ճկնություն: Ուսուցիչը կարող է իրավիճակը ճշշող չգնահատի, կամ իր գործողություններով կարող է խախտել դինամիկան, որի պատճառով կառաջանա մի նոր իրավիճակ, որն էլ իր հերթին կպահանջի նոր քայլեր: Նշենք, որ մի քայլ քալակալում է: Ուսուցիչը պետք է մի շարք քայլեր ձեռնարկի, որոնք բոլորը միասին կտանեն դեպի խնդրի լուծմանը: Մենք մի խորհուրդ ենք տալիս խնդրի դիագնոստիկ լուծման համար: Զգացմունքները շատ կարևոր են: Ուսուցիչը չպետք է հեծվի միայն իր զգացմունքների վրա, այլ պետք է իրավիճակին նայի սովորողի դիրքից, որպեսզի զգա թե ինչ է գգում սովորողը, և միշտ ուղղություն տա նրանց գործողություններին:

Այս դրվագից փորձեն հասկանալ ուսուցիչ Ա. Հակոբյանի կողմից դիագնոստիկ մտածելակերպի օգտագործումը:

Նրեն արջիկ գալիս են դասարան:

Հասմիկը և Ռուզաննան արդյունքներով ողորկված են:

Սուրիկը քարք բղավում է: Դասը չի կարող շարունակվել: Վերջին մի քանի շաբաթում էլի են նմանատիպ նրևույթներ եղել:

Ուսուցիչ Ա. Հակոբյանը նախազգացում ունի, որ Սուրիկն է մյուս երկուսի մեջ զայրույթ գրգռում: Նա ճշտում է փաստերը: Հասմիկն և Ռուզաննան սովորաբար անտարամադիր են, Սուրիկը սովորաբար շատ ծայրող է: Այս խնդիրները առաջանում են շաբաթվա վերջում: Փոխադարձ գրույցներից ուսուցիչ Ա. Հակոբյանը գտնում է գաղտնի գործոնը: Սուրիկը թատրոն ցանկանում է գնալ Հասմիկի և ոչ թե Ռուզաննայի հետ: Հիմա ուսուցիչ Ա. Հակոբյանը պետք է մի շարք գործողություններ ընտրի:

Այս իրավիճակի հետ կապված որևէ օգնություն ցույց տալ: Այս դեպքում պետք է պատկի դիմել: Նա փորձում է գտնել ազդման տեխնիկա (միջոց), որի մասին ավելի մանրամասնորեն կխոսենք ներքևում:

Ազդման տեխնիկա (միջոցներ)

Մենք առաջարկում ենք ուշադրություն դարձնել այն գործողությունների վրա, որոնք պետք է ձեռնարկել այդ խնդրի լուծման համար: Գործողությունները դիագնոստիկ մտածելակերպի մի մասն է: Հոգեբան-գիտնականներից շատերը այդ գործողություններն անվանում են «ազդման միջոցներ»: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է դիմի տարբեր միջոցների դասարանի

հսկողության պահպանման համար: Այս միջոցների մի մասը հիմնված է դպրոցական կարգապահության քաղաքականության հիման վրա, միջոցներից մի մասն ընտրվում են, որովհետև դրանք արտադրություն են ուսուցչի անհատականությանն ու աշխատանքի, մյուսներն ընտրում են, որովհետև դրանք դրական արդյունքներ են տվել անցյալում:

Դրանց մի մասը արդյունավետ են, մյուս մասը՝ բոլորովին ոչ: Մենք մասը ընդունելի են միայն որոշակի իրավիճակի համար:

Իրավիճակներն իրենք պահանջում են ճիշտ գործողություններ: Այդ ճշտումների համար ուսուցիչը պետք է դիմի տարբեր միջոցների: Ուսուցչիներից ոմանք բղավում են, ոմանք սովորողին դասարանից դուրս են հրավիրում, ոմանք վարքվելու այլ տարբերակ են առաջարկում, իսկ ոմանք էլ պարզապես անտեսում են սխալ վարքագիծը: Մենք ուսուցչներին խորհուրդ ենք տալիս, նախքան որևէ գործողություն ձեռնարկելը, իրենց մի քանի հարց տան:

Այդ հարցերն են՝

1. Որ՞ն է սխալ վարքագծի շարժառիթը:
2. Ինչպե՞ս է արձագանքում դասարանը:
3. Արդյո՞ր, սխալ վարքագիծը կա՞պ ունի ուսուցչի հեն:
4. Ինչպե՞ս կարձագանքի սովորողը, եթե նրան հետագա վարքագիծ վրա:
5. Ինչպե՞ս կանդաղադառնա ուղղումը նրա հետագա վարքագծի վրա:

Այս հարցերը նախ կարագեն, որ ուսուցիչը հասկանում է իրավիճակը, իսկ հետո, որ նա ի վիճակի էլինի ճիշտ գործողություն ընտրելու, որը դրական ազդեցություն կունենա սխալ վարքագիծ ցուցաբերած սովորողի վրա:

Մենք ներկայացնում ենք ազգման միջոցի չորս տեսակներ, որոնցից նորեկ ուսուցիչը կարող է ընտրություն կատարել.

1. *Ինքնահսկման կարողություն*
2. *Իրավիճակային օգնություն*
3. *Իրականության գնահատում*
4. *Յավահաճույք դրույթ:*

Պետք է հիշել սակայն, որ քանի որ սովորողից սպասվում է ճիշտ վարքագիծ, ամբողջ դասարանը պետք է տեղյակ լինի ինչպես սպասելիքներին, այնպես էլ՝ հետևանքներին:

Ինքնահսկման կարողություն

Շատ սովորողներ ավելի շատ ցանկանում են ճիշտ վարքագիծ ցուցաբերել և ստանալ ուսուցչի գովեստը: Նրանք իրենց պահում են, որովհետև չեն ուզում հաճելի լինել: Եթե դրանք սխալ վարքագիծ են ցուցաբերում, ապա դա այլ պատժառ ունի: Հաճախ այն ոչ այլ ինչ է, քան ինքնահսկման սայթաքում: Այս դեպքում ամենաճիշտ քայլը, դա սովորողի

ինքնահսկման վերականգնմանն ուղղված քայլն է: Ինքնահատուտման ներշնչումն այնքան էլ դժվար չէ: Այդ միջոցը չպետք է լինի ուժային, ագրեսիվ: Ուսուցիչը այդ միջոցներին պետք է դիմի միայն այն դեպքում, երբ զգա, որ սովորողը ինքնահսկման կորցնելու ներքին է: Այս դեպքում սովորողի վարքագիծը կհսկվի «նախօրոք» մինչև սայթաքման հասնելը:

Մենք ներկայացնում ենք հինգ միջոց ինքնահսկման կարգավորման համար:

Առաջին միջոցը՝ դա ազդանշաններ ուղարկելն է: Այս միջոցի դեպքում ուսուցչին օգտագործում է նշաններ, որոնցով ցույց է տալիս, որ ինքը տեղյակ է, թե ինչ է կատարվում, և որ ինքը հավանություն չի տալիս: Այս նշաններն են՝ աչքի շարժում, կնճռոտվելը, գլուխը թափ տալը: Այս միջոցներն արդյունավետ են սխալ վարքագծի միայն վաղ շրջանում: Եթե սովորողը չի արձագանքում ազդանշանին, ուսուցիչը պետք է փորձի մտնեցման հսկողությունը: Մենավորին մտնեցնելով՝ ուսուցիչը պետք է ցույց տա, որ նա տեղյակ է նրա արարքին և ցանկանում է օգնել նրան: Այս մտոնկությունից ուժ է գգում սովորողը, որը նրան օգնում է վերականգնել իր վերահսկումը: Ուսուցիչը կարող է դիպչել նրա ուսին, կամ շոյել գլուխը:

Երբեմն վատ վարքագիծ կարող է ցուցաբերել շատ օրինակելի սովորողը: Դա նշանակում է, որ նա կորցրել է իր հետաքրքրությունը տվյալ առարկայի նկատմամբ: Օրինակ՝ Ուսուցիչը կարող է ոգևորել սովորողին ասելով՝ «Տեսնում եմ առաջին հինգ նախադասությունները ճիշտ են վերլուծել»:

Այս միջոցն, ինչպիսիք, կարող է արդյունավետ լինել, եթե սովորողը լրիվ չլիտվել և հուսալքվել է: Այս դեպքում կօգնի հուսմորը՝ նուրբ և չվիրավորող, որը պետք է ուղեկցվի ուսուցչի ժպիտով: Օր՝.

«Օ՛հ, ինչքան շատ խոսեցի: Ես մի պահ մոռացել էի, որ դասարանում եմ»: Մամն դեպքում ուսուցչը պետք է ուշադիր լինի, որ կատարելի մեջ ծաղր չլինի:

Ժամանակ առ ժամանակ ուսուցիչը պետք է օգտվի անտեսման միջոցի, հատկապես, երբ սովորողը սխալ վարքագիծ փորձում է ուշադրություն հրավիրել: Ուսուցչի արձագանքը այդ արարքին, այդ սովորողին, կարող են միանալ նաև մյուսները, և այդ իրավիճակը կաղաճա ընդհանուր: Սակայն անտեսման միջոցից նորեկ ուսուցիչները պետք է շատ զգույշ օգտվեն, որովհետև այն սովորողների մոտ կարող է ապօրոյր ազատություն և ուշադրությունից դուրս լինելու տալս փորձություն ստեղծել:

Ազգման միջոցների ամփոփումը: Այն միջոցները, որ ուղղված են ինքնահսկման հաստատմանը, շատ արդյունավետ են: Սակայն պետք է ասել, որ դրանք արդյունավետ են միայն սկզբնական շրջանում, երբ արարքն ընդամենը ուշադրություն հրավիրելուն է ուղղված, այսինքն, շատ մեղմ, սխալ արարք է: Այլ դեպքերում, ինչպիսիք, կարող են այլ քայլեր պահանջվել, ավելի խիստ և ավելի համարձակ:

Իրավիճակային օգնություն

Երբ սխալ վարքագիծը հասնում է այն աստիճանին, որ սովորողը կորցնում է ինքնահսկման կարողությունը, ուսուցիչը պետք է քայլեր ձեռնարկի, որպեսզի սովորողին վերադարձնի կանոնավոր վարվելակերպին: Մենք առաջարկում ենք իրավիճակային մի քանի տարբերակ: Արգելելը-օգնությունը դրանցից մեկն է:

Ենթադրենք, թե հայտը լեզվի նախադասության վերլուծություն է կատարվում: Անահիտը սկսում է իրեն պահել այնպես, որ կարելի է զգալ, որ նա չի հասկանում: Նա կսկսի գրոցել կողքի նստած սովորողի հետ: Այս դեպքում ուսուցիչը պետք է նրան բացատրի, ոչ թե նրան նախատի վատ վարքագծի համար:

Իրավիճակային օգնության մյուս միջոցը արտառաքաղային իրավիճակն է: Պետությանի աշակերտները հայտը լեզվի դասի են նկել հիանալի փոխթյուր մրցույթից:

Պետությանի գիտի, որ այդպիսի աշխույժ խաղերից հետո, սովորողի համար ըմպար կլինի ըմբռնել լեզվի նյութը, ուստի նա փոխում է բացատրման ձևը՝ և նշվի «Հառախալ» թեման կապում խաղային գույների հետ:

Ինչո՞ւ նա փոխելը թեման:

Երբ վարվողությունը հետ կապված խնդիրներ են առաջանում, ուսուցիչը պետք է գտնի պատճառը, հնարավոր է, որ դա կապված լինի հոգնածության, կամ քննադատական, չափից դուրս ոգևորության հետ: Աշակերտը կարող է նրկար ժամանակ նստած լինելուց հոգնած լինել, կամ շատ գվարճալի խաղերից հոգնած լինել: Նման դեպքերում ուսուցիչը կարող է վերակառուցել դասը, հնարավորություն տալ հանգստանալու, կամ աստիճանաբար նվազեցնել ոգևորությունը:

Մյուս կողմից հաճախակի փոփոխություններն էլ կարող են վատ անդրադառնալ, քանի որ աշակերտը չգիտի թե երբ և ինչ է անելու: Այդ պատճառով էլ ուսուցիչները պետք է ըմծիմ և պլան կազմեն, որը դասին կտան կայունություն և որոշակիություն: Հատկապես օգտակար կլինեն այն պլանները, որոնք ավելի շատ սովորողներ կնդգրդկի

Եթե սովորողը ժամանակավորապես կորցրել է ինքնահսկումը (*ինքնատիրապետումը*) և խոնգարում է մյուսներին, ուսուցիչը պետք է օգնի իրավիճակը շտկելու համար:

Օրինակ՝ Մուրիկը հրաժարվում է նստել իր տեղը: Ուսուցիչը պետք է թռնի նրա ձեռքից և տանի դասարանի անկյուններից մեկը: Ուսուցիչը պետք է ասի.

-Եթե որոշեմ նստել, կարող եմ գալ և միանալ մեզ: Մա պետք է արվի ոչ որպես պատիժ:

Ուսուցիչը պետք է գույց տա, որ սովորողը հեռացվել է ժամանակավորապես, մինչև նրա

ինքնատիրապետման վերականգնմանը: Այնուհետև սովորողի հետ պետք է առանձնագրույց ունենալ: Եվ ուսուցիչ և սովորողի զգացմունքները պետք է քննարկվեն: Սովորողների ուշադրությունը կարող են շնել այնպիսի գրավիչ առարկաներ, ինչպիսիք են՝ լուսանկարները, խաղալիքները: Նման դեպքերում ուսուցիչը պետք է միայն հեռացնի գրավիչ առարկան: Մա նույնպես ժամանակավոր միջոց է և դա պետք է այդպես էլ ներկայացվի սովորողին: Այնուհետև առարկան պետք է վերադարձվի սովորողին:

Երբեմն ինքնատիրապետման սալաբարումը կարող է վնասել իրեն, կամ մյուս սովորողներին: Իրավիճակային օգնության ամփոփումը: Բազմապիսի իրավիճակներ կարող են պատճառ դառնալ սովորողի ինքնատիրապետման ժամանակավոր կորստի համար: Այս դեպքում պետք չէ դիմել պատժի: Դրա փոխարեն ուսուցիչը պարզապես պետք է սովորողին օգնի ինքնատիրապետումը վերագտնելու համար: Այս մոտեցումը շատ առավելություններ ունի, ինչպես խառնաշփոթի նվազեցումը, որը թույլ կտա սովորողին իր էներգիան և ուշադրությունը կենտրոնացնել ուսման վրա, այսպիսով վերցնելով այն կարծիքը, որ ուսուցիչը անկարող է օգնել, կամ բարդացված չէ: Թե ինչպես են իրենց պահում խմբերը կամ անհատները դասարանում, մեծապես կախված է այն բանից, թե իչքանով են նրանք ըմբռնում իրենց ուսուցչին:

Կամա թե ակամա, ուսուցիչներն իրենց մեջ կրում են բազմապիսի դերեր, ներկայացնում բազմազան կերպարներ: Այդ դերերից և կերպարներից մենք սկսնակ ուսուցիչներին նրաշխավորում ենք.

1. Հասարակության ներկայացուցիչներ. Ուսուցիչը պետք է արտացոլի և զարգացնի հասարակությանը բնորոշ արժեքներ, բարոյական նորմեր և մտածելակերպ:
2. Դատաւորներ. Ուսուցիչը պետք է դատի սովորողի վարքը, բնավորությունը, աշխատանքը և առաջխաղացումը:
3. Հիստերիկ աղբյուրներ. Ուսուցիչը գիտելիքի առաջին աղբյուրն է, որից նրանք ինֆորմացիա են ստանում:
4. Սովորելու օգնական. Ուսուցիչը սովորողին պետք է օգնի ընկալել առաջադրանքը՝ ուղղություն տալով, ձևավորելով ինֆորմացիան, աշխատանքը կատարելու արահանցով, ըմբռնման խոչընդոտները վերացնելով և խնդիրների լուծումը հեշտացնելով:
5. Միջնորդ. Ուսուցիչը պետք է միջնորդի և որոշում կայացնի, երբ բանավեճ է սկսվում:
6. Խուլագույն. Ուսուցիչը պետք է ապահովի անվտանգությունը դասարանում, հայտնաբերի սխալ արարքը և ձեռք առնի միջոցներ:

7. Մոդելներ. Ուսուցիչը պետք է հավաստի, արժեքներ, վարքագծի, սովորույթների կրողն լինի:
8. Տոգտող (խնամող). Ուսուցիչը պետք է հոգ տանի այն մասին, որ պակասեցվի ավելորդ աշխուժությունը՝ պահպանելով վարքագծի ընդհանուր նորմերը, կայուն միջավայրը, կանոնավոր դասադասակարգը.
9. Ինքնուրույնություն գարգացնող. Ուսուցիչը սովորողներին հետք է օգնի նրանց մեջ ինքնուրույնություն ձևավորելու և սեփական կերպարներ բարելավելու. ?
10. Խմբի առաջնորդ. Ուսուցիչը պետք է օգնի խմբին ներդաշնակ և արդյունավետ գործունեություն ծավալելու համար.
11. Երկրորդ ծնող. Ուսուցիչը պետք է պաշտպանության, ինքնահաստատման, հարգանքի և խորհրդի աղբյուր հանդիսանա.
12. Թշնամանքի թիրախ. Եթե սովորողի զարույթը չի արտահայտվում այլ մեծահասակների մոտ, ապա այն ուղղված է ուսուցչին.
13. Ընկեր և գաղտնավոր. Սովորողը կարող է ընկերաբար գրուցել ուսուցչի հետ և նրան գաղտնիք վստահել.
14. Ազդան աօրենք. Ուսուցիչը հաճախ կարող է լինել ներգրծման և հարգանքի, ինչպես նաև, սիրո և պաշտամունքի առարկա.

Ուսուցչի հոգեբանական դերերի ամփոփում:

Ինչպես տեսանք, ուսուցիչը շատ դերեր է խաղում սովորողների համար: Երբեմն այս դերերի մեջ նա չի կարող մեծ ընտրություն կատարել, բայց սովորաբար ընդունում է, կամ որոշում է ընդունել այդ դերերը և այն թե՛ Երբ և ինչպես կիրառի դրանք: Նա կարող է որոշ դերեր ստանձնել ողջ սրտով, իսկ մյուսներից պարզապես խուսափել ելնելով այդ խմբի պահանջից: Բոլոր դեպքերում ուսուցիչը պետք է վստահ լինի որևէ դերի ստանձման հարցում:

Դիագնոստիկ մտածելակերպի զարգացումը

դասարանում

(Օգնություն սկսնակ ուսուցիչներին)

Ռ.Ջ.Աղաբեկյան

«Դիագնոստիկ Դիագնոստիկ մտածելակերպի զարգացումը դասարանում» հոդվածը գիտական հաջողված ուսումնասիրություն է, որը ներառված է որպես մեթոդական օգնություն հանրակրթական միջնակարգ դպրոցների սկսնակ ուսուցիչներին:

Այն յուրահատուկ մի ուսումնասիրություն է ուղղված ուսուցչի մանկավարժա-հոգեբանական դերերի բացահայտմանը, որն, անշուշտ, կնպաստի աշակերտական կոլեկտիվի, ուսուցիչ-աշակերտ և

աշակերտ-աշակերտ
ձևավորմանը:

փոխհարաբերությունների

Развитие диагностического мышления в классе.

Агабекян Р.Дж.

Резюме

Данная статья представляет собой успешное научное исследование, которое рекомендуется как методическая помощь начинающим учителям средних школ.

Это специфическое исследование, направленное для раскрытия психолого-педагогических ролей учителя, которое, несомненно, будет способствовать формированию ученического коллектива, а также взаимоотношений учитель-ученик и ученик-ученик.

Սովորող
մոտեց
բարձր
Մ.Բ.Յու

Սույն
սովոր
մոտեց
ընթաց
որակի

Սովոր
մոտեց
Հասա
կերպ
ուսուց
Այն չի
դասա
քանի
Ամոս
անպա
աշակ
առան
Ղենոթ
ուշադ
միայն
սպա
զբաղ
առան
հարց
տվել,
մնաց
ես մ
անհե
ն, ի
չափ
լինու
հետև
համ
Ուսու
իր
յուր
առա
համ
Իսկ
չափ
Հետ
ավել
է ա
ընդ
ա/
հեր

Սովորողների նկատմամբ անհատական մոտեցումը որպես նրանց գիտելիքների որակի բարձրացման միջոց
Մ.Բ.Տարաբիշյան

Սույն աշխատանքում քննարկվում են սովորողների նկատմամբ նշած այն մոտեցումները, որ եղել են ուսումնառության ընթացքում և նպատակել են նրանց գիտելիքների որակի բարձրացմանը:

Սովորողների նկատմամբ անհատական մոտեցման հարցը խոր արմատներ ունի: Հասարակական քաղաքական տարբեր հայացքներ ունեցող մանկավարժներ այն տարբեր կերպ են լուսաբանել: Հայտնի է, որ անհատական ուսուցման մեթոդը կիրառվել է հին Աթենքում: Այն չի վերացել միջին դարերում և նույնիսկ դաս-դասարանային համակարգի ծագումից հետո, քանի որ, ինչպես նշում է մեծ մանկավարժ Յան Ամոս Լոմենսկին, ուսուցման ընթացքում անպայմանորեն պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները:

Պետք է նշել նաև, որ եթե հնում մանկավարժներն ուղարկություն էին դարձնում աշակերտների միայն տարիքային առանձնահատկություններին, ապա ավելի ուշ մանկավարժությունն սկսեց զբաղվել նաև նրանց անհատական առանձնահատկությունների հետ առնչվող հարցերով: Ուսումնասիրություններն ցույց են տվել, որ շատ ուսուցիչներ չգիտեն անգամ ետ մնացող դպրոցականների մեծամասնության ոչ ետ մնալու պատճառները, ոչ էլ հոգեբանական ու անհատական առանձնահատկությունները, ուստի ն, ինչպես ասում են, բոլոր աշակերտներին չափում են «միևնույն արշիտով»: Հետևանքը ինչն էլ այն, որ որոշ աշակերտներ կորցնում են հետաքրքրությունը ուսման նկատմամբ, դպրոցի համար դառնում են «բեռ»:

Ուսուցիչը պետք է հանգամանորեն ուսումնասիրի իր բոլոր աշակերտներին, ճանաչի յուրաքանչյուրի ֆիզիկական, մտավոր, հոգեկան առանձնահատկությունները, ծանոթ լինի համապատասխան նորագույն գրականությանը: Իսկ աշակերտներին դասակարգելիս ի՞նչ չափանիշներով պետք է ելնել:

Հետազոտողների իմ խոմբ նրկու հարյուրից ավելի ուսուցչի հարցման ենթարկելուց հետո եկել է այն եզրակացության, որ հիմնականում պետք է ընդգրկել երեք չափանիշ.

ա/ վերաբերումն ուսման նկատմամբ (առաջին հերթին ճանաչողական հետաքրքրություններ)

բ/ ընդունակությունները
գ/ առաջադիմությունը (գիտելիքների մակարդակը)
Այս չափանիշների հիման վրա էլ աշակերտներին բաժանում են դարձյալ երեք խմբի.
ա/ բարձր (առանց օգնության լուծում են ցանկացած խնդիր կամ առաջադրանք)

բ/ միջին (ուսումնական նյութը յուրացնում են արագ և հաստատուն կերպով, բայց դժվարանում են ոչ տիպային ճանաչողական իրավիճակում)

գ/ ցածր (ճանաչողական խնդիրը լուծելիս դրսևորում են անկարողություն, բայց ետ մնացողներից տարբերվում են նրանով, որ արտաքին օգնությամբ լավ են ընկալում):

Այս խմբերն իրենց հերթին բաժանվում են ենթախմբերի, որոնց քանակն անցնում է տասնհինգից:

Իսկ ինչպե՞ս պետք է ուսումնասիրել ն բացահայտել սովորողների անհատական առանձնահատկությունները:

Ուսումնադատի արակցական գործընթացում այս ուղղությամբ ուսուցչի աշխատանքները հեշտացնելու նպատակով անհրաժեշտ է նրան տալ աշակերտի անհատականության ճանաչման ծրագիր ևս ըստ այդմ էլ՝ դասակարգելու կողմնորոշում: Դրա համար անհրաժեշտ է ունենալ աշակերտի բնութագրի նկարագիր՝ սկսած նախադարձական տարիքից, որը նրեխան իր հետ կարող է բերել մանկավարժություն: Ապա այն յուրաքանչյուր տարի պետք է հարադասվի ուսուցչի նրա և մասնավորապես դասուցչի կողմից. ուսուցիչներն ու դասուցիչները տվյալ դասարանում դասավանդելու կամ ղեկավարելու գործը ստանձնելուց հետո սովորաբար աշակերտներին տալիս են գրավոր աշխատանք՝ նրանց հուզական, հոգեկան, սոցիալական վիճակը պարզելու, ինչպես նաև գիտելիքների մակարդակը բացահայտելու նպատակով: Մտացված աղյուսները ուղեմիշ են դառնում հետագա աշխատանքների համար և նույնպես պետք է մտցվեն կոնկրետ աշակերտի բնութագիր-նկարագրի մեջ: Հատկապես այս աշխատանքները կատարվում են տարբերակներ՝ նոր դասարանի հետ աշխատելու նախօրյակին:

Բավականին տվյալներ կարելի է ձեռք բերել նաև դպրոցական փաստաթղթերի, հատկապես նախորդ տարիների աշակերտի ստացած գնահատականների ուսումնասիրության միջոցով: Դա հնարավորություն կտա խմանալու, թե երբ է աշակերտը սկսել ետ մնալ, որ առարկաներից և ինչու: Օրինակ, պրակտիկայում եղել են դեպքեր, երբ նշվել է, որ այսինչ աշակերտը մինչև 6-րդ դասարանն, սակայն, ուժեղ էր մայրենի լեզվից, բայց գնալով՝ թուլացել է: Ո՞րն է պատճառը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է,

որ նու մնալը սկիզբ է առնում այն պահից, երբ աշակերտը սկսել է անհարգելի բացակայել, մեծ մասամբ գրավոր աշխատանք գրելու օրերին եւ, քանի որ քերականական կանոններին չէր տիրապետում, վատ ու անփայտ է գրում, միշտ էլ առանում է անբավարար գնահատական: Նման դեպքերում եւս մնալու պատճառի բացահայտման եւ անհատական սխառնատեղիկ պարապմունքների գույքը դամբն է հնարավոր կլինի աշակերտի առաջադիմությունը բարձրացնել: Ուսուցման անհատականացումը ընդհանուր մանկավարժական քննության ունի եւ որպես այդպիսին՝ պետք է տարածել բոլոր աշակերտների վրա, հատկապես թույլ, եւս մնացող եւ դժվար դաստիարակվող աշակերտների վրա՝ թե՛ նրանց եւս մնալու կանխման եւ թե՛ այն վերացնելու նպատակով: Այդ նպատակին էր հետապնդում նախորդ տարիներին Ստեփանակերտի թիվ 5 միջնակարգ դպրոցում հիմնականում նույն մակարդակի վրա գտնվող աշակերտների բաժանումն ըստ դասարանների. որի արդյունքների մասին այսօր արդեն կարելի է ամփոփիչ խոսք ասել:

Պակաս կարելու չէ նաեւ անհատական մոտեցման սկզբունքը լավ սովորող աշակերտների նկատմամբ կիրառելը: Դա նշանակում է ուսուցման գործընթացը համապատասխանեցնել այդ աշակերտների մակարդակին, լայնորեն օգտագործել նրանց ներքին հնարավորությունները:

Լավ սովորող երեխաների հետ անհատական պարապմունքների հիմնական ձևերը թվադրում է ինքը՝ մեծագույն ժամանակը, այսօր նորից, ինչպես նախկինում, լավ սովորողների հետ անհատական պարապմունքները կրում են մասնավոր բնույթ, որով շահագրգիռ են երկու կողմերն էլ՝ ծնողն ու ուսուցիչը:

Նվեր նաեւ այն սխալ կարծիքին չհանգնեք, թե անհատական մոտեցման եւ անհատական պարապմունքների անհրաժեշտությունը գոյում են միայն թույլ եւ ուժեղ աշակերտները: Եթե ցանկանում ենք, որ դասարանի բոլոր աշակերտներն աշխատեն իրենց ուժերի առավելագույն լարումով, եւ ապահովվի բոլորի համալսելու առաջընթացը, ապա անհրաժեշտ է զարգացնել բոլորին, այդ թվում նաեւ՝ միջին ունակություններ ունեցողներին: Նման անհատական մոտեցման դեպքում վերջիններս յիշատակելիանում են եւ փոխում իրենց դիրքը դասարանում՝ միջինից աստիճանաբար անցնելով լավների շարքը, եթե, իհարկե, աշատանքը կրում է սխառնատեղի բնույթ: Ավանդական, ոչ հոսքային, լառք դասարանում,

երբ ուսուցիչը միաժամանակ աշխատում է դասարանի 25-30 եւ ավելի աշակերտների հետ միեւնույն մեթոդներով ու ձևերով, միջին ունակություն ունեցող աշակերտները չեն աշխատում այնպես, ինչպես կաշխատեն անհատական ուսուցման ժամանակ, էլ չենք խոսում թույլ սովորողների մասին, որոնք հուսահատված են անընդհատ եւս մնալու հետևանքով, իսկ ուժեղները էլ չեն լարում իրենց ուժերը:

Դասարանի բոլոր աշակերտների առաջադիմության բարձրացմանը եւ աշակերտների ճանաչողական ակտիվության զարգացմանը մեծապես նպաստում է նյութի շերտավորումը ըստ աշակերտների ունակությունների: Այդ դեպքում ուսուցիչը նախապես պետք է կազմի բարձր առաջադրանքներ, թեյքներ եւ տրամադրի աշակերտներին ինքնուրույն աշխատանքների ժամանակ, ինչպես դա արվում է բաց դասերի ժամանակ:

Սակայն չպետք է անհատական ուսուցումը սահմանափակել միայն դասի շրջանակներում: Դրա՝ ըստ մեծացնելի կազմակերպման համար լայն հնարավորություններ կան նաեւ ուսումնական պարապմունքներից դուրս: Մեկ հողվածի շրջանակներում հնարավոր չէ խոսել դրանց տարբեր ձևերի մասին, միայն կողմինք շնչելով այն հանգամանքը, որ նման պարապմունքների առավելությունն է, որ ստեղծվում է հոգեբանական բարենպաստ մթնոլորտ ուսուցչի եւ աշակերտների միջեւ: Եվ եթե դասարանում կան աշակերտներ, որ ճնշվում են դասընկերների նկելայությունից ու ուսուցչի դիրքից՝ այդ պահին, դասարանում, դրա հետեւանքով չեն կարողանում, ինչպես հարկն է, դրսեւորել իրենց գիտելիքները, իսկ ուսուցիչն էլ, նկնելով ժամանակի սղությունից եւ նոր թեմայի հաղորդման անհրաժեշտությունից, նրկար կանգ չի առնում, անհատական լրացուցիչ պարապմունքների դեպքում նրանք բավականին ակտիվանում են: Հիշենք տարիներ առաջ դպրոցներում թույլատրվող վարձովի նախադիմական պարապմունքները: Նշանակում է ուսուցման այս ձևը միանգամայն հարմար է կիրառել այն աշակերտների նկատմամբ, ովքեր եւս են մնում հոգեբանական որոշ խոչընդոտներ հաղթահարել չկարողանալու պատճառով: Բացի այդ, անհատական պարապմունքները յուրաքանչյուր աշակերտի համար ապահովում են յուրացման առավել արագ տեմպ:

Կարելի է այսպես նրկար շարունակել, բերել բազում օրինակներ, թվարկել աշակերտների առաջադիմության բարձրացմանը եւ ճանաչողական ակտիվության զարգացմանն ու գիտելիքների որակի բարձրացմանը մեծապես

նախատող ուսուցման անհատականացման գիտականորեն մշակված ձեռնարկներ:

Մակայն միայն ու միայն ուսուցիչն ինքը նախ եւ առաջ պետք է աշխատի կատարելագործել վերը նշված սկզբունքները, կիրառել անհատական մոտեցման նոր ձևեր ու մեթոդներ՝ ստեղծագործորեն մոտենալով յուրաքանչյուր անհատ աշակերտի՝ լինի նա ուժեղ, միջին կարողությունների տեր, թե թույլ:

Ամփոփում

Քննարկելով խնդրո առարկա պրոբլեմը եկել ենք հետևյալ եզրահանգմանը.

1. Դեռեւս սկսած հին Հունաստանի ուսումնառության շրջանից, ուշագործություն է դարձվել դաս-դասարանային համակարգին ու նկատի առնվել աշակերտների տարիքային առանձնահատկությունը:

2. Դարերի ընթացքում մանկավարժությունը ընդհանրացրել է, որ ուսումնառության ընթացքում պետք է նկատի ունենալ սովորողների հետաքրքրությունները, գիտելիքների մակարդակը:

3. Ուշի-ուշով պետք է հետեւել եւ իմանալ սովորողների հետ մնալու պատճառները եւ օգնել նրա առաջադիմությանը:

4. Կարևորվում է նաեւ անհատական պարապմունքների պահանջը:

5. Այսօրվա դպրոցում անհրաժեշտ է սովորողների նկատմամբ անհատական մոտեցումը համարել նրանց գիտելիքների որակի բարձրացման հիմնական միջոցներից մեկը:

Резюме

В данной статье делается попытка индивидуального подхода к учащимся, выявление основных путей и форм повышения качества знаний, принимая за основу многолетний опыт обучения и исследования.

МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ ФИЗИКОВ /ЕРЕВАН-СТЕПАНАКЕРТ/

26 мая - 30 мая 2003 года

Идея конференции зародилась в июле 2002 года в Ереванском Физическом институте, где проходила защита докторской диссертации, на которой оппонентами были профессор Георгий Саввиди из Национального научного исследовательского центра «Демокритос» (Афины) и профессор Боннского университета Райнальд Флюмме. Профессор Георгий Саввиди является одним из представителей Ереванского физического института, который закончил ЕГУ в 1974 году и до 1990 года работал в теоретическом отделе Ерфи. Во время защиты и последующих дискуссий Г. Саввиди познакомил присутствовавшего там декана физико-математического факультета АрГУ К. Арамяна с профессором Р. Флюмме, который проявил живой интерес как к Карабаху, так и к Арцахскому университету. Он с удовлетворением принял предложение посетить Карабах, и все трое вместе решили организовать небольшую поездку в Арцахский университет. Идея о небольшом визите с целью прочтения лекций для студентов и преподавателей Арцахского государственного университета о современных достижениях в области элементарных частиц и теории твердого тела воплотилась в конференцию с участием ведущих ученых из зарубежных стран, в том числе из Европы и Канады и стран региона.

После этой встречи и предварительных обсуждений научной программы был создан организационный комитет в составе вышеуказанных лиц, которые выработали организационный и научный план предстоящей конференции. Конференция преследовала несколько целей, главная из которых - это поддержка научной общности университетов, а также студентов в областях, пострадавших от военных конфликтов, независимо от этнического происхождения и гражданства.

Конференция должна была стать одним из первых научных мероприятий международного масштаба, проводимых на физико-математическом факультете Арцахского государственного университета. Планировались популярные лекции для студентов и преподавателей факультета относительно новейших областей исследований, которые также должны были помочь налаживанию новых контактов с активно работающими учеными из соседних стран Европы и Америки. Одной из целей конференции было стимулирование совместных проектов. Предполагались лекции, знакомящие преподавателей и студентов с современной системой образования в Европе, программами обмена студентами между Европейскими университетами.

Поскольку ЕрФИ обладает огромным опытом проведения международных конференций высокого уровня - это хорошо известные Нор-Амбердские конференции и школы, основанные академиком Артемом Исааковичем Алиханьяном с участием также лауреатов Нобелевской премии, в частности, крупных советско-американских конференций в 1983 и 1988 годах, было решено, что конференция будет разделена на две части, первая из которых пройдет в Ереванском физическом институте, куда будут приглашены аспиранты и преподаватели из Арцахского государственного университета, а вторая - на физико-математическом факультете Арцахского государственного университета.

Научная программа конференции была посвящена вопросам, относящимся к неабелевым калибровочным теориям поля, теории струн и приложениям теории поля в физике твердого тела. Тематика включала дуальность, конформные теории поля, матричные теории, некоммутативные теории, теорию низкоразмерных систем и наноструктур.

Особое внимание было уделено дуальности между различными типами открытых и закрытых струн. Рассматривались следствия этой дуальности в различных асимптотических режимах, когда натяжение струны стремится к нулю.

В торжественной обстановке международным организационным комитетом физико-математическому факультету Арцахского государственного университета были переданы компьютер, принтер, сканер, копировальная машина, проекционный аппарат, предназначенные для организации учебного процесса и научных исследований.

В свою очередь К. Арамян вручил членам международного организационного комитета Г. Саввиди и Р. Флюмме прекрасно иллюстрированные книги «Архитектурные памятники Арцаха» и набор фотографий о Шуши.

На наш взгляд, наиболее важные аспекты и цели конференции были достигнуты в том отношении, что аспиранты и студенты АрГУ непосредственно общались с активно работающими учеными, могли задавать вопросы и приобрели опыт участия в международных конференциях, так необходимый для работы в современных областях физики.

Дружеские отношения, которые сложились между участниками, несомненно будут способствовать дальнейшим контактам и преодолению изоляции, в которых оказываются научные центры и университеты в результате конфликтов.

декан физико-математического факультета АрГУ, канд. ф.-м. наук, доцент Арамян К. С.,
доктор ф.-м. наук, профессор, директор по науке института ядерных исследований
Греческого научно-исследовательского центра «Демокритос» Г. К. Саввиди.

6 июля 2003 г.

ԵԱՆՈՆՆԵՐ ՀԵՐԻՆԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Արդ՛հ գիտական տեղեկագիր» պարբերականում հրատարակվում են Արցախի լուսավորական համալսարանում կատարված օրիգինալ հոդվածներ ու նամակներ տնտեսական և քաղաքականության, բնության, մշակութային, մանկավարժական, քաղաքականության, կենսաբանության, աշխարհագրության, տնտեսագիտության և ուսման հարաբերությունների բնագավառներից:

Ընդունվում են նաև Արդ՛հ-ի մասնակցությամբ կայացած կոնֆերանսների, խոսժողովների և գիտական դպրոցների նյութեր:

Բնագրերը ներկայացվում են նրկու օրինակով, մեքենագրված, նրկու ինտերվալը մեկ, այրերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներում: **YAK**-ից (վերելի ձախ անկյունում), հոդվածի վերնագրով և հեղինակի անվանատառերից ու ազգանունից հետո բերվում է կարճ անոտացիա: Հոդվածի ծավալը լուսասկզբներով չպետք է գերազանցի 10 էջ, հաղորդմանը՝ 4, նամակինը՝ 2:

Հոդվածի հետ ներկայացվում է արձանագրության քաղվածքը այն ամբողջից, որտեղ հրատարակվել է քննարկվել է աշխատանքը:

Թույլատրվում է 5-ից ոչ ավելի նկար (հստակ լուսանկար կամ գծագրեր՝ արված ժամանակի սպիտակ թղթի վրա): Յուրաքանչյուր նկարի հակառակ կողմի վրա գրվում է արգային համարը: տեքստի լուսանցքներում նշվում է նկարների և աղյուսակների տեղերը:

Միևնույն նյութը աղյուսակի և նկարի ձևով ներկայացնել չի թույլատրվում:

Բնրվող գրականության մասին հոդվածում նշվում է միայն կարգային համարը, առկուսի փակագծերում [1, 2 – 5] ըստ հանդիպման հերթականությամբ: Հոդվածի վերջում այն հաջորդականությամբ բերվում են գրականության ցուցակը, կարգային համարը, ինքնակննդի ազգանուններն ու անվանատառերը, գրքի կամ հոդվածի վերնագիրը: արբերական հրատարակությունների համար այնուհետև հաջորդում է ամսագրի տրված կրճատ անվանումը առանց չափերի, թվականը՝ հատորի ու թողարկման ամսերը, հերթական համարը և էջը: Գրքի դեպքում՝ հրատարակման վայրը, հրատարակչությունը, թվականը և էջը: Չհրատարակված աշխատանքի վերաբերյալ (թացի տեղեկատվությունից) գրականության մեջ նշել չի թույլատրվում: Արտասահմանյան հրատարակությունը տեքստում նշվում է հոդվածի լեզվով, իսկ գրականության մեջ՝ օրիգինալով:

Հոդվածի տեքստի վերջում ձախ կողմում նշվում է այն ամբողջը կամ լաբորատորիան, որտեղ կատարվել է աշխատանքը:

Հոդվածը ստորագրվում է թուր հեղինակների կողմից:

ПРАВИЛА ДЛЯ АВТОРОВ

1. В журнале „Ученые записки,, АрГУ публикуются оригинальные статьи, сообщения и письма теоретического и экспериментального характера из области математики, механики, физики, радиофизики, химии, геологии, биологии, географии, экономики и гуманитарных наук, выполненные в Арцахском государственном университете.
2. Принимаются также материалы научных конференций, симпозиумов и научных школ, проведенных при участии АрГУ.
3. Рукописи представляются в двух экземплярах в машинописи через два интервала на русском, армянском или английском языках, с армянским, русским или английским резюме. После указания УДК (вверху слева), инициалов и фамилии автора и названия статьи приводится краткая аннотация. Объем статьи вместе с таблицами не должен превышать 10 страниц, сообщения-4, письма-2.
4. К статье необходимо приложить выписку из протокола заседания кафедры, где выполнена и обсуждена статья.
5. Разрешается не более 5 рисунков (контрастные фотографии или чертежи, выполненные черной тушью на белой бумаге). На оборотной стороне каждого рисунка отмечается его порядковый номер. На полях статьи должны быть помечены места рисунков и таблиц.
6. Представление одного и того же материала в виде рисунков и таблиц не допускается.
7. Цитируемая литература отмечается в тексте поочередно порядковым номером в квадратных скобках ([1,3-5]). В конце статьи в той же очередности приводится список цитированной литературы: порядковый номер, фамилия и инициалы авторов, названия книги или статьи. В ссылках на периодические издания далее следует общепринятое сокращенное название журнала без кавычек, год, том, выпуск, порядковый номер, страница; книги-место издания, изд-во, год, страница. Ссылки на неопубликованные работы (кроме диссертаций) не допускаются. Зарубежная литература в тексте дается на языке статьи, а в литературе- на оригинале.
8. В конце статьи слева указывается кафедра или лаборатория, где выполнена работа.
9. Статья подписывается всеми авторами.